ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՊԱՀԼԱՎՈՒՆԻՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԱՆԱՂԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՊԱՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ 2008

ДУБЛЕТ

Գիրքը նուիրուած է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան հիմնադրման փառապանծ դարեդարձին

Աշխատութեան ծախսերը հոգացել է Հ.Բ.Ը.Մ. Սուրիոյ Շրջանակային Յանձնաժողովը

ՄԵԼԵԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ա 93 Ֆ 94

ՊԱՀԼԱՎՈՒՆԻՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԱՆԱՂԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՊԱՆՆԵՐ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
35

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
35

ԵՐԵՎԱՆ 2008

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՏԴ 941 (479.25)

ԳՄԴ 63.3 (2Հ)
Վ.301

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր պ. գ. դ., պրոֆ. Հ. Մարգարյան

Վարդանյան Վ. Մ.

Վ 301 Պահլավունիները Հայոց պետականության և հոգևոր
անաղարտության պահապաններ ՀՀ ԳԱԱ ՊԻ, 2007.- 234 էջ:

Մենագրությունը նվիրված է միջնադարյան Հայոց պատմության մեջ ականավոր դեր խաղացած Պահլավունի տոհմի պատմությանը: Հեղինակը հայ և օտար սկզբնաղբյուրների հավաստի հենքի վրա քննության է առնում Պահլավունիների անցած ուղու պատմարժան իրողությունները, հատկապես Հայոց պետականության, Հայ առաքելական եկեղեցու դավանական անաղարտության և անկախության գործին տոհմի ականավոր ներկայացուցիչների բերած նպաստը:

Աշխատության մեջ լուսաբանվում է նաև Պահլավունի տոհմից սերած մտավորականների ծավալած ազգանվեր գործունեությունը, գրական և կրթա-լուսավորչական բնագավառներում նրանց ունեցած ներդրումը:

Նախատեսվում է միջնադարյան Հայաստանի պատմությամբ հետաքրքրվողների, ընթերցող լայն հասարակայնության համար:

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-99941-73-16-7

ՆԱԽԱԲԱՆ

Պահլավունի տոհմը լուսավոր հետք է թողել Հայոց պատմության մեջ: Նրան ականավոր դեր էր վերապահված հատկապես Բագրատունիների Հայոց թագավորության ժամանակաշրջանում: Հայաստանի համար բախտորոշ պահերին տոհմը զորակից եղավ Բագրատունիներին և դարձավ նրանց քաղաքական հենարանը: Բագրատունիների հովանու ներքո Պահլավունիները հասան քաղաքական բարձունքների, օժտվելով բարձր պատիվներով ու ռազմա-քաղաքական հույժ կարևոր գործառնությամբ: Բագրատունյաց թագավորությունն իր քաղաքական և հոգևոր-մշակութային առաջընթացում պարտական էր նաև Պահլավունիների հայրենանվեր գործունեությանը, որի շնորհիվ հառնեց հայոց զինական հռչակը, հայ ազատանին համախմբեց իր քաղաքական ճիգերը, նոր իրավիճակում վառ կերպով դրսևորվեց հայ ժողովրդի ազգային պետական կենսունակությունն ու ռազմա-քաղաքական կորովը:

Պահլավունիներին ականավոր դեր էր վերապահված նաև երկրի հոգևոր-մշակութային, եկեղեցական կյանքի ասպարեզներում: Բագրատունյաց թագավորության ներքին կյանքի գրեթե բոլոր բնագավառներում զգալի էին այդ տոհմից սերած գործիչների նպատակասլաց ջանքերն ու նորարարական տարերքը: Իրենց ազգաշահ գործերով նրանք անջնջելի հետք թողեցին հայրենի պատմության մեջ: Պահլավունիների հռչակը տարածված էր նաև դրացի երկրներում՝ Վրաստանում և այլուր: Հետամուտ լինելով կենարար նպատակի, այդ տոհմը շենացրեց հայրենիքը, ապահովեց նրա անդորրը, ժողովրդին զինեց աներկբա հավատով ու հույսով, լավատեսությամբ:

Պահլավունիները Հայաստանի բնիկ իշխանական տոհմերից մեկն էին, որոնց արմատները հասնում են մինչև վաղնջական ժամանակները, երբ վերընձյուղվելով Կամսարականների ականավոր տոհմից, նրանք շարունակեցին այդ տան ազգամետ, հայրենասիրական ավանդները, հասարակական-քաղաքական նոր պայմաններում հարություն տալով հայոց անցյալի փառքին ու հայրենանվեր մղումներին: Բագրատունի հայոց թագավորների հետ համադաշն գործող Պահլավունի իշխանները լայնահուն գործունեություն ծավալեցին քաղաքամայր Անիում, Շիրակ, Արագածոտն գավառներում և այլուր: Նրանք աչքառու դեր խաղացին ոչ միայն ռազմի դաշտերում, այլև քաղաքների, եկեղեցիների շինարարության, ինչպես նաև բարեգործության ու մտավոր-մշակութային ասպարեզներում:

Հայոց Բագրատունիների թագավորության անկումից հետո Պահլավունիների շառավիղները շարունակեցին տոհմի հայրենասիրական ուղեգիծը, զորակից եղան Զաքարյան հայկական իշխանությանը:

Պահլավունիներից սերած Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը 1066թ. հիմք դրեց Պահլավունիների կաթողիկոսական հարստության, որը դժնդակ պայմաններում, օտար հորիզոններում, պաշարված թյուրք-սելջուկյան հրոսախմբերով, դիմացավ անզերծանելի կացությանը, 138 տարի հովվապետելով հարազատ ժողովրդին: Պահլավունի հայրապետները միշտ եղան փորձության որոգայթների մեջ հայտնված հայության կողքին, պատրաստ կրելու նրան բաժին ընկած օրհասն ու տառապանքները: Նրանք երբեք չդավեցին իրենց կոչմանն ու Պահլավունի տան հայրենասիրական, քաղաքացիական հավատամքին: Նրանք իրենց բարեպատեհ խոսքով տարաստիվված հայության մեջ անմար պահեցին քաղաքական հույսն ու հոգևոր կենսունակությունը, պահպանեցին ազգային հավատքի հողմածեծ շենքն ու հայրենի մշակութային արժեքները: Ծանր պայմաններում տոհմը շարունակեց կրել իր խաչը, լուսեղեն հույս ներարկելով հայրենի ոլորտներից դուրս նետված ժողովրդին:

Սույն մենագրության մեջ փորձ է արվում լուսաբանել Պահլավունի տոհմի ծագմանը, հայրենիքին նրա մատուցած ծառայություններին, տոհմի նշանավոր գործիչների պետական-քաղաքական և հոգևոր-մշակութային, եկեղեցական, ազգաշահ ձեռնարկումներին առնչվող խնդիրները, վեր հանել նրանց գործունեությունն ու հայրենասիրական մղումները խորհրդանշող պատմարժան իրողությունները:

Պահլավունյաց քաջապանծ տոհմի բազմաելևէջ անցյալը, պատմության ոլորաններում նրա անցած ուղին փոքր ի շատե հնարավոր է դառնում համակողմանի և մանրաքնին կերպով հետազոտել ոչ միայն գրավոր աղբյուրների հայ և օտար մատենագիրների, ժամանակագիրների, Պահլավունի տոհմից սերած մտավորականների գրական, մեկնողական բնույթի երկասիրությունների, այլև ճամփորդական-տեղագրական գրականության, նյութական մշակույթի հուշարձանների վրա փորագրված վիմագիր արձանագրությունների, ձեռագրերի, հիշատակարանների շնորհիվ:

Հայ պատմագիրներից առաջինը Պահլավունիներին հիշատակում է Ստեփաննոս Տարոնեցին 998թ. Ծումբ գյուղի մոտ Ատրպատականի զորքի դեմ հայ և վրացական ուժերի մղած մարտի առնչությամբ: Նա նշում է, որ հայոց Գագիկ թագավորը «յամենայն զօրացն Հայոց հատեալ զգունդ ՁՌ յընտիր ընտիր վառելոցն՝ գումարէ ի ձեռն իշխանաց իշխանին Վահրամայ, որդւոյ Գրիգորոյ Պահլաւունւոյ...»[1]: Պահլավունիները հիշվում են նաև Արիստակես Լաստիվերցու և Սամուել Անեցու երկերում: Սակայն տոհմի մասին առատ տեղեկություններ է հաղորդում Մատթեոս Ուռհայե-

[1]Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, III, ԽԱ, էջ 270:

ցին[2]: Պահլավունիների վերաբերյալ արժեքավոր տվյալներ են պարունակում նաև Վարդան Արևելցու, Սմբատ Սպարապետի և Կիրակոս Գանձակեցու երկասիրած գործերը[3]: Տոհմի նշանավոր ներկայացուցիչների մասին որոշ տեղեկություններ են հանդիպում Ստեփաննոս Օրբելյանի, Մխիթար Անեցու և Մխիթար Այրիվանեցու երկերում:

Պահլավունի տոհմի պատմությունը վեր հանելու առումով կարևոր նշանակություն ունեն այդ տոհմից սերած մատենագիրների, գրողների ստեղծագործությունները, որտեղ ուշագրավ տեղեկություններ կան Պահլավունիների անցյալի, տոհմի ակունքների, անցած ուղու, նրա նշանավոր ներկայացուցիչների կյանքի ու գործունեության, նրանց հասարակական-քաղաքական դիմագծի և այլ իրողությունների մասին: Այս տեսակետից հատկապես մեծ արժեք ունեն Գրիգոր Մագիստրոս Պահլավունու (Բջնեցու) նամակները (թղթերը)՝ ուղղված երկրի քաղաքական, եկեղեցական և մշակութային գործիչներին, իր հարազատներին և ուրիշների (նամակների պատասխանները չեն պահպանվել): Կարևոր նշանակություն ունեն նաև նույն հեղինակի գրական գործերը[4]: Ներսես Շնորհալու[5], Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի չափածո ստեղծագործություններն[6] ունեն անառարկելի աղբյուրագիտական արժեք: Պահլավունիների մասին կարևոր տվյալներ են պարունակում նաև հայերեն ձեռագիր հիշատակարանները[7]:

---

[2] Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898:

[3] Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի, Վենետիկ, 1862, Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956:

[4] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, ի լոյս ընծայեաց Կ. Կոստանեանց, Ալեքսանդրապոլ, 1910, Տաղասացութիւնք Գրիգորի Մագիստրոսի Պահլաւունւոյ, Վենետիկ, 1868:

[5] Ներսէս Շնորհալի, Բանք չափաւ Վենետիկ, 1928, նույնի՝ Նամականի, Վենետիկ, 1838, նույնի՝ Թուղթ ընդհանրական, Վենետիկ, 1871, նույնի՝ Թուղթ ընդհանրական, աշխ. է. Բաղդասարյանի, Երևան, 1995, նույնի՝ Յաղագս երկնի և զարդուց նորա, հանելուկներ, Ողբ Եդեսիոյ, աշխ. Գ. Հակոբյանի, Երևան, 1968, նույնի՝ Վիպասանութիւն, աշխ. Մ. Մկրտչյանի, Երևան, 1981, նույնի՝ Հիսուս որդի, աշխ. Վ. Ղազարյանի, Երևան, 1991:

[6] Գրիգորի Կաթողիկոսի Տղայ կոչեցելոյ Նամականի, Վենետիկ, 1838, Գրիգորի կաթողիկոսի Տղայ կոչեցելոյ նամականի եւ Ներսիսի Լամբրոնացւոյ Ատենաբանութիւնք եւ թուղթ եւ ճառք, Վենետիկ, 1865:

[7] Գ. Յովսէփեանց, Յիշատակարանք ձեռագրաց Ա, Անթիլիաս, 1951, Յ. Տաշեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, 1895, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանին, կազմեց Բ. Սարգիսեան, հատ. Ա, Վենետիկ, 1914, հատ. Բ, Վենետիկ, 1924, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հատ. Ա, կազմեց Ն. Պողարեան, Երուսաղեմ, 1966, հատ. Բ, Երուսաղեմ, 1967, Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.,

Պահլավունյաց տոհմի պատմության հետազոտման առումով անգնահատելի արժեք ունեն վիմագիր արձանագրությունները, որոնց մեջ իբրև պատմական վավերագրեր, առանձնանում են Անիի, Մարմաշենի, Հավուց թառի, Բագնայրի, Կեչառույքի և ուրիշ եկեղեցիների որմերին փորագրված արձանագիր հիշատակարանները: ԺԹ դարի առաջին կեսից սկսած, արդեն լույս տեսան Հայաստանի մի քանի նահանգների արձանագրությունների ժողովածուներ կազմված Սարգիս Ջալալյանցի (1842-1858թթ.), Հովհաննես Շահխաթունյանցի (1842թ.), իսկ 1860-ական թվականներից՝ Ներսես Սարգիսյանի և ուրիշ հետազոտողների կողմից: Ն. Սարգիսյանը 1843-1853թթ. շրջելով Հայաստանի տարբեր գավառներում, ուսումնասիրեց և նմանահանեց բազմաթիվ արձանագրություններ հիմնականում ստույգ վերծանությամբ, որոնք ամփոփվեցին 1864թ. Վենետիկում լույս ընծայված ժողովածուում[8]: Հայ արձանագրագիտության զարգացման մեջ կարևոր նշանակություն ունեցան Ղևոնդ Ալիշանի աշխատությունները նվիրված Հայաստանի Այրարատ և Սյունիք նահանգներին, Շիրակ գավառին[9] և Կիլիկյան Հայաստանին: Պահլավունիների տոհմի պատմության վեր հանման տեսանկյունից հատկապես արժեքավոր արձանագրային տվյալներ է պարունակում Շիրակին նվիրված գործը, որտեղ ամփոփված են այդ գավառում եղած և մինչ այդ հրատարակված բոլոր արձանագրությունները:

Հայ արձանագրագիտության զարգացմանը մեծ նպաստ բերեցին Նիկողայոս Մառը և Հովսեփ Օրբելին: Անգնահատելի նշանակություն ունեն նրանց կողմից Անի քաղաքի վիմագիր արձանագրությունների հավաքման և վերծանության ուղղությամբ կատարած աշխատանքները: Հայերեն վիմագիր արձանագրություններն ամբողջացնելու փորձ է կատարել Մոսկվայի Լազարյան ճեմարանի տեսուչ Կարապետ Կոստանյանցը: 1913թ. նա լույս ընծայեց «Վիմական տարեգիր» ժողովածուն, որը պարունակում է մինչ այդ հրատարակված հայերեն վիմարձանագրությունների մեծ մասը հաճախ թեական վերծանությամբ[10]: 1920-1930թթ. Փարիզում հրատարակված «Revue de l' Orient Chretien» հանդեսի Բ-է հատոր-

---

կազմեց Վ. Հակոբյան, հատ. I, Երևան, 1951, հատ. II, Երևան, 1956, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1950, Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620թթ.) հատ. Ա, կազմեցին Վ. Հակոբյան և Ա. Գ. Հովհաննիսյան, Երևան, 1974, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դ.դ., աշխ. Ա. Մաթևոսյանի, Երևան, 1988 և այլն:

[8] Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864:

[9] Ղ. Ալիշան, Շիրակ, Տեղագրութիւն պատկերացոյց, Վենետիկ, 1881, Այրարատ: Բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890, Սիսական, Վենետիկ, 1893:

[10] Վիմական տարեգիր, Ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց Հայոց, կազմեաց Կ. Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, 1913:

ներում տեղ են գտել Կարապետ Բասմաջյանի հեղինակությամբ հրատարակված Անիի, Մարմաշենի և Բագնայրի արձանագրությունները՝ վերծանությամբ, ֆրանսերեն թարգմանությամբ, մեկնաբանություններով և լուսանկարներով[11]: Դրանք զգալի նյութ են մատուցում Պահլավունիների տոհմի պատմությունը հետազոտողին:

Արդի հայ արձանագրագիտության սկիզբը դրվեց 1966թ. Երևանում հրատարակված «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի առաջին պրակով, որտեղ ամփոփված են տակավին 1906-1917թթ. ընթացքում Հովսեփ Օրբելու կողմից Անիում հավաքած վիմագիր արձանագրությունները՝ գիտական ստույգ վերարտադրությամբ և մեկնաբանություններով[12]: Պրակում բացառիկ արժեք ներկայացվող տեղեկություններ կան Պահլավունիների տոհմին պատկանող նշանավոր գործիչների մասին: Այդ առումով հույժ կարևոր նշանակություն ունի նաև Մարմաշենի վանքի որմերին փորագրված արձանագրությունների հրատարակումը Հովսեփ Օրբելու կողմից[13]:

Պահլավունիների տոհմի պատմությանն առնչվող կարևոր իրադարձություններին անդրադարձել են Հայոց պատմությունն ուսումնասիրող գիտնականները: Հայ նոր պատմագիտության ռահվիրա Միքայել Չամչյանն իր «Պատմութիւն Հայոց» երկասիրության Բ և Գ հատորներում անդրադարձել է Պահլավունիների տոհմին առնչվող նշանավոր անցքերին, հատկապես Վահրամ զորապետի և Գրիգոր Մագիստրոսի գործունեությանը: Նա շոշափել է նաև Պահլավունիներից սերող հայոց կաթողիկոսների գործունեությանն ու հոգևոր-մշակութային դիմագծին առնչվող խնդիրներ[14]: Միքայել Չամչյանը գտնում է, որ Պահլավունիները սերում են Գրիգոր Լուսավորչի տոհմից, ինչն իհարկե. զուրկ է իրական-պատմական հենքից: Սակայն Պահլավունի գործիչներին Մ. Չամչյանի տված որակումները մեծ մասամբ ճշմարտացի են:

Պահլավունի տոհմի մասին արժեքավոր դիտարկումներ է արել Ղևոնդ Ալիշանն իր «Շնորհալի և պարագայ իւր» աշխատության մեջ: Հեղինակը կարծում է, որ Պահլավունիները սերել են Սուրենյան Պահլավներից փրկված Պերոզամատից ու սրա որդի Կամսարից, ինչպես նաև Կարենյան Պահլավ ցեղի շառավիղ Գրիգոր Լուսավորչից: Նա նաև գտնում է, որ Գրիգոր Լուսավորչի «ցեղն հայրենական կոչմամբ ըսուեցաւ Պահլա-

---

[11] K. Basmadjian, Les inscriptions arméniennes d' Ani, de Bagnair et de Marmachen, Paris, 1931.

[12] Դիվան հայ վիմագրության, պրակ I, Անի քաղաք, կազմեց Հ. Օրբելի, Երևան, 1966:

[13] И. Орбели, Надписи Мармашена, (Избранные труды), Ер., 1963.

[14] Մ. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, հ. Բ-Գ, Վենետիկ, 1785, 1786:

ւունիք նաև Պարթևք», իսկ Կարենյան Պահլավ տոհմածյուղից փրկված Կամսարը հայոց Տրդատ III թագավորի օրոք ժամանեց Հայաստան, դառնալով Կամսարական տոհմի հիմնադիրը: Այս տոհմը, երբեմն իր ծագմամբ, կոչվեց նաև Պահլավունի: Ղ. Ալիշանը հավանական է համարում, որ այս երկու ճյուղերից կողմնակի մի տոհմաճյուղ հարատևել է մինչև Ժ դար, երբ վերստին երևան եկան Պահլավունիները երկու հարյուր տարի թաքնված մնալուց հետո[15]: Սակայն Գրիգոր Լուսավորչի պարթևական ծագման մասին հաղորդումներն անստույգ են: Հունարեն Ագաթանգեղոսում հավաստվում է, որ Գրիգոր Լուսավորիչը սերում էր հայ ազնվական գերդաստանից[16]:

Գրիգոր Մագիստրոսի «Թղթերի» առաջաբանում Կարապետ Կոստանյանցը գրում է, որ երբ Շիրակն ու Արշարունիքն անցան Բագրատունիներին, «Կամսարականներին վիճակեցաւ միաժամանակ մնալ անայստուբեան մէջ», ապա նրանց շառավիղներից Արտակը Թ դարում դարձավ նույն տոհմի վերանորոգողը, և նրանից սերվեցին «նոր Կամսարականները, որոնք այնուհետև յայտնի եղան Հայոց տոհմաբանութեան մէջ Պահլաւունիք անունով»: Նրանց այդ վերականգնումը տեղի ունեցավ Անիում, որը նրանց տոհմական տիրույթն էր: Թ դարում Պահլավունիներն Անիում «ունէին անշուշտ և սեփականութեան որոշ իրաւունքներ»: Կ. Կոստանյանցը համոզված է նաև, որ «ինչպես Կամսարականներն հնումն Արշակունեաց և Ս. Լուսաւորչին տոհմակից, համազգի և համազն էին, այնպէս էլ Պահլաւունիք իրենց գիտեն իբրև նոյն ազնուական սերունդի շառաւիղ»: Նա ևս գտնում է, որ «Պահլաւունիք նոյն հին Կամսարականներն են կողմնակի արենակից թէ Արշակունեաց և թէ Ս. Լուսաւորչի տան»[17]:

Պահլավունիների ազգաբանությանը հանգամանորեն անդրադարձել է Ներսես Ակինյանը մի հոդվածով[18]: Հեղինակն իրավացիորեն նշում է, որ Պահլավունի տոհմի պարթևական ծագման մասին ավանդական տեսակետը անստույգ է և չի կարող դիտվել իբրև պատմական իրողութ-

---

[15] Ղ. Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 11:

[16] G. Garitte, Documents pour l' etude du livre d' Agathange, Vaticano, 1946, p. 23. Ն. Ադոնցի կարծիքով Գրիգոր Լուսավորիչը սերում էր Փոքր Հայքի հռոմայեցի ազնվական գերդաստանից (տես N. Adontz, Gregoire l' Iluminateur et Anak le Parthe («Revue des Etudes Armeniennes» (REA), VIII, 1928, p.244-245) Ըստ Մարի-Լուիզ Շոմոնի, Գրիգոր Լուսավորիչն ուներ հունա-կապադովկյան ծագում, ուստի նրա պարթևական ծագումը չի հաստատվում (տես M.-L. Chaumont, Sur le origine de Saint Gregoire d' Armenie («le Museon», 1989, p.115-116).

[17] Տես Գրիգոր Մագիստրոսի թղթերը, առաջաբան, էջ ԺԲ-ԺԴ:

[18] Տես Ն. Ակինեան, Պահլաւունի և Լամբրոնի Հեթմեանց ազգաբանութիւնը («Հանդէս Ամսօրեայ», 1954, էջ 3-47): Նույնը արտատպված է «Ազգային մատենադարան» շարքի ՃՀԹ հատորում (Վիեննա, 1956):

յուն: Նա նաև կարծում է, որ Գրիգոր Մագիստրոսի կողմից Պահլավունիների նախնի համարված Արտակին տրված «Կամսարեան» վերադիրը համազոր է Մովսես Խորենացու հիշատակած Կամսարական տոհմանվանը: Սակայն օտարոտի է հեղինակի այն մեկնակերպը, որի համաձայն, իբրև թե 788թ. Շապուհ Ամատունու և նրա որդի Համամի գլխավորած հայ գաղթականների մեջ եղել են նաև Կամսարականներ, որոնք հարյուր տարի հետո Բյուզանդիայից վերադարձվել են Հայաստան՝ Շիրակ գավառ և սիրալիր ընդունելություն գտել Աշոտ Ա Բագրատունի թագավորի (885-890) կողմից, կրելով «Պահլավունի» տոհմանունը, որը համազոր էր «Արշակունի» անվան:

Հիշյալ գաղթականության մասին վկայություն ունի Ղևոնդ պատմագիրը, որի հավաստմամբ, գաղթը տեղի է ունեցել հարևան ամիրայությունների հարուցած բռնությունների պատճառով: Այդ մասին նա գրում է. «Ոչ ոք էր տէր ընչից իւրոց. այլ առհասարակ վարէին յաւարի: Եւ բազումք ինքնակամութեամբ թողուին զհօտս և զանդեայս, և գնային փախստական վասն ոչ բերելոյ զծանրութիւն աղետիցն»: Ղևոնդը նշում է 12 հազար գաղթողների, որոնց թվում բացի Ամատունիներից, կային նաև «այլք ի նախարարաց Հայոց և նոցին հեծելոց»[19]: Ինչպես հայտնի է Արտազ գավառում Կամսարականները երբևէ չեն հիշվում: Վերջիններիս տիրութները գտնվում էին Շիրակում և Արշարունիքում: Թերևս տոհմի շառավիղներն ընդունեցին դրանց տիրացած Բագրատունիների գերակայությունը և նրանց հովանու ներքո զերծ մնացին օտար ցեղերի շահատակություններից:

Անընդունելի է նաև Ներսես Ակինյանի այն պնդումը, որ իբր թե Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ հիշատակված է 885թ. Բյուզանդիայից Կամսարականների վերադարձն՝ ի դեմս Գազավոն Կամսարականի, որը Խորենացու վկայությամբ հայոց թագավոր Արշակ III-ի մահվանից (389թ.) հետո, իբրև Հայաստանի հռոմեական բաժնի նախարարների առաջնորդ, նրանց համաձայնությամբ, դիմում է Հայաստանի պարսկական մասում թագավորող Խոսրով Արշակունուն՝ նրան ենթակա բաժին վերադառնալու առաջարկով[20]:

Ն. Ակինյանի նշված աշխատությունն ունի անշուշտ, գիտական անառարկելի արժանիքներ: Հեղինակը պատմական սկզբնաղբյուրների հիման վրա ներկայացնում է Պահլավունի տոհմի սկզբնավորման, Կամսարականներից նրանց վերընծայման, Պահլավունիների տոհմի հետ

---

[19] Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, ԽԲ, էջ 168:

[20] Տես Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխ. Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, III, ԽԸ, էջ 317-319:

առնչվող ուրիշ եղելություններ: Նա նաև վերլուծում է Պահլավունի շառավիղների հետագա պատմությունը, վեր է հանում տոհմի վերջին ներկայացուցիչների համառոտ պատմությունը, հասցնելով մինչև 1260-ական թվականները:

Պահլավունիների ծագմանն առնչվող հարցեր է շոշափել նաև Լևոն Խաչերյանը Գրիգոր Մագիստրոսին նվիրված մենագրության մեջ: Հեղինակի կարծիքով քանի որ Գրիգոր Մագիստրոսի հորեղբայրը կրում էր Աբլղարիբ անունը, որն արաբերենում ունի «Հայր օտարականի» (կամ պանդուխտի) իմաստ, ուստի դրանից կարելի է հանգել այն եզրակացության, որ իբր Մագիստրոսի տոհմը եկվոր, ոչ բնիկ, «օտարական լինելով հաստատվել է Անիում և կարճ ժամանակամիջոցում, հատկապես զինական հաջող գործողությունների ծավալման ընթացքում իր դրսևորած ռազմական բացառիկ ընդունակությունների շնորհիվ, մեծ հեղինակություն և կշիռ է ձեռք բերել Բագրատունիների արքունիքում»[21]:

Աբլղարիբ անունը Հայոց մեջ գործածվել է X դարից արաբական ազդեցությամբ, իբրև անձնանուն, որից սակայն չպետք է մակաբերել, թե այն կրողը եղել է օտարական, եկվոր: Արաբերենում այդ անունը ունի «հայր Ղարիբի» իմաստ, որը կրել է այն անձը, ով պետք է ունենար Ղարիբ անունով որդի[22]: Հետևաբար, օտարական էր ոչ թե հայրն, այլ որդին: Եվ որովհետև հայրը չէր կրում «Ղարիբ» անունը, ուստի նա չէր կարող եկվոր, օտարական լինել: Եվ եթե հայրը տեղացի էր, որդին ինչ՞ու պետք է օտարական լիներ:

Իր միտքը հիմնավորելու համար հարգո հեղինակը վկայաբերում է Վարդան Արևելցու կողմից Ապիրատ Պահլավունուն «աննշան» համարելու փաստը: Սակայն պատմագրի հաղորդումից չի երևում, թե Ապիրատն իրոք «աննշան» էր: Պատմագրի հաղորդման համաձայն, Աշոտ IV Բագրատունին իր եղբորը Հովհաննես-Սմբատ թագավորին (1020-1040) կալանում և հանձնում է Կեչառույքի եկեղեցին կառուցող Ապուղամրի թոռ Մեծ իշխան Ապիրատին, հանձնարարելով սպանել թագավորին: Սակայն Ապիրատը ոչ միայն չի կատարում Աշոտ IV-ի պահանջը, այլև, ի հեճուկս նրա, Հովհաննես-Սմբատին տանում և բազմեցնում է Անիի Բագրատունիների թագավորական գահին[23]: Եթե Ապիրատ Պահլավունին կարողացել է Հայոց թագավորի գահին բազմեցնել Հովհաննես Սմբատին, ուրեմն նա որոշակի համարում և ազդեցություն է ունեցել հայ ազնվականության մի-

---

[21] Լ. Խաչերեան, Գրիգոր Պահլաւունի Մագիստրոս (985-1058թթ.), Լոս Անճելէս, 1987, էջ 20:

[22] Տես Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 20:

[23] Տես Վարդան Արևելցի, էջ 97:

ջավայրում, ինչը բացառվում էր նրա եկվոր, օտարական լինելու պարագայում:

Պահլավունի տոհմի պատմության որոշ դրվագներ վեր են հանված Հայոց պատմությանը նվիրված ընդհանրացնող աշխատություններում[24]: Պահլավունյաց տոհմից սերած կաթողիկոսների կյանքին ու գործունեությանն անդրադարձել Մաղաքիա Օրմանյանն իր «Ազգապատում» արժեքավոր երկում[25]: Հրապարակի վրա են նաև Պահլավունի տոհմի ականավոր ներկայացուցիչներ Գրիգոր Մագիստրոսին և Ներսես Շնորհալուն նվիրված գործեր[26]:

Պահլավունիների տոհմածառը տրված է Կիրիլ Թումանովի "Manuel de généalogie et de chronologie pour l' histoire de la Caucasie chretienne (Arménie-Georgie-Albanie)", Roma, 1976, աշխատության մեջ (էջ 223-274): Հեղինակը Պահլավունի է համարում նաև Հեթումյաններին, անգամ Զաքարյաններին, ինչն, անշուշտ, ճիշտ չէ:

Պահլավունիների տոհմի պատմությանն անդրադարձել է նաև Ժ. Դեդեյանն իր երկհատոր մենագրության մեջ[27]: Հեղինակը դիտարկում է Պահլավունյաց տան ծագմանն առնչվող հարցերը, մյուս եկեղեցիների հետ այդ տոհմից սերող կաթողիկոսների հարաբերությունները, ֆրանկ խաչակիրների հետ Պահլավունի իշխանների առնչությունները, փորձում վեր հանել վերջիններիս սեփականատիրական իրավունքները և այլ խնդիրներ:

---

[24] Տես Լեո, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1967, Հ. Մանանդյան, Երկեր, հ. Ա, Երևան, 1977, հ. Գ, Երևան, 1977, Հայ ժողովրդի պատմություն (ՀՀ ԳԱ հրատ.), հ. III, Երևան, 1976 և այլն:

[25] Տես Մ. Օրմանեան, Ազգապատում, Ա-Գ, Ս. Էջմիածին, 2001:

[26] Տես Գ. Հակոբյան, Ներսես Շնորհալի, Երևան, 1964, Ն. Թահմիզյան, Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Երևան, 1973, Պ. Անանեան, Ս. Ներսես Շնորհալի կաթողիկոս Հայոց («Բազմավէպ», 1973-1975), Լ. Խաչերեան, նշվ. աշխ., Ս. Մխիթարյան, Գրիգոր Մագիստրոսի կյանքը և գեղարվեստական ժառանգությունը, Երևան, 2001թ. և այլն:

[27] G.Dedeyan. Les Arméniens entre Grecs, Musulmans et Croises, vol. 1-2, Lisbonne, 2003.

Առաջին մաս

ՊԱՀԼԱՎՈՒՆԻ ՏՈՀՄԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԵԼՔԸ

Գլուխ առաջին

Տոհմի ծագումը

Մինչև VI դարի վերջերը հայ մատենագրության մեջ, նախարարական ցանկերում կամ որևէ այլ աղբյուրում Պահլավունի տոհմի անվան հիշատակության չենք հանդիպում: Հայ նախարարների Գահնամակի «Ներսեսեան» կոչված փոփոխակում «Պահլավունի» տոհմանվան հիշատակումը վավերական չէ, քանի որ այն տեղ է գտել այդ փաստաթղթի միայն մեկ գրչագիր օրինակում: Մնացած բոլոր տարբերակներում այդ տոհմանունը վկայված է Պալունիք ձևով[28]:

Ավանդաբար Պահլավունի տոհմը համարվել է Կամսարականներից վերընծայուղված: Այս կարծիքն արձագանքում էր Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ եղած վկայությանը, որի համաձայն, Կամսարականները սերում են պարթևական Պահլավի անունով ցեղից և ըստ այդմ կոչվում «Կարենեան Պահլաւի, ազգ»[29], ինչը սխալ է[30]: Ընդ որում պատմահայրը նույն ցեղից (նրա Սուրենյան հորջորջված տոհմաճյուղից) ծագած է համարում նաև Գրիգոր Լուսավորչի հորը՝ Անակին[31]: Վերջինս Ագաթանգեղոսի մոտ հիշվում է «պարթև» վերադիրով: Անակը նույն պատմչի հավաստմամբ, «նահապետ էր Պարթևաց տէրութեանն», իսկ նրա «բուն աշխարհն... Պահլաւն կոչէր»[32]: Հայտնի է նաև հայ Արշակունիների պարթևական ծագումը: Փաստորեն այս տեղեկությունների հենքի վրա ազդանշվում էր տոհմակցության եռմիասնական մի համակարգ, որը շոյում էր նաև Պահլավունիների տոհմական ինքնասիրությունը, քանի որ այն ձևավորված էր համարվում Կամսարականների, Գրիգոր Լուսավորչի տոհմի և նրանց իբրև ցեղակից դիտվող հայ Արշակունիների ազգակցութ-

---

[28] Տես Պատմութիւն Ս. Ներսէսի հայրապետի («Սոփերք Հայկականք», Զ, Վենետիկ, 1853, էջ 32-38, 127,138):

[29] Մովսես Խորենացի, II, ՀԲ, էջ 209-210:

[30] Հմմտ. Ս. Կոգեան, Կամսարականները «տեարք Շիրակայ եւ Արշարունեաց», Վիեննա, 1926, էջ 11:

[31] Տես Մովսես Խորենացի, էջ 211:

[32] Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխ. Գ. Տէր-Մկրտչեանի և Ս. Կանայեանցի, Տփղիս, 1909, էջ 21-22:

յան հիմքի վրա: Պահլավունի տոհմում ընտանի դարձած այս մտայնության թարգմանն էր Պահլավունյաց տոհմի ավանդների ժառանգորդ, ներհուն մտածող և քաղաքական գործիչ Գրիգոր Մագիստրոս Պահլավունին (Բջնեցին), որն իր քաջապանծ հորեղբոր՝ Վահրամ զորավարի եղերամահ լինելու կապակցությամբ Սյունյաց Հովհաննես եպիսկոպոսին հղած թղթում Պահլավունի տոհմը սերած է համարում «ի ցեղէ Արշակունի, շառաւիղ մերոյն Լուսաւորչին»: Նա նույնիսկ համոզված է, որ Հայաստանի մարած փառքը կարող էր հառնել ի դեմս հորեղբոր, որին վայել է համարում թագավոր դառնալու պատիվը[33]:

Մագիստրոսը Գրիգոր Լուսավորչին դիտում է որպես Պահլավունի տոհմի նախահայր[34]: Այլ առիթով, վերստին շեշտելով Գրիգոր Լուսավորչի հետ իր տոհմի ազգակցությունը, նա գրում է.

Արդ զիս յայս տոհմէ գիտեմ

Ազգաւ Պարթև իմ հայրենին[35]:

Գրիգոր Մագիստրոսի ապրած դարաշրջանում, երբ իր վայրէջքի ուղին բռնած Բագրատունյաց թագավորությունը զոհ գնաց Բյուզանդական կայսրության ամենակուլ նկրտումներին, հույժ անհրաժեշտ էր բարձրացնել քաղաքական ծանրակշիռ գործառույթներով օժտված հայ ազնվական գերդաստանների հեղինակությունը, հնարավորինս հառնել տալ հայոց ոչ վաղ անցյալի փառքն ու պետական ավանդները և այդ հետնախորքի վրա ժողովրդի մեջ սնուցանել քաղաքական և հոգևոր անկախության տրամադրություններ: Սելջուկ-թյուրքական ավարատենչ ու դժնաբարք ցեղերի աշխարհավեր արշավանքների հետևանքով ծանր կացության մեջ հայտնված հայ ժողովրդին հոգևոր լիցք և քաղաքական կենսունակություն ներարկելու համար անհրաժեշտ էր, որպեսզի ահազարհուր պայմաններում հայությունը անհաղորդ չմնար անցյալի փառասուն ավանդներին, կանխվեր դրանց խաթարումը, պահպանվեին ժողորդի բարոյական կարողությունները: Դրա հրատապությունը իրեն զգալ էր տալիս հատկապես այդ անողորմ ու անհեռանկար թվացող դարաշրջանում, երբ թյուրք-սելջուկյան հրոսակները նյութեցին հայության դժխեմ ճակատագիրը: Նրանց ահագնածավալ հորձանքի առջև ընկրկելով՝ հայ ռազմիկ տարրն ստիպված լքում էր հայրենի եզերքները, ապաստանելով օտար հորիզոններում: Հայաստանը զրկվում էր իր զարգացման գործոններից, պղծվում էին նրա ազգային ու հոգևոր սրբությունները, ոտնակոխ էր ար-

---

[33] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 40-41:

[34] Տես նույն տեղում, էջ 38: Նկատենք նաև, որ մի ծեռագրի հիշատակարանում «Արշակունի» տոհմանունն է կրում ինքը՝ Գրիգոր Մագիստրոսը (տես Ց. Տաշեան, Ցուցակ հայերէն ծեռագրաց, էջ 147):

[35] Տաղասութիւնք Գրիգոր Մագիստրոսի, էջ 73:

վում ժողովրդի պատիվն ու արժանապատվությունը: Դժնդակ ու մահառիթ պատահարներով հղի կյանքը պահանջում էր նվիրագործել գաղափարական նոր կռվաններ, որոնց շնորհիվ հնարավոր կդառնար փոքր ի շատե վառել հայոց անցյալի շիջած ջահը, ժողովրդի մեջ արթուն պահել հոգևոր և քաղաքական ինքնուրույնության հույսը և հավատն ապագայի հանդեպ, որպեսզի նա ի զորու լիներ արժանապատվորեն գոյատևել, պահպանել իր հոգևոր ու քաղաքական կենսունակությունը, չլքվեր և կուլ չգնար դժնի ժամանակների դավադիր խաղերին: Լուսավորչի տնից Պահլավունիների սերելու մասին քևածող կարծիքը պետք է բարձրացներ Հայոց կաթողիկոսության հեղինակությունը, ամրակայացներ եկեղեցու հիմքերը: Ներսես Շնորհալին Պահլավունի տոհմի մտացի գործիչը, հայտնի ոչ միայն իր ազգաշահ գործերով, այլև ներհուն մտածողի և տաղերգուի քերթողական ավյունով, իր «Բան հաւատոյ» չափածո երկասիրության հիշատակարանում գրում է, որ այն շարադրել է ի հիշատակ «ծնողաց մերոյ, յազգէն գոլով Պահլաւունոյ համատոհմից Արշակունւոյ»[36]: Նրա «Թուղթ ընդհանրական» գործը համախմբվելու կոչ է հալածահար, հոգեպես հեծող, հայրենիքից դուրս մղված և ցանուցիր եղած հայությանը: Ներսես Շնորհալին քաջ գիտակցում էր, որ հայ ժողովրդի հավաքական գոյությունը, հոգևոր ընդհանրության պահպանումը հնարավոր էր ապահովել հայրենադիր օրենքների շնորհիվ: Ուստի նա այդ աշխատությամբ համայն հայությանն է պատգամում իր կանոնական հոգեկեցույց պատվիրանները: Այդպիսով սրբազնագործելով հայրենական օրինակարգն ու կանոնական ավանդույթը, ժողովրդի բոլոր խավերին նա կոչ է անում պահպանել հայոց հինավուրց բարքերն ու իրավակեցությունը: «Ողբ Եդեսիոյ» պոեմում 1144թ. թյուրքերի կողմից ավերված ու կոտորածի մատնված Եդեսիա (Ուռհա) քաղաքը դիմելով Հայաստանին, հիշեցնում է նրա փառահեղ անցյալը»[37]:

Նույն նպատակն էր հետապնդում Գրիգոր Լուսավորչի տոհմից Պահլավունիների սերելու ավանդական վարկածը: Ներսես Շնորհալին գրում է, որ իր ազգատոհմը «պսակված էր թագով» և տիրում էր «աշխարհաց բազմաց», սակայն հետագայում նրա հալածահար զավակների հայրենիքը հոշոտվեց թշնամիների կողմից, և Պահլավունիները մատնվեցին օրհասական կացության: Այդ մասին նա հնչեցնում է հոգետոչոր խոսքեր.

Զաշխարհն մեր օտարք կերեալ...
Տոհմ որ թագիւ փառաւորեալ,
Անարժանից ստրուկ եղեալ.

---

[36] Ներսէս Շնորհալի, Վիպասանութիւն, էջ 107-108:

[37] Տես Ներսես Շնորհալի, Յաղագս երկնի և զարդուց նորայ, հանելուկներ, Ողբ Եդեսիոյ, էջ 50-56:

Որք աշխարհաց բազմաց տիրեալ
Ի քաղցելոց հաց մուրացեալ:
Սակայն բնութիւն ազգին պահեալ,
Որ Պահլաւիկն կոչեցեալ,
Թէ և թաքուն իմն ամփոփեալ,
Յռամիկ ազանց միջի ծածկեալ,
Միայն ինքեանց ներհուն եղեալ,
Որ յայնմ ազգէ գոլով սերեալ.
Որդի զհայր փոխանակեալ
Մինչև առ մեզս հասուցեալ:
Ի նախնական հօրէ սկսեալ
Ի Պարթևէն լուսաւորեալ...»[38]:

Այդպիսով Պահլավունյաց տոհմը քաղաքական անհույս իրավիճակում կարողացել է պահպանել իր ժառանգական բարոյական բնությունը, Շնորհալու ժամանակներում ևս դրսևորելով իր հոգևոր ավյունն ու զորությունը: Պարթև Արշակունիներից Պահլավունի տոհմի ծագման ավանդական տեսակետն, ինչպես նշվեց, ընտանի էր նաև նոր ժամանակներում:

Եղած կցկտուր տեղեկությունները ինչ-որ չափով անդրադարձնում են Պահլավունի տոհմի անցյալին առնչվող որոշ իրողություններ, որոնք թույլ են տալիս կարծել, որ Կամսարականների երկրորդական տոհմածյուղերից մեկը տակավին VI դարի վերջին իրեն կոչել է Պահլավունի անունով, զուգահեռաբար հիշելով նաև Կամսարական տոհմանունը: Այս տեսակետից ուշագրավ փաստ է, որ XVI դարի բանաստեղծ և պատմագիր Սիմեոն Ապարանցին 590-ական թվականների անցքերի առնչությամբ հիշատակում է Պահլավունի տոհմանունը կրող զորապետի[39]: Իսկ VII դարում ապրած Անաստաս վարդապետն «ի խնդրոյ բարեպաշտ իշխանին Համազասպայ Կամսարականի Պահլաւունեաց», այցելել է Երուսաղեմ և կազմել այնտեղ եղած հայկական վանքերի ցուցակը, որը տեղ է գտել նրա «Վասն վանորէից, որ ի ս. քաղաքն յԵրուսաղէմ» գրվածքում[40]: Պահլավունիների՝ Կամսարականներից սերելու գիտակցությունն արթուն էր նաև հետագա դարերում: Հատկանշական է, որ Մատթեոս Ուռհայեցին

---

[38] Ներսէս Շնորհալի, Վիպասանութիւն, էջ 587-588:

[39] Տես Սիմեոն Ապարանցի, Վիպասանութիւն սակս Պահլաւունեացն զարմի և Մամիկոնեանցն սեռի, Վաղարշապատ, 1870, էջ 76-78:

[40] Տես Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Բ, Վենետիկ, 1924, էջ 829, Մատենագիրք Հայոց, հ. Ե, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 1278:

1112 թվականի իրադարձությունների մասին պատմելիս գրում է, որ Վասիլ իշխանն «էր ծայրենէօք յազգէ Կամսարական»[41]:

Կամսարական տոհմից Պահլավունիների վերընձյուղման մասին անշուշտ, վկայում է այն իրողությունը, որ վերջիններս հաստատված էին Շիրակում (հատկապես Անի քաղաքում), որն ինչպես հայտնի է, Կամսարական տոհմի տիրույթն էր: VII դարում Շիրակում Պահլավունի-Կամսարականների իշխանության մասին կողմնակի ապացույց կարող է ծառայել Սեբեոս պատմագրի մի վկայությունը, որի համաձայն, 652թ. Հայաստան արշաված Բյուզանդիայի Կոստանդ կայսրին դիմավորող հայ նախարարների մեջ էին նաև «Շիրակացիք»[42], որոնք հավանաբար, Կամսարականներն էին, գուցե նաև նրանց այն ճյուղը, որն իրեն անվանում էր Պահլավունի:

«Շիրակացիք» հավաքական անվանման տակ Սեբեոսը ըստ երևույթին նկատի ունի ոչ միայն Կամսարականների գլխավոր ճյուղին, այլև նրանց տոհմակից Պահլավունիներին, որոնք նույնպես, Կամսարականների այդ ճյուղի հետևողությամբ, անշուշտ, նաև պահի թելադրանքով, հակվել էին բյուզանդական կայսեր կողմը: Հետագայում ևս Կամսարականները դրսևորեցին բյուզանդամետ հակումներ: Ուստի 689թ. Ներսես Կամսարականը Հուստինիանոս II կայսեր կողմից կարգվեց Հայոց իշխան[43]: Մոտ 703թ. Վանանդ գավառում Կամսարական իշխանը գլխովին ջախջախեց արաբական մի զորամասի[44]: Սակայն 774-775թթ. ապստամբությունից հետո Կամսարականների դիրքերը Հայաստանում խիստ թուլացան: Նրանց մի մասը ստիպված հեռացավ Բյուզանդիա, իսկ հայրենիքում մնացածները հետևելով Բագրատունիներին, վերակողմնորոշվեցին դեպի արաբները, պահպանելով Շիրակում և Արշարունիքում իրենց տիրույթները: Ղևոնդ պատմագրի վկայությամբ, 785թ. Ներսես Կամսարական իշխանն իր զորաջոկատով, ուրիշ հայ նախարարների հետ մասնակցում է Դերբենտի լեռնանցքում խազարների դեմ Արմինիայի ոստիկանի մղած մարտերին և զոհ է գնում տարափոխիկ հիվանդությանը[45]: Սակայն դարավերջին Կամսարականների գլխավոր ճյուղը հեռացավ Բյուզանդիա, իր հայրենական տիրույթները՝ Շիրակն ու Արշարունիքը վաճառելով Աշոտ Մսակեր Բագրատունի Հայոց իշխանին (790-826)[46]: Իսկ Կամսարականների այն ճյուղը, որի վրա մեծ էր Բագրատունիների ազդեցությունը,

---

[41] Տես Մատթեոս Ուռհայեցի, էջ 324:
[42] Տես Պատմութիւն Սեբէոսի, աշխ. Գ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 165:
[43] Տես Ստեփաննոս Տարոնեցի, II, Բ, էջ 101:
[44] Տես Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 95:
[45] Տես Ղևոնդ, ԼԹ, էջ 160-161:
[46] Տես Ստեփաննոս Տարոնեցի, II, Բ, էջ 106:

հավանաբար ընդունեց նրանց գերակայությունը և նրանց հովանու ներքո պահպանեց Շիրակում ունեցած իր տիրույթների մի մասը, այդ թվում նաև Անի ամրոցը: Գուցե նրանք գերադասեցին չկրել արաբների ախոյան Բյուզանդիայի կողմն անցած Կամսարականների տոհմանունն, (անշուշտ արաբների թշնամանքը չհարուցելու կանխահոգությամբ) և պահպանեցին Պահլավունի անունը: IX դարում Պահլավունիները հավատարմորեն զորակցելով Բագրատունիներին, բոլորանվեր ջանքերով ծառայում էին նրանց զորքերում: Դա էականորեն պայմանավորեց նրանց ռազմա-քաղաքական վերելքը, որը զգալի էր հավանաբար IX դարի երկրորդ կեսին: Թերևս այդ է պատճառը, որ Գրիգոր Մագիստրոսը Պահլավունի իշխաններից առաջինը հիշատակում է Արտակին՝ Կամսարյան տոհմանունով: Սյունյաց Հովհաննես արքեպիսկոպոսին ուղարկած պատասխան թղթում իր հորեղբոր՝ Վահրամ սպարապետի մահվան առթիվ Մագիստրոսը նրան հիշում է հետևյալ խոսքերով. «Բազմեսցիս գոգս ի մեծին Գրիգորի և ի հաւուն քո Ապուղամրի և Կամսարեանն Արտակայ... ի գաւառէն Պարթևաց, ի քաղաքէ Պահլաւ, ի ցեղէ Արշակունի, շառաւիղ մերոյն Լուսաւորչին»[47]:

Արտակ Պահլավունու («Կամսարյան») զավակի Ապուղամրի որդի Գրիգոր Համզե Պահլավունին իր կողակցի՝ Շուշան տիկնոջ կողմից Կուաշ (Կոշ) ավանում 981թ. թողած արձանագրությունում հիշվում է Սմբատ II Բագրատունի թագավորի (977-990) և Խաչիկ I Արշարունի կաթողիկոսի (973-991) հետ միասին[48]: Գրիգոր Համզեն վախճանվել է 40 տարեկան հասակում: Սակայն նրա մահվան թվականը որևէ աղբյուրում չի վկայված: Գրիգոր Համզեի վախճանվելու տարի է համարվել 982 թվականը[49], կամ 982-987թթ. միջև ընկած ժամանակահատվածը՝ «միջին հաշվով» 985-ը[50] ըստ այդմ նրա ծննդյան տարին ընկնում է մոտավորապես 942-945թթ., որն իհարկե, վերապահելի է, քանի որ նրա ծննդյան թվականը նույնպես չի նշվում սկզբնաղբյուրներում: Այդուամենայնիվ, անգամ նշյալ թվականները մոտավոր համարելու պարագայում, կարելի է հավանական համարել, որ Գրիգոր Համզեի հայր Ապուղամրն ապրել է X դարում: Նրա օրոք 961թ. Անին հռչակվել է Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք:

Այդ պահից սկսվեց Պահլավունի տոհմի քաղաքական վերասլացքը: Ապուղամրի լայնահուն գործունեությամբ Պահլավունիները հետզհե-

---

[47] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 40:
[48] Տես Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 145-146:
[49] Տես Մ. Չամչեան, նշվ. աշխ., Բ, էջ 892, Ղ. Ալիշան, Շնորհալի..., էջ 12:
[50] Ն. Ակինեան, նշվ. աշխ., էջ 17:

տե հասան քաղաքական նոր բարձունքների, ուստի տոհմը կոչվեց նաև նրա անունով Ապուղամրենք, կրելով նաև Պահլավունի տոհմանունը:

Այդպիսով Կամսարականների երկրորդական տոհմաճյուղերից մեկն իշխում է Կամսարականների տիրույթ Շիրակ գավառի մի մասում Անի ամրոցով հանդերձ: Եվ որովհետև VIII դ. վերջին Կամսարականների գլխավոր ճյուղի կողմից Շիրակը վաճառվեց Բագրատունիներին, ուստի Կամսարականների երկրորդական այդ ճյուղը Պահլավունի տոհմանվամբ, ընդունեց Բագրատունիների գերակայությունը և, ըստ հարկի, զորակից եղավ նրանց միարարական ջանքերին, ռազմա-քաղաքական և հոգևոր-մշակութային բազմաբեղուն գործունեությամբ հասնելով առաջնակարգ դիրքերի:

Գլուխ երկրորդ

Պահլավունի տոհմը վերելքի ճանապարհին

Ապուղամր Պահլավունու օրոք, 961թ., ինչպես նշվեց, Անին դարձավ Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք: Այդ ժամանակաշրջանում Պահլավունի տոհմը մեծ ազդեցություն է ձեռք բերում: Ապուղամրից սկսվում է նրա քաղաքական վերելքը, ուստի, ինչպես նշվեց, Պահլավունիները կոչվեցին նաև նրա անունով՝ Ապուղամրենք: Այս իշխանի բարձրազդեցիկ գործառնության, Հայաստանի քաղաքական բեմում նրա խաղացած աչքառու դերի լուռ վկան է Անիի հյուսիս-արևմտյան թաղամասում X դարի երկրորդ կեսին նրա որդու՝ Գրիգոր Համզե Պահլավունու պատվերով կառուցված գմբեթավոր եկեղեցին, որը կրում է Ապուղամրենց անունը[51]: Այդ եկեղեցին Պահլավունի տոհմի ջանքերով Անի քաղաքում վեր խոյացած հնագույն կոթողն է: Եկեղեցուն կից էր Պահլավունիների տոհմական դամբարանը՝ կառուցված Ապուղամրի թոռան՝ Ապլղարիբի կողմից: Այն ուներ երկու մատուռ՝ Ս. Ստեփաննոս և Քրիստափոր անուններով[52]: Անիում նույն Ապլղարիբի կողմից կառուցված եկեղեցու որմին փորագրված արձանագրության մեջ այս իշխանն իրեն անվանում է «Որդի Գրիգորո իշխանի և թոռն Ապուղամրի»[53]:

Գրիգոր Համզեն շարունակեց հոր ուղեգիծը: Հայոց թագավորության սպարապետի պաշտոնը շնորհվում է նրան: Սովորաբար Բագրատունի թագավորներն այդ գործակալությունը վստահում էին իրենց մոտիկ հարազատներին: Բայց X դարի երկրորդ կեսերին Ապուղամրենց անունը կրող Պահլավունիների ազդեցությունն այնքան էր մեծացել, որ Գրիգոր Համզե Պահլավունուն շնորհվում է այդ պաշտոնը: 981թ. Կուաշի վերը հիշված արձանագիր հիշատակարանում նրա կողակից Շուշանն ամուսնուն հիշում է որպես սպարապետ՝ Սմբատ II Բագրատունի թագավորի ու Խաչիկ Արշարունի կաթողիկոսի կողքին: Արձանագրության մեջ ասվում է.

«Նև թուականին, ի կաթողիկոսութեան տեառն Խաչկա և ի թագաւորութեանն Սմբատա և ի յասպարապետութեան Գրիգորի»[54]:

Գրիգոր Համզեն աչքի է ընկել նաև եկեղեցանպաստ գործունեությամբ, բարեգործական ձեռնարկումներով: Հոր հիշատակը հավերժացնե-

---

[51] Տես Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 53:
[52] Տես Դիվան հայ վիմագրության, I, էջ 33:
[53] Տես նույն տեղում, էջ 44:
[54] Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 145-146:

լու նպատակով նա Անիում կառուցում է Ապուղամրենց Ս. Գրիգոր եկեղեցին, որտեղ նա թողնում է հետևյալ արձանագրությունը.

«Քրիստոս Աստուած, յորժամ գաս փառոք հաւր ի նորոգել զերկիր, ողորմեա Գրիգորո ծառայի քո»[55]:

Գրիգոր Մագիստրոսն իր պապին Գրիգոր Համզեին և նրա կողակցին դիտում է որպես Սահակ Պարթևի հավատարիմ հետնորդներ, նրա սրբասուրբ պատգամների ավանդապահներ, որոնք ըստ նրա, «արծարծեցին զկարգ և զօրէնսդրութիւն մեծին Սահակայ քոյին նախնւոյն և վանս նորագոյնս շինեալ բազումս, և զաւերեալսն նորոգեալ և այս անթիւս. սոցա ոչ էր այլ ինչ, եթէ ոչ գնել զգերեալսն, ազատել զբանտարկեալսն, կերակրել զքաղցեալսն, արբուցանել զծարաւեալսն, ուսուցանել զմանկունս, սնուցանել զորբս, օթեվան լինել այրեաց, զընդբռնեալսն ի ձեռաց հզօրաց կորզել, իւրովին ձեռօք իսկ կերակրել զաղքատս և զկրօնաւորս, ամուսնացուցանել զորբս ընդ միմեանս ողջախոհ և քրիստոսական կրօնիւք»[56]:

Այս վկայությամբ հավաստվում է, որ Գրիգոր Համզեն և իր տիկինը կառուցել են բազմաթիվ եկեղեցիներ, նորոգել խարխլվածները, փրկագնել գերյալների, ազատել կալանվածների, ուսուցանել են երեխաների, դաստիարակել որբերի, հովանավորել այրիացածների և այլն: Հավանաբար նրանք իրենց հիմնած վանական հաստատություններին կից հիմնել են նաև դպրոցներ:

Գրիգոր Մագիստրոսը իր պապին պճնում է բարեգործի և սրբահեզ ու մաքրակենցաղ վարք ունեցողի լուսապսակով: Նա նշում է, որ թե Գրիգոր Համզեն և թե նրա կողակիցը «յիւրեանց իսկ կենցաղավարութեանն ամենայն բարեգործութեամբ կատարեալ և մաքրական վարուք և ողջախոհ ամուսնութեամբ և հանապազօր սաղմոսերգութեամբ և աղքատասիրութեամբ և հիւրընկալութեամբ. որոց վարք օրէնք ամենայն Հայաստանեայց տուաւ»[57]:

Պապի ու տատի բարեպաշտությունն ու ազգասիրությունը շեշտելով Գրիգոր Մագիստրոսը գրում է.

«Ո՞ ոք վախճանէր և ոչ անդր ընթացեալք յուղարկաւորք լինէին գնացելոյն և մխիթար մնացելոյն ո՞ոք պարտապան, երթեալ առ նոսա և ոչ հատուցանէին, կամ տրտմեալ և անմխիթար ելանէր յարկաց նոցա, կամ հիւանդ ոք զորս ոչ տեսանէին, կամ տնակ զորս ոչ ժողովէին. և ի վերայ այսր ամենայնի պահովք և աղօթիւք վերագոյն քան զանապատա-

---

[55] Դիվան հայ վիմագրության, I, էջ 31:
[56] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 42-43:
[57] Նույն տեղում, էջ 43:

կանսն երևէալ և քաջութեամբ սքանչելի և հեզութեամբ զարմանալի և գեղով չքնաղ»[58]:

Սակայն սկզբնաղբյուրներում չի հիշվում, թե Գրիգոր Համզեն իբրև Հայոց սպարապետ, ինչ մարտեր է մղել, ինչով է աչքի ընկել: Թեև Մագիստրոսը նրան բնութագրում է որպես «քաջությամբ սքանչելի», սակայն չի որոշակիացնում իր խոսքը: Գրիգոր Համզեի սպարապետության տարիներին Հայոց Բագրատունյաց թագավորությունը համեմատական խաղաղակեցություն էր վայելում: Սակայն արտաքին վտանգը թեև սպառնալից չէր, բայց երբեմնակի զգալ էր տալիս իրեն: Այսպես, Ասողիկը վկայում է, որ 982թ. դելմիկների առաջնորդ, Սալարյան Աբլհաճ (Աբուլ-Հայջա) ամիրան ներխուժելով Բագրատունյաց թագավորություն, գրավում է Դվինը, ապա թափանցում Շիրակ գավառ: Նրա հրոսակները մոտեցել են Անի մայրաքաղաքին, ավերելով նրա մերձակայքում գտնվող Հոռոմոսի վանքը[59]: Գուցե ամիրայի զորքին դիմակայել են Գրիգոր Համզեի գլխավորած հայ պատերազմիկները: Թեև այդ մասին վկայող վկայություններ չկան, բայց իբրև սպարապետ, նա հարկ է որ ձեռնարկեր անհրաժեշտ քայլեր՝ օտար հարձակմանը դիմակայելու համար:

Գրիգոր Համզեի վախճանվելու ժամանակ կինը՝ տիկնանց տիկին Շուշանն ընդամենը 30 տարեկան էր: Գրիգոր Մագիստրոսը հորեղբոր՝ Վահրամ Պահլավունու մահվան առթիվ գրում է, որ վերջինիս հայրը՝ Գրիգոր Համզեն «քառասնից եղեալ ամաց՝ ուղղափառ խոստովանութեամբ փոխեալ առ Աստուած, թողլով զմայրն քո ամաց երեսնից, որ ի նմին իսկ կրօնից արժանացեալ խարազանազգեստ և անսուաղ ճգնութեամբ բազմամեայ խաչակցութեամբ կեցեալ և ժուժկալեալ ննջեաց... Այժմ զքեզ ընկալաւ Գրիգոր. այժմ զպարանոցաւ քո փարեցաւ Շուշան»: Ընդսմին Մագիստրոսը տատին՝ Շուշանին հիշում է որպես «զամենառաքինասէր մայրն»[60]:

Այդպիսով ամուսնու մահվանից հետո Շուշանը կրոնավորել է՝ «խարազանազգեստ և անսուաղ ճգնութեամբ բազմամեայ խաչակցութեամբ» ցկյանս ապրելով ժուժկալ կյանքով: Նա ևս աչքի է ընկել եկեղեցանպաստ և այլ կարգի բարենպատակ գործերով: Այս մասին վկայված է նրա թողած արձանագրություններում: Այսպես, ամուսնու կառուցած Ս. Գրիգոր եկեղեցու մուտքի բարավորի վրա նրա թողած արձանագրության մեջ ասվում է. «Յանուն Աստուծոյ, կամ եղեւ իմ Շուշանա տիկնաց տիկնոջ, որ ետու զմրուանա կուղպակն ի սուրբ Գրիգոր: Ջ դրամ: Լ: Սեդաի եւ: Ծ: Մրուա-

---

[58] Նույն տեղում:
[59] Տես Ստեփանոս Տարոնեցի (Ասողիկ), III, ԺԲ, էջ 188:
[60] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 43:

նա»[61]: Ըստ այդմ բարեպաշտ տիկինը Ս. Գրիգոր եկեղեցուն պարտավորեցնում է պատարագ մատուցել Սեդայի համար՝ 30, Մրվանի համար 50 դրամի արժողությամբ: «Դրամի» տակ նկատի է առնված Աբբասյան խալիֆայության ազդեցության ոլորտի երկրներում շրջանառության մեջ գործածվող արծաթե դրամը դիրհեմը (մոտ 3 գրամ քաշով), որն ուներ միջազգային շրջանառություն[62]: Արձանագրության մեջ հիշվող Սեդան Գրիգոր Համզեի և Շուշանի դուստրն էր: Այս մասին վկայված է նրանց որդու Ապլղարիբի թողած մի արձանագրության մեջ[63], որտեղ հիշվում է նաև վերջինիս եղբայր Համզեն, բայց չի նշվում Մրվանի անունը: Ենթադրվում է, որ Մրվանը Գրիգորի և Շուշանի որդին էր[64], կամ Սեդայի ամուսինը[65]: Բայց այդ ենթադրությունը հաստատող վկայություններ չկան: Իհարկե, այն փաստը, որ Շուշանը Ս. Գրիգոր եկեղեցուն է նվիրել Մրվանա կուղպակը (խանութը)՝ պատարագ մատուցելու համար, թույլ է տալիս կարծելու, որ կուղպակի տերը եղել է նրա մերձավորներից մեկը: Այս առումով ուշագրավ է, որ այդ կուղպակը հիշատակվում է նաև 994թ. նույն եկեղեցում Շուշանի թողած մեկ այլ արձանագրության մեջ, ուր ասվում է.

«Կամաւքն Աստուծոյ ի: ՆԽԳ: թուին, ես Շուշան տիկնաց տիկին, զուգակից Գրիգորո իշխանի, ետու զՄրուանա կուղպակս ի սուրբ Գրիգոր, իսկ որ հակառ գա յիմոց կամ յաւտարաց: ՅԺԸ-ից նզոված է հոգով եւ մարմնով»[66]: Այստեղ արդեն Մրվանը անձնանուն չէ, այլ կուղպակի, գուցե և փողոցի կամ թաղամասի անուն (ավելի հավանական է՝ կրպակի անուն)[67]:

Կարելի է կարծել, որ Մրվանը Շուշանի եղբայրն էր: Վահրամ Պահլավունին Մարմաշենի արձանագրության մեջ հիշում է եղբայրներին, առանց Մրվանի անունը տալու[68]: Անիի Ապուղամրենց եկեղեցու որմին Շուշանի որդու՝ Ապլղարիբի թողած արձանագրության մեջ հիշում է եղբորը Համզեին, քրոջը Սեդային, ծնողներին, առանց Մրվանի անվան հիշատակության[69]:

---

[61] Դիվան հայ վիմագրության, I, էջ 31:
[62] Տես Խ. Մուշեղյան, Դրամական շրջանառությունը Հայաստանում, Երևան, 1983, էջ 197-198:
[63] Տես Դիվան հայ վիմագրության, I, էջ 33:
[64] Տես Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 53:
[65] Տես Ն. Ակինյան, նշվ. աշխ, էջ 18:
[66] Դիվան հայ վիմագրության, I, էջ 32:
[67] Տես Գ.Ս. Գրիգորյան, Նվիրատվություններ Անիի եկեղեցիներին ու վանքերին IX-XIV դդ., Ս. Էջմիածին, 2002թ., էջ 15-16:
[68] Տես Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 148:
[69] Տես Դիվան հայ վիմագրության, I, էջ 33:

Տիկնաց տիկին Շուշանը որդու՝ Վահրամ սպարապետի հետ մասնակցեց նաև Մարմաշենի վանքի շինությանը: Այդ մասին Վահրամը հիշում է նույն վանքում թողած արձանագրության մեջ[70]: Այդ վանքի կառուցումն ավարտվել է 1029թ., հետևաբար, Շուշանն այդ թվականին դեռևս կենդանի էր: 1040թ. նա արդեն վախճանվել էր: Դա հավաստվում է այն փաստով, որ նույն թվին նրա որդի Ապլղարիբը նրա, ինչպես և հոր, քրոջ և եղբոր հիշատակին պատարագ է հաստատել տալիս[71]:

---

[70] Տես И. Орбели, Надписи Мармашена («Избранные труды», Ереван, 1963, с. 442): Մարմաշենի վանքն ամրակառույց էր՝ «ամրապատ պարսպօք եւ աշտարակօք»,- գրում է Գրիգոր Մագիստրոսը (Թղթեր, էջ 141):

[71] Տես Դիվան հայ վիմագրության, I, էջ 33:

Գլուխ երրորդ

Վասակ Հոլում Պահլավունի սպարապետը

Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ Հովհաննես-Սմբատ թագավորի (1020-1040) օրոք Վասակ Հոլում Պահլավունին (Վահրամի ավագ եղբայրը) վարում էր Հայոց սպարապետի պաշտոնը[72], որը փաստորեն դարձել էր Պահլավունիների մենաշնորհը: Վասակը տիրում էր Բջնիին, Կայանին, Կայծոնին և այլ վայրերի: Նա Բջնին դարձրեց իր իշխանանիստը, նկատի առնելով նրա անառիկ ու իշխող դիրքը: Հրազդան գետի կիրճի երկայնքով, ձորամիջում գտնվող Բջնին իբրև բնական պաշտպանական ամրություն, ուներ մեծ առավելություններ ոսոխ ուժերին համառ ու երկարատև դիմադրություն ցույց տալու, նրանց ուժերը ջլատելու համար: Ուստի ուղղաբերձ ժայռերով եզերված բարձրադիր այդ վայրում Վասակը հիմնեց իր ամրոցը, որը պաշտպանելու էր ոչ միայն ամրոցի ստորոտում գտնվող Բջնի բերդաքաղաքը (այժմյան Բջնի գյուղի տեղում), այլև Բագրատունիների Հայոց թագավորության կենտրոնական շրջանները հյուսիսից և արևելքից: Ամրոցի հարավային և արևելյան, մասամբ արևմտյան կողմերը պաշտպանված են մեծազանգված ժայռերից գոյացած բնական պարսպապատերով: Ամրոցի հյուսիսային և արևմտյան խոցելի կողմերում կառուցվեցին աշտարակավոր պարիսպներ (այժմ կիսականգուն)[73]: Ամրոցի պաշտպանության շնորհիվ Բջնին ծաղկում ապրեց՝ Պահլավունիների հովանու ներքո վերածվելով կրթական, մշակութային հայտնի կենտրոնի, որտեղ զարգացավ նաև գրչության արվեստը:

Վասակ Պահլավունին մասնակցեց նաև Մարմաշենի եկեղեցու կառուցմանը[74], որի ավարտն ավա՜ղ, նրան վիճակված չէր տեսնել: Վասակը, որպես Պահլավունի, մեծ հեղինակություն էր վայելում Բագրատունիների արքունիքում: Մարմաշենի արձանագրության մեջ Վասակը հիշվում է որպես իշխանաց իշխան: 1020թ. Հայոց թագավորի գահը ժառանգեց Հովհաննես-Սմբատը: Նրա իրավունքը վիճարկվեց եղբոր՝ Աշոտի կողմից, որը ստվարաթիվ զորքով (ըստ Ուռհայեցու չափազանցված տեղեկության՝ 40 հազար հետևազոր և 20 հազար այրուձի) հարձակվեց եղբոր վրա և պարտության մատնեց նրան: Արյունոտ վեճը հարթվեց Վասակ և Վահրամ Պահլավունիների միջամտությամբ: Նրանց միացան նաև Կարսի Աբաս Բագրատունի թագավորը և Վրաց և ափխազաց թագավոր Գեորգի

---

[72] Մատթեոս Ուռհայեցի, էջ 11:

[73] Տես Ստ. մնացականյան, Երևանը և նրա շրջակայքը. ճարտարապետական հուշարձաններ, Երևան, 1971, էջ 184-186:

[74] Տես И. Орбели, Надписи Мармашена, с. 442.

I–ը (1014-1027): «Խորհեցան,- գրում է Ուռհայեցին,- Բագրատունիքն և Պահլավունիքն և այլ ամենայն ազատագունդ զօրքն հայկազանց առնել խաղաղութիւն ի մէջ Յովհաննիսի և Աշոտոյ»: Աշոտն ստիպված տեղի տվեց խաղարարների առջև, համաձայնվելով թագավորական իշխանությունը կիսել եղբոր հետ, իսկ նրա մահվանից հետո միայնակ թագավորել Բագրատունյաց Հայաստանում:

Վասակ Հոլումը հատկապես աչքի ընկավ օտար հրոսախմբերի դեմ մղված կռիվներում: Արիստակես Լաստիվերցին նրան հիշում է «քաջ» մականունով[75]: 1021թ. օտար ցեղերից մեկը Նախճավանի և Դվինի վրայով խուժեց Այրարատի Նիգ գավառ: Մատենագիրներն այս հրոսախմբին հիշում են դելումք (դելմիկներ) անունով[76]: Վարդան Արևելցին սխալմամբ այս արշավանքը վերագրում է սելջուկյան սուլթան Տուղրիլ բեկին, ելնելով հարձակվողների թյուրք լինելու հանգամանքից: Նա գրում է, որ «ի գալ Թուրքին ի Դուին և սփռել ասպատակս, ել ընդդէմ նոցա քաջն Վասակ, և ցուցեալ մեծ քաջութիւն դառնայ ի Սերկևիլի»: Պատմագիրը նշված արշավանքը դնում է հայոց 470թ.[77], իմա՝ 1021թ.:

Ենթադրվում է, որ Նիգ գավառ ներխուժած հրոսախումբը Ատրպատականում իշխող Ռավվադյան ամիրայական տան և Գանձակի Շադդադյանների զորքերն էին, որոնց կազմում բացի դայլամցիներից (դելմիկներից) կային նաև թյուրք-օղուզներ[78]:

Թշնամու զորքը, ներխուժելով Նիգ գավառ, հայտնվում է Բջնի ամրոցի մատույցներում: Ինչպես հավաստում է Ուռհայեցին, Վասակ Հոլումն իր որդու՝ Գրիգոր Մագիստրոսի և «փառավոր» ուրիշ իշխանների հետ նստած էր խնջույքի սեղանի մոտ, երբ գուժաբերը հասնելով Բջնիի դարպասներին, բարձրաձայն աղաղակում է՝ «ամբողջ Նիգ գավառը գերվեց»: Այնժամ, շարունակում է մատենագիրը, քաջ զորավար Վասակը գոչեց իբրև առյուծ «և յարուցեալ զգենոյր զգեստ երկաթապատ, և զկնի նորա եւթն այր ազատ, և ըստ պատահելոյ ժամուն այլ հեծելազօրք զկնի նոցա»[79]: Թեև Վասակն իր իշխանության տակ ուներ «արք իբրեւ հինգ հազար», բայց ջանալով ժամ առաջ կանխել արհավիրքը, նա ընդամենը

---

[75] Արիստակես Լաստիվերտցի, էջ 62:

[76] Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 6-7, Մատթեոս Ուռհայեցի, էջ 11:

[77] Վարդան Արևելցի, էջ 98:

[78] Տես С. Агаджанов и К. Юзбашян, К истории тюркских набегов на Армению в XI в. («Палестинский сборник», вып. 13(76), М.-Л., 1965, с.153-155): Տես նաև Ս. Բոռնազյան, Հայաստանը և սելջուկները XI-XII դդ., Երևան, 1980, էջ 36:

[79] Մատթեոս Ուռհայեցի, էջ 11-12:

հինգ հարյուր ռազմիկների հետ շարժվեց թշնամու ստվարաթիվ զորքի դեմ, որը անխնա ասպատակներ էր սփռել իր տիրույթներում:

Մարտադաշտ մեկնելուց առաջ նա Բջնի ամրոցի և իր գերդաստանի պաշտպանությունը դրեց որդու Գրիգորի վրա: Մարտի մեջ մտնելուց առաջ Վասակն ու իր զորայինները եկեղեցում հաղորդություն ստացան և խոստովանանք կատարեցին, որից հետո նա զորքը շարժեց թշնամիների դեմ: Ճորաերթի ժամանակ Վասակն ու յուրայինները մի գյուղում ականատես եղան զարհուրելի տեսարանի: Թշնամին անխնա սրի էր քաշել գյուղի բնակիչներին, որոնց մի մասը ապաստանել էր գյուղի եկեղեցում, սակայն թշնամին այդտեղ ևս անխնա կոտորում էր նրանց: Եվ, ինչպես հաղորդում է Ուռհայեցին, քաջ Վասակն այդ տեսարանից ցնցված «բարձր ձայնով գոչեց իբրև առյուծ» ու խոյացավ թշնամիների վրա և խիզախ զինակիցների հետ միասին սրի քաշեց երեք հարյուր հոգու, մնացածներին մատնելով փախուստի: Այնուհետև Վասակի զորքը նետվում է թշնամու գլխավոր ուժերի դեմ: Հայ քաջորդիները, շարունակում է մատենագիրը, տեսնելով հակառակորդի մեծաստվար բազմությունը, «միաբան զմահ առաջի եդեալ սկսան արիանալ ի պատերազմին և որպէս զգայլս ի մէջ այծեաց և կամ որպէս զարծուիս յերամս ձագուց, այնպէս արիաբար գնացին ի մէջ պատերազմին և զբազումս խոցեալ դիաթաւալ յերկիր ձգէին»:

Պարտության պատճառով վրեժով համակված թշնամու մի թխամորթ (խափշիկ) զորական, որին իր ամեհի ուժի և համարձակության պատճառով «յոթ գայլ» էին անվանում, հագած զենք ու զրահ, առաջ է գալիս և բարձրագոչ աղաղակով մենամարտի է հրավիրում Վասակ Պահլավունուն: Հայ պատերազմիկներից մեկը՝ Եմրան անունով, տեսնելով սևամորթ ածդահային, որն առաջ էր շարժվում՝ «որպէս զլեառն մրրկեալ», գոչում է. «Ահա այր անպարտելի և քաջ, որ այլ չէ ծնեալ ի վերայ երկրի»: Ի պատասխան հնչում են Վասակ Հոլումի խրոխտ խոսքերը. «Ո՛վ առիւծդ և քաջդ Եմրան, վասն էր զարհուրեցար ընդ տեսիլ նորա. ահա ես ելից ընդդէմ նորա և տաց նմա զպարգեւքն, զոր ետ Դաւիթ Գողիաթու հայհոյչին Աստուծոյ»:

Ապա խափշիկը նետվում է Վասակի վրա, կամենալով նիզակի ծայրով վեր բարձրացնել նրան: Սակայն խույս տալով հարվածից, Վասակը հատու շարժումով պողպատյա նիզակն իջեցնում է խափշիկի սաղավարտին և դիաթավալ անում: Այդ տեսարանից ոգեվառված հայ ռազմիկները կուռ շարքերով գրոհում են հակառակորդ զորքի վրա: Սակայն ուժերն անհավասար էին: Արյունահեղ մարտում հերոսի մահով ընկան շատ հայ զինվորներ «յանհուն և զանհնար պատերազմէն ի միմեանց մոլորեալ եղեն դաւաք ազատացն»[80]: Հուսաբեկված հայ զորայինները ցանուցիր են

[80] Մատթեոս Ուռհայեցի, էջ 11-14:

լինում, և միայնակ մնալով Վասակն «իբրև զառիւծ զայրացեալ»՝ ճեղքում է թշնամիների օղակը և հեռանում հոգնած ու ընդարմացած: Պարտության դառնությունը ճաշակած հերոսը ծանրաթախիծ մտորումներով բարձրանում է Սերկևիլի լեռը, նրա գագաթին գրկում գտնելու թալկացած մարմնի հանգիստը: Սակայն դաժան ճակատագրից նա խուսափել չկարողացավ: Քնով անցած հերոսին նկատում են տեղացի շինականները: Վատոգի մեկը ուժգին հարվածում է նրան և ցած գլորում բարձր ժայռից, սպանելով Պահլավունյաց փառասուն հերոսին[81]: Հետագայում Ներսես Շնորհալին իր «Վիպասանութիւն» քերթվածում «թագով փառավորված» Պահլավունիների մասին գրում է, որ տոհմն իր լուսավոր ուղին սկսել է Սահակ Պարթևից և «մինչև ի Վասակ քաջն հասեալ՝ այն որ արեամբ նահատակեալ»[82]: Ամենայն հավանականությամբ, Վասակ Հոլումին ցած գլորող գեղջուկը չի ճանաչել իր զոհին: Ուստի Մխիթար Այրիվանեցին հիշելով Գրիգոր Մագիստրոսին, գրում է, որ «սա է որդին Հոլում Վասակայ շինողին Բջնոյ, Կայենոյ և Կայծոնոյ. զոր յանգէտս սպանին ի Սերկեւլէ»[83]:

Սկզբնաղբյուրներում Վասակի կինը չի հիշվում: Ենթադրվում է, որ Վասակն ամուսնացած էր Ծաղկոտն և Կոգովիտ գավառների տեր Ալուզ իշխանի դստեր հետ[84]: Այս Ալուզը Թովմա Արծրունու և Անանուն պատմագրի երկերին կցված հավելյալ գլխում հիշվում է «մեծաշուք և տիեզերակալ իշխանաց իշխան» մեծադողորդ հորջորջմամբ[85]: Սակայն այս վկայությունը չի կարող կռվան դառնալ վերը նշված ենթադրության համար:

Վասակ Հոլումից մնաց մի որդի Գրիգոր Մագիստրոսը, նաև մի դուստր Սեդա անունով: Ղ. Ալիշանը հիշում է նաև Վասակի երկրորդ որդուն՝ Ապուղամրին՝ վախճանված ծաղկահասակ տարիքում[86]: Պահպանվել է Սեդայի կողմից հոր հիշատակին Բագնայրի վանքին արած նվիրատվության մասին անթվակիր մի արձանագիր հիշատակարան, որտեղ ասվում է. «Ես Սեդա տիկնաց տիկին, դուստր մեծին Վասակայ, զուգակից Վահրամայ իշխանաց իշխանի որդւոյ Աշոտոյ իշխանաց իշխանի.տասանորդեցի զվաստակս գեղջն իմոյ Գաղտայի, ընծայելով ի սուրբ ուխտս Բագնայրիս, վասն յիշատակի զաւրականին Քրիստոսի՝ հաւրն իմոյ Վասակայ փոխեցելոց յաշխարհէս»[87]:

---

[81] Տես նույն տեղում, էջ 14, Սմբատ, էջ 7-8:
[82] Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, Վենետիկ, 1828, էջ 587-588:
[83] Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկուա, 1860, էջ 74:
[84] Տես Ղ. Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, էջ 12:
[85] Տես Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, աշխ. Մ.Դարբինյան-Մելիքյանի, Երևան, 2006, էջ 340:
[86] Տես Ղ. Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, էջ 12:
[87] Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 113:

Այս արձանագրությունից պարզվում է, որ Սեդայի ամուսինը Աշոտ իշխանաց իշխանի որդին էր: Վահրամի հայրը հավանաբար Գագիկ I Բագրատունու զորապետներից մեկն էր, որը 998թ. Ումբի ճակատամարտում զորակից եղավ Վահրամ Պահլավունուն[88]: Ասողիկը նրան հիշում է իբրև մարզպան[89], որն ինչպես հայտնի է, բարձրազդեցիկ գործառույթներով էր օժտված Բագրատունյաց թագավորությունում: Նրա «իշխանաց իշխան» տիտղոսը ժառանգեց որդին՝ Վահրամը Սեդայի ամուսինը:

[88] Տես Ստեփաննոս Տարոնեցի, III, ԽԱ, էջ 270:
[89] Տես նույն տեղում:

Գլուխ չորրորդ

Վահրամ Պահլավունի շինարարը և զորավարը

Գրիգոր Համզեն և Շուշան տիկինն ունեին չորս որդի՝ Վահրամը, Վասակը, Համզեն, Ապլղարիբը և մեկ դուստր՝ Սեղան: Վահրամը հորից ժառանգեց սպարապետության գործակալությունը: Նա իր զորավարական տաղանդով, հմուտ մարտավարությամբ, պատերազմներում ցուցաբերած քաջագործություններով պանծացրեց Պահլավունյաց տոհմը՝ բազմապատկելով հայրենիքի փառքը: Վահրամն աչքի ընկավ նաև շինարարական մեծագործություններով և Հայ Եկեղեցու, քրիստոնեական հավատի հանդեպ ցուցաբերած ջերմեռանդությամբ: Նրա եղբորորդի Գրիգոր Մագիստրոսը հորեղբոր մահվան առթիվ Սյունյաց արքեպիսկոպոսին հղած թղթում Վահրամ զորավարի մասին խոսում է մեծ գովեստով, անելով սրտագեղ որակումներ:

«Որպէս ամենայն տիեզերական բնակութեան Թորգոմեան ազգին ասելի է զայրս զայս իբրև զակն տուընջեան, նաև ոչ միայն մերոցս նահանգի, այլ և այլազանց և այլանդակաց[90]: Քանզի ո՞ոք յառաջագոյն իբրու զսա լուաւ, կամ վերծանեալ ի մատեանս բոլոր դիւանաց գտեալ ընթերցեալ և կամ ո՞ոք ակն ունելով, յուսացաւ լինել սոյնպիսի. զորմէ թուի ինձ եթէ կամեսցի ոք տաղասացութիւնս գովասանական առնել ըստ սովորութեան պուետիկոսաց, պարտեալ յանճառելիսն սորա յուսայ առաքինութեանցն ծայր. վասնզի զոր ըստ արժանն վարկցի ճշմարտել, զոր եթէ նախքան զմեզ եղեալ սորա, էր արդարեւ անհաւատալի, և առասպել զպատմութիւնն կարծէաք իբրև զելլենացւոց հոմերական առասութիւնս, որ յաղագս դիւցազանցն»[91]:

Եղբորորդու սրտագեղ խոսքերը հավաստում են, որ Վահրամ Պահլավունին, որ գերազանցել է ժամանակակիցներին իր քաջապանծ գործերով, արժանի է դյուցազնաշունչ գովքերի, որոնք Մագիստրոսը տաղասացների համար դիտում է որպես անհաս բարձունք, հար և նման հելլենական դյուցազունների մասին հոմերոսյան ասքերի: Վահրամ զորավարի կյանքը հերոսական էր: Նա իր սխրանքներով ոգի և ավյուն էր հաղորդում իր դարաշրջանին: Նրա խրոխտապանծ կերպարում թրթռում է հայրենաշունչ ոգին, զգացվում է նախնյաց փառասուն ավանդույթի շունչը:

Վահրամ Պահլավունին ոչ միայն պանծացրեց հայոց զենքի փառքը, այլև իր շինարարական մեծագործություններով շարունակեց ու զար-

---

[90] «Այլանդակ» բառն այստեղ ունի «օտարական» իմաստը:

[91] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 37-38:

գացրեց նախնյաց ավանդները: Տակավին 988 թ. նա նոր և եղբայրների հետ սկսեց կառուցել Մարմաշենի վանքը Շիրակում, Ախուրյանի ձախ ափին: Վանքը դարձավ Բագրատունիների Հայոց թագավորության շքեղաշուք կոթողներից մեկը. երկրամասի հոգևոր-մշակութային բաբախուն կենտրոնը: Եկեղեցու որմին Վահրամի թողած արձանագրության մեջ ասվում է.

«Շնորհիւն Աստուծոյ ես Վահրամ իշխանաց իշխան և անթիպատ պատրիկ, որդի Գրիգորի իշխանի Հայոց Մեծաց, ի ցեղէ Պահլավունի և ի զարմից սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի որ յաղագս ի Քրիստոս յուսոյն հիմնադրեցի զսուրբ զտիեզերական ուխտս Մարմաշէն սկսեալ ի ՆԼԷ (988) թուականին Հայոց յաւուրս Սմբատայ որդւոյ Աշոտոյ Հայոց թագաւորի մինչև ի ժամանակս Յովանիսի որդւոյ Գագկայ Հայոց շահանշահի առն իմաստնոյ շինողի և խաղաղարարի եւ ի թուականս Հայոց ՆՀԸ (1029): Եւ կատարեցաք մեծ ջանիւ եւ բազում ծախիւք ես և մայր իմ Շուշանիկ Հայոց տիկնաց տիկին և եղբարք իմ Վասակ իշխան որ նահատակեցաւ ի թուրքաց պատերազմի և Աբլխարիբ Հայոց մարզպան և մանուկն Համզէ որք էաք ամենայն տամբ և տոհմիւ հաւատարիմք տերանց մերոց և նահատակեալ ի վերա տանս Հայոց աշխատութեամբ և արեամբ մեր և որդւոց մերոց և գանձուց առատութեամբ և ամենայն հնարիւք խնդրեաք զխաղաղութիւնն աշխարհիս և զհաստատութիւնն եկեղեցեաց: Շինեցաք և այլ բազում եկեղեցիս և վանորայս բայց զտեղի հանգստեանս մերոյ առաւել պատուով մեծածուցաք եւ լիացուցաք ամենայն գոյիւք լերամբք և դաշտաւք. աւանդեցաք ի սա գեղս եւ ագարակս գանձագինս... Եւ զարդարեցաք զսա ամենայն կազմութեամբ ի յիշատակ յաւիտենից մեզ և որդւոց մերոց եւ կարգեցաք ի ծեռն սուրբ հաւր Երեմիայի և որ զկնի յաջորդեցաւ Սոսթենէս նորին որդիացեալ և փոխարէն հատուցման ընկալեալ մեր ի ժառանգաւորաց սուրբ ուխտիս տարին Զ. քառասունք անխափան մինչև ի գալուստն Քրիստոսի»[92]:

Արձանագրության մեջ շեշտվում է Պահլավունիների հավատարմությունը Հայոց Բագրատունի թագավորների նկատմամբ և Հայրենի երկրի համար կյանքները զոհաբերելու վճռականությունը: Պահլավունիները բոլորանվեր ջանքերով պաշտպանել են Հայրենիքի քաղաքական անդորրը, չեն խնայել իրենց նյութական միջոցները, գանձերը քրիստո-

---

[92] И. Орбели, Надписи Мармашена, с. 442. Մարմաշենում կառուցված հինգ եկեղեցիներից երեքը կողք կողքի են: Նրանցից մեծում Վահրամը փորագրել տվեց վերոնշյալ արձանագրությունը: Մեծ եկեղեցին միջնադարյան հայ ճարտարապետների գլուխգործոցներից մեկն է (Н. Токарский, Архитектура Армении IV-XIV в.в., с. 48): Մարմաշենի չորրորդ եկեղեցին ունի կլոր հիմք: Այն պեղվեց 1950թ., իսկ հինգերորդ եկեղեցու ավերակները գտնվում են Մարմաշենի վանքի հիմնական խմբից հյուսիս ընկած բլրի վրա (նույն տեղում, էջ 217):

սադիր հավատքն ու Հայ առաքելադրոշմ եկեղեցու դավանական ինքնագո կերպը անխաթար պահելու համար: Նշվում է նաև, որ նրանք կառուցել են շատ վանքեր ու եկեղեցիներ, սակայն Մարմաշենի վանքն իբրև իրենց տոհմական դամբանատեղի, նախամեծար են համարել, լիուլի օժտելով կալվածներով, գյուղերով ու ագարակներով, անհրաժեշտ պիտավայրերով:

Սամուել Անեցին գովեստով է հիշում Վահրամ Պահլավունուն, որպես «քրիստոսասեր իշխանաց իշխանի», որի ջանքերով վեր է խոյացել «մեծանուն և վայելչաշէն, զարմանակերտ և հոյակապ» Մարմաշենի վանքը[93]: Վահրամի եկեղեցանպաստ ուղեգծի դրսևորում էր նաև Մաստարայի Ս. Հովհաննես եկեղեցու վերանորոգումն ու հարկերից ազատելը[94]: Վահրամ Պահլավունին 1026թ. հոյաշուք եկեղեցի է կառուցում Անբերդ (Ամբերդ) բերդաքաղաքում, որն ընկած էր Արագած լեռան հարավային ստորոտում, Քասաղի վտակ Անբերդի և վերջինիս ձախակողմյան վտակ Արքաշենի (Արխաշան) միախառնման տեղում գոյացած եռանկյունաձև հրվանդանի վրա, այժմյան Բյուրական գյուղից մոտ 10 կմ հյուսիս: Հավանաբար Անբերդի դղյակը և պարսպապատի որոշ մասեր կառուցվել են VII դ. Կամսարականների օրոք[95], որոնք հաշվի են առել Անբերդի անմատույց դիրքը (ծովի մակերեվույթից մոտ 2200 մետր բարձր) և պաշտպանական առավելությունները: IX դ. սկզբներին Անբերդին տիրում են Բագրատունիները: Վարդան Արևելցու վկայության համաձայն, Գագիկ I-ի վախճանվելուց հետո նրա որդիները բաժանում են թագավորության տարածքները, նրանցից ավագին՝ Հովհաննես-Սմբատին բաժին է հասնում նաև Անբերդը[96]: Սակայն վերջինիս գահակալության տարիներին երկրի պաշտպանության հոգսերը լիովին ծանրացած էին Վահրամ Պահլավունու ուսերին, որը գնահատելով Անբերդի բացառիկ կարևորությունը Անի մայրաքաղաքն արևելքից պաշտպանելու գործում, այն դարձրեց երկրի պաշտպանական կարևոր հենակետերից մեկը, ամրացրեց նրա խոցելի հատվածները: Վահրամն Անբերդի անպաշտպան մասերում կառուցեց երկրորդ պարիսպները, ամրացրեց նաև միջնաբերդի պալատական հա-

---

[93] Տես Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, աշխ. Ա. Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ 103:
[94] Տես Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 136:
[95] Н. Токарский, Архитектура Армении IV-XIV в.в., с. 48, О. Халпахчьян, Гражданское зодчество Армении, М., 1971, с. 99.
[96] Վարդան Արևելցի, էջ 92:

մալիրը, հին պարսպապատերը և աշտարակները[97]: Նա Անբերդը դարձրեց նաև իր գերդաստանի ամառանոցավայր:

Անբերդի պեղումներից հայտնաբերված զինամիջոցների առատությունը (նիզակներ, նետասլաքներ, կացիններ, փայտե և կաշվե վահաններ, դաշույններ և այլն) թույլ է տալիս կարծելու, որ Անբերդն իբրև պաշտպանական հույժ կարևոր հենավայր, ունեցել է զենքեր արտադրող արհեստանոցներ, որոնց միջոցով նրա բնակիչները կարողացել են պաշարումների ժամանակ դիմադրել թշնամիներին[98]: Վահրամ Պահլավունու ջանքերով է կառուցվել Անբերդի առաջին գաղտնուղին, որը դրյակից հասնում էր Անբերդ գետ[99]: Վահրամ Պահլավունու օրոք աճեց Անբերդի բնակչության թիվը (նրա կողմից բերդաքաղաքի պարիսպների երկրորդ գծի կառուցումը դրանով էր թելադրված): Անբերդ բերդաքաղաքը նաև արհեստագործական կենտրոն էր, որի բնակչությանն սպասարկելու համար կային խեցեղենի, պղնձե և երկաթե իրեր պատրաստող արհեստանոցներ[100]:

Պահլավունիների օրոք Անբերդը դարձավ ոչ միայն ռազմա-քաղաքական կարևոր հենակետ, այլև եկեղեցական նշանավոր կենտրոն: Շնորհիվ Վահրամ Պահլավունու գործադրած ջանքերի, Անբերդը վերածվեց նաև եպիսկոպոսանիստի: 1036թ. Անբերդի ամրոցի գրեթե կենտրոնում նա կառուցեց կաթուղիկե (մայր) եկեղեցի, որը ցարդ կանգուն է: Այն կենտրոնագմբեթ է, ունի խաչաձև հատակագիծ, արտաքին կողմից ուղղանկյուն քառակուսի հորինվածք, զույգ մուտքեր (հյուսիսից և հարավից)[101]: Անբերդի եկեղեցին նման է Մարմաշենի եկեղեցուն[102]:

Եկեղեցու կառուցումն ավարտելու տարում 1036թ. Վահրամ Պահլավունին նրա բարավորին քանդակել է տվել արձանագրություն[103], որտեղ հաղորդվում է.

«Ամին ՆՀԵ (1026), ես իշխանս Վահրամ շ(ի)նեցի զկաթողիկես աթոռ հարապետական և սահմանեցի պտուղ Նիգի՝ տունն Բ կապիճ ց(ո)

---

[97] Н. Токарский, Архитектура Армении, с. 44, 48, Ս. Հարությունյան, Անբերդ, Երևան, 1978, էջ 20:

[98] Ս. Հարությունյան, Անբերդ, էջ 81-88:

[99] Н. Токарский, По страницам истории армянской архитектуры, Ереван, 1973, с. 38.

[100] Ս. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 103-108:

[101] Նույն տեղում, էջ 50-51:

[102] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. II, Երևան, 1948, էջ 114:

[103] Արձանագրությունն առաջին անգամ վերծանվեց 1922թ. է Գ. Հովսեփյանի և Ե. Տեր-Մինասյանի կողմից (տես Ե. Տեր-Մինասյան, Ամբերդաձորի հնությունները և արձանագրությունները («Էջմիածին», 1961, Ե, էջ 45-46):

րեան, յԱրագածոտնէ յէգին Բ փասգի, ի Քաղքոդաշտի բաբակն Ժ լիտր: Յէրէցն Ա դ(ա)հ(եկեան) յիւրո և ի կնոչէ, Գ դ(ա)հ(եկան) հողադր(ամ): Ձեռնադրելէ Դ: Յանբերդի պտուղ ի տունն Դ կապիճ ց(ո)ր(եան), Ա կտավահատ: Այլ տւաք զջաղացն վերա կարմնճին: Ի պսակի Գ դ(ա)հ(եկան), հողադր(ամ), կնքադր(ամ), տնաւրինէ(ք): Ժողովուրդ, որ ոչ կատարէ, պատժե(ս)ցի յԱստուծոյ: Իշխան, որ տիրէն, հակառ կա, դատի յԱստուծոյ»[104]:

Այս արձանագրությամբ հավաստվում է, որ Վահրամ Պահլավունին կաթողիկե եկեղեցին կառուցել է որպես Անբերդի «հայրապետական» (եպիսկոպոսական) աթոռանիստ: Այնուհետև նշված են Վահրամի հրամանով սահմանված հարկերն ու տուրքերը, որոնք հավաքվելու էին Անբերդի նորահիմն եպիսկոպոսական աթոռի օգտին, վերջինիս իրավասությանը ենթակա եկեղեցական վիճակների ընտանիքներից (ծխերից): Ըստ այդմ Անբերդի աթոռի ենթակայության տակ գտնվող չորս գավառներից կաթողիկեի օգտին գանձվելու էին (բնամթերքով) հետևյալ հասույթները: Նիգ գավառից՝ ցորեն, Արագածոտնից՝ գինի, Քաղաքուդաշտի (Վաղարշապատի) գավառից՝ բամբակ, Անբերդի գավառից՝ ցորեն, կտավատ: Այդպիսով հնարավոր է դառնում որոշել, թե տվյալ գավառում գյուղատնտեսության որ ճյուղն է զարգացած եղել: Սահմանվում են Անբերդի աթոռի օգտին վճարվող հիմնական տուրքի՝ պտղիի չափերը, Նիգ գավառում՝ յուրաքանչյուր ընտանիքից՝ 2 կապիճ (19,744 կգ) ցորեն, Արագածոտնում ամեն մի այգուց՝ երկու փաս[105] (10-11 լիտր) գինի, Քաղաքուդաշտի գավառի յուրաքանչյուր ծխից 10 լիտր (մոտ 4,08 կգ) բամբակ, Անբերդի գավառում ամեն մի տուն պարտավոր էր վճարել 4 կապիճ (մոտ 36 կգ) ցորեն և մեկ կապիճ (8,976 կգ) կտավատ: Արձանագրության մեջ նշված է նաև Արքաշեն գետակի վրայի ջրաղացը Անբերդի աթոռին հատկացնելու մասին: Ընդսմին եկեղեցական արարողությունների, հոգևոր սպասարկությունների դիմաց Անբերդի աթոռին վճարվող հասույթները նշված են ոսկեդրամով (դահեկանով):

Վահրամ Պահլավունու հովանու տակ Անբերդը զարգացում ապրեց, ինչը ցավոք, ընդհատվեց նրա ողբերգական մահվամբ: Ուշագրավ է, որ XI դ. վրաց անանուն ժամանակագիրը նշում է, որ երբ հայերը ծառանալով Բյուզանդիայի դեմ, կամեցան Անին հանձնել վրաց Բագրատ թագավորի մորը՝ Մարիամին՝ Սենեքերիմ Արծրունու դստերը, Անբերդը

---

[104] Ս. Ավագյան, Վիմագրական պրպտումներ, Երևան, 1986, էջ 48-49:

[105] Քաղցուի կամ գինու չափը որոշող հեղուկաչափ (փարչ, թաս), որը հավասար էր 5,32 կգ-ի (տես Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, 1978, էջ 338):

չհանձնվեց վրացիներին[106], անշուշտ, Վահրամ Պահլավունու կամքով: Սակայն Բյուզանդիայի նենգադրուժ քաղաքականության հետևանքով 1045թ. Անբերդը ևս ներկալվեց նրա տիրապետության ոլորտ, իսկ XI դ. կեսերից այն զավթեցին սելջուկ-թյուրքերը: 1196թ. երբ Զաքարե զորավարն ազատագրելով Անբերդը, հանձնեց Վաչուտյաններին, ամրոցը վերստացավ իր նախկին ռազմա-պաշտպանական նշանակությունը[107]:

Վահրամ Պահլավունին պանծացրեց հայոց զենքի հռչակը: Նրա զորավարական տաղանդը դրսևորվեց տակավին 998թ. Վանա լճից ոչ հեռու, Ծումբ անունով գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում, որտեղ հայ-վրացական զորայինները փայլուն հաղթանակ տարան Ատրպատականի Մամլան ամիրայի գերակշիռ ուժերի դեմ (վերջինս սերում էր Թավրիզին իշխող քրդական Ռավվադյան տոհմից)[108]: Հակառակորդը Վասպուրականի Արծրունյաց թագավորության տարածքով շարժվում է դեպի Վանա լճի ոլորտ Ապահունիք գավառ, որը դեռևս 978թ. Բյուզանդիայի Վասիլ II կայսրը ուրիշ գավառների հետ (Հարք, Կարին, Բասեն, Մարդաղի) հանձնել էր Տայք նահանգի տեր Դավիթ Բագրատունուն (կյուրապաղատին), ի տրիտուր Բյուզանդիայի ծագումով հայ զորապետ Վարդ Սկլերոսի կողմից կայսեր դեմ հարուցած ապստամբության ժամանակ վերջինիս նկատմամբ Դավիթ կյուրապաղատի ցուցաբերած զորակցության[109]: Մամլանը նպատակադրվել էր վրիժահատույց լինել Դավիթ կյուրապաղատի նկատմամբ, այն բանի համար, որ վերջինս տիրանալով Մանազկերտ քաղաքին, տեղահանել էր նրա մահմեդական բնակչությանը և այնտեղ բնակեցրել հայերի ու վրացիների: Ասողիկը վկայում է, որ Ատրպատականի ամիրան «կուտե առ ինքն զբազմութիւն զօրացն Պարսից և Մարաց, և օգնականութեամբ ամիրային Խորասանայ և այլ խուժադուժ զօրօք բազմօք խորհի տիրել Հայոց և Վրաց... և յաւարի առնուլ զերկիրն Տայոց, փոխանակ զի ի Մանազկերտ զտուն աղօթից նոցա կործա-

---

[106] Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին հ. Ա, Երևան, 1934, էջ 205-206:

[107] Հ. Մարգարեան, Վաչուտեանների իշխանական տան պատմութիւնից («Շողակաթ», Ստանպուլ, 1995, էջ 40): Ն Տոկարսկու կարծիքով Անիի Առաքելոց եկեղեցու ոճական առանձնահատկություններից երևում է, որ այն նույնպես կառուցել է Վահրամ Պահլավունին (տես Н. Токарский, По страницам истории армянской архитектуры, с. 44): Ախուրյանի ձորում, Գյումրիից 7-8 կմ դեպի հյուսիս-արևմուտք ընկած Վահրամաշեն բերդը (այժմ ավերակ) հավանաբար Վահրամ Պահլավունու ամրոցն էր՝ կառուցված նախաքրիստոնեական բերդի տեղում (Թ. Թորամանյան, նշվ. աշխ., էջ 39, 315):

[108] V. Minorsky, Studies in Caucasian History, London, 1953, p.47.

[109] Տես N. Adontz, Tornik le Moine («Etudes Armeno-Byzantines», Lisbonne, 1965, p.297-298).

նեցին քրիստոնեայք»[110]: Մատթեոս Ուռհայեցու հավաստմամբ, Մամլան ամիրան սպառնալից նամակ է ուղարկում «առ աստուածասէր և սուրբ այրն Աստուծոյ Դավիթ կուրապաղատն», պահանջելով փութապես վճարել տասը տարվա հարկ, ուղարկել պատանդներ և «գիր ծառայության», սպառնալով իր պահանջը մերժելու պարագայում հարձակվել Տայքի կյուրապաղատի վրա «մեծաւ զօրութեամբ», որից վերջինիս ոչ ոք չպետք է կարողանար փրկել[111]:

Դավիթ կյուրապաղատն արդեն ծերացել էր, ուստի սկզբում, «ոչ անձամբն երթայ ի պատերազմ»: Նա օգնակոչով դիմեց Հայոց թագավոր Գագիկ I Բագրատունուն և վրաց Գուրգեն Բագրատունի թագավորին, խնդրելով «տալ զօրս յօգնականութիւն»: Գագիկ I-ը հեռատեսորեն վերահասու եղավ վտանգավոր կացությանը և փութապես վեց հազար հայ ռազմիկների՝ «յընտիր ընտիր վառելոցն՝ գումարէ ի ձեռն իշխանաց իշխանին Վահրամայ, որդւոյ Գրիգորոյ Պահլաւունւոյ», որի հետ էին նաև որդին՝ Սմբատ Մագիստրոսը, Աշոտ մարզպանը և Վանանդի (Կարսի) Աբաս թագավորն իր զորաբաժնով[112]: Ասողիկի այս հաղորդումից երևում է, որ 998թ. Վահրամ Պահլավունին արդեն օժտված էր իշխանաց իշխանի իրավազորությամբ, վարում էր նաև սպարապետի պաշտոնը:, ինչն ապացույց է Պահլավունիների հանդեպ Բագրատունիների վստահության, իհարկե, նաև վերջիններիս նկատմամբ այդ տոհմի ցուցաբերած հավատարմության:

Վրաց Գուրգեն թագավորը ևս վեց հազարանոց օգնական զորք ուղարկեց Ապահունիք՝ վրաց իշխանաց իշխան Փերսիի գլխավորությամբ: Իր հերթին Դավիթ կյուրապաղատը, ինչպես վկայում է Մատթեոս Ուռհայեցին, Մամլանի հոխորտալից նամակից հետո «հրամայեաց ժողով լինել զօրաց իւրոց զազատս և զամենայն հեծելազօրս իւր, զՎաչէ և զՏեւդատ և զՓերսն և զայլ զօրսն Հայոց[113] աշխարհին հետեւակս աղեղնաւորս երեք հազար, և ձիաւորս երկու հազար և հինգ հարիւր»[114]: Այդպիսով Մամլանի զորքին պետք է դիմակայեին հայ-վրացական 17500 պատերազմիկներ: Թշնամին ըստ Ուռհայեցու հաղորդման, մարտադաշտում ուներ 200 հազարանոց զորք[115]: Ասողիկի վկայությամբ «միաբան

---

[110] Տես Ստեփաննոս Տարոնեցի, III, ԽԱ, էջ 270:

[111] Տես Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 35: Ուռհայեցին օգտվել է հայ ժողովրդական վեպից (տես Հ. Մարգարյան, վիպական տարրերը X-XII դարերի հայ պատմագրության մեջ («ՊԲՀ», 1987, N 4, էջ 43-44):

[112] Տես Ստեփաննոս Տարոնեցի, III, ԽԱ, էջ 270-271:

[113] Մատթեոս Ուռհայեցի, էջ 36:

[114] Տես նույն տեղում:

[115] Տես Մատթեոս Ուռհայեցի, էջ 36:

հասանէին զօրքն Հայոց և Վրաց, և չուեալ երթան ի գաւառն Ապահունեաց», բանակելով «յանդիման բանակին Մամլանայ ի բարձրաւանդակ ամրագոյն տեղւոջ մի, ի սահմանս գեղջն Ծմբոյ», որտեղ նրանք մնացին «բազում աւուրս»[116]: Ըստ Ուռհայեցու, Մամլանի զորքը բանակել էր Խոսոնք գյուղում: Մարտի է ելնում նաև տայոց զորքը, որը Դավիթ կյուրապաղատի գլխավորությամբ շարժվում է «ընդդէմ չար գազանին Մամլանայ», հասնելով «ի սահմանս Ապահունեաց»[117], այդպիսով համալրելով մարտադաշտ նետված հայ-վրացական զորքի շարքերը: Ռազմի ելած հակառակորդ ուժերն «ի բազում աւուրս» սպասողական վիճակում էին: Ասողիկը գրում է, որ հայոց և վրաց զորքերը չէին համարձակվում նախահարձակ լինել՝ «ի սաստկութենէ» թշնամու գերակշիռ զորքի և «միայն աղօթիւք պաղատանս առ Աստուած վերառաքէին»[118]:

Սիարկու ախոյանի հետ վերահաս ընդհարման վտանգն ալեկոծել էր Հայաստանն ու Վրաստանը, որոնց թագավորները Ասողիկի վկայությամբ՝ «առատածեռն զողորմութիւնսն աղքատաց բաշխէին, և զցայգսն պաշտօն սաղմոսանուագ երգոց ուխտն սրբութեան հանդերձ հայրապետաւն կատարէին»[119]: Դավիթ կյուրապաղատը ևս ապավինում էր աղոթքներին, մաղթանքներին: Նա, ինչպես հավաստում է Ուռհայեցին, «զամենայն աշխարհն յաղօթս և ի պաղատանս և յաղաչանս մեծաւ պաղատանօք ի խնդրուածս Աստուծոյ կացուցանէր...»[120]:

Իր թվական գերակշռության վրա վստահ թշնամին շարժվեց քրիստոնյա զորքի դեմ «յամսամտին Արեգ ամսոյ, յերեքշաբաթւոջ աւուր ընդ առաւոտանալն»[121], որն ընկնում է 998թ. հոկտեմբերի 18-ին[122]: Մամլանի զինվորները «ճակատ պատրաստէին բազմակրկին յօրինուածով, ռազմ յօրինէին ընդ երեսս լայն դաշտին դելմաստանեան վահանափակովն, գային մերձենային մօտ ի բլուրն բանակին Հայոց և Վրաց»: Այնուհետև նրանք բարձրագոչ աղաղակներով հայ և վրացի ռազմիկներին մարտի են հրավիրում: Վերջիններս չեն ենթարկվում թշնամու գրգռակոչին, այլ լոկ հինգ վրացի մարտիկի ուղարկում են թշնամի զորականների դեմ մենամարտելու համար: Վստահ իր հաղթանակի նկատմամբ, թշնամին իր հեծելազորը նետում է հայ-վրացական զորքի վրա, կամենալով այն վերածել «կապուտ մեռելոց դիականց կամ փախուցելոց»: Հայ և վրաց ռազ-

---

[116] Ստեփաննոս Տարոնեցի, էջ 271:
[117] Մատթեոս Ուռհայեցի, էջ 36:
[118] Ստեփաննոս Տարոնեցի, էջ 217:
[119] Նույն տեղում:
[120] Մատթեոս Ուռհայեցի, էջ 36:
[121] Տես Ստեփաննոս Տարոնեցի, էջ 271:
[122] Հմմտ. Մ. Օրմանեան, Ազգապատում, Ա, սյունակ 1371-1372:

միկները հեծնելով ձիերը խոյացան թշնամիների վրա, առանց նախապես մարտակարգեր կազմելու: Նրանք, ինչպես վկայում է պատմագիրը, «ոչ ըստ օրինաց պատերազմի ճակատ յօրինէին, այլ իւրաքանչիւրքն ըստ տոհմից և աւագութեան գնդից դիմէին, առիւծաբար մռնչելով»[123]:

Ըստ Ուռհայեցու, Ծումբ գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտը բռնկվեց գիշերը, երբ «էր լոյս լուսնին սաստիկ»: Լեռների վրա տեղացած անձրևի պատճառով հայոց և վրաց զինվորների զենք ու զրահները «փայլատակէին իբրեւ զբոց հրոց», որից ահաբեկված այլազգիների զորքը կարծեց, թե «այն ամենայն բազմութիւն զօրաց քրիստոնէիցն իցեն և յայնժամ առ հասարակ ի փախուստ դարձան»[124]: Հայոց զորքը Վահրամ Պահլավունու գլխավորությամբ սրընթաց գրոհեց թշնամու աջակողմյան ստվարաթիվ բազմության վրա և «խուռն խոցուածովք և խիստ և խոր սուսերահար հարկանելով» ջարդեց նրան և արեց ցիրուցան: Քաջաբար էին մարտնչում նաև վրացի ռազմիկները՝ Գամրեկելի եղբայրների հրամանատարությամբ[125]: Հետագայում Վահրամի եղբորորդին՝ Գրիգոր Մագիստրոսը հորեղբոր մահը ողբալով, շեշտում է հայ և վրաց զորքերի մարտակցությունը Վահրամի սպարապետության տարիներին, անշուշտ, նկատի առնելով նաև նշված ճակատամարտում նրանց զինադաշինքը: «Ի Վերիացւոցն,- գրում է նա,- հզօրաց և արիական զօրաց նոցա բազում անգամ մարտակցութեամբ և արեամբ և վաճառմամբ որդեացդ և քոյդ ազգի գնեալ զաշխարհդ. և երբեմն ի նոսա արի երևեալ և հրաշից հիացման արժանի և վեր քան զմտածութիւն»[126]: Վրացիները, շարունակում է մատենագիրը, պարերով ու երգերով էին գովերգում Վահրամի սխրանքները: Նրանք «զքոյդ հանդիսի մրցութիւն տաղս և սռինչս յօրինեալ... ազատագունդն պարէին և ի հրապարակս գռեհից և քաղաքաց իբրու դյուցազանցն երգէին»[127]:

Ծումբի ճակատամարտը պանծացրեց թե հայոց և թե վրաց զինական հռչակը: Այդ հաղթական մարտում, հավաստում է Մատթեոս Ուռհայեցին, «զհետ մտեալ ամենայն զօրօքն արարին զզօրսն անօրինացն փախստական սաստիկ կոտորածով, առին անթիւ և անհամար գերութիւն և աւար ոսկւոյ և արծաթոյ»[128]: Հայ և վրացի ռազմիկները խուճապահար փախչող թշնամիներին հալածեցին մինչև Արծեշ քաղաքի մատույցները՝ «ի սուր սուսերի մաշելով զնոսա մինչև ի մուտս արևուն»,- գրում է Ասողի-

---

[123] Ստեփաննոս Տարոնեցի, էջ 272:
[124] Մատթեոս Ուռհայեցի, էջ 37:
[125] Տես Ստեփաննոս Տարոնեցին, էջ 273:
[126] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 40:
[127] Նույն տեղում:
[128] Մատթեոս Ուռհայեցի, էջ 37:

կը, հավելելով նաև, որ հայերն ու վրացիները տվեցին ընդամենը հինգ զոհ (վրացի զորականներից) և այն էլ ճակատամարտն սկսվելուց առաջ, երբ նրանցից ոմանք մենամարտում էին առաջ նետված հակառակորդ զորայինների հետ[129]:

Վահրամ Պահլավունին ջատագով էր Վրաստանի հետ Հայաստանի զինակցությանը: Նա թերևս համոզված էր, որ այն կարող էր դառնալ հուսալի երաշխիք հարևան ամիրայությունների կողմից հարուցվող սպառնալիքների, նվաճողական նկրտումների դեմ: Ստեղծված պայմաններում կրոնադավանական գործոնը մղվում էր հետին պլան, և առաջնություն էր տրվում ռազմա-քաղաքական գործընթացներին, երկու երկրների մարտական դաշինքին, քանի որ Բյուզանդիան հավասարապես սպառնում էր թե դավանակից Վրաստանին և թե հայադավանությունը քաղաքական ինքնության դրոշ դարձրած Հայաստանին ու նրա առաքելաշավիղ եկեղեցուն: Քաղաքական այդ դիրքորոշումը շարունակվեց նաև հետագայում, Հայոց Բագրատունիների թագավորության անկումից հետո: Ուշագրավ է, որ 1045թ., երբ Բյուզանդիան ջանում էր նենգությամբ տիրանալ Անի մայրաքաղաքին, ծանր կացության մեջ գտնվող «քաղաքացի գլխաւորքն որ նստէին յԱնի», Տաշիր-Զորագետի թագավոր Դավիթ Անհողինին կամ Վրաց և ափխազաց Բագրատունի թագավոր Բագրատ IV-ին առաջարկեցին գրավել Անին, երբ համոզվեցին, որ Գագիկ II թագավորն այլևս չի կարող վերադառնալ Հայաստան[130]:

Ցումբի ճակատամարտից հետո, երկրի համար խիստ բախտորոշ ժամանակաշրջանում, Վահրամ Պահլավունին շարունակեց գլխավորել հայոց զորուժը, օգնելով իր ավագ եղբորը՝ սպարապետ Վասակին:

Վասակ Հոլումի եղբայրը՝ սպարապետ և իշխանաց իշխան Վահրամ Պահլավունին Ցումբի ճակատամարտի հերոսը, առմիշտ հավատարիմ մնաց Հայրենի երկրի ազատությանը, Հայոց անկախության պահպանման նախանձախնդիր իր տոհմի ավանդներին և բոլորանվեր ջանքերով սատար կանգնեց Բագրատունյաց թագավորությանը: Հայրենասեր գործչի, տաղանդավոր զորավարի և նրա հարազատների քաղաքական հավատամքն իր ցայտուն արտահայտությունն է գտել Մարմաշենի վերոնշյալ արձանագրության մեջ, որտեղ Վահրամի ու նրա տոհմակիցների անունից ասվում է. «Էաք ամենայն տամբ և տոհմիւ հաւատարիմք տերանց մերոց և նահատակեալ ի վերա տանս Հայոց. աշխատութեամբ և արեամբ մեր և որդւոց մերոց և գանձուց առատութեամբ և ամենայն հնա-

---

[129] Ստեփաննոս Տարոնեցի, էջ 273:

[130] Արիստակէս Լաստիվերտցի, Պատմութիւն, աշխ. Կ. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 62:

ріւք խնդրեաք զխաղաղութիւնն աշխարհիս և զհաստատութիւն եկեղեցեաց...»[131]:

Գրիգոր Մագիստրոսն իր հորեղբոր մահվան առթիվ Սյունյաց արքեպիսկոպոսին հղած ներբողական թղթում Վահրամին համեմատում է հին Իսրայելի Հեսու զորավարի հետ, որը Մովսեսի հորդորով պատերազմեց ամաղեկացիների դեմ, սրածելով նրանց ողջ զորքը[132]: «Արի իբրև զՅեսու քաջամարտկութեամբ յոքնախումբ ճակատամարտս հրաշից արժանացեալ դիւցազնական ընդ քոց հաւոց»,- գրում է Մագիստրոսը[133], չմոռանալով շեշտել նաև հորեղբոր գրավիչ արտաքինը, գեղանձն տեսքը՝ «գեղեցկապարանոց և չքնաղադէմ տեսլեամբ որպէս Արայն մեր և Անուշաւանն Սաւսանուէրն Արայեան»: Նա նշում է նաև Վահրամի հոգևոր բարեմասնությունները՝ «մաքուր վարքն ու ողջախոհությունը», հայրենասիրությունն ու աշխարհաշինությունը: Մագիստրոսը նրան համարում է «քաջահանճար և ուշեղ, իմաստուն և խոհեմ, հեզ և հանդարտ, արդարադատ և անաչառու, առատ և զուարթ, մարդասէր և օտարասէր, անոխակալ և անյիշաչար, անապատասէր և կրօնաւորասէր, և ամենայն բոլոր բարեաց օթեվան. քանզի յօրինիչ ձեռն և կերտացող, և առատածիր գանձուց բաշխումն...»[134]: Մատենագիրը շեշտում է նաև հորեղբոր մաքրակենցաղ նիստուկացը[135], հիշում նրա աղքատասիրությունը, որբերի ու այրիների հանդեպ հոգածու վերաբերմունքը, գերիներին փրկագնելը, կալանվածներին ազատ արձակելը, հայրենի եզերքից հեռացածներին, հայրենակորույսներին վերադարձնելն ու միատեղ ժողովելը: Վահրամը գիտակցում էր, որ երկրի պետականությունը կարող է կանգուն լինել միայն նրա ժողովրդի գոյատևման պարագայում, ուստի լիաբուռն ջանքեր էր ներդնում այդ ուղղությամբ, դառնալով «ամենեցուն ապաստան»: Նրա անունը հնչում էր ամենուրեք՝ «ի տունս, ի քաղաքս, ի հրապարակս», տարածելով նրա բարության, մարդասիրության, ազգանվեր գործունեության համբավը[136]:

Գրիգոր Մագիստրոսի բեղուն գրչի տակ ամբողջանում է Վահրամի կերպարը, շեշտվում են նրա մարդկային արժանիքները, հայրենասեր գործչի ազգասիրությունը, քաղաքական նպատակասլաց ուղեգիծն ու բարի համբավը:

---

[131] И. Орбели, Надписи Мармашена, с. 442.
[132] Տես Ելք, ժէ, 8
[133] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 38:
[134] Նույն տեղում:
[135] Տես նույն տեղում, էջ 42:
[136] Տես նույն տեղում, էջ 39:

Արիստակես Լաստիվերցին Վահրամ Պահլ[illegible]ունուն բնութագրում է որպես «այր հզօր և անուանի, և բարեպաշտութեամբ յոյժ վեհ, որպէս թէ ոչ ոք հաւասար նմա Պահլաւ»[137]: Երկրի պետականության պահպանման համար Վահրամ Պահլավունին և ուրիշներ, ինչպես նշվեց, կարողացան Հովհաննես Սմբատ թագավորին հաշտեցնել նրա եղբոր Աշոտի հետ, որի շնորհիվ հանգուցալուծվեց նրանց միջև արծարծված արյունոտ վեճը, և վերջ գտավ եղբայրասպան քաղաքացիական պատերազմը: Դրանից հետո Վահրամը շարունակեց վարել սպարապետի պաշտոնը Հովհաննես-Սմբատի իրավասությանը ենթակա գավառներում: (Աշոտ IV-ն ինքն էր կատարում իրեն ենթակա բաժնի սպարապետի պարտականությունները): Սակայն Աշոտ IV-ի մահվանից (1041թ.) հետո նրա զորքը բարոյալքվեց, հակվելով բյուզանդացիների կողմը: «Եւ,- գրում է Մատթեոս Ուռհայեցին,- եղև զկնի մահուանն Աշոտոյ թուլամորթեցան զօրքն Հայոց և ատեցին զարուեստս պատերազմի, մտին ընդ լծով ծառայութեան ազգին հոռոմոց... հեռացան ի միաբանութենէ միմեանց և յօգնութիւն իրերաց ոչ հասանէին... Եւ եղեն աւերիչք ազգականաց իւրեանց և ի կողմն հակառակաց իւրեանց դարձան»[138]: Ըստ երևույթին բյուզանդամետ տարրերն Աշոտ IV-ի մահվանից (որը հավանաբար նրանք էին նյութել) հետո կարողացան Բագրատունյաց թագավորության այդ մասում սերմանել կայսրությանը միանալու մտայնություն, շահարկելով մահմեդական (թյուրքական) ցեղերի հարաժամյա սպառնալիքները, որին սակայն հայոց զորուժը պատշաճ հակահարվածներ էր տվել: Եվ երբ Հովհաննես-Սմբատի կտակը իրագործելուն հետամուտ Բյուզանդիայի Միքայել IV կայսրը 1041թ. զորքը շարժեց դեպի Անի, ինչպես հավաստում է Ուռհայեցին, «առ ի չգոյէ գլուխ զօրացն Հայոց, բազում տեղիք հաւանեցան Հոռոմոց»[139]: Մատենագիրն անշուշտ, նկատի ունի Աշոտ IV-ի մահվանից հետո նրան վերապահված բաժնում ստեղծված կացությունը: Սակայն անեցիների հայրենաշունչ ոգին չընկրկեց նվաճողի առջև: Հայերին ոգեվառողը, նրանց դիմադրական կորովի հոգին Վահրամ Պահլավունին էր: Եվ երբ բյուզանդական բանակը պաշարեց մայրաքաղաք Անին, «յայնժամ,- գրում է Ուռհայեցին,- ժողովեցան մնացեալք զօրքն Հայոց առ մեծ սպարապետն Վահրամ Պահլաւունին և խնդրէին ելանել ի պատերազմ ի վերայ զօրացն Հոռոմոց»[140]: Մատենագիրը չի թաքցնում իր ոգևորությունը Վահրամի գլխավորությամբ բյուզանդական զորքի դեմ հայերի շահած հաղթանակի առթիվ: Հայ ռազմիկների 30 հազարանոց զորախումբը

---

[137] Արիստակես Լաստիվերտցի, էջ 57-58:
[138] Մատթեոս Ուռհայեցի, էջ 79:
[139] Նույն տեղում, էջ 85:
[140] Նույն տեղում, էջ 85-86:

դուրս գալով Անիի Ծաղկոց անունով դարպասից, խոյանում է թշնամիների վրա: Հայ քաջորդիները, գրում է Ուռհայեցին, կայծակի նման թափվեցին բյուզանդական զորքի վրա, «և զայնքան հպարտացեալ և զամբարտաւանեալ զօրսն ընդ կրունկն դարձուցանէին ի փախուստ... և Ախուրեան գետն որ գայր՝ ի յարիւն դարձաւ. և ի ծայնէ գազանացեալ զօրացն Հայոց փախստականքն ոչ կարէին փախչել, այլ կային յիմարեալք և մատնեալք ի ծեռս սրոյ. եւ անդ էր տեսանել զահեղ և զմեծ օրն ի վերայ զօրացն Հոռոմոց, որ ի քսան հազարէն հարիւր լինէր մնացեալ»[141]:

Բյուզանդական զորքի պարտությունը կատարյալ էր, ուստի «սրբասնեալն և մեծ սպարապետն Վահրամ Պահլաւունին»,- գրում է Ուռհայեցին,- հայոց զորքին հրամայում է դադարեցնել թշնամի զինվորների կոտորածը, որով և վերջիններիս զգալի մասը կարողանում է փրկվել անխուսափելի վախճանից: Նրանք «դարձան ամօթով և գնացին ի Կոստանդնուպօլիս»[142], եզրափակում է իր խոսքը Մատթեոս Ուռհայեցին:

Սակայն Հայոց Բագրատունիների թագավորությունում անդուլ գործունեություն ծավալեցին բյուզանդամետ խմբավորման ներկայացուցիչները, որոնք նպատակադրվել էին Հայաստանը գցել կայսրության գերիշխանության տակ: Այս հոսանքի պարագլուխներն էին Պետրոս Գետադարձ կաթողիկոսը և Սարգիս իշխանը, որն իր ծառայությունների դիմաց Բյուզանդիայի կայսրից ստացել էր վեստի և անթիպատ պատրիկի պատվատիտղոսները: Հատկանշելի փաստ է, որ Տեկորի վանքի մերձակայքում գտնվող Խծկոնքի յուրաշեն եկեղեցում 1033 թ. փորագրված արձանագրության մեջ Վեստ Սարգիսն իրեն հորջորջում է իբրև «սիրելի ճորտ երից թագաւորաց Հոռոմոց»[143]: Մինչդեռ Պետրոս կաթողիկոսը հակված չէր դավանական փոխզիջման և հույս ուներ պահպանել Հայոց եկեղեցու դավանական ուրույն դիմագիծը Բյուզանդիայի կողմից Հայաստանը ներկալելու պարագայում: Սակայն հետագայի իրադարձությունները ցույց տվեցին, որ նա չարաչար սխալվում էր:

Բյուզանդամետ խմբավորման նկրտումներն ավելի ցայտուն դարձան հատկապես 1040-1042թթ., երբ երկիրը գրեթե երկու տարի մատնված էր անիշխանության: Սակայն այդ խմբավորման ճանապարհին կանգնած էր Պահլավունիների գլխավորած հայրենասեր հոսանքը, որի դեմ փութեռանդորեն պայքար ծավալեցին Վեստ Սարգիսն ու Պետրոս կաթողիկոսն իրենց կուսակիցներով: Վեստ Սարգիսը հայտնի էր իր փառատենչ նկրտումներով, ընչաքաղցությամբ[144]: Նա կարողացել էր շահել

---

[141] Նույն տեղում: Տես նաև Սմբատ, էջ 36:
[142] Տես Մատթեոս Ուռհայեցի, էջ 86:
[143] Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 126:
[144] Տես Մատթեոս Ուռհայեցի, էջ 84:

Հովհաննես-Սմբատ թագավորի վստահությունը և նրա թագավորության վերջնափուլում դարձել նրա հոգաբարձուն[145]: 1040 թվականին Բագրատունյաց երկու թագավորների վախճանվելն ազատ արձակեց Վեստ-Սարգսի ձեռքերը: Իր նեղ դասային շահագրգռություններին գերի այս փառամոլ իշխանը ջանում էր նույնիսկ բազմել Հայոց թագավորների թափուր գահին, իհարկե, Բյուզանդիայի կայսեր հովանու ներքո: Այս մասին վկայում է Արիստակես Լաստիվերցին, գրելով. «Իսկ մի ոմն ի գլխաւոր ազատացն Հայոց Սարգիս անուն եդ շուք անձինն թագաւորել ի վերայ տանն Շիրակայ և որ շուրջ զնովաւ գաւառք»: Պատմագիրը հավելում է նաև, որ իր փառատենչ ձգտումներին հագուրդ տալու մղումներով Վեստ Սարգիսը կարողացավ տիրանալ Բագրատունյաց թագավորների արքունի գանձերին, սակայն երբ զգաց, որ իր գլխավորած հոսանքի հայրենադրուժ ուղեգծի դեմ ծովացել է ժողովրդի բուռն դժգոհությունը, ամրացավ Անիի միջնաբերդում[146]:

Վահրամ Պահլավունին և նրա կուսակիցները (այդ թվում նաև նրա խորախոհուն եղբորորդին Գրիգոր Մագիստրոսը), հասկանում էին, որ Բագրատունյաց թագավորների գահին տիրանալու Վեստ Սարգսի փառատենչ նկրտումներին կարելի է վերջ տալ, եթե հանդես գար գահի օրինական տերը Բագրատունի թագավորների բնական իրավահաջորդը: Ուստի ժողովրդի սերն ու աջակցությունը վայելող հայրենասեր իշխանները Վահրամ Պահլավունու գլխավորությամբ 1042 թվին հայոց թագավոր են հռչակում Աշոտ IV–ի տասնութամյա որդուն Գագիկին: Վահրամ Պահլավունին «այր հզօր և անուանի,-գրում է Լաստիվերցին,-...հանդերձ իւրովք ազգակցօք, որդւովք և եղբօրորդւովք իբրև երեսուն ազատօք... կոչեալ առ ինքեանս զԳագիկ որդի Աշոտոյ, թագաւորեցուցին ի վերայ իւրեանց, և իմաստութեամբ և հնարիւք մուծին ի քաղաքն»[147]:

Մատթեոս Ուռհայեցին մանրամասնում է Գագիկ II-ի թագավոր օծվելու հանգամանքները, գրելով. «Ժողովեցան ամենայն նախարարքն Հայոց առ հայրապետն տէր Պետրոս և օծին զԳագիկ թագաւոր ի վերայ ամենայն տանն Հայոց շնորհօք Հոգւոյն Սրբոյ և հրամանաւ մեծի իշխանին, որով և օծեաց զնա սրբակեացն մեծն Մարցէն, որ էր ազգաւ հայկազնեան և հայրենեօք Պահլաւունի, որոյ անուն ըստ նախնոյն իւրոյ Գրիգոր ճանաչի... Սա թագաւորեցոյց զԳագիկ ի վերայ տանս Հայաստանեայցս,

---

[145] Տես Արիստակէս Լաստիվերտցի, էջ 57:

[146] Տես նույն տեղում, էջ 57-58:

[147] Նույն տեղում: Ընդսմին Բագրատունյաց թագավորների գահին հավակնում էր նաև Լոռիի Կյուրիկյան Բագրատունի թագավոր Դավիթ Անհողինը, որը հարձակվեց Բագրատունյաց թագավորության վրա, գործելով անլուր շահատակություններ (տես Մատթեոս Ուռհայեցի, էջ 84-85):

յոյժ բարեպաշտ և աստուածասէր և անպարտելի յիմաստասիրական ջոկսն. սա ջանայր իմաստութեամբն իւրով հաստատել զաթոռ թագաւորութեանն Հայաստան ազգիս և հայցէր յԱստուծոյ օժանդակ լինել նմա և ազգին Պահլաւունեաց»[148]:

Սմբատ Սպարապետի վկայության համաձայն Գագիկ II-ը թագավոր է օծվել «հրամանաւ մեծին Գրիգորի, որդւոյ Վասակայ Պահլաւունոյ»[149]: Հետևաբար, այդ արարողությունը կատարվել է Գրիգոր Մագիստրոսի հրամանով: Մինչդեռ, Մատթեոս Ուռհայեցու հաղորդման համաձայն, Գագիկ II-ին թագավոր է օծել «մեծն Մարցէն»[150], որը մատենագրի մոտ նույնական է Գրիգոր Մագիստրոսի հետ: Սակայն վերջինս, ինչպես հայտնի է, չուներ եկեղեցական կարգ, ուստի անհավանական է, որ նա կատարեր օծման արարողությունը:

Վահրամ Պահլավունու հայրենասիրական, զինական ավյունը վառ կերպով դրսևորվեց հատկապես Բագրատունյաց թագավորության վերջալույսին, երբ Միքայել IV կայսրը, Հովհաննես-Սմբատի մահվանից (1040թ.) հետո չհանդուրժելով հայրենաւեր հոսանքի բռնած դիրքը, պահանջեց իրագործել թագավորի կտակը, այն է Անին ու Բագրատունյաց թագավորության մյուս շրջանները հանձնել իրեն: Անշուշտ, նա պահանջում էր նաև Աշոտ IV-ի մահվանից հետո անտերունչության մատնված նրա բաժնի մեջ ընդգրկված գավառները:

Կայսրության մոտալուտ ռազմարշավի հեռանկարով հուսապնդված Վեստ Սարգիսը շարունակում էր ամրանալ Անիի միջնաբերդի թագավորական պալատում, նպատակադրվելով հանդես գալ իբրև Հովհաննես-Սմբատի իրավահաջորդ և այդ կերպ օրինականացնել նրա կտակի իրականացումը: Սակայն Գագիկ II արքան, Վահրամ Պահլավունին և նրանց զորակցող հայրենասերները կռահեցին Վեստ Սարգսի չարադետ մտահղացումը: Եվ, ինչպես վկայում է Արիստակես Լաստիվերցին, Գագիկ արքան միայնակ, «այրական քաջասրտությամբ» մտավ թագավորական պալատ և «ողոքական բանիւք» Սարգսին հորդորեց հեռանալ Անիից: Վերջինս հասկացավ որ Գագիկի թիկունքում հզոր ուժեր են կանգնած ի դեմս Վահրամ Պահլավունու և նրա զորակիցների, ուստի գերադասեց խուսանավել: Չհրաժարվելով իր նկրտումներից, նա գնաց և ամրացավ Սուրմառի (Սուրմալու) բերդաքաղաքում և հրաժարվեց ենթարկվել Գագիկ II-ին: Վեստ Սարգիսը փայփայում էր այն հույսը, որ շուտով Բյուզան-

---

[148] Մատթեոս Ուռհայեցի, էջ 86-87:

[149] Սմբատ Սպարապետ, էջ 37:

[150] «Մեծն Մարցէն» արտահայտության մասին տես այս գործի I մաս, գլուխ IX, ծան. 12:

դիան հարձակվելու է Հայաստանի վրա, և ի դեմս նրա կայսեր, ինքը գտնելու է հզորագոր դաշնակցի[151]:

Գագիկ II-ը ժամանակին վերահասու եղավ Սարգսի չարանենգ դիտավորությանը և «սակաւ արամբք» գրավեց Սուրմառին, մտավ Սարգսի զորաճամբար, ծերբակալեց փառատենչ իշխանին և տարավ Անի: Սակայն այս անգամ ևս Վեստ Սարգիսը կարողացավ շահել երիտասարդ արքայի վստահությունը նրա հանդեպ կեղծելով բարեկամություն ու նվիրվածություն: Գագիկը այն աստիճան հավատաց նրան, որ նույնիսկ «ընդ իւր ի կառսն նստուցանէր», - գրում է պատմագիրը[152]:

Այս բախտորոշ պահին հայրենադրուժ հոսանքի հակակշիռն էր Վահրամ Պահլավունին իր կուսակիցներով: Նա էր, որ միաժամանակ կարողացավ հակահարված տալ կայսրությանը և սանձել նրա ամենակուլ ախորժակները: Միքայել IV–ի քաղաքականությունը շարունակող Կոստանդին Մոնոմախ կայսեր Հայաստանի համար կորստապատիր քաղաքականությունն արտացոլված է նաև բյուզանդացի մատենագիր Հովհաննես Սկիլիցեսի երկում: Վերջինս գրում է, որ թեև հայոց Գագիկ թագավորը շարունակում էր «հռոմայեցիների հետ խաղաղություն ու զինակցություն պահպանել, բայց իր ձեռքում էր պահում նաև հորենական իշխանությունը և չէր ուզում այն հռոմայեցիներին զիջել, հակառակ հոր[153] թողած փաստաթղթի: Մոնոմախը «արքունիքում գտնելով այդ փաստաթուղթը, և Անին էր պահանջում, և՝ բովանդակ Մեծ Հայքը»[154]:

Վահրամ Պահլավունին վճռականորեն ընդդիմացավ կայսեր պահանջին և ըստ ամենայնի զորակից եղավ հայոց երիտասարդ թագավորին: Մոնոմախ կայսրը դիմեց վճռական քայլերի: Նա Հայաստան ուղարկեց ստվարաթիվ զորք՝ հրամանատար կարգելով Իբերիա բանակաթեմի[155] կառավարիչ Միքայել Իասիտեսին, որը սակայն ի զորու չեղավ կոտրել հայերի դիմադրությունը: Ուստի կայսրն Անիի դեմ նետեց ավելի մեծաթիվ զորք՝ Նիկոլայոս զորապետի գլխավորությամբ: Միաժամանակ Մոնոմախը չխորշեց Դվինի մահմեդական ամիրային՝ Աբուլ-Ասվար Շադդադյանին նամակով հորդորել «ասպատակել Մեծ Հայքը և Գագիկին ենթակա երկիրը», նրան հավաստիացնելով, որ կարող է տիրել «Գագիկին պատկանող բոլոր այն բերդերին ու շրջաններին, որոնք կկարողանա

---

[151] Տես Արիստակես Լաստիվերտցի, էջ 58:

[152] Տես նույն տեղում:

[153] Սկիլիցեսը Հովհաննես-Սմբատին շփոթում է Աշոտ IV-ի հետ:

[154] Հովհաննես Սկիլիցես, թարգմ., առաջաբան և ծանոթագրությունները Հր. Բարթիկյանի, Երևան, 1979, էջ 147:

[155] Ստեղծվել էր 1000թ. Տայքի կյուրապաղատության մեջ ընդգրկված գավառներից:

գրավել»: Կայսեր գրավոր համաձայնությունն ստանալով՝ Շադդադյան ամիրան «պաշարմամբ գրավեց Գագիկին պատկանող բազմաթիվ ամրոցներ ու շրջաններ»[156]:

Արիստակես Լաստիվերցու վկայությամբ, բյուզանդական զորքը Անիի վրա հարձակումներ է կատարել չորս անգամ[157], մինչդեռ Մատթեոս Ուռհայեցին հիշում է երկու հարձակում, մեկը՝ 1041թ., մյուսը Կ. Պոլիս Գագիկ II-ի մեկնելուց հետո[158], ինչն իհարկե, ճիշտ չէ: Ավելի հավաստի է դեպքերին ժամանակամերձ Արիստակես պատմիչը: Սկիլիցեսի հավաստմամբ, Գագիկ II-ը «մի կողմից պատերազմ մղելով հռոմեական բանակի դեմ, մյուս կողմից ենթարկվելով Դվինի ամիրայի հարձակումներին կատարյալ հուսաբեկ եղած»՝ հաշտություն է կնքում բյուզանդական Նիկոլայոս զորապետի հետ «և նրա միջոցով հանձնվում կայսեր ու տալիս (Անի) քաղաքը»[159]: Ըստ այսմ Անիի վրա բյուզանդական զորքի հարձակումները տեղի են ունենում Կ. Պոլիս Գագիկ II-ի մեկնելուց առաջ:

Վահրամ Պահլավունին կազմակերպեց դիմադրությունը անարգ նվաճողին, նետվելով ռազմի բոցերի մեջ: Եվ քաջակորով սպարապետը վերստին օծվեց փառքով: Բյուզանդական զորքը «չորս անգամ զկնի միմեանց մտին յաշխարհն Հայոց մինչև մարդաթափ արարին զերկիրն ամենայն սրով և հրով և գերութեամբ»,- հոգու ողբով գրում է Լաստիվերցին[160]: Անշուշտ, հայերի հերոսական դիմակայության շնորհիվ էր, որ կայսեր զորքն ստիպված եղավ չորս անգամ գրոհել Անիի վրա:

Տեսնելով, որ կանոնավոր մարտում հնարավոր չէ հաղթել հայ ռազմիկներին, Մոնոմախ կայսրը իր հավատարիմ գործիք Վեստ Սարգսի հորդորով Գագիկ II-ին հրավիրում է իր մոտ՝ Կ. Պոլիս: Կայսրը «զքրիստոսական աւետարանն և զնշանն սուրբ խաչին Քրիստոսի միջնորդս և երաշխաւորս յուղարկեալ ի Հայք և այսպիսի օրինակաւ կոչէր զթագաւորն Հայոց վասն սիրոյ և տեսութեան»[161],- գրում է Ուռհայեցին:

Գագիկ II-ն սկզբում թեև հրաժարվում է մեկնել կայսեր մոտ, սակայն անսալով նենգամիտ Վեստ Սարգսի և ուրիշ ազատների հորդորներին, գնում է Կ. Պոլիս, հաշվի չառնելով Վահրամ Պահլավունու և նրա կուսակիցների զգուշացնող ձայները:

Արիստակես Լաստիվերցու վկայությամբ, պատանի արքան՝ Գագիկը «ոչ եկաց ի պատուէր Վահրամայ և այլ ազատացն որ թագաւորեցու-

---

[156] Հովհաննես Սկիլիցես, էջ 147:
[157] Տես Արիստակես Լաստիվերտցի, էջ 58:
[158] Տես Մատթեոս Ուռհայեցի, էջ 85-86, 96-97:
[159] Հովհաննես Սկիլիցես, էջ 147-148:
[160] Արիստակես Լաստիվերտցի, էջ 58:
[161] Մատթեոս Ուռհայեցի, էջ 94:

ցին զնա, այլ նենգաւորին Սարգսի սադրելոյն լուեալ՝ ել ի քաղաքէն, և չոգաւ ի Յոյնս զանդարձ ուղևորութիւն»[162]:

Հայոց Բագրատունիների թագավորության անկումից հետո Վահրամ Պահլավունին չհեռացավ Անիից և իր շուրջը համախմբեց հայոց ցաքուցրիվ ուժերը: Սակայն նրան չի հաջողվում համախմբել հայոց զորուժը, Բյուզանդիայի ավանդական նենգադրժության պատճառով: Անին վերջինիս կողմից զավթելուց հետո, ինչպես հաղորդում է պատմագիրը, հայոց ուղեկորույս «հեծելազօրն անտէրունչ շրջեալ ոմն ի Պարսս, ոմն ի Յոյնս, ոմն ի Վիրս: Սեպուհ գունդն ազատաց ելեալ ի հայրենեաց, անկեալ ի ճոխութենէ, մռնչեն ուր և են իբրև զկորիւնս առիւծուց ի խշտիս իւրեանց»[163]: Մատենագիրների հաղորդած տեղեկությունների համաձայն, հայոց զորքի զգալի մասը դրվեց կայսրության տրամադրության տակ, ծառայելով նրա քաղաքական շահերին: Վերջինս ըստ երևույթին ճանաչեց Վահրամ զորապետի իրավունքները, հաշվի առնելով զորքում նրա ունեցած ազդեցությունը: Իր հերթին Վահրամը համաձայնեց դրան, հույս ակնկալելով պահպանել հայոց զորուժը, հայ իշխանների իրավունքները և երկիրը պաշտպանել դրսեկ ցեղերի հրոսումներից: Վերևում նշվեց, որ Բյուզանդիայի կայսեր և Դվինի ամիրայի միջև 1045թ. կայացած համաձայնությամբ վերջինիս կողմից գրավված շրջանները մնալու էին նրա իշխանության տակ: Բայց Անիի գրավումից հետո Մոնոմախ կայսրը ամիրայից պահանջեց վերադարձնել գրաված տարածքները: Մերժում ստանալով՝ կայսրն իր զորապետ Նիկոլայոսին հրամայեց «հռոմեական զինական ուժով, իբերական զորքով, ինչպես և Մեծ Հայքի առկա և Անեցու (Վահրամ Պահլավունու) հրամանատարության տակ գտնվող ուժով» ռազմի ելնել ամիրայի դեմ[164]:

Հայոց զորքը գլխավորում է Վահրամ Պահլավունին: Իր որդու՝ Գրիգորի հետ ծերունազարդ զորավարը մեկնեց ռազմի դաշտ, թերևս հուսալով որ քրիստոնյաների զենքի հաղթանակով Հայոց ոստանը կազատագրվի իսլամի տիրապետությունից: Սակայն քրիստոնյա զորքն ընկավ մոլեգնաջան ամիրայի նյութած ծուղակը և պարտվեց: «Հռոմայեցիները,- գրում է Սկիլիցեսը,- կատարյալ պարտություն կրեցին, նրանցից անհամար բազմություն սրի քաշվեց, քանզի ծիերն ընկնելով ցեխի ու ճահիճների մեջ, չէին կարողանում փախչել»[165]: Արիստակես Լաստիվերցին նույնպես հաղորդում է քրիստոնյա զորականների պարտության մասին, նշում,

---

[162] Արիստակէս Լաստիվերտցի, էջ 62:
[163] Նույն տեղում, էջ 60:
[164] Հովհաննես Սկիլիցես, էջ 148:
[165] Նույն տեղում, էջ 148-149:

որ բյուզանդացի զորապետը[166] կայսեր կողմից նշանակվելով Անիի կառավարիչ, «անչափ պատուով մեծարէ զհայրապետն Պետրոս, և նուաճէ զաշխարհն ընդ ծեռամբ. և ինքն բազում զօրօք խաղայ ի վերայ քաղաքին Դունայ»[167]:

Պետրոս կաթողիկոսը իր արծաթասիրությանը հագուրդ տալուց զատ, հավանաբար, դեռ փայփայում էր նաև այն հույսը, որ իր Աթոռը կարող է պահպանել Անիում, գուցե և Հայոց կաթողիկոսության հինավուրց կենտրոն Դվինում: Սակայն նրա ակնկալիքները չիրականացան: Քանի դեռ կաթողիկոսը պետք էր կայսրությանը՝ վերջինիս կողմից Հայաստանի հանդեպ դավադիր ծեռնարկումներն իրականացնելու ժամանակ, Հայոց հովվապետը «մեծարվում», հարգալից վերաբերմունքի էր արժանանում բյուզանդական իշխանությունների կողմից: Նույնն էր վերջիններիս վարած քաղաքականությունը նաև Վահրամ Պահլավունու, Գրիգոր Մագիստրոսի և մյուս անվանի հայ գործիչների նկատմամբ:

Դվինի ամիրայի դեմ մղված մարտում ընկան նաև Վահրամ Պահլավունին և որդին՝ Գրիգորը, ինչը «մեծ սուգ հասոյց Հայոց»[168]: Դվինի պարիսպների տակ քրիստոնյա զորքի ծանր պարտության մասին հիշում է նաև Մատթեոս Ուռհայեցին, նշելով, որ Դվինի մատույցներում «եղև կոտորած մեծ ի վերայ քրիստոնէիցն, և Բազումք ի զօրացն Հոռոմոց անկան ի սուր և ի գերութիւն, ընդ որ և մեծ սպարապետն Հայոց Վահրամ հանդերձ որդւովն իւրով Գրիգորիւ սպանաւ ի մեծ պատերազմին ի Դուին քաղաքին»[169]:

Այդպիսով կյանքի վերջալույսին Վահրամ Պահլավունին սթափ գնահատելով երկրի վիճակը, ստիպված համակերպվեց ստեղծված ռազմա-քաղաքական կացությանը և հայոց զորուժը երկրում պահպանելու հույսով զորակից եղավ քրիստոնյա կայսրությանը: Սակայն նրան վիճակված չէր տեսնել իր հույսերի գեթ մի փոքր մասի իրականացումը՝ կայսրության հայադավ քաղաքականության և թյուրք-սելջուկյան աշխարհավեր արշավանքների պատճառով: Հաղթանակի խորհրդանիշ դարձած քաջապանծ զորավար Վահրամ Պահլավունու ողբերգական մահը խորունկ վիշտ պատճառեց հայրենի երկրի ապրած տագնապներին անկեղծ կարեկից հայ գործիչներին, ժողովրդին: Հորեղբոր եղերական մահը ծանր ապրող Գրիգոր Մագիստրոսը գտնում էր, որ որբացել, ուղեկորույս են դարձել ոչ միայն ինքն, այլև նրա կուսակիցները: Մագիստրոսը վշտահեծ սիրտն է զեղում, գրելով. «Աւա՜ղ որդւոյս սիրեցեալ և կարօտեալ ի սուրբ

---

[166] Լաստիվերցու մոտ զորապետի անունն Ասիտ է:
[167] Արիստակէս Լաստիվերտցի, էջ 63:
[168] Նույն տեղում:
[169] Մատթեոս Ուռհայեցի, էջ 98:

և ի քաղցր հօրէն. աւա՛ղ տարագիր և արտակացեալ յաստուածային քո խրատուէ»[170]: Վիշտն իրոք հնարավոր չէր փարատել, և մատենագիրը գոչում է. «Իսկ մեզ զինչ, որբութիւն և թշվառութիւն և տարակուսա՛նս. այժմ ոչ պատկառեմք զանիրաւսն գործել և ոչ փութամք յառաքինութիւնս և ի բարեգործութիւնս. ի քումմէ գաւազանէ զերծեալք, ո՞զմեզ այժմ խրատէ. և ո՞մատակարարէ զտկարութիւն մեր. ո՞ և զանժուժութիւն համբերութեամբ իւրոյ մխիթարէ. ո՞ զաղքատս կերակրէ առատատուր և զուարթ լրջմտութեամբ. և ո՞արդար դատողութեամբ զորբս և զայրիս տածէ, կամ զգերեալսն գնէ, կամ զբանտարկեալսն արձակէ. կամ զցրուեալսն ժողովէ. առ ո՞ոք այժմ տնանկացեալն յիւրմէ բնակութեանց ընթացսի իբրու յիւր իսկ հայրենի սեփական. քանզի արդարև յոքունց քոյդ կարծեցեալ էր ամենեցունց ապաստան...»[171]:

Գրիգոր Մագիստրոսը շեշտում է նաև, որ իր հորեղբորը «վայելէր թագաւոր և յայսպիսի պաղատան ճեմէլ... այսպիսի հայրենիս ստանալ, այսպիսեօք գանձօք փարթամանալ», ինչպիսին եղել էին հայոց Արշակունի արքաները[172]:

Գրիգոր Մագիստրոսը Վահրամ զորավարին ներկայացնում է նաև իբրև նահատակ, որն իր կյանքը զոհաբերեց հանուն քրիստոնեական հավատի և Հայոց առաքելադրոշմ եկեղեցու: Մատենագիրը հորեղբորը համարում է «Նոր Մարտիրոս և հրաշալի վկայ, ի բազմաց ընտրեալ և ի թշնամեաց խաչին Քրիստոսի խոցեալ, և ի վերայ կաթուղիկէ եկեղեցւոյ վկայեալ, այժմ քոյովդ արեամբ զքոյդ մաքրեալ անձն և ի դասս երկնային զօրաց անցեալ»[173]:

Վահրամ Պահլավունու կողակիցն էր Վասպուրականի Արծրունյաց թագավորության մարզպանի Անձևացյաց իշխան Տիգրանի դուստր Սոփին, որը տակավին 1015թ. հրաժեշտ էր տվել այս աշխարհին: Վահրամը կնոջ աճյունն ամփոփել էր տվել Մարմաշենի վանքում: Սոփիի դամբանաքարի վրա դրոշմված է «Այս հանգիստ է Սոփիայ աղախնոյն Քրիստոսի, կնոջ Վահրամայ Պահլաւունւոյ իշխանաց իշխանի, դուստր Տիգրանայ Հայոց մարզպանի տեառն Անձևացեաց մեծին Վասպուրականի կիսաւրեա առ Աստուած փոխեցա և թողի զաւակս իմ տրտում. թ. ՆԿԴ (1015)»[174]:

---

[170] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 38:
[171] Նույն տեղում, էջ 39:
[172] Նույն տեղում, էջ 40-41:
[173] Նույն տեղում:
[174] И. Орбели, Надписи Мармашена, с. 445.

Գլուխ հինգերորդ

Վահրամ Պահլավունու եղբայրները և որդիները

Մարմաշենի արձանագրության մեջ, ինչպես նշվեց, Վահրամ Պահլավունին հիշում է իր եղբայրներին՝ իշխանաց իշխան Վասակին, Ապլղարիբին և ծաղկահասակ Համզեին («մանուկն Համզէ»): Վերջինս հիշվում է նաև եղբոր՝ Ապլղարիպի կողմից 1040թ. Անիի Գրիգոր Պահլավունու եկեղեցու որմին թողած արձանագրության մեջ[175]: Համզեն Համազասպ անվան արաբական ձևն է[176]: Գրիգոր Մագիստրոսն իր ԺԱ թղթում հիշում է նաև մյուս երկու հորեղբայրներին՝ Տիգրանին և Գրիգորին[177]: Վերջինս նույնացվում է Համզեի հետ[178], ինչը սակայն դժվար է ապացուցել:

Վահրամ Պահլավունու կրտսերագույն եղբայր Ապլղարիպը Հովհաննես-Սմբատ թագավորի օրոք վարում էր Հայոց մարզպանի պաշտոնը: 1035թ. նա թագավորի հրովարտակով մեկնում է Կ. Պոլիս՝ Միքայել կայսեր մոտ և մեծ ջանքերի ու ծախսերի գնով Հայաստան է բերում Սուրբ խաչի մասունքը, որը տեղադրում է Անիում՝ իր կառուցած Ս. Փրկիչ եկեղեցում: Այս մասին նույն եկեղեցու որմին նրա թողած արձանագիր հիշատակարանում ասվում է. «Ի ՆՁԴ: թուականիս. ես Ապլղարիպ մարզպան եղէ հրովարտակ ի Սմպատա շահանշահէ առ կայսրն Յունաց Միխէլ ի Կոստանդինուպոլիս. և շատ ջանիւ և մեծածախ գանձիւ բերի մասն ի սրբո խաչէն և եկեալ կատարեցի զտաճարս զայս և զնշանն լուսո կանգնեցի ի պսակ հարսինս Քրիստոսի և եդի լուծ սպասաւորաց եկեղեցոյս զկիւրակէին աւրն գիշերապաշտաւն առնել մինչև ի գալուստն Քրիստոսի. և քահանա որ մեռանի ի սուրբ Փրկչիս: Խ: մի կալցեն յեկեղեցիքդ: Եւ եթէ ոք ի քահանայից եկեղեցոյս և յիմ սպասուցս և կամ ի գրենոյս յափշտակէ կամ ծախելով կամ զինչևիցէ պատճառանաւ և կամ զագահութեան զհետ երթա և զեկեղեցոյս մուտքս խորէ և Սուրբ Փրկչիս ի պէտս ոչ անցուցանէ: ՅԺԸ: Հայրապետացն նզովեալ լիցի»[179]:

Իր բարձրազդեցիկ դիրքի բերումով Ապլղարիպը հոգածու էր նաև եկեղեցու նկատմամբ, իհարկե, առաջին հերթին իր տոհմի վաղեմի ոստան Անի մայրաքաղաքում:

---

[175] Տես Դիվան Հայ վիմագրության, I, էջ 33:

[176] Արաբ մատենագիրները սովորաբար Համազասպ անունը հիշում են Համզա ձևով:

[177] Տես Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 41:

[178] Տես նույն տեղում, էջ ԺԶ, ծան. 2:

[179] Դիվան հայ վիմագրության, I, էջ 46:

Հաջորդ տարի Ապլղարիպ Պահլավունին Ս. Փրկիչ եկեղեցուն նվիրաբերում է կուղպակներ, ծիթհանք, այգի և վարելահողեր: Նա եկեղեցին զարդարում է ոսկով, արծաթով և թանկարժեք ակներով, նվիրում Աստվածաշունչ և տոնական (Հայսմավուրք), եկեղեցուն կից կառուցում աղբյուրի վերգետնյա մաս: Այս մասին նույն եկեղեցում 1036թ. նրա թողած արձանագրության մեջ ասվում է.

«Յամս աստուածապատիւ և հոգևոր տեառն Պետրոսի Հայոց կաթողիկոսի և ի թագաւորութեան Սմբատա որդու Գագկա շահանշահի ի ՆՁԵ (1036) թուականիս ես Ապլղարիպ մարզպան որդի Գրիգորո իշխանի և թոռն Ապուղամրի և եղբայր Վահրամա և Վասակա, շինեցի զսուրբ Փրկիչս ի մայրաքաղաքս յԱնի շատ ջանիւ և մեծածախ գանձիւ, և գնեցի հալալ ընչից իմոց կուղպականի: Գ: և ծիթհաց և այգի և հողեար և ետու ի Սուրբ Փրկչիս, և զարդարեցի ոսկւով և արծաթւով և ակամբ պատուականաւք և ետու Աւետարան և Տաւնական... և հին և նոր Կտակարանաւք և կանգնեցի միլ[180] առ սուրբ Փրկչիս»[181]:

Պետրոս կաթողիկոսն օծում է Ս. Փրկիչ եկեղեցին (նույն 1036թ.): Արժեվորելով Ապլղարիպ Պահլավունու եկեղեցանպաստ ուղեգիծը, կաթողիկոսը եկեղեցուն է նվիրում Աշնակ գյուղի այգին, պատշաճ հատուցելով նաև այն կառուցողին: Այս մասին նրա թողած արձանագրության մեջ կարդում ենք. «Ի ՆՁԵ թուականիս Հայոց և ի մեծափառ թագաւորութեանս հզաւր և տիեզերակալ Սմբատա որդւո Գագկա Հայոց և Վրաց շահայնշահի. կամ եղև ինձ, տեառն Պետրոսի Հայոց կաթողիկոսի տալ զայգին Աշնկի որ ի մեր կորդո[182] արկած էր քրիստոսասէր մարզպանին Ապլղարիպա որդւո Գրիգորո Պահլաւունո վասն առաւել սիրոյն և երախտեացն զոր ծառաեալ էր զսուրբ Լուսաւորչի աթոռս: Արդ տուաք որմով և ծառովք պտղաբերովք և անպտղաւք և խոտագետնովք և Գ աւր ջուր ազատ ի խալաէ և ի գեղջէ յամենայն հասուց և գրեցաք մեծաւ հաստատութեամբ զկտակս զայս»[183]:

Արձանագրության մեջ շեշտվում է նաև Ապլղարիպի եկեղեցանպաստ ուղեգիծը, մարզպանի նկատմամբ կաթողիկոսի վերաբերմունքը: «Արդ,- կարդում ենք նույն արձանագրության մեջ,- եթէ ոք զապարանսդ զոր շինեալ է Ապլղարիպա առ սուրբ Փրկչիս և կամ զոր ինչ տուեալ է ի

---

[180]«Միլ» բառն ունի աղբյուր-ջրուղու ամբողջ կառուցվածքի իմաստ (տես Л.Гюзальян, Персидская надпись Кей-Султана Шеддаи в Ани («Академику Н. Я. Марру». сборник ст., М.-Л., 1935, с. 638-640), Ս. Ավագյան, Վիմագրական արձանագրությունների բառաքննություն, էջ 206, Գ.Ս.Գրիգորյան, Նվիրատվություններ Անիի եկեղեցիներին ու վանքերին, էջ 47):

[181] Դիվան հայ վիմագրության, I, էջ 44-45:

[182] Նկատի ունի անմշակ ու խոպան վայրը:

[183] Դիվան հայ վիմագրության, I, էջ 48:

պէտս եկեղեցոյդ և որոշէ ոք և կամ յապարանսդ բնակի և եկեղեցւոյդ հոգսդ զոր ինչ պիտո լինի և երկիւղիւ Աստուծոյ. ոչ հոգա ի Սուրբ Լուսաւորչէն և ի նորին աթոռակալացն մինչև զմեզ յամենեցուն նզովեալ լիցի. իսկ կատարիչ գրոյս աւրհնեալ լիցի»[184]:

Արձանագրությունից երևում է նաև, որ Ապլղարիպը Ս. Փրկիչ եկեղեցուն կից կառուցել է մեկ այլ շենք «ապարանք» անունով, որն ամենայն հավանականությամբ, եղել է եկեղեցու սպասավորների բնակության տունը, նաև ունեցել է հյուրասենյակներ: Անիի պեղումների ժամանակ հայտնաբերվել են այդ շինության հետքերը[185]:

1040թ. Ապլղարիպն ի հիշատակ ծնողների, վերանորոգել է տալիս Պահլավունյաց տոհմական եկեղեցին՝ Ապուղամրենց Ս. Գրիգորը, կից կառուցելով երկու մատուռ՝ մեկը որպես ծնողների, մյուսը՝ վաղամեռիկ եղբոր՝ Համզեի և քրոջ՝ Սեդայի հոգիների հանգստարան, եկեղեցու սպասավորներին պարտավորեցնելով մատուցել պատարագներ: Այս առթիվ Ապլղարիպի թողած արձանագրության մեջ կարդում ենք.

«Ի: ՆՁԹ (1040) թուականիս ես Ապլղարիպ Հաոց մարզպան, որդի Գրիգորո և թոռն Ապուղամրի Հայոց իշխանաց, թեպետ և անտէս էի ի հաւրէ իմէ յաղագս կրսերութեան, այլ հարկեցա ի ծնողական սիրոյն և շինեցի զայս հանգստարան հաւր իմո Գրիգորո և եղբաւր իմո Համզէ և քեռ իմո Սեդաի և շինեցի սենակ: Բ: զսուրբ Ստեփաննոս և զսուրբ Քրիստափոր և պայման քահանայիցդ այս է. որ զամէն ուրբաթ ի սուրբ Ստեփաննոսն ժամն իմ մաւրն Շուշանա արասցեն և զշաբաթն իմ հաւրն Գրիգորո և ի սուրբ Քրիստափոր զամէն ուրբաթ իմ քեռն Սեդաի և զշաբաթն իմ եղբաւրն արնեն Համզէի և առաջաւորացն ուրբաթին և աղցացն[186] ուրբաթանոյն փոխան յարձակաւուրքն արասցեն: Ը: աւր...»[187]:

Արձանագրության «անտէս էի ի հաւրէ իմէ յաղագս կրսերութեան» արտահայտությունը տարբեր կերպ է մեկնաբանվել: Մի դեպքում այն մեկնվել է իբրև մանուկ հասակում Ապլղարիպի որբացած լինելը, հորը չտեսնելը, մեկ այլ դեպքում՝ վաղ հասակում հոր մահը և նրան չհիշելը կամ՝ հոր մահվանից հետո Ապլղարիպի ծնված լինելը [188] և այլն: Ինչևէ, Ապլղարիպը փոքր հասակում զրկված լինելով հորից, սփոփվել, մխի-

---

[184] Նույն տեղում:

[185] Տես Н. Марр, Ани, Ереван, 1939, с. 202-204.

[186] Աղցացն բառն ունի աղուհացքի՝ աղով ու հացով ապրելու, պահեցողության իմաստ (տես Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն, էջ 28):

[187] Դիվան հայ վիմագրության, I, էջ 33:

[188] Տես Գրիգոր Մագիստրոսի թղթերը, առաջաբան, էջ ԺԸ, Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Ա, Երևան, 1942, էջ 21, Ն. Ակինեան, նշվ. աշխ., էջ 22:

թարվել է գորովագութ մոր Շուշան տիկնոջ շնորհիվ: Իսկ նշյալ արձանագրության փորագրման տարում արդեն վախճանվել էին նրա մայրն ու եղբայրները, քույրը:

Արձանագրության մեջ վկայված սենեակ բառեզրն ունի մատուռի, փոքր եկեղեցու իմաստ, քանզի Ապլղարիպը վանքի սպասավորներին պարտավորեցնում է իր ծնողների, եղբոր և քրոջ հիշատակին պատարագներ մատուցել նորակառույց այդ շինություններում (սենեակներում)՝ Ս. Ստեփաննոս և Ս. Քրիստափոր մատուռ-եկեղեցիներում[189]:

1040թ. Ապլղարիպը յուրաշեն այս եկեղեցու մուտքի արևմտակողմում, 15-րդ կամարի մեջ թողել է արձանագրություն, որից երևում է, որ նա կառուցել է մեկ այլ շինություն[190]:

Եկեղեցու հանդեպ Ապլղարիպի ցուցաբերած հոգածության դրսևորում էին նաև նրա կողմից կատարված նվիրատվությունները: Տակավին 1021թ. նա իր «Արծուեբոյն» անվամբ հորջորջված կալվածն ընծայաբերում է Հաղբատի մենաստանին և սահմանում՝ ս. Գևորգի տոնին Հովհաննես-Սմբատ թագավորի արևշատության և իր (Ապլղարիպի) մեղքերի թողության համար: Արձանագրության մեջ ասվում է. «Ես Ապլղարիպ որդի Գրիգորոյ ետու զԱրծուեբոյնն ի Հաղբատ գանձագին արարեալ վասն Յովանիսի (թագաւորի) արևշատութեան և ինձ մեղացս թողութեան»[191]: Անիի Շուշան Պահլավունու եկեղեցու մուտքի բարավորի վրա Ապլղարիպի թողած անթվակիր արձանագրության մեջ ասվում է, որ նա իր «հալալ ինչքով» գնել է մի կուղպակ և նվիրել եկեղեցուն: Նույն արձանագրությամբ հաստատվում է նաև, որ Ապլղարիպը հողամաս է նվիրել այդ եկեղեցուն[192]:

Վահրամ Պահլավունին ունեցավ երեք որդի Սմբատը, Ապուղամրը և Գրիգորը: Ավագ որդին Սմբատը, որ ուներ մագիստրոս պատվատիտղոսը (անշուշտ, շնորհված Բյուզանդիայի կայսեր կողմից), տակավին 998թ. Ատրպատականի Մամլան ամիրայի դեմ Ցումբ գյուղում հայ-վրացական զորքերի մղած մարտում գործուն մասնակցություն ունեցավ՝ գուցե իբրև հոր գլխավորած հայոց զորքի զորաբաժիններից մեկի հրամանատար: Այս մասին հիշատակում է Ասողիկը, գրելով, որ Գագիկ I թագավորը «յամենայն զօրացն Հայոց հատեալ զգունդ ԶՌ յընտիր ընտիր վառելոցն՝ գումարէ ի ձեռն իշխանաց իշխանին Վահրամայ..., որ զՄարմաշէն և

---

189 Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն, էջ 283:

190 Դիվան հայ վիմագրության, I, էջ 46:

191 Կ. Դաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 150-151: Ապուղամրը դրամական նվիրատվություն է արել նաև Սանահնի վանքին (տես Կ. Դաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 97):

192 Դիվան հայ վիմագրության, I, էջ 49:

զԲրգներն շինեաց, և Սմբատայ մագիստրոսի, որդւոյ Վահրամայ»[193]: Ասողիկի այս հաղորդման մեջ «շինեաց» եզակի բայածևը հավանաբար պետք է վերաբերվի նաև Սմբատին իբրև Բագնայրի եկեղեցու կառուցողի, քանի որ Սամուել Անեցին գրում է. «Սմբատ մագիստրոսն շինեաց զիրեշտակաբնակ և զփափագատենչ վանքն, որ Բագնայր յորջորջիւր՝ ժողովեալ աստուածայնոց արանց»[194]: Ուստի Ասողիկի վերը բերված հաղորդումը սրբագրելի է «Վահրամայ..., որ զՄարմաշէն շինեաց և Սմբատայ մագիստրոսի որդւոյ Վահրամայ, որ զԲրգներն շինեաց» ձևով[195]: Այդպիսով պարզ է դառնում, որ Սմբատ Պահլավունին քաղաքամայր Անիի արևմտակողմյան Արջո Առիջ (Ալաջա) լեռան հյուսիսային ստորոտում կառուցել է Բագնայրի հոյաշեն վանքը, այնտեղ ժողովելով հոգևոր այրերի՝ «աստուածայնոց արանց»:

Գրիգոր Մագիստրոսը ծանր ապրեց մյուս հորեղբորորդու՝ Գրիգորի մահը: Հոգու անամոք ցավով նա նշում է, որ չի կարողացել մասնակցել նրա հուղարկավորությանը և՛ ծայնակցել նրա վրա ողբ անողներին: Վահրամ հորեղբոր մահվան առթիվ Սյունյաց հովվապետին հղած դթում գրում է. «Ոչ մերձ առ քեզ արժանացեալ իմ, զի հայրենական պսակին թերևս հասեալ բախտի ըստ հարազատին քո Տիգրանայ[196], ապա եթէ ոչ այլ միսումն Գրիգորի յուղարկաւորութեան եւ արբանակութեան զկնի հուր ի ծեռին և զդամբանականն քաջահնչող ծայնիւն և ուժգնակի գոչմամբ զմեծի զրկանացս ըստ Երեմիա ոչ կարօտէի աղբիւրանալ վտակաց»[197]:

Վահրամ Պահլավունու որդի է հիշվում նաև Աբուղամրը, որը 1031թ. դեռ ողջ էր և արձանագրություն է փորագրել տալիս Անիի Ս. Առաքելոց եկեղեցու որմին: Այդտեղ ասվում է. «ՆՁ թուին. շնորհիւն Աստուծոյ. ես Աբողամր որդի Վահրամայ իշխանաց իշխանի ետու զԿառնուտի արտն ի սուրբ Առաքեալքս, վասն եղբաւր իմ Գրիգորոյ առողջութեան և կենացն յերկարութեան»[198]:

---

[193] Ստեփաննոս Տարոնեցի, III, ԽԱ, էջ 270:

[194] Սամուել Անեցի, էջ 105:

[195] Տես Ն. Ակինյանի նշվ. աշխ., էջ 19:

[196] Տիգրանը համարվում է Վահրամ Պահլավունու եղբայր (տես Ղ. Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, էջ 12): Հր. Աճառյանի կարծիքով Տիգրանը նույնական է Վահրամի եղբոր՝ Ապուղամրի հետ (տես Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, Երևան, 1962, էջ 150):

[197] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 41:

[198] Դիվան հայ վիմագրության, I, էջ 12:

Անիի Գրիգոր Պահլավունու եկեղեցու մուտքի բարավորի վրա Վահրամ Պահլավունու թողած անթվակիր[199] արձանագրության մեջ նշվում է, որ վերջինս օշականցիներից գնել է երկու կրպակ և ընծայել այդ եկեղեցուն: Արձանագրության մեջ ասվում է. «Կամաւքն Աստուծոյ ես Վահրամ իշխանաց իշխան, ետու զիմ որդոյն զԱպուխամրի ոգեբաժին և գնեցի Բ կուղպակ զլորագոյնին և զորսաւտին յՈշականց. ետու ի սուրբ Գրիգորի և քան եկեղեցիքս որ ունին ի տարին Գ քառասունք. արդ եթէ ոք հակառ գա յիմոց կամ յաւտարաց նզովեալ եղիցի հաւրէ և յորդո և Սուրբ Հոգոյն յԺԸ հայրապետաց և Ապուխամրի մեղացն պարտական եղիցի առաջի Աստուծոյ»[200]:

Եթե ստույգ համարենք արձանագրությունը 1031-1033-ով թվագրելը, ապա պարզ է դառնում, որ Ապուղամրն այդ թվերին արդեն վախճանվել էր, և սգացող հայրը նվիրատվություններ է արել որդու հոգու հանգստյան համար:

Վահրամ Պահլավունու մյուս որդին վերը հիշված Գրիգորը տառապում էր ծանր հիվանդությամբ: 1037թ. բուժվելու նպատակով նա մեկնեց Մուֆարղին, Հիսե անունով բժշկի մոտ և նրանից ստացավ բուժման դեղատոմսեր, որոնք տեղ են գտել հայոց բժշկարաններում[201]: Ինչպես նշել ենք, Գրիգորը զոհվեց 1045թ. հոր հետ, Դվինի ամիրայի դեմ մղված կռվում:

---

[199] Ենթադրաբար թվագրվել է 1031-1033թթ. (տես K, Basmadjian, Les inscriptions armeniennes d' Ani, de Bagnair et de Marmachen, Paris, 1931, N 11).

[200] Դիվան հայ վիմագրության, I, էջ 32:

[201] Տես Գ. Յովսէփեան, Յիշատակարանք ծեռագրաց, էջ 672-674:

Գլուխ վեցերորդ

Գրիգոր Մագիստրոս

Պահլավունիների տոհմի հռչակը պանծացրեց նաև Վասակ Հոլումի շնորհասուն որդին՝ Գրիգորը, հիշված «Բջնեցի», «Մագիստրոս» վերադիրներով: Նա հայտնի էր իբրև մտացի, խորագիտակ անձնավորություն, օժտված անզուգական գիտունությամբ, պետական, ռազմական, գաղափարաբանական, գրական և մշակութային-մանկավարժական բազմահմտությամբ: Նա քաջագիտակ էր փիլիսոփայության, ինչպես նաև բնագիտության, բժշկագիտության և մաթեմատիկայի ասպարեզներում, տաղասաց էր, երգահան՝ շարականագիր [202]:

Գրիգոր Մագիստրոսը հավանաբար ծնվել է Անիում, մոտ 990թ.: Նրա մանկությունն անցել է այդ հռչակավոր քաղաքում, խաղաղության պայմաններում: Պահլավունիներն Անիում ունեցել են անշուշտ, սեփական շքեղ բնակարաններ: Սկզբնապես նա ուսանել է Անիի ուսումնագիտական կենտրոնում, ստանալով հիմնավոր ու բազմակողմանի գիտելիքներ: Հետագայում ուսումը շարունակել է Կոստանդնուպոլսի ճեմարանում, հասու եղել հելլենական գիտությանն ու քաղաքակրթությանը: Մագիստրոսը, ինչպես ինքն է նշել, ծանոթ էր նաև ասորական և արաբական մատենագրությանը: Նա այդ մասին վկայում է Պետրոս Գետադարձ կաթողիկոսին հղած մի նամակում, գրելով. «Բազում աշխատութեամբ խոնջեալ և տագնապեալ, մինչ տակաւին յիմում անտիականն ելով տիս, հազիւ հազ մակացու այսմ եղեալ, սուղ ինչ էակացն հասեալ, ըստ որումն են յԱրաբացւոց և Քաղդէացւոց և Յունաց, ոչ դանդաղեցայ քննութեամբ զփորձ առնուլ»[203]: Հետևաբար, Մագիստրոսը տիրապետել է հունարենին, հասու եղել արաբերենին, ասորերենին և ուսումնասիրել այդ լեզուներով գրված իմաստասիրական, աստվածաբանական և քերթողական արվեստին առնչվող գործերը: Նա վաղ հասակից հաղորդակցվել է գիտությանը, արվեստներին, նախապատվություն տալով հելլենական գիտությանը: Իր երկու աշակերտներին գրած նամակից երևում է, որ նա քաջածանոթ էր Արիստոտելի և Պորփյուրի աշխատություններին[204]: Ուշագրավ է, որ իր որդի Վահրամին ուղղած թղթում Մագիստրոսը հորդորում է

---

[202] Լ.Խաչերեան, Գրիգոր Պահլավունի Մագիստրոս 985-1058թթ., Ս. Մխիթարյան, Գրիգոր Մագիստրոսի կյանքը և գեղարվեստական ժառանգությունը, Երևան, 2001:

[203] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 9:

[204] Տես նույն տեղում, էջ 105-106:

մտավոր սնունդ ստանալ «իմաստության ստինքներից», իմա հնադարի հույն գիտուններ Պյութագորասի, Պլատոնի, Արիստոտելի երկերից «իբրու զստինս դիեցեալ, մինչ ի տարերս տակաւին տարբերէիր...»[205]:

Արաբ գիտնական Իբրահիմ ամիրային հղած թղթից նույնպես երևում է, որ Մագիստրոսը լավ ծանոթ էր հին հունական փիլիսոփայությանը. պարսկական, արաբական գիտությանն ու գրականությանը[206]:

Գրիգոր Մագիստրոսի թոռնորդի Ներսես Շնորհալին իր «Վիպասանութիւն» պոեմում, որը չափածոյի վերածված հայոց պատմությունն է, հետևյալն է գրում Մագիստրոսի մասին.

Աստուածային շնորհօք լցեալ,
Իմաստութեամբ պայծառացեալ,
Հօրն մերոյ նա հայր եղեալ...
Ի յարքայէն Յունաց պատուեալ
Եւ նահանգաց յոքունց տիրեալ
Տեսականաւն ճոխացեալ,
Եւ երկիւղին զարդարեալ,
Ըստ Հոմերի տաղաչափեալ,
Ըստ Պղատոնի պերճաբանեալ,
Յունականին ներհուն եղեալ,
Յոքնիմաստիցն մակացեալ...[207]:

Ներսես Շնորհալու կենսագիրը Գր. Մագիստրոսին բնութագրում է որպես «յոյժ իմաստուն եւ հանճարեղ, եւ ներքին եւ արտաքին ուսմամբ ներակրթեալ վարժմամբ ի մանկական տիոց, հայկական և յունական դպրութեամբ...»[208]:

Գրիգոր Մագիստրոսին ճանաչում և գնահատում էին Բյուզանդիայի մայրաքաղաքում, որտեղ նա տակավին ուսումնառության ժամանակ ուներ մերձակիցներ մտավոր խավի մեջ: Նա գիտնականի, իմաստասերի իր կարողությունները փայլուն կերպով դրսևորել է բյուզանդացի գիտնականների հետ ունեցած բանավեճերում, որոնց ընթացքում նա «յաղթէր բնաւիցն, եւ տկարագոյն զամենեսեան երեւեցուցանէր անճշմարիտ գիտութիւնն, հզօր գոլով նորա ի պատասխանիս, եւ հանճարեղ եւ խոհական ի դարձուածս բանից»[209]:

---

[205] Նույն տեղում, էջ 235:
[206] Տես նույն տեղում, էջ 200-201:
[207] Ներսես Շնորհալի, Վիպասանութիւն, էջ 108-109:
[208] Գ. Հովսեփեանց, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, էջ 426:
[209] Տես Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 332: Մագիստրոսի իմաստությունը շեշտում է նաև Արիստակես Լաստիվերցին: Տես Արիստակէս Լաստիվերտցի, էջ 62:

Նույնն է հավաստում նաև Մատթեոս Ուռհայեցին, գրելով. «Գրիգոր Պահլավունին՝ որդին Վասակայ էր անպարտելի շնորհօք լցեալ և զարմանալի էր սա յամենայն պատասխանիսն ընդդէմ Հոռոմոց, այր քաջակիրթ և ամենայն հմտութեանց հետևեալ և բովանդակ հասեալ սորա ի վերայ հին և նոր կտակարանացն Աստուծոյ. և սա ի յամբիոնսն նստէր ընդ իմաստասէրսն ի մէջ սրբոյն Սոփեայ և խոսէր ընդ վարդապետացն Հոռոմոց...»[210]:

Վերոնշյալ Իբրահիմ ամիրային ուղղած թղթում Գրիգոր Մագիստրոսը հոգևոր կեցության ոլորտում հույժ պատվելի է համարում հավատից հետո «իմաստութիւն և հանճար»[211]: «Եւ են սոքա,- գրում է նա,- մակաւասար ամենայն պարառութեան և պայծառութեան, որք ի մերձակայումս և զբոլոր բարիսն պարունակեալ և յապառնիսն առհաւատչեայ»[212]: Նա ցկյանս հավատարիմ մնաց իր գիտական, քաղաքացիական, նաև քաղաքական հավատամքին: Չնայած ալեհույզ ժամանակի հարուցած վայրիվերումներին, Գրիգոր Բջնեցին երբեք չդավեց մտավորականի, գիտուն իմաստասերի իր կոչմանը, ստեղծելով գիտական, գեղարվեստական աստվածխոհական արժեքավոր գործեր: Միջնադարյան հայ իրականության մասին համակողմանի գաղափար կազմելու համար հույժ կարևոր նշանակություն ունի հատկապես նրա նամականին, որը հազվագյուտ գրական-պատմական երևույթ էր վերազարթոնք ապրող հայ մտաշխարհում: Մագիստրոսի նամակները («թղթերը») ուղղված են ժամանակի հասարակության ընտրախավի ներկայացուցիչներին, իհարկե, ամենից առաջ իմացախոհական հակումներ, շահագրգռություններ ունեցողներին՝ հոգևոր հայրերին, իշխաններին, գիտնական վարդապետներին, զորապետներին, քաղաքական գործիչներին, իր աշակերտներին, ազգականներին[213]: Նրա թղթերն իրենց բովանդակությամբ շատ ընդգրկուն են՝ առլցված իմաստասիրական, գրական-բանահյուսական, մանկավարժական-ուսուցողական, ազգային-գաղափարաբանությանն առնչակցվող հանրագիտական բնույթի մտակառուցումներով, իմաստահեղ մտորումներով: Նրա երկասիրած գործերի առանցքում նաև հայ մտավորականն է իր իմացական խոկումներով: Նրա գրչի տակ հառնում են իր ալեհույզ դարաշրջանի քաղաքական, բարոյաբանական, գաղափարական և իմացական իրողությունները: Գրիգոր Մագիստրոսն ամենից առաջ, իհարկե, մեծ իմաստասեր էր, ծանոթ էր հնադարի խոշոր գիտնականների գործերին: Նա ակնածանքով է հիշում ոչ միայն Արիստոտելին, Սոկրատին և Պլատո-

---

[210] Մատթեոս Ուռհայեցի, էջ 183:

[211] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 201-202:

[212] Տես նույն տեղում:

[213] Գրիգոր Մագիստրոսի գրվածքները երբեմն ստանում են գեղարվեստական հնչերանգներ (տես Ս. Մխիթարյան, նշվ. աշխ., էջ 68-71):

նին, այլև հնադարի գիտուններ Աբյուդենոսին, Բերոսոսին, էպիկուրյաններին, պյութագորականներին, քրիստոնեացված նոր պլատոնականության ներկայացուցիչներին:

Գրիգոր Մագիստրոսի կարծիքով գիտությունը, մարդկային իմաստությունը հասարակության հոգևոր կյանքի շարժիչ զսպանակներն են: Մարդը բանական էակ է, ասում է նա, իսկ բանական էությունը չի կարող իմաստուն չլինել և զուրկ լինել մտածելու, մտահանգումներ անելու կարողությունից: Այս առնչությամբ նա գրում է. «իսկ եթէ ոչ բանաւոր, զիարդ մարդ. և եթէ ոչ իմաստուն, որպա՞կ բանաւոր. և եթէ ոչ մակստացական. հի՛ կէն իմաստուն. և որ ոչ իմաստուն, որգո՞ն մտաց և մահիկէն իմաստուն. և որ ոչ իմաստուն, որգո՛ն մտաց և մակացութեան ընդունակ»[214]: Նա մտքի բնական հատկությունն է համարում խորաքնին մտածությամբ, խոհականությամբ նոր գաղափարներ ծնելը: Իմաստությամբ է պայմանավորում մարդու կամային հատկությունները: Քանզի, գրում է Մագիստրոսը,- «բան գոյացութեանն մտացն ծննդականութիւն և խոր մտածութեան խոհականութիւն իմաստութեան յառաջարկութիւն կամաց հատուցանել ինչ կամ հայցել: Եւ որ ոչն իմաստուն, ոչ յայսոսիկ յածի...»[215]:

Թոռնիկ Սամիկոնյանին գրած նամակում Մագիստրոսը գտնում է, որ ովքեր չեն կարողանում տրամաբանորեն, քննաբար մտահայել, պետք է օրինակ վերցնեն իրենց գործի մեջ մեծահմուտ արհեստավորներից ոսկերիչներից, քարգործներից, դարբիններից, որոնք «մեծի լսողութեան ունին պէտս և աւագ աչօք շուրջ հայել և այս այնոցիկ որոց ի հոգւոյն ձիր ընկալեալ է ըստ շնորհին. և բազում հոգ և կրթութիւն և ջան...»[216]: Մատենագիրը նաև խորհուրդ է տալիս մեղվաջան աշխատանքով դիտարկել իրական կյանքի երևույթները, հասու լինել նրա ելևէջներին: Նույն նամակում նա գրում է. «Աղաչեմք անհակամիտաբար ուղղել զքեզ զայսպիսի թևակոխութեանց և պարապել ճշմարտութեանն և զհետ երթալ աւանդութեանց հարցն»[217]: Այդպիսով Մագիստրոսը Թոռնիկի պարտքն է համարում լինել ճշմարտախույզ և հավատարիմ մնալ հայրենադիր ավանդներին: Նա իմաստությունը համարում է «անկողոպտելի գանձ», որից սակայն պետք է օգտվել զգուշորեն, իմաստունին վայել ձևով[218]: Միաժամանակ խորհուրդ է տալիս շատ չտարվել առտնին, կենցաղական վայելքներով և չհեռանալ «իմաստասիրության արհեստից»: Մագիստրոսը վատաբանում է այն գիտունին, որը «թողեալ զիմաստասիրութեանն արհեստ,

---

[214] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 205:
[215] Նույն տեղում:
[216] Նույն տեղում, էջ 232-233:
[217] Տես նույն տեղում, էջ 232-233:
[218] Նույն տեղում, էջ 202:

չոգաւ ի կենցաղական զեղխումն. իբրու թէ կոյր ի ծնէ եղեալ, զգայ զկուրութեանն, և ըղձայ տեսութեան, իսկ զկնի տեսութեան ի պատահմանէ կուրացեալ, յոյժ տարակուսելի է»[219]:

Գրիգոր Մագիստրոսը Ս. Կարապետ վանքի վանահորը հղած թղթում գրում է, որ իմաստահեղ կարծիքը ծնվում է երեք կերպ՝ «տրամախոհութեամբ և տեսութեամբ և ի լրոյ», որոնք սակայն դժվարըմբռնելի են դառնում այն ժամանակ, երբ «տրամախոհիմք... ոչ ստուգաբար, և տեսանեմք որակութիւն և ոչ ըստ ծևոյն, և լսեմք և ոչ ճշմարտէ», ուստի խորհուրդ է տալիս ամենից առաջ հիմնովին տարրալուծել երևույթները՝ տրոհելով երեք մասի՝ «երիւք ստուգութեամբ» և այնուհետև մտահայել դրանք: Այդ կերպ,- գրում է նա,- «տիրապէս թևակոխիցիմք՝ զանուն, զբնութիւն և զիր: Եւ այսպէս պարառաբար ստորաբաժանելով, և հազիւ հազ տակաւին ճանաչեմք զգոյութիւն գոյին»[220]:

Գրիգոր Մագիստրոսի տիեզերընկալմամբ գոյություն ունեն երեք աշխարհներ. 1. Աստվածն իբրև «անշարժելի աշխարհ», 2. երկինքն իբրև «շարժուն աշխարհ», և 3. մարդն իբրև «բանաւոր աշխարհ»[221]: Այդպիսով նա տիեզերքը դիտում է հարաժամյա շարժման ու զարգացման մեջ, մարդուն համարում բանական, մտավոր աշխարհի մարմնացում, իմաստության արտահայտություն:

Գրիգոր Մագիստրոսը բարձր է գնահատում նաև հայ գիտուններին, որոնք նրա կարծիքով հաղթող են եղել արվեստների ու գիտության բոլոր բնագավառներում և առավելություն ունեն շատ հույն գիտուններից[222]: Նա ըստ պատշաճի արժեվորում է իմացության սերմնացաններին՝ հայ վարդապետներին, նրանց համարելով «հոգւոյ կենդանութեան պատճառ»[223]: Մագիստրոսը գիտունի հատկանիշներ է դիտում համբերատար ու տևական ունկնդրելու, մտքի աչքերով քննելու կարողունակությունը, մտավոր անշեջ եռանդն ու մեղվաջան աշխատանքը: Նրա կարծիքով ովքեր հակված են գիտական խոկումների, «մեծի լսողութեան ունին պէտս և աւագ աչօք շուրջ հայել և այս այնոցիկ որոց ի հոգւոյն ծիր ընկալեալ է ըստ շնորհին. և բազում հոգ և կրթութիւն և ջան...»[224]:

---

[219] Նույն տեղում, էջ 5:
[220] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 71:
[221] Տես նույն տեղում, էջ 115:
[222] Տես նույն տեղում, էջ 205:
[223] Նույն տեղում, էջ 232:
[224] Նույն տեղում, էջ 232:

Գրիգոր Մագիստրոսը տանել չէր կարողանում գիտության մեջ անիրազեկ ու անհետևողական մարդկանց[225], հատկապես իրենց կոչումին դավող մտավորականներին[226]:

Մագիստրոսը կարևորում է դաստիարակների, ուսուցիչների դերը: Նա գտնում է, որ մանկական տարիքից անհրաժեշտ է երեխայի մեջ սնուցել բարեպաշտություն, սեր ուսման նկատմամբ: Անուսումնությունը դիտում է որպես բոլոր չարիքների պատճառ: Եթե երեխան,-գրում է նա, «ոչ երկիւղիսն Աստուծոյ ի մանկական տիսն վարժի, կարծեմ, եթէ ոչինչ օգտէ. քանզի չար ախտ անձին հանդիպի ի վատթար հրահանգից և յանուսումնութենէ և ի չար ունակութենէ»[227]:

Ուսման բնագավառում Մագիստրոսը պարտադիր էր համարում «յոթ ազատ արվեստների» եռյակ և քառյակ գիտությունների ուսուցումը[228] (նախ քերականություն, ճարտասանություն և դիալեկտիկա, իմա՝ դատելու, բանավիճելու արվեստ, ապա՝ թվաբանություն, երկրաչափություն, աստղագիտություն (օրացույցի գիտենալը) և երաժշտություն, որոնք բխում էին անտիկ շրջանի գիտական համակարգից: Ըստ Մագիստրոսի, առանց դրանք տիրապետելու, հնարավոր չէ աստվածաբանության յուրացումը: Այդպիսով եկեղեցուն կից դպրոցներում առաջին հերթին պարտադիր պետք է ուսուցանվեին «յոթ ազատ արվեստները», որոնք նպաստելու էին եկեղեցական արարողակարգի կատարելագործմանը, կրոնական գրքերն ըմբռնելու, աղանդավորների հետ բանակռիվներ վարելու և այլ գործընթացների համար): Այդ կերպ Մագիստրոսը կամենում էր հաստատուն հիմքերի վրա դնել դպրոցներում գիտության այդ ճյուղերի դասավանդումը և բարձրացնել եկեղեցու շահագրգռվածությունը դրանց նկատմամբ: Առանց սեփական անձը գիտությամբ լուսավորելու, հնարավոր չէ մերձենալ Աստծուն,- հորդորում է գիտնականը[229]: Մագիստրոսը հետամուտ էր Հայաստանում գիտության այդ ճյուղերի արմատավորմանը: Նա ստեղծեց քերականության դասագիրք[230], որը կազմված էր նախորդ քերականների երկերի որոշ մասերից: Մագիստրոսն իր տղային հղած նամակում գրում է. «Ոչ եմք երբեք դադարեալ ի թարգմանութենէ ևս... բայց և զերկրաչափականն զԵւկլիդոսին սկսայ թարգմանել. և եթէ

---

[225] Տես նույն տեղում, էջ 112:

[226] Նույն տեղում, էջ 5:

[227] Նույն տեղում, էջ 69:

[228] Տես նույն տեղում, էջ 8-9, 72, 105 և այլն:

[229] Տես նույն տեղում, էջ 8-9, 97:

[230] Գրիգոր Մագիստրոսի ստեղծած այս դասագրքի գիտա-քննական բնագիրը տես Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, Լ. Խաչերեան, Գրիգոր Պահլաւունի Մագիստրոս, էջ 357-464:

տակաւին կամեսցի Տէր երկարանալ մեզ ի կենցաղումս, բազում հոգս յանձին կալեալ զմնացեալսն բոլոր Յունաց և Ասորվոց թարգմանել ոչ դանդաղեցայց»: Նա որդուց խնդրում է օգնել իրեն այդ գործում[231]:

Հայտնի է, որ հին հայերենում «թարգմանել» բայն ուներ նաև «մեկնել», «բացատրել», «վերլուծել» իմաստը: Ըստ երևույթին Մագիստրոսը հենց այդ իմաստով է գործածում «թարգմանել» բառեզրը (նկատի ունենալով հունարեն և ասորերեն լեզուներով շարադրված աշխատությունները), երբ մտահղանում է վերլուծել դրանք: Անշուշտ, Գրիգոր Մագիստրոսը չէր ձեռնարկի այնպիսի խրթին և մեծ ջանքեր պահանջող աշխատանք, որպիսին էր «բոլոր հունաց և ասորվուց» երկասիրությունները հայերենի թարգմանելը:

Գրիգոր Մագիստրոսը Հայ Առաքելական եկեղեցու ջերմեռանդ պաշտպանն ու ջատագովն էր: Նա հմուտ ու քաջագիտակ էր նաև աստվածաբանության, քրիստոնեաբանության, Հայոց եկեղեցու նրա հիմքերի ամրակայացման գործում: Նրա հեղինակած գրեթե բոլոր գրվածքները արգասիք են խորահմուտ հավատաբանի, հայրենասեր գործչի իմաստահեղ մտորումների: Հիմնականում դրանով էր պայմանավորված Պետրոս Գետադարձ կաթողիկոսի և ուրիշ հայ հոգևորականների հետ նրա դրսևորած հոգեկցությունը, որն արտացոլք է գտել նրա թղթերում: Պետրոս Գետադարձ կաթողիկոսին հղած նամակներից երևում է, որ Գրիգոր Բջնեցին գնահատել է նրա գիտունությունը, Հայ Առաքելական եկեղեցու առաջնորդ լինելու իրողությունը: «Պետակա՛նդ բոլոր սրբազանիս և գլո՛ւխ առաքելական», այսպիսի խոսքերով է դիմում նրան Մագիստրոսը: Իր հերթին Պետրոսը հիացել է Գրիգոր Մագիստրոսի իմաստասիրությամբ, որին նրա գրել է. «զանսպառն հեղուս գիտութիւն և շնորհ»[232]:

Գրիգոր Մագիստրոսը համոզված էր, որ «Գիտության լույսն ընկալում են հավատով»[233]: Նա գնահատում է երկու կարևոր հատկանիշ՝ հավատն ու իմաստությունը[234]: Ի զուգակշիռ Գրիգոր Նարեկացու, Մագիստրոսը համոզված է, որ մարդու ամենանվիրական ձգտումը պետք է լինի Աստծուն մերձենալը, քրիստոնեական հավատի մեջ ունեցած ջերմեռանդությունը:

Գրիգոր Մագիստրոսը մեծ հեղինակություն էր վայելում հայ հոգևորականության բարձր ոլորտներում: Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ Հայոց ՆՁԵ (485/1036) թվականին արեգակի խավարմամբ ահաբեկված Հովհաննես-Սմբատ թագավորը և Պետրոս կաթողիկոսն այդ երևույթի

---

[231] Տես Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 66:
[232] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 3:
[233] Նույն տեղում:
[234] Նույն տեղում, էջ 201:

պարզաբանման համար նշանավոր վարդապետ և աստվածաբան Հովհաննես Կոզեռնի մոտ են ուղարկում պատվիրակություն բաղկացած հոգևոր հայրերից ու աշխարհական տերերից Գրիգոր Մագիստրոսի գլխավորությամբ[235], ինչը վկայում է արքունիքում և հոգևոր վերնախավում նրա ունեցած բարձր համարումի մասին:

Գիտության և բանականության լույսով հավատն իմաստավորելու համար Գրիգոր Մագիստրոսն անեցի գիտուն Գրիգոր Հնձեցուն առաքեց Վանանդի թագավոր Գագիկ Աբասյանի մոտ, նրան հորդորելով հիմնել թագավորական ճեմարան, ընդ որում նշելով, որ գոյություն ունի Աստծուն մերձենալու միայն մեկ ուղի, այն է երբ հավատացյալն իրեն լուսավորում է գիտությամբ: «Մերձենալ առ Աստուած,- գրում է Մագիստրոսը,- բարի է յոյժ: Եւ ոչ այլ ինչ է հնար մերձենալ, եթէ ոչ գիտութեամբ լուսաւորել զանձն»[236]: Գագիկ արքային հղած թղթում Մագիստրոսը Գրիգոր Հնձացուն բնութագրում է իբրև խորագիտակ «աստուածեղէն դաւանութեան մերոյ բախտի»[237]:

Միաժամանակ դիտելի է, որ Մագիստրոսը հավատը և նրա իմաստասիրությունը՝ աստվածաբանությունը շաղկապում է բնական գիտությունների հետ: Նա հմուտ էր ոչ միայն իմաստասիրության, քերականության, դիցաբանության, քրիստոնեաբանության, այլև բնագիտության, բժշկագիտության և մաթեմատիկայի բնագավառներում: Մոկքի և Մանազկերտի եպիսկոպոս Գրիգորին հղած թղթում Մագիստրոսը համայն տիեզերքը բաժանում է մեծ և փոքր աշխարհների, մեծը՝ «աշխարհ աստուածային էութիւնն իմանի... իսկ փոքր՝ մարդկայինս սեռ», և հորդորում է «որքան կարողութիւն է զարդարել զաշխարհ և օգնական լինել իբրև զծառայ հլու և հպատակ Ստեղծչին զսա»[238]: Նա գիտությունը բաժանում է երեք գլխավոր ճյուղերի բնագիտություն, մաթեմատիկա և աստվածաբանություն, դրանք հարակցելով միմյանց հետ[239]: Հույն դպիր Կիրակոսին ուղղած թղթում նա գրում է՝ «որք ի բնաբանականէն յաստուածաբանականն ամբառնան, ըստ այնոսիկ հաւանիմք գոլ»: Բնագիտությունից աստվածաբանություն բարձրացողներին համարում է խավարից դեպի լույսն ու արեգակը ձգտողներ[240]: Իմաստասերները,-գրում է նա, նյութականից բարձրանում են աննյութականը՝ «այսինքն ի բնաբանականէն յաս-

---

[235] Տես Մատթէոս Ուռհայեցի, էջ 67:

[236] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 97: Մագիստրոսը Գրիգոր Հնձացուն դիտում է որպես «պայազատ Հայկեան և Պահլաւունեան» (տես նույն տեղում):

[237] Նույն տեղում:

[238] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 85:

[239] Նույն տեղում:

[240] Նույն տեղում, էջ 114:

տուածաբանականն»[241]: Մագիստրոսը համոզված է, որ Հայոց եկեղեցին կարող է անսասան մնալ «քաջողջական հոգւովն մաքրափայլ տեսութեամբ», քանի որ «քաջաց և առաքինեաց են յարմարագոյն հովուաց»[242]:

Նա Տիրոջ պատվիրանները և գիտությունը համարում է «աչքերի լույս», որից զրկվում են դրան անգիտացողները: Ի հաստատումն դրա, Մագիստրոսը վկայաբերում է Սողոմոն իմաստունին, որը «զիմաստութիւն խնդրէ յԱստուծոյ», իսկ Դավիթը՝ «զպատուիրանս Աստուծոյ և զգիտութիւն լոյս աչաց հաւանեցաւ գոլ»[243]:

Գրիգոր Մագիստրոսը հելլենական գիտության ջատագովն էր[244], ձգտում էր այն սերմանել նաև հայ մտաշխարհում: Հունական գիտությունը համարում է այս աշխարհում վեհագույնն ու ազնվագույնը[245]: Բայց նա իր աշակերտներին խորհուրդ էր տալիս հույն իմաստասերների և գիտության մյուս մշակների գործերն ուսումնասիրելուց առաջ տիրապետել «ներկուռ վերծանութեամբ զհին և զնոր կտակարանս» և դիցաբանությունը[246]: Իբրահիմ անունով արաբ գիտունին հղած թղթում Մագիստրոսը գրում է, որ «թեև ոչ ենք անտեղեակ աթենացւոցն ստորոգութեանց և հելլենական հանճարոյ, սակայն հաւատք մեր ծածկեցին զիմաստութիւն, վասն զի հոգեղենք ենք և ոչ մարմին, և ոչ անմարմին», բայց հարում է նա,-հոգին ծածկում է մարմնին՝ «երկրորդ ծննդեամբն մեր, որ ի հոգւոյն ծնեալք եղեալք»: Դրա շնորհիվ, շարունակում է գիտնականը, մեր հավատքը հնարավորություն է ընծեռում վերահասու լինել և հավատալ աներևույթին, այդ կերպ ըմբռնել մարդկային իմացականությանն անհասանելի, անմեկնելի երևույթները[247]: Նույն ամիրային ուղղված մեկ այլ նամակում Մագիստրոսը մեկ անգամ ևս հավաստում է, որ այս կյանքում «պատուելի է նախ հաւատ, երկրորդ իմաստութիւն և հանճար: Եւ են սոքա մակաւասար ամենայն պարառութեսն և պայծառութեան», ավելին. դրանք պարունակում են ամենայն բարիքներ և ապագայի առհավատչյան են[248]: Այդպիսով հավատն ու իմաստությունը ընդգրկում են ամեն ինչ և նախապատրաստում են գալիքը: Այստեղից հետևում է, որ առանց հավատի և իմաստության չի կարող լինել բովանդակալից ու պայծառ ապա-

---

[241] Նույն տեղում:
[242] Նույն տեղում, էջ 146:
[243] Նույն տեղում, էջ 173:
[244] Տես Մ. Աբեղյան, Երկեր, Դ, Երևան, 1970, էջ 34-35, 37:
[245] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 106:
[246] Տես նույն տեղում, էջ 105:
[247] Նույն տեղում, էջ 174:
[248] Տես նույն տեղում, էջ 201-202:

գա: Այս դեպքում ևս գիտնականը առաջնություն է վերապահում հավատին:

Գրիգոր Մագիստրոսը հավատքի աղբյուր է համարում Ս. Գիրքն իբրև արդարախույզ ու ճշմարիտ ուսմունք և աշխարհընկալում պարգևող առաջին ու գլխավոր մատյանը: «Եւ ո՞ արդեօք ծեր կամ հնագոյն քան զգիրս սուրբս և աստուածաշունչս, վասն զի յայնժամ ոչ գոյր գիրս, այլ միայն հարցն և ծերոցն պարտ էր հաւանել զրուցատրութեան»[249],- գրում է նա Պետրոս կաթողիկոսին հղած թղթերից մեկում: Ըստ Մագիստրոսի, աստվածային պատվիրանները «լոյս են և լոյս տան աչաց, և յայնմանէ երկիւղ սուրբ, որ մնայ յաւիտեան»[250], ուստի Սուրբ Գիրքը հավերժագո ու հարամնա արժեք է դառնում: Ընդ որում Մագիստրոսը գտնում է նաև, որ հելլենացի գիտունների իմացախոհական գործերում նույնպես առկա է «կաթիլ իմն աստուածային»[251]: Հետևությունը պարզ է բացի Աստվածաշնչից, կարևորում է նաև անտիկ գիտության ուսումնասիրությունը, ինչը աշխարհականացող, մտավոր վերազարթոնք ապրող ժամանակի պահանջն էր:

Գրիգոր Մագիստրոսն աշխարհական լինելով հանդերձ, խորացել է նաև աստվածաբանության մեջ: Նա Ս. Գրքից կատարում է բազմաթիվ հղումներ, տեղյակ էր եկեղեցու հայրերի գործերին:

Մագիստրոսն իրեն դրսևորում է ոչ միայն իբրև խորատես հավատաբան և ջերմեռանդ եկեղեցաբան, այլև գտնում է, որ առանց քառյակ գիտությունները, բնագիտությունն ուսումնասիրելու, հնարավոր չէ աստվածաբանություն ուսուցանել: «Որք,-կարդում ենք Պետրոս կաթողիկոսին նրա հղած մի թղթում,- ոչ նախուստ կրթեալք են, բոլորովին ոչ գոյ հնար թևակոխել զայնպիսի աստուածաբանութիւնս, քանզի պարտ է նախ ի բնաբանականէն յուսումնականն ամբառնալ և անտուստ աստուածաբանականն»[252]: Մագիստրոսի կարծիքով իմաստասիրելու ունակությունը «ձիր պարգևի ի հոգւոյն է. բայց և զկնի քառիցն ուսումնականաց տիրապէս կատարեալ անցանել... ի մակացութեանն մակացութիւն. քանզի և սա ոչ այլ ինչ ունի տեսութեան դիտաւորութիւն, եթէ ոչ ի նմանութիւն Աստուծոյ»[253]: Այդպիսով «գիտությունների գիտության («մակացութեանն մակացութիւն»), իմա՝ աստվածաբանության (որի նպատակն Աստծուն նմանվելն է) ուսումնասիրելուց առաջ պետք է խորանալ քառյակ գիտությունների մեջ:

---

[249] Նույն տեղում, էջ 27:
[250] Նույն տեղում, էջ 4:
[251] Նույն տեղում, էջ 5:
[252] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 8:
[253] Նույն տեղում, էջ 226:

Գրիգոր Մագիստրոսի «Հազարտողեան» պոեմը Ս. Գրքի չափածոյացված համառոտ շարադրանքն է: 1045թ. Բագրատունի վերջին թագավորը նենգորեն հրավիրվեց Կ. Պոլիս: Ենթադրվում է, որ նրա ետևից այնտեղ մեկնած Գրիգոր Մագիստրոսը հետապնդել է նաև հայոց թագավորին պաշտպանելու նպատակներ[254]: Կայսրության մայրաքաղաքում նա հանդիպեց մահմեդական հավատաբան Մանուչեին, որն իր իմաստությամբ հռչակված էր արաբական աշխարհում, նաև պատվի էր արժանացել Կոստանդին կայսեր կողմից: Այս գիտունի հետ Մագիստրոսը զրույցի է բռնվում հավատի շուրջ: Մանուչեն Ղուրանը գերիվեր է համարում Աստվածաշնչից, քանի որ, ըստ նրա, մահմեդականների այդ սրբազան գիրքը շարադրված է չափածո ձևով: Դրան ի պատասխան, Մագիստրոսն ասում է, որ չափածոյով հորինելը ոչ թե ի վերուստ է սահմանված, այլ ձեռք է բերվում աշխատությամբ: Վեճը հանգուցալուծվում է, երբ Մագիստրոսը հայտարարում է, թե այն, ինչ Մուհամմեդը գրել է 40 տարում, ինքը գրելու է 4 օրում, սկսելով աշխարհի արարչագործությունից և հասցնելով մինչև Քրիստոս: Մանուչեն խոստանում է քրիստոնյա դառնալ, եթե Մագիստրոսն իրոք շարադրի իր խոստացածը[255]: Հեղինակն այս պոեմում գրում է նաև Հայոց Եկեղեցու հայրերի մասին, սկսած Գրիգոր Լուսավորչից մինչև Մաշտոցն ու թարգմանիչները: Պոեմն սկսվում է այսպես.

«Մեծ են գործք աստուածային, սքանչելի նորա բանին.
հրաշալի անպատմելին, յամենայնի զարմանալին...
Ստեղծող գոյից բոլոր՝ որք ի ծածուկ և որք երևին...
Անսկիզբն, անժամանակ և արարող յաւիտենին[256]:

Գրիգոր Լուսավորչի մասին գրում է.

Զսրբոյն մեր Գրիգորի և զՀայոց Լուսաւորչին,
Քաղաքաւրն Պահլաւին և ըստ ազգին Արշակունին,
Զմաքուր հայրապետին և սքանչելի մարտիրոսին...
Մարգարէ զսա տեսողին և ուսուցիչ մերոյ ազգին»[257]:

Այնուհետև տրված են Տրդատ Մեծի հետ Գրիգորի Հռոմ մեկնելն, ապա Կեսարիայում ձեռնադրվելն, այնտեղից Ս. Կարապետի և Աթանագինեսի մասունքները Հայաստան բերելը և Աշտիշատում ամփոփելը, Հռիփսիմյանց նահատակությունը և այլն: Հիշվում են նաև Գրիգոր Լուսավորչի որդիները, նշելով նաև՝ «Արդ զիս յայս տոհմէ գիտեմ ազգաւ Պարթև իմ հայրենին»[258]: Գրիգոր Լուսավորչից սերած լինելու գաղափարը նույն-

---

[254] Լ. Խաչերեան, Գրիգոր Պահլաւունի Մագիստրոս (985-1058), էջ 134-135:
[255] Տես Տաղասացութիւնք Գրիգորի Մագիստրոսի Պահլաւունւոյ, էջ Ա-Գ:
[256] Նույն տեղում, էջ 1-2:
[257] Նույն տեղում, էջ 70-71:
[258] Նույն տեղում, էջ 73:

պես հիմք կարող էր դառնալ Մագիստրոսի եկեղեցանպաստ ուղեգծի և հոգևոր հայրերի հետ նրա ունեցած հոգեկցության համար:

Պոեմում զգացվում է նաև Գրիգոր Նարեկացու ազդեցությունը: Նրա հետևողությամբ Մագիստոսն առաջադրում է բոլոր ազգերի, ցեղերի ու անհատների փրկության գաղափարը[259]: Վերջին դատաստանը պատկերելիս նա դողում ու սարսափում է Նարեկացու պես[260]:

«Հազարտողյանը» համարվում է հայոց տաղասացության մեջ նորարարություն, և անդրանիկ հանգավոր երկասիրությունը[261]: Այս պոեմին է հարում Մագիստրոսի «Ներբողեան ի սուրբ Խաչն Քրիստոսընկալ» գործը, որտեղ գովերգում է Ս. Խաչը.

Նախնոյն մեր առաջին նորոգութեան կնիքդ կանգնեալ...

Գործիդ մահու կենաց ի յարութիւն մեզ ներգործեալ:

Բըղխումն անապական՝ աղբիւր կենաց ի քեզ հոսեալ[262]:

Ս. Խաչը ոչ միայն արիություն, իմաստություն է պարգևում, այլև «սգաւորաց մխիթարիչ» է, տրտմացողներին ուրախացնող, աշխարհի չորս ծագերից մոլորյալներին ժողովող, որը նաև թողություն է պարգևում մեղապարտ հոգիներին[263]: Այստեղ նույնպես զգացվում է Գրիգոր Նարեկացու ազդեցությունը: Վերջինս համոզված էր, որ խաչի նշանով խափանվում են թշնամական հարձակումները, պրկվում են չար ոգիները և այլն[264]: Նարեկացին տենչում է, որպեսզի խաչը պաշտպան լինի իր երդիկին, միշտ լինի իր աչքերի առջև, նույնիսկ դրոշմվի իր դռան ճակատին[265]:

Գրիգոր Մագիստրոսը գրել է նաև «Առ սուրբ Կարապետն Յովհաննէս» ներբողյանը, որտեղ շեշտում է Հովհաննեսի հրեշտակային վարքը, Աստծուց նրա արժանանալը Փրկչին մկրտելու շնորհին: Այս գրվածքը նմանության եզրեր ունի Գրիգոր Նարեկացու «Քարոզ Գրիգոր Նարեկացւոյ ստացեալ ի սուրբ Յովհաննէս Մկրտչին» գործի[266] հետ: Մագիստրոսը հորինել է մի շարական, ուր գովերգվում է Հավուց թառի Ամենափրկիչ

---

[259] Տես նույն տեղում, էջ 76:

[260] Տես Մ. Աբեղյան, Երկեր, Դ, էջ 47:

[261] Տես Ս. Մխիթարյան, նշվ. աշխ., էջ 106:

[262] Գրիգոր Մագիստրոս, Տաղասացութիւնք, էջ 85:

[263] Տես նույն տեղում, էջ 84, 86-87, տես նաև Գր. Մագիստրոս, Թղթեր, էջ 168-169:

[264] Տես Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, աշխ. Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, Երևան, 1985, Բան ՂԱ, 15-26:

[265] Տես նույն տեղում, Բան ՂԱ, 34, 36: Նշենք նաև, որ Նարեկացին ունի «Տաղ սուրբ խաչին» բանաստեղծությունը (տես Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, աշխ. Ա. Քյոշկերյանի, Երևան, 1981, էջ 129-130):

[266] Տես Գր. Նարեկացի, Տաղեր և գանձեր, էջ 141 և հտ.:

եկեղեցում քանդակված Հիսուսի պատկերը: Նույն եկեղեցու որմին Գրիգոր Մագիստրոսի կողմից 1013թ. թողած արձանագրության մեջ Հավուց թառը համարվում է «հանգստարան եւ աւթարան անձեռագործ սուրբ պատկերին Յիսուսի Քրիստոսի որ ի փայտին»[267]: Հետագայում (1360-ական թթ.) Արարատյան երկրի Եպիսկոպոս Մանուել Բջնեցին (Եղվարդի Ազիբեկենց իշխանական գերդաստանից) այդ սրբությանը նվիրված գանձի մեջ գրում է, որ Քրիստոսի խաչելությունից հետո նրա պատկերը տեղափոխվում է Հռոմ: Գրիգոր Մագիստրոսն իր Վահրամ որդուն ուղարկում է Հռոմ՝ խնդրելու այդ սրբությունը: Վասիլ կայսրը և Գորգ իշխանը Մագիստրոսին են նվիրում այդ գանձը: Վերջինս «մեծօ հանդիսի ընդ յառաջ շարժի» և ուսամբարձ բերում զետեղում է «յուխտի, յարկ իւր կայանի», ապա, որոշ ժամանակ անցնելուց հետո այն տեղափոխում է իր հիմնած Հավուց թառի վանք[268]: Վասիլ կայսեր հիշատակումը վկայում է, որ հիշյալ սրբությունը Հայաստան է տեղափոխվել ավելի վաղ՝ հավանաբար, Վասիլ II կայսեր և վրաց Գեորգի թագավորի օրոք: Այնուհետև Մանուել Բջնեցին գրում է.

Իսկ Մագիստրոսին յորժամ եդ հարկին զտիպն աստուածային:
Արար խրախութիւն տաւնախմբութիւն զեաւթն աւր միասին:
Եւ ի դէմս դրոշմին եւ յեկեղեցին երգեաց գովութիւն:
Զերգս շարականին, զորս ըստ պատկերին, որք ի կարգ խաչին[269]:

Հավուց թառի Ամենափրկիչ եկեղեցու անվավեր արձանագրության մեջ նշվում է, որ եկեղեցին «վերստին կառուցել է» Մագիստրոսը[270], այնտեղ զետեղելով Փրկչի պատկերը՝ «զվէմն հաւատոյ», ինչի մասին նշվում է նաև Մագիստրոսի հորինած շարականում:

Գրիգոր Մագիստրոսը հովանավորում էր եկեղեցու հայրերին, որոնք նրան էին դիմում իրենց հուզող գիտական, ուսումնական, նաև առօրեական կենսահույզ խնդիրները լուծելու ակնկալությամբ: Մագիստրոսը սիրով արձագանքում էր նրանց՝ նամակներով, երբեմն նաև անձնական շփումներով: Հայտնի է նրա մերձակցությունը Պետրոս Գետադարձ կաթո-

---

[267] Գ. Հովսեփեանց, Հաւուց թառի Ամենափրկիչը եւ նոյնանուն յուշարձաններ հայ արուեստի մէջ, Երուսաղէմ, 1937, էջ 2:
[268] Տես նույն տեղում, էջ 88:
[269] Նույն տեղում:
[270] Տես Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 354: Սամուել Անեցու երկում Հավուց թառի առաջնորդ Նաթանայել եպիսկոպոսի կողմից թողած 1343 թվակիր հիշատակարանում այդ եկեղեցու հիմնադիր է համարվում Քեղի ամրոցի տեր Գեորգ իշխանը, (XIIIդ.-սկիզբ), որը Հասանի որդին էր և Գրիգոր Ապիրատի եղբայրը (տես Կ. Մաթևոսյան, Հավուց թառի վանքի և Ապիրատյան տոհմի պատմության նորահայտ տվյալներ («Բանբեր մատենադարանի», 17, Երևան, 2006թ., էջ 154-155, 160-163):

ղիկոսի հետ, ինչը բխում էր Եկեղեցու հանդեպ Մագիստրոսի տածած խորը հարգանքից, որի թելադրանքով Մագիստրոսը Պետրոսին նվիրեց «խաչանշան գավազան», այդ առթիվ նրան ծոնելով չափածո ներբողական: Այդ գրվածքում կաթողիկոսը համեմատվում է հրեից Մովսես մարգարեի հետ, համոզմունք հայտնվում, որ նույն գավազանով նա տարասփռված հայերին առաջնորդելու է դեպի «Ավետյաց երկիր»[271], իմա Հայոց բնաշխարհ: Պետրոսին հղած նամակները հետևանք էին վերջինիս ունեցած գիտական նախասիրությունների և զերծ էին քաղաքական գաղափարակցության հնչերանգներից: Հայտնի է, որ Մագիստրոսը երբեք չթղթակցեց Պետրոս կաթողիկոսին գաղափարակից Վեստ Սարգսի հետ:

Մագիստրոսն իբրև աշխարհիկ իշխանավոր, նաև գերակայություն ուներ Եկեղեցու հանդեպ, նշանակում էր իրեն ենթակա շրջանների հոգևոր առաջնորդներին, հարկ եղած դեպքերում սաստում նրանց: Այսպես, նա դժգոհում է մի եպիսկոպոսից, որին ինքն էր հովվապետ կարգել: Նշում է, որ նրան չի կարելի եպիսկոպոսի անուն տալ, թեև «դէտ կացուցի, և ոչ միայն դէտ, այլ և վերադիտող», մինչդեռ նա չէր վերացրել բնակչության հեթանոսաբարո սովորույթները գերեզմանի շուրջ սգահանդեսի պահին պար գալը, սուլելը, ոտքերով գետինը դոփելը, ծափ տալը և այլն[272]:

Գրիգոր Մագիստրոսը հիմնեց Բջնի եպիսկոպոսությունը, որն ազդեցիկ դեր խաղաց արևելահայոց կյանքում: Նրա ջանքերով Բջնին դարձավ եկեղեցական վիճակի կենտրոն, փոխարինելով Արարատյան եկեղեցաթեմին: Նրա առաջնորդը մասնակցում էր Հայոց կաթողիկոսի ընտրություններին, կոչվում «արքեպիսկոպոս Բջնոյ և Արարատայ»[273]: Քրիստոնեական հավատն ու հայրենիքը Մագիստրոսի համար անբաժան էին, ուստի նա ջանքեր էր ներդնում եկեղեցու հիմքերն ամրապնդելու, հայրենիքի սահմանները պաշտպանելու համար: Մոկաց Գրիգոր եպիսկոպոսին հղած թղթում նա գրում է, որ Աստծու պատվիրաններից ամենագլխավորը հայրենիքի սահմանները պաշտպանելու պատգամն է[274]:

Միջագետքի, Տարոնի և հարակից շրջանների դուքս կարգված Մագիստրոսը հոգեբանական ճգնաժամի մեջ էր դառն հիասթափություն էր

---

[271] Տես Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 31-32: Մագիստրոսը չէր կիսում Պետրոս Գետադարձի քաղաքական հայացքները: Հայտնի է, որ 1037թ. Հովհաննես-Սմբատ թագավորի հրամանով Պետրոս կաթողիկոսը բանտարկվեց հենց Գրիգոր Մագիստրոսի Բջնի ամրոցում (տես Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի, էջ 98):

[272] Տես Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 47:

[273] Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 6, նույնի ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, Երևան, 1955, էջ 51, 162, 422:

[274] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 55:

ապրում, իրեն համարում վաճառված ու տարագիր, «ի հարց շիրմաց արտակացեալ և ի դաստակերտաց և ի բազում աշխատութեանց ունայնացեալ»[275]: Անշուշտ, Գրիգոր Նարեկացու հետևողությամբ է Մագիստրոսը ինքնապարսավ խոսքերով հիշում իր աշխարհական «ծովածուփ կենցաղավարության» և այլ մեղանչումների մասին, գոչելով. «Ո՞ զիս փրկեսցէ յայսպիսի վտանգէ»: Իր ծանրամեղ համարվող աշխարհական գայթակղությունների պատճառով նա իր մերձավորներ Գրիգոր քահանային և Ստեփաննոս արքեպիսկոպոսին ուղղած նամակում խնդրում է. «Անկեալ առ ոտս աղաչեցէք, խնդրելով և պաղատանօք, զի բացցի աչք իմ հոգւոյ և լուսաւորեսցէ իւրով աստուածութեամբն և թողցէ զիմս յանցանս և ողորմեսցի ամենակալն Աստուած»[276]: Նման մտայնությամբ հոգևոր խոկումների գիրկն ընկած Մագիստրոսը բնական մղումով հարկ է որ ընկներ խորհրդապաշտ մտորումների գիրկը, ջանալով բանական ճանապարհով կապվել Բարձրյալի հետ և արժանանալ նրա ամենալից շնորհներին: Անշուշտ, նման պայմաններում նրա խորհրդապաշտական մտազեղումները առաջադեմ մտածողի հոգևոր տարերքն էին, նրա վերասլաց մղումների արգասիքը:

Մագիստրոսը ջատագով էր հոգևորականների համերաշխության: Նա Գուգարաց Ձորոփոր գավառի Խնատի վանքի առաջնորդին գրումէ. «Հրամայիմք անաչառու և հնազանդ և հլու աստուածային պատուիրանին լսել և ծառայել անարատութեամբ»[277]: Նույն վանքի միաբաններին հորդորում է լինել համերաշխ, «քանզի զի՞նչ բարի է կամ զի՞նչ վայելուչ, զի բնակին եղբարք ի միասին»: Նրանց առաջարկում է ժողով գումարել և ընտրել նոր առաջնորդ՝ վախճանվածի փոխարեն, «զոր կամի Աստուած և դուք, և միաբանութեամբ գրեցէք առ իս, և փոյթ առ իս առաքեցէք»[278]:

Գրիգոր Մագիստրոսը եկեղեցականներին հորդորում էր չհեռանալ լեռները, չմեկուսանալ ժողովրդից, հետևել Քրիստոսին և նրա պես շրջել ամենուր, քանզի «ոչ միայն ի լերին կարող եմք զԱստուած Բանն ի մեզ ընդունել, այլ և յամենայն տեղւոջ, վասն զի ընդ ամենայն տեղիս է տէրութիւն նորա»[279]:

Հայտնի է Մագիստրոսի բացասական դիրքորոշումը թոնդրակյան աղանդավորների նկատմամբ, որոնց նա հեռացած էր համարում Հայոց եկեղեցուց ու նրա դավանանքից: Աղանդավորները փորձեցին ասորիների կաթողիկոսի միջոցով պաշտպանություն գտնել հալածանքներից:

---

[275] Նույն տեղում, էջ 139-140:
[276] Նույն տեղում, էջ 77:
[277] Նույն տեղում, էջ 99:
[278] Նույն տեղում, էջ 101:
[279] Նույն տեղում, էջ 91:

Վերջինս դիմեց Մագիստրոսին եղելությանը հասու լինելու նպատակով: Մագիստրոսը նրան հորդորեց ընթերցել Անանիա Նարեկացու գործը («Գիր խոստովանութեան»-ը), նրա միջոցով տեղեկանալ թոնդրակյաններ-ի մասին և ուղիղ ճանապարհի վրա դնել նրանց: Աղանդավորները, գրում է Մագիստրոսը, խարխլում են Հայոց Եկեղեցու հիմքերը, հետևելով «խարդաւանող խաւարասէր խոպանողացն և ցանկապատառ հետևողաց նոցա»[280]: Մագիստրոսը դատապարտում է թոնդրակեցիներին, որոնք մեղադրում են Եկեղեցուն նյութապաշտության (խաչի պաշտամունքի, քահանայի զգեստների, պատարագի պարագաների և այլնի) մեջ: Նա նաև նշում է, որ նրանք մերժում են Ս. Գիրքը, Եկեղեցու խորհուրդները, հոգևոր նվիրապետությունը: Նրանց համարում է «արտաքոյ օրինացն քրիստոնէից»[281]: Ինչպես հավաստում է Մագիստրոսը, թոնդրակեցիները «զինքեանս անուանեն քրիստոնեայս», և շրջելով առանց եպիսկոպոսների ու քահանաների, ասում են «մեք յԱրամեան գնդէն եմք և հաւատով համեմատ նոցա»: Ուշագրավ է, որ Մագիստրոսը գրում է, որ աղանդավորներից ոչ ոքի չի վնասել «մարմնական պատուհասիւք, թէպէտև յօրէնսն հրամայէ զվերջին պատուհասն կրել նոցա»[282]: Անշուշտ, Մագիստրոսը համոզված էր, որ թոնդրակեցիները հավատուրաց և հայրենադրուժ չեն, ուստի ընդառաջեց այն աղանդավորներին, ովքեր ցանկանում էին վերադառնալ Հայոց Եկեղեցու գիրկը և «խոստովանեցան զյանցանս իւրեանց և զմոլորութիւնս իւրեանց»: Նա գուցե անձամբ եղավ Թոնդրակ ավանում[283] ու թեև ոչնչացրեց, ցրեց թոնդրակեցիների կազմակերպությունները, բայց մարդասիրական մղումներով Բջնիի Եփրեմ եպիսկոպոսի և ուրիշ հոգևոր հայրերի միջոցով Մագիստրոսն, ինչպես ինքն է նշում, մկրտել տվեց թոնդրակեցիներից ավելի քան հազար հոգու:

Մագիստրոսը հոգածու էր նաև Հայոց Եկեղեցու արժանավոր սպասավորներ պատրաստելու գործին: Իր աշակերտներ Բարսեղին ու Եղիշեին նա ուղարկեց Պետրոս կաթողիկոսի մոտ կրոնավորելու և ծառայելու «Հիսուսի կենսաբեր սուրբ նշանին», վստահելով, որ նրանք «զձայն օտարի ոչ լուիցեն» և չեն դավի իրենց կոչմանը[284]: Հարկավ, հետագայում նրա այս աշակերտները ձեռնադրվեցին եպիսկոպոսներ: Ընդսմին Մագիստրոսը չէր զլանում նաև սովորել հոգևոր հայրերից: Նա բարձր էր

---

[280] Նույն տեղում, էջ 164:

[281] Նույն տեղում, էջ 154-155, 160, 168-169:

[282] Նույն տեղում, էջ 159, 161:

[283] V. Nersessian, The Tondrakian Movement, Allison Park, Pennsylvania, 1988, p. 63, К. Юзбашян, Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI в.в., М., 1988, с. 244.

[284] Տես Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 18-20:

գնահատում Սյունյաց Հովհաննես արքեպիսկոպոսին, նրան համարելով «իր լուսատուն», «աստվածապատիվ հոգևոր տերը», «իր խոհերում վեհագույնը»[285], որակումներ, որոնք թույլ են տալիս կարծելու, որ Մագիստրոսը շատ բան է սովորել նրանից: Հովհաննեսի նկատմամբ Մագիստրոսի տածած հարգանքը հավանորեն բխում էր նաև այդ հոգևորականի կողմից Սյունյաց աթոռի և Հայոց Հայրապետական կենտրոնի միջև հարաբերությունների բարելավման փաստից: Սյունյաց պատմիչը նրան կոչում է «յոգներանեան այրն Աստուծոյ, կրկին լուսաւորիչն և երկրորդ նորոգողն նուազեալ տանն այնմ և բոլոր աշխարհիս Սիսական», որը գահակալեց «աւելի քան զ50 ամ»[286] (1006-1056): Հովհաննեսից Մագիստրոսը մխիթարական թուղթ է ստացել «յաղագս անեզրական և անտանել տարակուսանաց կործանման բոլոր Արամեան նահանգի»[287]: Նրան հղած նամակում Մագիստրոսը իր հորեղբորը Վահրամին գնահատում է իբրև «նոր մարտիրոս և հրաշալի վկա», որը «խոցվեց Քրիստոսի խաչի թշնամիներից և նահատակվեց հանուն Սայր Եկեղեցու», իսկ Վահրամի ծնողները հետևելով «իրենց նախնի» Սահակ Պարթևին, «վանս նորագոյնս շինեալ բազումս, և զավերեալս նորոգեալ...»[288]: Այդպիսով մատենագիրը հորեղբոր և նրա ծնողների վաստակն արժևորում է նաև եկեղեցու հանդեպ նրանց նվիրվածությամբ:

Գրիգոր Մագիստրոսը բարձր է գնահատում վարդապետին իբրև «հոգւոյ կենդանութեան պատճառ», քանի որ նա բարության պատճառ լինելով՝ արժանի է ավելի մեծ պատվի, քան «զհարք ըստ մարմնոյ», և որ հենց վարդապետների միջոցով է մարդկանց մեջ սերմանվում Աստծու խոսքը, որը «կյանք է ու լույս»[289]: Նա խորին հարգանք էր տածում հատկապես Անիի Սարգիս վարդապետի նկատմամբ, որին անվանում է «ամբողջ հռետորական դասի մեջ» «մտքերով վեհագույնը» և «աստվածային տելետիս»՝ հզոր «ի պուետիկոսականն մատենագրութեանն»[290]: Սարգսին հղած թղթերից մեկում խոսելով Միջագետքում, Վասպուրականում իր ջանքերով ձեռք բերած խաղաղության, թոնդրակեցիների աղանդի վնասակար միտումների մասին, Մագիստրոսը նշում է, որ թեև շատ է զբաղված, բայց կարոտ է այդ մտացի վարդապետի օժանդակության և ցանկություն է հայտնում, որպեսզի հանդիպեն և «առ միմեանս սիրովն Աս-

---

285 Տես նույն տեղում, էջ 46:

286 Տես Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, ԾԲ, էջ 295:

287 Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 36:

288 Նույն տեղում, էջ 42-43:

289 Տես նույն տեղում, էջ 209:

290 Նույն տեղում, էջ 57:

տուծոյ ողջունեմք և առ միմեանս զգեղեցիկ հակառակութիւնսն ճեպեմք իմաստասիրել»[291]: Այս վարդապետին Մագիստրոսը դիտում է որպես քրիստոնեացված նոր պլատոնականության հետևորդ՝ «զնորագոյնն իբրու չքնաղ և պայծառ պղատոնական»[292]: Հետևաբար, Մագիստրոսը Սարգսի մեջ գնահատել է նրա մտավոր տարերքը և իմացական արժանիքները: Մագիստրոսի թղթերից երևում է, որ երբ վերջինիս և Գագիկ II արքայի միջև հույժ սրվել էին հարաբերությունները (որի հետևանքով Մագիստրոսը մեկուսացել էր Բջնիում), արքան Սարգսին ուղարկեց նրա մոտ, որպեսզի հաշտեցնի իրեն հետ: Սարգիսը ժամանեց Պահլավունյաց երկրորդ ոստան Անբերդ և այնտեղից հաշտության շուրջ թուղթ հղեց Մագիստրոսին, որը պատասխանեց նամակով լի ցավատանջ մտորումներով[293]:

Գրիգոր Մագիստրոսն իր իմացական խոհերը կիսում էր նաև Սևանա վանքի Սարգիս վարդապետի հետ: Երբ նա տեղեկացավ Բյուզանդիա տարագրված Գագիկ II-ի մոտ Սարգսի մեկնելու մասին, խնդրեց, որպեսզի վերջինս նախ այցելի իրեն, որպեսզի «ճեպեմք իմաստասիրել»,- գրում է նա[294]: Մագիստրոսը թղթակցում էր նաև Տարոնի Ս. Կարապետ վանքի վանահոր Սարգսի հետ: Նշելով Սարգսի «կատարյալ գիտության և իմաստության» մասին, նա գրում է, որ «Հոգւոյն այսոքիկ շարժին ի մեզ ներգործութիւնք, քանզի յորժամ կամիցի զողորմութիւն իւր առատացուցանել և հրաշագործել, յաւելու զհաւատսն զօրութեամբ և զհայացուածսն ըստ պատշաճին... այսպէս Ստեղծիչն միշտ հնարի զհոգւոց մարմնոց մերոց փրկութիւն»[295]: Ս. Կարապետի այս վանահայրը աշակերտել էր Մագիստրոսին, երբ վերջինս դասավանդում էր այդ հռչակավոր մենաստանի ճեմարանում[296]: Մագիստրոսը վանահորից խնդրում է միջոցներ գտնել ծաղիկ հիվանդությամբ տառապող իր որդուն բուժելու համար[297]:

Գրիգոր Մագիստրոսն իր իմացական մտորումները կիսում էր նաև Գրիգոր և Ստեփաննոս արքեպիսկոպոսների, Մոկքի և Մանազկերտի եկեղեցական վիճակի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոսի, Պահլավունյաց հայրենական տիրույթների հոգևոր հայրերի, զանազան կրոնավորների հետ, խորհուրդներ տալիս նրանց, ակնկալում նրանց հոգեկցությունը:

---

[291] Նույն տեղում, էջ 69:
[292] Նույն տեղում, էջ 69:
[293] Տես նույն տեղում, էջ 64:
[294] Տես նույն տեղում, էջ 68-69:
[295] Նույն տեղում, էջ 73:
[296] Տես նույն տեղում, էջ 71-72:
[297] Տես նույն տեղում, էջ 74-75:

Մագիստրոսը մտերմիկ հարաբերությունների մեջ էր նաև Մարմաշենի վանքի առաջնորդ Սոսթենես եպիսկոպոսի հետ: Գիտնականը նրան համարում էր «ամենայն աստուածեղէն պատգամացն տեսանող և յարդարող», որը խռովահույզ ժամանակներում դարձավ «ճակատամարտիկ իմն, միամարտ և աննահանջ արիութեամբ դիմակայեալ անտանելի և անժուժելի խազմարարաց ներքուստ և արտաքուստ»: Նա Սոսթենեսին ուղարկում է կնքամատանի՝ «պերճ և պաճոյճ մակագրեալ»[298]:

Հայոց եկեղեցու հիմքերն ամրապնդելու, նրա դավանանքը տեսական բարձր հիմքերի վրա դնելու համար Գրիգոր Մագիստրոսը հիմնեց և հովանավորեց Սանահնի, Կեչառույքի, Բջնիի, Հավուց թառի և Տարոնի Ս. Կարապետ վանքի ճեմարանները, որտեղ ուսուցանվում էին նաև աստվածաբանական, դավանաբանական խորը գիտելիքներ:

Մագիստրոսը մեծ ավանդ ունի նաև եկեղեցաշինության բնագավառում: Նա հայրենի ոստան Բջնիում, Հրազդանի աջ ափին կառուցել տվեց Ս. Աստվածածին հոյաշուք եկեղեցին (կառուցումն ավարտվեց 1031թ.), նրան օժտելով անհրաժեշտ պիտավայրերով: Գմբեթավոր այդ եկեղեցում (որը կանգուն է նաև այժմ) նա թողել է մի արձանագրություն, որտեղ ասվում է. «Թ ՆՀ (1031) Շնորհիւն Աստուծոյ այս հրամանք է իմ՝ Տեառն Պետրոսի Հայոց կաթողիկոսի և Սմբատայ շահնշահի, որ հաստատեաց զեպիսկոպոսարան ի Բջնի քաղաքի զՍուրբ Աստուածածինս հիմնարկեալ կատարեաց Գրիգոր իշխանաց իշխան, որդի Վասակայ և տուաւ վիճակ ի Սուրբ Աստուածածինս ի Փոշահանից մինչև ի Նիգ. և Դիւատուն զԱռակս և Աղստև. և տուաք գաւազան և Սուրբ Նշան և Աթոռ: Արդ՝ եթէ ոք խափանել ջանայ զԱթոռս կամ յայլ տեղիս փոխել, կամ զհողն յափշտակել, կամ զաւանդ եկեղեցւոյս գողանալ՝ թէ եպիսկոպոսա կամ յիշխանաց ով որ հակառակի, նզովեսցի յԱստուծոյ և ի մէնջ, և ի ՅԺԸ հայրապետաց, և արմատակի ջնջեսցի յիշատակ նորա յերկրէ, և անլոյծ կապեսցի: Եւ արդ՝ այս է բնական և առաջին սահմանահատ վիճակ և Աթոռ զոր հաստատեցաք արձանագրով և շրջաբերականաւ զՍահմանահատ վիճակի սորա, որ է յարևելց ի Ծար գետոյ մինչև գետն Ախուրեան յԱնւոյ, և ի հիւսիսայինս յԱղստև... Եւ որ հատանել ջանայ յայսմանէ ի միջոյ կամ յեզերաց աւելի կամ մասն ինչ, զվերասացեալ զպատիժս կրեսցէ և ի հանդերձելումն...»[299]:

Այդպիսով Բջնիի եկեղեցաթեմը տարածվում էր Սևանա լճից մինչև Ախուրյան գետը, հյուսիսում հասնում մինչև Աղստև գետ, հարավում՝ Վարաժնունիքի սահմանները: Այս գավառում Պահլավունիների երկրորդ

---

[298] Տես նույն տեղում, էջ 102-104:

[299] Հ. Եղիազարյան, Բջնիի վանքը և Բջնի գյուղի մյուս հուշարձանները («Էջմիածին», 1963, Թ-Ժ, էջ 44):

հոգևոր կենտրոնը Կեչառիսի վանքն էր՝ Կեչառույք ավանում (այժմյան Ծաղկածոր քաղաքը): Գրիգոր Մագիստրոսն ավարտեց վանքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցումը[300]: Այդ առթիվ նա թողել է արձանագրություն, ուր ասվում է. «...ես Գրիգոր Մագիստրոս որդի Վասակայ... հիմնադրեալ շինեցի զեկեղեցիս ի տեղւոջս որ կոչի Կեչառուս, ի նախասացեալ գաւառի Ծաղկնուց, հանդերձ մատրամբս. եւ նուիրեցի զտաճարս եւ զեկեղեցիս յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի մերոյ, և զարդարեցի զսա սպասուք, արծաթեղինօք և ոսկեղինօք, գրովք և այլովք պիտոյիւք, որպէս վայել էր տաճարիս: Դարձեալ ետու եկեղեցւոյս գեօղս երկուս և այգի մի: (Եւ) մեք շնորհիւն Աստուծոյ եպիսկոպոսունքս Բջնոյ Վանական և Համավար, սահմանեցաք և հաստատեցաք ի թեմ և կալուած վերոյգրեալ եկեղեցւոյս գեօղս քսան և հինգ և քաղաք մի, որք են Բուժան, Շոկաթն և այլն»[301]:

Կեչառիսի վանքի եկեղեցու շինության մասին հիշատակում է Վարդան Արևելցին, նշելով, որ այն կառուցել է Ապիրատ իշխանը՝ Հասանի որդին և Ապլջահապի ու Վասակի (Գրիգոր Մագիստրոսի քրոջ ամուսնու) պապը[302]: Կեչառիսի վանքի այդ եկեղեցու կառուցումը նույն իշխանին է վերագրում նաև Մխիթար Այրիվանեցին[303]:

Վանքի Ս. Գրիգոր եկեղեցու հարավային մուտքի ճակատակալ քարի վրա արձանագրված է. «Ի ՆԾԲ (1003)թ. Հայոց ի թագաւորութեան Գագկա եւ հայրապետութեան Տեառն Սարգսի ես Գրիգոր Մագիստրոս որդի Հասանա շինեցի զեկեղեցիս ինձ ի բարեխաւսութիւն եւ իմ պատրոնին եւ իմ որդեացն որք ընթեռնոյք զիս յաղաւթս յիշեցէք ի Քրիստոս աղաչեմ»[304]:

Մինչդեռ Սիմեոն Կաթողիկոսը «Ջամբռ»-ում գրում է, որ Կեչառիսի վանքը «հիմնաւորեցեալ է ի թուոջն ՆԽԴ (995) յԱպիրատ իշխանէ»[305]: Ինչպես տեսնում ենք, եկեղեցու հիմնարկման վերաբերյալ բերված թվականները միմյանցից տարբեր են: Հակասությունը փորձել է լուծել Գ. Հով-

---

[300] Տես Մխիթար Այրիվանեցի, էջ 58-59: Եկեղեցին իր հատակագծային հորինվածքով «բավականին ընդարձակ գմբեթավոր սրահ է» (Ստ. Մնացականյան, նշվ., աշխ., էջ 190):

[301] Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 260:

[302] Տես Վարդան, էջ 97:

[303] Տես Մխիթար Այրիվանեցի, էջ 58:

[304] Հ. Եղիազարյան, Կեչառիսի վանքը և նրա վիմագիր արձանագրությունները («Էջմիածին», 1955, XII, էջ 38): Արձանագրությունը տեղ է գտել նաև Ղ. Ալիշանի «Այրարատ»-ում (էջ 259), որտեղ Կեչառիսի վանքի շինության թվական է նշված ՆՁԲ, որը դեռևս Գ. Հովսեփյանն ուղղել է ՆԾԲ-ի (տես Գ. Յովսէփեան, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 159):

[305] Տես Սիմեոն կաթողիկոս, Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 283:

սեփյանը, 995թ. դիտելով որպես եկեղեցու կառուցման սկզբի, իսկ 1003 թ. ավարտի տարի[306]: Իհարկե, գիտնականի այդ ենթադրությունը կարոտ է լրացուցիչ ապացույցների:

Վերոնշյալ երկու արձանագրություններում ուշադրություն է գրավում այն փաստը, որ Կեչառիսի եկեղեցու կառուցող է համարվում Գրիգորը՝ Մագիստրոս պատվատիտղոսով, և առաջին արձանագրության (1051թ.) մեջ վերջինիս հայր է հիշվում Վասակը, իսկ երկրորդում՝ (1003թ.) Հասանը: Այդպիսով հավաստվում է, որ Կեչառիսի հնագույն եկեղեցու կառուցողը Հասանի որդի Գրիգոր-Ապիրատն էր (այս եկեղեցին լրիվ ավերակ է), իսկ վանքի այժմյան մեծ տաճարը (Ս. Լուսավորիչը) կառուցել է Գրիգոր Մագիստրոս Բջնեցին՝ Վասակի շնորհաշատ որդին: Ս. Լուսավորիչ գմբեթավոր եկեղեցին Կեչառիսի ճարտարապետական համալիրի գլխավոր կառույցն է:

Գրիգոր Մագիստրոսի միջնորդությամբ Կեչառիսի վանքն ազատվում է ամեն տեսակ հարկերից ու տուրքերից: Այդ մասին վկայված է տաճարի հարավային որմին փորագրված արձանագրության մեջ, ուր ասվում է.

«Ի հինգ հարիւր երրորդի ամի (1051) թուականութեանս Թորգոմեան ի թագաւորութեանն սուրբ եւ ինքնակալ թագաւորին Կոստանդեա Մաւնումախին[307] բերաւ ոսկի մատանի զոր հզաւրին եւ առաքինոյն բարեպաշտին Գրիգորո Մագիստռոսին կիտաւտին եւ դուկին Վասպուրականի եւ Տարաւնո Արշակունոյն եւ Հայկազնոյն մեծաւ աշխատութեամբ ազատեալ էր զմեծահռչակաւոր եկեղեցիքս իւր ոչ այլ ինչ հայցէ բայց միայն աղաւթս առնել սուրբ եւ ինքնակալ թագաւորին Կոստանդեայ ընդ նմին եւ ծառային Քրիստոսի Գրիգորոյ եւ որդւոց իւրոց եւ յիշատակ կարգեալ յեկեղեցիքս Կեւչառուաց ուր Մագիստռոսն կենդանի է՝ ամենայն շաբաթ աւր զժամն Հասանայ արասցեն անխափան եւ յետ ելիցն Մագիստռոսին արասցեն անխափան»[308]: Հավանաբար, Մագիստրոսի կողմից է կառուցվել նաև Ս. Լուսավորիչ եկեղեցու հարավային կողմի Ս. Նշան ոչ մեծ եկեղեցին: 1013թ. Գրիգոր Մագիստրոսը Գառնիի արևելակողմում, Ազատ գետի բարձրադիր ձախ ափին կառուցում է Հավուց թառի վանքի

---

[306] Տես Գ. Յովսէփեան, նշվ. աշխ., էջ 159:

[307] Բյուզանդիայի Կոստանդին IX Մոնոմախ կայսրը (1042-1055), որը 1045թ. վերացրեց Հայոց Բագրատունիների թագավորությունը, ստեղծելով «Անիի և Իբերիայի» կատապանությունը: Նրա օրոք՝ 1054թ. Քրիստոնեական եկեղեցին տրոհվեց երկու մասի (ուղղափառ և կաթոլիկ), իսկ հայ եկեղեցին մինչ այդ էլ (VI դարից) դալանապես սահմանազատված էր Արևմտյան եկեղեցուց և հավատարիմ էր մնում քրիստոնեության նախնավանդ սկզբունքներին:

[308] Հ. Եղիազարյան, Կեչառիսի վանքը և նրա վիմագիր արձանագրությունները, էջ 38-39:

Ս. Ամենափրկիչ եկեղեցին (կոչվել է նաև Ս. Աստվածածին): Եկեղեցին գմբեթավոր էր, քառանկյուն, արևելքից-արևմուտք երկայնակի հատակագծով[309]: Լեռներից դեպի վանք ձգվող խողովակաշարով ջուր է հասցվել վանքի միաբաններին: Մագիստրոսի կառուցած եկեղեցին մեզ է հասել գրեթե ավերակ վիճակում[310]:

Հավուց թառի Ս. Ամենափրկիչ եկեղեցում 1013 թվակիր արձանագիր հիշատակարանում Գրիգոր Մագիստրոսը հաղորդում է հետևյալը:

«Թուին ՆԿԲ, ... ես Գրիգոր Մագիստրոս վերստին շինեցի զեկեղեցիս յիշատակ ինձ և ծնողաց իմոց. նաեւ ի տերանց աշխարհիս գանձագին արարի զվայրս սորա լերամբն և դաշտամբն եւ ամենայն կազմութեամբն որ ի սմա, քառադէմբ չորս անկեամբ յաջամբ ահեկամբ ի դիմաց եւ ի թիկանց. եւ տուաք յիշատակ անջնջելի արձանագրով եւ աշխարհակալ թագաւորի թղթովն եւ կայսերական կնքովն. հաստատեցաք ձեռագրով և հայրապետական նամակաւն. եւ ի նաւակատիս տաճարիս, զոր շինեցաք զհայրենիս մեր սուրբ եկեղեցւոյս՝ որ է Հայոց թառ, հանգստարան եւ աւթարան անձեռագործ սուրբ պատկերին Յիսուսի Քրիստոսի որ ի փայտին, խնդրելին Յովհաննու աւետարանչին, հրամանաւ մաւր Տեառն մերոյ սուրբ Աստուածածնին. եւ նորոգեալ հաստատեցաք վերստին զսուրբ ուխտս վերջինս քան զառաջինն»[311]:

Հավուց թառը գրչության, ուսումնական հայտնի կենտրոն էր՝ Գրիգոր Մագիստրոսի հովանու ներքո: Գիտնականն անշուշտ, մասնակցում և ուղղություն էր տալիս վանքում կատարվող մտավոր-մշակութային ձեռնարկումներին: Նշված արձանագրության մեջ նա չի մոռանում նաև շեշտել, որ դրել է «զվեմն հաւատոյ հիման սուրբ եկեղեցւոյ»[312]:

Գրիգոր Մագիստրոսը հովանավորում էր նաև Սանահնի վանքին կից գործող վարդապետարանը: Նա նույնիսկ այդ վանքի միաբաններին համարում էր իր հարազատ եղբայրները և հակված էր ընծայատրումներ անել նրանց[313]: Մագիստրոսը Սանահնի վանքում ուներ իր սրահը՝ կոչված «Ճեմարան Մագիստրոսի»: Այն գտնվում էր Աստվածածին և Ամենափրկիչ եկեղեցիների արանքում: Սրահի համար պատեր չեն կառուցել, այլ նշված եկեղեցիների պատերի կողքին կանգնեցրել են որմնասյուներ և դրանց վրա դրել սրահի կամարապատ տանիքը: Գրավոր սկզբնաղբ-

---

[309] Տես Հ. Եղիազարյան, Հավուց թառի վանքը («Էջմիածին», 1963, Զ, էջ 41-42):
[310] Նույն տեղում:
[311] Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 354-355, Գ. Յովսէփեանց, Հաւուց թառի Ամենափրկիչը, էջ 2:
[312] Տես Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 354, Գ. Յովսէփեանց, Հաւուց թառի Ամենափրկիչը, էջ 2:
[313] Տես Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 142:

յուրներում թեև չի վկայված «Մագիստրոսի ճեմարան» անունը, սակայն ավանդաբար սրահն այդպես է կոչվել[314]:

Հայոց եկեղեցու նկատմամբ Գրիգոր Մագիստրոսի հոգածու վերաբերմունքն առաջին հերթին բխում էր Հայրենի երկրի հոգևոր և քաղաքական ապագայի, նրա ինքնագո կեցության նկատմամբ իր ունեցած պետական, քաղաքական շահագրգռություններից: Մագիստրոսը համոզված էր, որ հայ ժողովրդի, որպես կենսունակ ընդհանրության գոյատևման կայուն գրավական կարող է դառնալ Հայոց առաքելաշավիղ եկեղեցին:

Ներսես Շնորհալին գրում է, որ Գրիգոր Մագիստրոսը՝

Աստուածային շնորհօք լցեալ,
Իմաստութեամբ պայծառացեալ,
Հօրն մերոյ նա հայր եղեալ,
Ըստ մայրականն միջնորդեալ:
Ի յարքայէն Յունաց պատուեալ
Եւ նահանգաց յոքունց տիրեալ...
Եկեղեցիս վայելչացեալ
Ի Հայաստան աշխարհ շինեալ:
Զկրօնաստանս յարդարեալ,
Զվանականս յանձանձեալ,
Զարդիւնական անձն ընկալեալ,
Զվարդապետաց հոյլ ժողովեալ:
Հայր ըստ Յոբայ որբոց եղեալ,
Այրեաց զարանց խնամ ածեալ
Զնիւթական գանձ ստացեալ
Տնանկաց յանձինս սերմանեալ...
Սա այսպիսի վարուք կացեալ,
Ըստ Աստուծոյ ուղևորեալ,
Ժամանակաց ինչ յառաջեալ
Եւ առ նախնիսն յաւելեալ[315]:

Բազմահմուտ գիտնականն ու հայրենանվեր պետական գործիչը, որ նշանավոր էր նաև իր եկեղեցանպաստ գործունեությամբ, Միջագետքի կառավարչի պաշտոնում փաստորեն դատապարտվեց տարագրության, ուստի չկարողացավ վայելել յուրաշեն եկեղեցիներն այցելելու երանությունը:

---

[314] Տես Կ. Դաֆթարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, էջ 29:
[315] Ներսես Շնորհալի, Վիպասանութիւն, էջ 109-110:

Գրիգոր Մագիստրոս Պահլավունին ապրեց և գործեց բուռն իրադարձություններով հագեցված ժամանակաշրջանում, ականատես եղավ սելջուկ-թյուրքական արշավանքներին, հայոց Բագրատունիների թագավորության անկման ցավագին գործընթացներին, Հայաստանի հանդեպ Բյուզանդիայի վարած քաղաքականության կործանարար հետևանքներին: Այդ տարիներին ավելի ուժգնորեն դրսևորվեց տակավին վաղ հասակից Գրիգորի մեջ սնուցված հայրենասիրության, Հայոց պետականության, Հայ Առաքելական եկեղեցու հայրենադիր հիմքերի պաշտպանության գաղափարը: Նրա քաղաքական հավատամքը ձևավորվեց հոր Վասակ Հոլումի[316] հայոց սպարապետի և հորեղբոր քաջակորով Վահրամի զորավոր ազդեցության ներքո: Գրիգորն ականատես եղավ օղուզ-թյուրքերի դեմ 1021թ. հոր գլխավորությամբ հայ ռազմիկների մղած հերոսամարտին[317]: Գրիգորը հիանում էր հորեղբոր Վահրամ Պահլավունի զորավարի մարտական սխրանքներով, հայրենասիրական խոյանքներով[318]: Անշուշտ, Գրիգորը ծանոթ էր և ընթերցել էր Մարմաշենի վանքի կառուցման առթիվ տակավին 1029թ. հորեղբոր թողած արձանագրությանը, որը նաև պատգամ էր հարազատ տոհմի գալիք սերունդներին: Արձանագրության մեջ նշվում էր, որ Պահլավունիները միշտ եղել են «ամենայն տամբ և տոհմիւ հաւատարիմք տերանց մերոց և նահատակեալ ի վերա տանս Հայոց աշխատութեամբ և արեամբ և որդւոց մերոց...»[319]: Պահլավունիների փառապանծ ավանդների պահպանմանը նախանձնախնդիր էր նաև Գրիգոր Մագիստրոսը, քաղաքական վեհակշիռ մտքի տերը, բազմահմուտ գիտնականը[320]:

1040թ., ինչպես հայտնի է, վախճանվեցին հայոց թագավորներ Հովհաննես-Սմբատը և Աշոտ IV-ը: Հայոց զորքը մասամբ ցրվեց, շատերը հակվեցին Բյուզանդիայի կողմը: Թվում էր, թե վերջինս ի զորու է դյուրությամբ տիրանալ Անի մայրաքաղաքին և իրագործել Հովհաննես-Սմբատի չարաբաստ կտակը: Սակայն երբ կայսրության զորքը պաշարեց Անին, «յայնժամ,- հավաստում է մատենագիրը,- ժողովեցան մնացեալք

---

316 Մատթեոս Ուռհայեցի, էջ 67:

317 Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի, էջ 98:

318 Տես Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 37-39:

319 И. Орбели, Надписи Мармашена, с. 442.

320 Տես Լ. Խաչերեան, «Գրիգոր Պահլաւունի Մագիստրոս» աշխատությունը:

զօրքն Հայոց առ մեծ սպարապետն Վահրամ Պահլաւունին և խնդրէին ելանել ի պատերազմ ի վերայ զօրացն Հոռոմոց»[321]:

Պահլավունիների հայրենասիրական ուղեգծին հետևողականորեն դիմադարձում էր բյուզանդամետ խմբավորումը Վեստ Սարգսի և Պետրոս Գետադարձ կաթողիկոսի գլխավորությամբ[322]: Վեստ Սարգիսը հույս ուներ, որ Բյուզանդիայի հովանավորությամբ կարող է հասնել քաղաքական բարձունքների[323]:

Հայրենադրուժ իշխանի փառամոլ նկրտումներին վերջ տալու նպատակադրումով Պահլավունիները (այդ թվում նաև Գրիգոր Մագիստրոսը) 1043թ. թագավոր հռչակեցին տասնութամյա Գագիկ II-ին: Արիստակես Լաստիվերցու վկայությամբ Վահրամ Պահլավունին «այր հզօր և անուանի... հանդերձ իւրովք ազգակցօք, որդւովք և եղբօրորդւովք իբրև երեսուն ազատօք... կոչեալ առ ինքեանս զԳագիկ որդի Աշոտոյ, թագաւորեցուցին ի վերայ իւրեանց, և իմաստութեամբ և հնարիւք մուծին ի քաղաքն»[324]:

Մատթեոս Ուռհայեցին, ինչպես նշվել է, Գագիկ II-ի օծումը վերագրում է Գրիգոր Մագիստրոսին, գրելով, որ վերջինիս հրամանով է Գագիկին օծվել «սրբակեացն Մեծն Մարցէն»[325]: Ըստ Սմբատ Սպարապետի, Գագիկ II-ը թագավոր է օծվել «հրամանաւ մեծին Գրիգորի, որդւոյ Վասակայ Պահլաւունոյ»[326]:

Հասկանալի է, Գրիգոր Մագիստրոսն իբրև աշխարհական գործիչ, չուներ եկեղեցական կարգ, ուստի չէր կարող օծել Գագիկ II-ին: Ըստ երևույթին «Մեծն Մարցեն» ժամանակի կաթողիկոս Պետրոս Գետադարձն էր, իսկ Ուռհայեցու «որոյ անուն ըստ նախնոյն իւրոյ Գրիգոր ճանաչի» արտահայտությունը վերաբերում է օծողին այդ ծիսահանդեսը կատարել հրահանգող Գրիգոր Մագիստրոսին, որը մտավոր, գիտական մերձակցություն ուներ Պետրոս Գետադարձի հետ[327]: Դրանք պահպանվեցին նաև

---

[321] Մատթեոս Ուռհայեցի, էջ 85-86:

[322] Տես Հայ ժողովրդի պատմություն, հ. III, էջ 150-153: :

[323] Հմմտ. Արիստակես Լաստիվերտցի, էջ 57-58:

[324] Նույն տեղում:

[325] Մատթեոս Ուռհայեցի, էջ 86-87:

[326] Տես Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 37:

[327] Տես Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 3-31: Ուռհայեցու «Մեծն Մարցէն» արտահայտությունը տեղիք է տվել տարակերպ մեկնությունների: Գր. Մագիստրոսի Թղթերի հրատարակող Կ. Կոստանյանցի կարծիքով «Մեծն Մարցէն» նույն ինքը Պետրոս կաթողիկոսն էր: Նա նաև ենթադրում է, որ «գուցե Մեծն Մարցէն վերաբերեր Վահրամին (սպարապետին-Վ.Վ.), քանի որ նախաձեռնողը նա էր» (Գր. Մագիստրոսի թղթերը, առաջաբան, էջ ԼԸ, ծան. 2): Մ. Օրմանյանը ենթադրում է, որ «Մեծն Մարցէն» մագիստեր (կամ մաստեր) կոչման աղավաղված ձևն է (Ազգապատում, Ա, սյունակ 1430): Հր. Բարթիկյանի կարծիքով Ուռհայեցու «որով

1045թ. հետո, երբ վերջինիս ուղղված թղթերից մեկում նա գրում է «Գիտեմք, որ հոգաս միշտ վասն իմ»[328]:

Մատթեոս Ուռհայեցին հաղորդում է, որ «Ժողովեցան ամենայն նախարարքն Հայոց առ հայրապետն Տէր Պետրոս և օծին զԳագիկ թագաւոր ի վերայ ամենայն տանն Հայոց»[329]:

Գրիգոր Մագիստրոսը սթափորեն գնահատեց թյուրք-սելջուկների հրոսախմբերի հարձակումների կործանարար ազդեցությունը Հայաստանի քաղաքական ճակատագրի վրա և զորակից եղավ նրանց դեմ Գագիկ II-ի ձեռնարկած հարձակմանը, որը պսակվեց հաջողությամբ: Գագիկ II-ը, վկայում է Ուռհայեցին, այդ հարձակումից առաջ զորքով շրջում էր «ընդ աշխարհս հայրենեաց իւրոց և զամենայն անհնազանդսն ի հնազանդութիւն ածէր»[330]:

Գրիգոր Մագիստրոսն օժանդակել է թագավորին կենտրոնախույս ուժերի դեմ նրա մղած պայքարում: Այնուհետև ըստ Ուռհայեցու, Գագիկը «բազմութեամբ զօրօք» շարժվել է դեպի Այրարատ, կամենալով «առնուլ զվրէժխնդրութիւն յազգէն հարաւայնոյ: Յայնժամ սպառազինեալ մեծի իշխանին Գրիգորի որդի Վասակայ Պահլաւունւոյ և երթեալ զօրօք բանակս հարկանէր ի վերայ գետոյն Հուրաստանի մերձ ի Բջնի մեծի ամրոցին»: Պահլավունյաց այս ոստանի մատույցներում էլ հենց տեղի ունեցավ վճռական մարտը, երբ «զօրքն Հայոց յաղթեցին զօրացն Պարսից, և արարին կոտորած մեծ ի վերայ Հուրաստանի գետոյն և զիշխանս թուրք զօրացն ծերբակալ արարին և մնացեալքն փախստական գնացին ի պարսիկս»[331]:

Քանի որ Դվինի Շադդադյան ամիրա Աբուլ-Ասվարը դաշնակցում էր թյուրք-սելջուկներին, ուստի Բջնիի մոտ Գրիգոր Մագիստրոսի տարած

և օծեաց զնա սրբակեացն Մեծն Մարցէն» դարձվածը հետագա շրջանի ընդմիջարկություն է, և «Մարցէն» ուղղելի է «Մսրցին» (եգիպտացին), որի տակ պետք է հասկանալ Գրիգոր Մագիստրոսի որդի Վահրամ (Գրիգոր II) կաթողիկոսին (որը թեև այդ պաշտոնում ընտրվեց 1066թ., բայց 1071 կամ 1072թթ. եղավ Եգիպտոսում): Այս մասին տես Հր. Բարթիկյան, Ուռհայեցու երկում հանդիպող «Մարցէ» անվան մասին («Պատմաբանասիրական հանդես», 1973, N 2, էջ 165-166): Գուցե «Մարցէն» անվան տակ մատենագիրը նկատի է առել Գուգարքի Մարց գյուղից Պետրոս կաթողիկոսի ծագումը (գյուղը գտնվում է Ալավերդի քաղաքից մոտ 16 կմ հարավ-արևելքում):

[328] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 12:

[329] Մատթեոս Ուռհայեցի, էջ 86:

[330] Նույն տեղում, էջ 87:

[331] Մատթեոս Ուռհայեցի, էջ 87-88:

հաղթանակից առաջ վերջինս հավանաբար պարտության էր մատնել նաև Աբուլ Ասվարին[332]:

Այդ հաղթանակով փաստորեն ավելի կոփվեց Բագրատունիների և Պահլավունիների գինադաշինքը, որը էականորեն ամրակայացնում էր երիտասարդ արքայի դիրքերը: Երկու տների սրբազնագործված գինակցությունը թեև մնաց անխախտ, սակայն փոքր-ինչ հետո տարապարտորեն վատացան Գրիգոր Մագիստրոսի և Գագիկ II-ի հարաբերությունները: Գագիկ արքան անսաց ամբաստանողներին և հալածանքներ սկսեց Գրիգոր Բջնեցու դեմ, որը Անիի Սարգիս վարդապետին հղած թղթում դառնացած գրում է, որ ինքը միշտ ջանացել է պաշտպանել հայրենիքի սահմանները: «Ես,- գրում է նա,- ոչ խրամատել փութացայ, այլ խնամակալել», ի հակակշիռ նրանց, ովքեր քանդում են հայրենիքի սահմանները («զցանկ հայրենի»)[333]:

Մագիստրոսը լիովին հասու էր իր շուրջը հյուսված դավին և Աստծուց խնդրում էր. «փրկեա զանձն իմ ի խորամանկութենէ նոցա... համբարձի զաչս իմ, մի ամաչեցից և մի ծիծաղեսցին զինև թշնամիք իմ»: Իսկ նրա թշնամիները տենչում էին՝ «ե՞րբ իցէ զի մեռցի և կորիցէ անուն նորա»: Թշնամիները միակամ և միաբան էին և, ինչպես գրում է Մագիստրոսը,- «նոքա որպէս առիւծ վարանին ի դարանի յափշտակել զիս. և դարձեալ պատեցան զինև, ուշ եդեալ խոնարհեցուցանել զիս յերկիր. և զի միաբանութեամբ յարուցեալ ի վերայ իմ..., հատուցանել ինձ չար փոխանակ ընդ բարւոյ ատելութիւն փոխանակ սիրոյ իմոյ»[334]:

Գուցե հակառակորդ հոսանքին տոն է տվել նաև Պետրոս կաթողիկոսը, որի նկատմամբ Մագիստրոսը անթաքույց համակրանք էր տածում: Դավադրությունը, որ զերծ չէր անձնական և քաղաքական շահարկումներից, տվեց իր դառը պտուղները: Մագիստրոսը կծու, անհիրական որակումներ է անում Գագիկ II-ի հասցեին: Իր հանդեպ Գագիկ արքայի վերաբերմունքը Մագիստրոսը համարում է նրա անփորձության, երիտասարդության արդյունք: Գագիկը,- գրում է նա, «ոչ երկիւղիսն Աստուծոյ ի մանկական տիսն վարժի, կարծեմ, եթէ ոչինչ օգտէ. քանզի չար ախտ անձին հանդիպի ի վատթար հրահանգից և յանուսումնութենէ և ի չար ունակութենէ»[335]: Ստեղծված պայմաններում Գրիգոր Մագիստրոսը ստիպված Անիից հեռացավ Անբերդ ամրոց՝ Պահլավունիների մյուս կենտրոն, իսկ այնտեղից՝ Բջնի:

---

[332] V. Minorsky, Studies in Caucasian History, p. 52.
[333] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 55:
[334] Նույն տեղում, էջ 52-53:
[335] Նույն տեղում, էջ 68-69:

Գագիկ II-ը շուտով զգաց, որ Գրիգոր Մագիստրոսն անպարտ է: Նա համոզվեց, որ նախկինի պես երկրի համար բարդ ու օրհասական իրավիճակում իրեն հենարան կարող են լինել գլխավորապես Պահլավունիները ի դեմս Վահրամ զորապետի, Գրիգոր Մագիստրոսի և նրանց շուրջը համախմբված գործուն ուժերի: Ուստի Գագիկն Անիի Սարգիս վարդապետին ուղարկեց Գրիգոր Մագիստրոսի մոտ, որպեսզի տարհամոզի նրան և փոխել տա երիտասարդ արքայի հանդեպ նրա դիրքավորումը: Սարգիս վարդապետը նախ մեկնեց Անբերդ և այնտեղից թուղթ հղեց Բջնիում գտնվող Մագիստրոսին, հորդորելով մոռացության տալ արքայի հետ ունեցած վեճերն ու հակամարտությունը և նախկինի պես հավատարմություն դրսևորել նրա հանդեպ: Սակայն Մագիստրոսը մնաց անդրդվելի իր նկատմամբ արքայի ցուցաբերած տարապարտ վերաբերմունքի պատճառով, նրան բնորոշելով որպես «մանկամիտ», ուրիշի ազդեցությանը ենթարկվող[336]:

Գրիգոր Մագիստրոսն անշուշտ, նկատի ուներ Հայաստանում խմորված կացությունը, երբ Վեստ Սարգիսն ու իր կողմնակիցները մի պահ նույնիսկ դարձան դրության տերը: «Իմ է,- գրում է նա,- բոլորիցն բեկումն... մարմորքիմ, ոչ տեսանելով զելս իրացն»: Խորատես քաղաքականագետը հասկանում էր, թե ինչպիսի վտանգ է սպառնում հայրենի երկրին՝ Վեստ Սարգսի գլխավորած խմբավորման դավադիր ձեռնարկումների պատճառով: Նա վշտից տոչորված գոչում է. «զիա՞ռդ վիճակեցաք ի վերջին աւուրս, վհատեալք և վիրաւորեալք վատթարութեամբ և միայն եղեալք վատնիչք տէրութեան գանձուն»: Նա նկատում է նաև, որ արդյունքում «տարագիր մեզ լինել տակաւին հասանէ, և ոչ յարկս հարցն հանգչիլ»[337]: Հայաստանի անհույս ու թշվառ կացությունը նկատի առնելով նա ոգեկոչում է հայոց նահապետներին, թագավորներին, իհարկե, նաև Բագրատունի գահակալներին, նշելով, որ խամրել է հայոց փառքը, քանի որ այլևս չկան նրանց արժանի հետնորդներ[338]:

Մագիստրոսը շարունակեց Գագիկ II-ի հանդեպ իր անբարեհաճ վերաբերմունքը, նրա հասցեին նետելով թունալից խոսքեր, նրան մեղադրելով այն բանում, որ իբր արքան իր հանդեպ «մահ և կապանս հնարէր գաղտնի, զի ի կենացս լուծցէ. և ամենեցուն պատուիրէր թշնամեաց իւրոց և իմոց, որք յաղագս նորա մաքառէին ընդ իս...»[339]: Այս պայմաններում նա ստիպված հեռանում է Տարոն, մերժելով թագավորի հաշտության առաջարկը: Տարագրված Մագիստրոսն իրեն համեմատում է մայրական

---

[336] Տես նույն տեղում, էջ 52 և հտ.:
[337] Նույն տեղում, էջ 62:
[338] Տես նույն տեղում, էջ 59-61:
[339] Նույն տեղում, էջ 139:

կաթից զրկվածի, իր հայրերի գերեզմանոցում հանգչելու իրավունքից զուրկ մնացած հայրենակորույս աստանդականի հետ[340]:

Այդուհանդերձ Գրիգոր Մագիստրոսը չվարանեց արքայի հետ հաշտության և համագործակցության եզրերի դիմել: Գագիկ II-ին հղած պատասխան նամակում Մագիստրոսը նրան հորդորում է. «Զմտաւ ած զքսութիւն ոմանց և զ ի չարն և ի վատթարագոյնսն կողմ զհակամիտսդ զքեզ խրատողացն... Եւ ի բարձրագոյնն մակարդակ լեառն ձգեա՛ զքոյդ վեհական խոհեմութիւն»[341]: Նա արքային հորդորեց փակել իր դեմ թշնամանք հարուցողների երախները և չխոցոտել իրեն, խոստանալով ներել նրան: «Եւ ես ներեմ և աղաչեմ, որ ծեզ կեանք տայ և բարի միտս, ողջ լի՛ք». եզրափակում է իր խոսքը Մագիստրոսը[342]:

1045թ. Գագիկ II, չանսալով Վահրամ Պահլավունու և նրա կուսակիցների հորդորներին, Վեստ Սարգսի և Պետրոս կաթողիկոսի խորհրդով ընդունեց Մոնոմախ կայսեր հրավերը և ընկավ նրա լարած որոգայթը, զրկվելով թագավորական գահից: Գրիգոր Մագիստրոսը նույնպես դարձավ կայսեր նյութած դավադրության զոհը և Գագիկ II-ի ետևից մեկնեց Կ. Պոլիս, որտեղ նա ճաշակեց Հայոց թագավորության վերացման դառնությունը[343]:

Կայսեր կամքով գահընկեց արված Պետրոս կաթողիկոսին հղած նամակում Գրիգոր Մագիստրոսը դառնությամբ գրում է, որ հավատացել է ստահոդ խոստումներին և երբ վերադարձել է հայրենիք, տեսել է, որ այն վաճառված է, իրենք հայտնվել են հալածականների, տարամերժվածների վիճակում[344]:

Այդպիսով Գրիգոր Մագիստրոսն ընկավ Հայոց անկախ պետականության վերացմանը նպատակաուղղված կայսեր լարած նույն որոգայթը, որին զոհ գնաց նաև հայոց թագավորը:

Հակառակ վերը հիշատակված վկայությունների, Սամուել Անեցու երկի տպագիր բնագրում սպրդած տեղեկությամբ իբր Գրիգոր Մագիստրոսը Բագրատունյաց վերջին թագավորի նկատմամբ ունեցել է նույն դիրքավորումը, ինչպիսին ունեին Վեստ Սարգիսն ու Պետրոս Գետադարձը: Այս երեքը, գրում է ժամանակագիրը, «նենգեցին զԳագիկ և զԱնի ետուն ի կայսրն Յունաց. վասն որոյ ելին ի բընիկ աշխարհէն իւրենաց տէր Պետ-

---

340 Տես նույն տեղում:
341 Նույն տեղում, էջ 210:
342 Նույն տեղում, էջ 212-213:
343 Արիստակես Լաստիվերտցի, էջ 62:
344 Տես Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 13:

ռոս և Գրիգոր Վասակայ որդին, Գագիկ և այլք իշխանք Հայոց և եկին ի Հռոմս»[345]:

Ամենայն հավանականությամբ, Գագիկ II-ը Կ. Պոլիս է մեկնել առանց Գրիգոր Մագիստրոսի կարծիքը հաշվի առնելու: Ըստ երևույթին արդեն տարագիր եղած Գագիկ II-ը Մագիստրոսին նամակ է ուղարկել, նրան մեղադրելով իրեն չսատարելու համար: Պատասխան թղթում Մագիստրոսը գրում է. «Այլ դու եթէ ի մէնջ զօգնութիւն խնդրեցէր, ո՞ր էր, որ օգնէր. ո՞ արար տեղեակ զիս. զիարդ ճանաչես զիս հալածելոցն հաւաքի՞չ կամ խռովութեան շիջուցիչ, եթէ ընդ խազմարաս խռովիչ, ասա առաջի տեառն»[346]:

Հայագիտության մեջ հնչել են կարծիքներ Գրիգոր Մագիստրոսի բյուզանդամոլության մասին: Իբր նա «այնքան էր տոգորված բյուզանդական գաղափարներով, որ հեշտությամբ կարող էր մոռանալ հայրենիքի շահերը»,[347]- գրում է Լեոն: Այլ առիթով վաստակավոր պատմաբանը մեղմելով Մագիստրոսին իր տված բնութագիրը, գրում է, որ «հունական կուսակցության երրորդ խոշոր ներկայացուցիչ Գրիգոր Բջնեցին ավելի չափավոր հակումներ էր ցույց տալիս ամենից առաջ հենց այն պատճառով, որ նրա մեջ խոսում էր տոհմային ինքնասիրությունը»[348]: Լեոյի կարծիքով Կ. Պոլիս մեկնած Գրիգոր Մագիստրոսը «մենակ մնացած ուխտադրժության զոհ դարձած Գագիկի կողմը չանցավ հայրենի շահերը պաշտպանելու համար, այլ բոլորովին հակառակ ուղղություն բռնեց», իր տիրույթները հանձնելով կայսեր, որով իբր նա «առաջին խոշոր և կործանարար հարվածը» հասցրեց Գագիկի դատին[349]: Բայց չէ՞ որ Արիստակես Լաստիվերցին ժամանակամերձ պատմիչը, գրում է, որ Գրիգոր Մագիստրոսն իր կալվածները հանձնել է կայսեր միայն այն ժամանակ, երբ համոզվել է, որ այլևս Գագիկ II-ին թույլ չեն տալու հայրենիք վերադառնալ: «Գրիգոր որդի քաջին Վասակայ, գրում է պատմիչը,-ելեալ և նա գնաց առաջի թագաւորին: Եւ քանզի այր իմաստուն էր և խելամուտ յոյժ աստուածային գրոց, որպէս թէ ոչ այլ ոք, իբրև ետես ոչ են թողլոց զԳագիկ ի տեղի իւր,

---

[345] Սամուել Անեցի, էջ 107-108: Սամուել Անեցու ժամանակագրության հնագույն, նրա ապրած ժամանակաշրջանում օրինակված ձեռագրերում այդպիսի տեղեկություն չկա: Այն համարվում է հետագայի գրիչների կողմից կատարված հավելում (տես Կ. Մաթևոսյան, Սամվել Անեցու ժամանակագրության հնագույն ձեռագրերը («Ակադեմիկոս Նիկողայոս Մառ» ժողովածու, Երևան, 2005, էջ 41):

[346] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 210:

[347] Լեո, Հայոց պատմություն, հ.II («Երկերի ժողովածու», հ. II, Երևան, 1967, էջ 646):

[348] Նույն տեղում, էջ 669:

[349] Նույն տեղում, էջ 679:

յառաջ կացեալ տայ զբանալին Բջնոյ ցթագաւորն, և զամենայն զիւր զհայրենի ժառանգութիւնն»[350]:

Մեկ այլ կարծիքի համաձայն, Գրիգոր Մագիստրոսն իբր թե եղել է «Հովհաննես- Սմբատի կտակը» նյութողներից մեկը»[351], ինչը սակայն չի հաստատվում սկզբնաղբյուրներով: Իսկ մեկ ուրիշ հետազոտողի կարծիքով «Պետրոս կաթողիկոսը, Գրիգոր Մագիստրոսը, Վեստ Սարգիսը նպատակ ունեին վերացնել Բագրատունյաց թագավորությունը և իշխանությունը վերցնել իրենց ձեռքը: Նրանք իրենց նպատակն իրագործելու համար վճռական հարաբերությունների մեջ էին մտել Բյուզանդական կայսրության հետ»[352]:

Գրիգոր Մագիստրոսը ստիպված եղավ իր տիրույթները փոխանակել Միջագետքի հետ: Արիստակես Լաստիվերցու վկայությամբ, նա իր կալվածները հանձնում է կայսեր, «և մեծարեալ ի նմանէ՝ առնու զպատիւ մագիստրոսութեան, և զտեղիս բնակութեան ի սահմանս Միջագետաց գիւղս և քաղաքս, գրով և ոսկի մատանեաւ»[353]: Մագիստրոսը երբեք չհամակերպվեց Հայոց թագավորության վերացման գաղափարին: Նրա հոգուն ծանրացած էր իր հայրենիքի ծանր ճակատագիրը: Նա մոտ 13 տարի մնաց Միջագետքում, կրելով տարագրության հոգնաշխատ լուծը: Իր գաղափարների մեջ նա մնաց անհողդողդ և հույսը չկորցրեց Հայոց թագավորության վերականգնման անստույգ թվացող հեռանկարի նկատմամբ: Ոգեկոչելով հայոց հերոսական անցյալն ու հայոց թագավորների փառքը, նա կարծում էր, որ տակավին կանգուն է Հայկի ու Արշակ արքայի երկիրը, վերականգնվելու է Հայոց թագավորությունը, «թէպէտև ոմանց անարի և անզօր գոլ, սակայն տիրապետեալ տանս Թորգոմեան, պահելով զաթոռն»[354]: Ընդ որում Մագիստրոսը թեև հունական գիտության և մշակույթի ջատագովն էր, սակայն միշտ դիմադիր դիրքավորում ուներ Բյուզանդիայի նվաճողական նկրտումների նկատմամբ: Ուշագրավ փաստ է, որ դեռևս Ռոմանոս III կայսեր (1028-1034) օրոք Մագիստրոսն իր որդուն կոչ էր անում ռազմի ելնել Հայաստանը շահատակող բյուզանդական Նիկողաս զորապետի դեմ: Որդուն ուղղված բանաստեղծության

---

[350] Արիստակես Լաստիվերտցի, էջ 62:

[351] Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, I, Երևան, 1957, էջ 136:

[352] Տես Ա. Մնացականյան, Թոնդրակյան շարժման մի քանի գլխավոր հարցերի մասին («ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր (հաս. գիտ.)», 1954, N 3, էջ 74): Հետագայում նա հրաժարվեց այս տեսակետից (տես «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ, 1968թ. օգոստ. 21-ի համարը):

[353] Արիստակես Լաստիվերտցի, էջ 62:

[354] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 61:

մեջ Մագիստրոսն այդ զորապետին համարում է «աւարառող, աւերօղ»: Որդուն ոգեվառելու միտումով նա ոգեկոչում է հայոց քաջապանծ նախնի «Թորգոմեան» Հայկին, գրելով.

Արդ միլարեայն դու պնդես զլայնալիճ հայրենին.
Ջերեքթևեանն դու մխեա, յառաջ մատիր և քաղեա.
Այս քեզ Բէլայն հաս հանդէս և Թորգոմեանն Հայկայ...[355]

Մագիստրոսն ի դեմս Նիկողասի, նկատի ունի Վասպուրականի կառավարիչ (1030-ական թթ.) Նիկոլայոս Խրիսելիոս Բուլղարին, որին հիշում է Հովհաննես Սկիլիցեսը[356]: Վասպուրականի այս կառավարիչը ջանում էր ընդլայնել Բյուզանդիայի սահմանները դեպի հյուսիս Բագրատունիների Հայոց թագավորությունը : Նրա այդ մտահղացումը կռահելով, Մագիստրոսը որդուն կոչ է արել դիմակայել նրան[357]:

Գրիգոր Մագիստրոսը ջանքեր չխնայեց հայրենիքի միասնությունը, անկախությունը պահպանելու համար: Այս մասին նա գրում է Անիի Սարգիս վարդապետին ուղղված թղթում[358]: Նա ծանր տարավ Բագրատունյաց թագավորության անկումն ու դրան հետևած իրողությունները: Հորեղբոր մահվան առթիվ սյունյաց հովվապետին գրած նամակում Գրիգորը նախ շեշտում է Միջագետքի կառավարիչի իր պաշտոնը, զեղում իր խոցված հոգին, նշելով, որ զրկված է հայրենի ժառանգությունից և մատնվել է թշվառական ու անհույս կացության[359]: Ընբոստածայն այս թղթում հառնում են նրա հայրենաբաղձ էությունն ու հավատամքը, տոհմասիրությունը, իհարկե նաև ազատաշունչ գաղափարները:

Գրիգոր Մագիստրոսը որպես Միջագետքի կառավարիչ. ամեն գնով ջանում էր պաշտպանել Հայաստանը թյուրք-սելջուկյան հրոսակներից: 1048թ. սելջուկ-թյուրքական զորքը Ատրպատականի կողմից ներխուժեց Հայաստանի Բասեն և Կարին գավառներ, սրածելով ու ավարի մատնելով քրիստոնյա բնակչությանը: Բյուզանդական բանակները Վասպուրականի կատապան Ահարոն Բուլղարի և Անիի ու Իբերիայի բանակաթեմի կառավարիչ, ծագումով հայ Կեկավմենոսի գլխավորությամբ անհաջող դիմադ-

---

[355] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 234:

[356] Տես Հովհաննես Սկիլիցես, էջ 111:

[357] Տես Հր. Բարթիկյան, Գրիգոր Մագիստրոսի քաղաքական կողմնորոշման հարցի շուրջը («Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության», հոդվածների ժողովածու, Երևան, 1971, էջ 68-72):

[358] Տես Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 55:

[359] Տես նույն տեղում, էջ 36: Գագիկ II-ին հղած պատասխան-թղթում Գրիգոր Մագիստրոսը նշում է իր տիրապետության ներքո եղած երկրամասերը, իրեն կոչելով «Վասպուրականի և Տարօնոյ և Մանազկերտի, Արծիշոյ, Բերկրոյ, Միջագետաց տէր և Մօնումախին մագիստրոս, վէստ և տուկ» (Տես Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 213):

ություն ցույց տվեցին սելջուկ-թյուրքերին[360], որոնք գրավեցին Արծն վաճառաշահ քաղաքը, կոտորելով նրա բազմահազար բնակիչներին[361]: Զարհուրելի կոտորածի մասին ցնցող տողեր է թողել Արիստակես Լաստիվերցին՝ այդ սպանդի ականատեսը, որը հավաստում է թե՝ «աչօք մերովք տեսաք և ընդ փորձ չարեացն անցաք»[362]: Թվում էր, թե ահավոր դեպքերը պետք է միաբանեին քրիստոնյաներին: Հարկավ, բյուզանդական զորքին օգնության փութացին նաև վրացիները՝ Լիպարիտ իշխանի, և հայերը՝ Գրիգոր Մագիստրոսի գլխավորությամբ: Սելջուկ-թյուրքերի դեմ մարտնչող Կեկավմենոսի և Ահարոն Բուլղարի գլխավորած 60 հազար զորայիններին նախ միացավ Գրիգոր Մագիստրոսը՝ «Հայոց հզօր իշխանն, որ ունէր զպատիւ մագիստրոսութեան»[363]: 1048թ. սեպտեմբերի 18-ին Բասենի դաշտում տեղի ունեցած ճակատամարտում դրսևորվեց բյուզանդական զորապետների անմիաբանությունը: Մարտի թունդ պահին Ահարոն Բուլղարն իր զորաբաժնով նահանջեց, պատճառ դառնալով քրիստոնյա զորքի ծանր պարտության[364]:

Գրիգոր Մագիստրոսը Բասենի աղետից հետո չդադարեցրեց դիմակայությունը թյուրք-սելջուկներին: Սարգիս վարդապետին ուղղված թղթում նա գրում է, որ թյուրքերից («հարավային բռնությունից») պաշտպանել է ոչ միայն Միջագետքը, այլև Վասպուրականը, Տարոնը, ապահովելով նրանց խաղաղությունն ու պատշաճ օրինակարգը: «Հարցիր,- կարդում ենք այդ թղթում,- ընդ բոլոր Յաբեթեան նահանգի, զի՞նչ յաւուրս յայսոսիկ ի բոլոր տանս Մարդպետական եղեալ գործառնութիւնս՝ ի քաղաքս և ի գեղեակս, յաւանս և ի գիւղս, յանապատս և ի պատս, ի բոլոր տնօրինական առաջարկութիւնս կամ ի հարաւային բռնութենէն խաղաղանալս, զինչ և ի Միջագետս...»[365]:

Վարդան Արևելցին նույնպես Գրիգոր Մագիստրոսին Միջագետքի դուքս նշանակելուց հետո շեշտում է սելջուկ-թյուրքերի դեմ նրա պայքարը: Պատմագիրը գրում է, որ Միջագետքի դուքս նշանակված Գրիգոր Մագիստրոսը «առնու ընդ իւր զԱպիրատն զիշխանն Վրաց, և այլ ևս երկու Մագիստրոսս, և երթայ ընդդէմ Բրեհիմայ զօրագլխի Տուղրիլ-Բէգ սուլտանին»[366]:

---

[360] Տես Հովհաննես Սկիլիցես, էջ 158-161:
[361] Տես նույն տեղում, էջ 160, Մատթեոս Ուռհայեցի, էջ 103:
[362] Տես Արիստակես Լաստիվերտցի, էջ 80: Տես նաև Մատթեոս Ուռհայեցի, էջ 107:
[363] Տես Արիստակես Լաստիվերտցի, էջ 80: Տես նաև Մատթեոս Ուռհայեցի, էջ 107:
[364] Տես Արիստակես Լաստիվերտցի, էջ 81: Այս մասին տես՝ Հ. Սանանդյան, երկեր, Գ, էջ 47-49:
[365] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 65:
[366] Վարդան, էջ 99:

Գրիգոր Մագիստրոսը քաջ գիտակցում էր, որ սելջուկ-թյուրքերն առաջին հերթին սպառնում են Հայաստանին, որը Բյուզանդիայի նենգադրուժ քաղաքականության պատճառով փաստորեն մնում էր անպաշտպան: Իրենք թյուրք-սելջուկները ևս տեղյակ էին Հայաստանում ստեղծված կացությանը: Դրանից խրախուսվելով Տուղրիլի զորապետներ Իբրահիմ Յանալն ու Գթլմուշը 1048թ. հարձակվեցին Վասպուրականի և հարակից շրջանների վրա: Նրանք,- գրում է ժամանակակից պատմիչը,- «ելեալ ի գաւառն Վասպուրականի, յարձակեցան ի վերայ քրիստոնէից իբրև գայլս քաղցեալս անյագեալս ի կերակրոյ...»[367]: Թյուրքական այդ զորախմբերը, ինչպես հաղորդում է Ուռհայեցին,- «անթիւ բազմութեամբ գան ի յաշխարհն Հայոց, վասն զի ի ձեռացն Հոռոմոց գիտացին անտէր և անպահապան զամենայն աշխարհն Հայոց. զի զարս քաջս և զհզօրս քակեալ հանին յարևելից Հոռոմք...»[368]:

Բագրատունյաց թագավորության բարձումից հետո Բյուզանդիան վերացրեց նաև Հայոց պետականության հենարան կաթողիկոսական իշխանությունը: Քաղաքականապես և հոգևորապես գլխատված Հայաստանը դյուրությամբ ավար դարձավ սելջուկ-թյուրքական նվաճողների համար: Այդ օրհասական իրավիճակում Գրիգոր Մագիստրոսը ամեն ջանք ի գործ դրեց հայրենիքը պաշտպանելու համար: Նա ինչպես նշվեց, 1050-ական թթ. պայքար է ծավալում թոնդրակյան աղանդի դեմ, որին հարում էին նաև Հայաստանում մնացած ազատ դասի որոշ ներկայացուցիչներ ջլատելով երկրի առանց այդ էլ խիստ նվազած պաշտպանունակությունը:

Գրիգոր Մագիստրոսը Հայոց եկեղեցու հայրերին հորդորում էր չմեկուսանալ ժողովրդից, լինել համերաշխ, ջանքեր ներդնել երկրի միասնությունն ու ամբողջականությունը պահպանելու համար: Ուշագրավ է, որ նա Մոկաց Գրիգոր եպիսկոպոսին ուղարկած նամակում այն միտքն է արտահայտում, որ Աստծու պատվիրաններից ամենագլխավորը հայրենիքի սահմանները պաշտպանելու պատգամն է[369]: Անշուշտ, պատահական չէր, որ Մոնոմախ կայսրը հայոց թագավորին և կաթողիկոսին հայրենիքից արտաքսեց: Այդպիսով կայսրը չարարկեց հավատակից հզոր հարևանի հանդեպ հայերի տածած վստահությունը և նպատակադրվեց քաղաքականապես և հոգևորապես գլխատել Հայաստանը: Բյուզանդական իշխանություններն իրենց որոգայթները հյուսում էին Վեստ Սարգսի միջոցով և քաջատեղյակ էին, որ հայոց առաջնորդները Գագիկ արքան և Գրիգոր Բջնեցի Մագիստրոսը կայսրության հանդեպ հակոտնյա դիրքերում են, իսկ Պետրոս կաթողիկոսը դեմ էր երկու եկեղեցիների դավանական

---

[367] Արիստակէս Լաստիվերտցի, էջ 65:
[368] Մատթեոս Ուռհայեցի, էջ 102:
[369] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 91, 101:

միությանը, ուստի նա ևս արտաքսվեց: Ի դեպ, նշելի է նաև այն փաստը, որ Գրիգոր Մագիստրոսը՝ հայրենի ավանդույթի նվիրյալն ու պահապանը, պետականորեն օրինապատշաճ իր վարքագծի շնորհիվ չդավեց իր քաղաքական հավատամքին և չթղթակցեց Վեստ Սարգսի հետ:

Հայրենասեր հոսանքի հոգին դարձած Վահրամ Պահլավունին, ինչպես նշվել է, նույնպես դարձավ կայսրության դավադիր խաղերի զոհը և Հայոց թագավորության վերացումից հետո զինվորագրվելով կայսրությանը, զոհ գնաց Դվինի ամիրայի դեմ նրա հարուցած պատերազմում[370]: Բյուզանդիան 1045թ. հետո որոշ ժամանակ չցրեց հայկական զորագնդերը, որպեսզի նրանց օգտագործի իր ախոյանների դեմ: Թվում էր, թե Բյուզանդիայի կայսրը հասավ իր նպատակին: Հայաստանը կորցրեց իր պետականությունը և հպատակվեց նրա կամքին: Սակայն Հայոց թագավորության բարձումը էականորեն կանխորոշեց նաև կայսրության քաղաքական ճակատագիրը, դառնալով նրա կործանման նախերգանքը:

Գրիգոր Սագիստրոսը Պահլավունյաց փառապանծ տան շնորհասուն զավակը, հայոց մտաշխարհի կարկառուն ներկայացուցիչն ու առաջնորդը, ծանր ապրեց հայրենիքին պատուհասված դժբախտությունը և նպատակասլաց ջանքերով աշխատեց նրանից հեռու վանել թյուրքական ցեղերի օրհասաբեր շահատակությունները: Մագիստրոսն իր իշխանությունը դիտում է որպես «բդեշխութիւն»[371], այն համեմատելով հին Հայաստանի բդեշխությունների հետ և նկատի առնելով, որ ինքն այդ պաշտոնում իրականացնում է Բյուզանդիայի հարավային սահմանային գոտու պաշտպանությունը[372]:

Գրիգոր Մագիստրոսն իր մահկանացուն կնքեց 1059թ., մոտ 68 տարեկան հասակում: Մեծակորով գործչի, հայրենասեր գիտնականի ալեհույզ կյանքը հիրավի ոգու մեծագործություն էր:

---

[370] Տես Արիստակես Լաստիվերտցի, էջ 63:

[371] Տես Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 48:

[372] Հմմտ. G. Dedeyan, Les Armeniens entre Grecs, Musulmans et Croises, vol. 2, Lisbonne, 2003, p.1190.

Գրիգոր Մագիստրոսի շառավիղները

Գրիգոր Մագիստրոսի վախճանվելուց հետո նրա զավակների խնամքը, դաստիարակության հոգսերը ծանրացած էին իր կողակցի վրա (ցավոք, վերջինիս անունը հայտնի չէ): Ենթադրվում է, որ Մագիստրոսի կինը ամուսնու մահվանից հետո բնակվում էր Դարույնք ամրոցում (Կոգովիտ գավառ) և 1073թ. դեռ ողջ էր[373]:

Գրիգոր Մագիստրոսն ուներ երկու որդի Վասակը և Վահրամը (Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը): Մ. Չամչյանն առանց աղբյուրը նշելու, գրում է, որ Գրիգոր Մագիստրոսն ուներ ևս երկու որդի Վասիլն ու Փիլիպեն, որոնք «կարգեցան ի գործս իշխանութեան. և գործեցին բազում գործս քաջութեան»[374]:

Մագիստրոսն ունեցավ նաև երեք դուստր, որոնց անունները սակայն պատմությունը չի պահպանել: Նրա ավագ որդին Վասակը, համաձայն Վարդան Արևելցու վկայության, Բյուզանդիայի կայսեր կողմից նշանակվել է Անտիոքի դուքս: Պատմագիրը որոշակի չի նշում թե երբ, և որ կայսեր կողմից է Վասակը կարգվել այդ պաշտոնում, այլ լոկ վերջինիս սպանության առթիվ գրում է. «Ի հինգհարիւր քսան և հինգ (1076) թուին սպանին Հոռոմք զՎասակ իշխանն զեղբայր կաթուղիկոսին Վահրամայ, որ էր տուկ Անտիոքու...»[375]: Ըստ Մատթեոս Ուռհայեցու, հայոց Շիե (525(1076) թվականին «սպանաւ Վասակ իշխանն Հայոց որդի Գրիգորի Մագիստրոսին և եղբայր Տէր Գրիգորիսի. սա էր տուկի յԱնտիոք քաղաքին, սա սպանաւ ի շուկայ փողոցին Անտիոքայ ի ձեռն նենգաւոր ազգին Հոռոմոց, զի յորժամ անցանէր ընդ փողոցն, գային երկու հաստատք[376] յերկրպագութիւն Վասակայ և թուղթ ինչ ստութեանց ի վեր կալեալ առաջի Վասակայ, և նա խոնարհեալ զի առցէ զթուղթն ի նոցանէ, և ի նոյն ժամայն հատեալ զնա ուրագովն ի յաջամէջսն, և մեռաւ մեծն Վասակ յանարժան և ի պիղծ արանց»[377]:

---

[373] Տես Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 25:

[374] Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, Բ, էջ 929:

[375] Վարդան, էջ 104:

[376] Լատիներեն Hastatus (նիզակակիր) բառից (տես Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն աշխարհաբար թարգմ.), էջ 330-331:

[377] Մատթեոս Ուռհայեցի, էջ 213, տես նաև Սմբատ Սպարապետ, էջ 83-84: Վասակ Պահլավունին Անտիոքի դուքս է համարվում 1058-1079թ.թ. (տես C. Toumanoff. op. cit, p. 272): Սակայն ստույգ հայտնի չէ, թե երբվանից է Վասակը դարձել Անտիոքի

1068-1072թթ. Անտիոքի դուքս է հիշվում հայազգի Խաչատուրը[378], ուստի պետք է կարծել, որ Վասակն այդ պաշտոնում եղել է 1073-1076թթ. Միքայել VII Դուկաս (1071-1078) կայսեր օրոք: Ն. Ակինյանը վկայաբերելով Վարդան Արևելցուն, գրում է թե երբ Գրիգոր Մագիստրոսն իր տիրույթները հանձնեց Մոնոմախ կայսեր, «փոխարէն ստացաւ իրեն համար զդքսութիւն Միջագետաց, եւ իր որդւոյն Վասակի համար՝ զԱնտիոքայ դքսութիւնն»[379]: Վարդան Արևելցին, ինչպես տեսանք, սոսկ հիշում է 1076թ. Անտիոքի դուքսի պաշտոնը վարող Վասակի սպանությունը: Այլ տեղեկություններ նա չի հաղորդում:

Բյուզանդական իշխանություններն, ինչպես հայտնի է, չէին հանդուրժում կայսրության սահմաններում հայկական իշխանությունների գոյությունը: Նրանք նույնիսկ 1079թ. սպանեցին Գագիկ II-ին[380], փորձեցին վերացնել նաև Կիլիկիայի հայկական իշխանությունը: Ամենայն հավանականությամբ, նրանց դուր չէր գալիս նաև Վասակ Պահլավունու ինքնուրույն գործելակերպը: Հատկապես նշելի փաստ է, որ Վասակ Պահլավունու եղերական մահվանից հետո նրա զինվորները հրաժարվում են հնազանդվել հույներին և ամրանում են Անտիոքի միջնաբերդում: Հավանաբար, 1071թ. Մանազկերտի ճակատամարտում բյուզանդացիների պարտությունից հետո ստեղծված իրադրության պայմաններում անկախանալու փորձեր են արել նաև Անտիոքի հայազգի դուքսերը:

Ջորեղ հայկական իշխանություն էր ստեղծել նաև բյուզանդական հայազգի զորապետ Փիլարտոսը Վարաժնունիների տոհմից: Նրա իշխանությունը տարածվում էր Եփրատից մինչև Կիլիկյան Տավրոս և Անտիոք ընկած ընդարձակատարած շրջաններում: Այն որոշ ժամանակ հաջողությամբ դիմակայում էր սելջուկ-թյուրքերին: Բյուզանդական կայսրությունը հավանաբար նկատի առնելով այդ հանգամանքը և, անշուշտ, Փիլարտոսի կողմից քաղկեդոնական դավանանքը ընդունելը, ճանաչեց նրա իշխանապետությունը և նրան շնորհեց «սեբաստոսի» կոչում, վստահելով «Արևելքի դոմեստիկի» (զորապետի) պաշտոնը[381]: Վասակ Պահլավունու

դուքս, իսկ սպանության տարին, ինչպես վկայված է Ուռհայեցու և Սմբատի մոտ, 1076-ն է:

[378] Հովհաննես Սկիլիցես, էջ 231, 244: Այս մասին տես J.Laurent, Le duc d' Antioche Khatchatour 1068-1072 («Etudes d' histoire Arménienne», Louvain, 1971, p.160-166), Ե. Քասունի, ժԱ դարու Անտիոքի հայ կառավարիչներ Պեխտ Խաչատուր և Վասակ Պահլաւունի («Հայկազեան հայագիտական հանդէս», հ. 2, Բեյրութ, 1971, էջ 133-134):

[379] Ն. Ակինեան, նշվ., աշխ., էջ 26:

[380] Մատթեոս Ուռհայեցի, էջ 219-220, Սմբատ Սպարապետ, էջ 86-87:

[381] G. Dedeyan, Les Armeniens entre Grecs, Musulmans et Croises, vol. 1, Lisbonne, 2003, p.19-20,59.

զինվորները նրա սպանությունից հետո հրաժարվեցին ենթարկվել բյուզանդացիներին և ամրանալով քաղաքի միջնաբերդում, Անտիոք հրավիրեցին Փիլարտոս Վարաժնունուն: Վասակի սպանությունից հետո,- հաղորդում է Ուռհայեցին,- «ժողովեցան զօրք նորա ի կլայն Անտիոքու. և յայնժամ ազատագունդքն Վասակայ կոչեցին զՓիլառտոս և տան զԱնտիոք ի ձեռս նորա»: Փիլարտոսը կարողացավ Վասակ Պահլավունու զինվորների զորակցությամբ տիրանալ այդ հռչակավոր քաղաքին, «և առեալ վրէժ արեան մեծին Վասակայ Պահլաւունւոյ»[382]:

Գրիգոր Մագիստրոսի մյուս որդին Վահրամը դեռևս հոր կենդանության ժամանակ բյուզանդական ծառայության մեջ էր և կրում էր «վեստ»-ի պատվատիտղոսը[383]:

Հավանաբար, նա հոր օգնականն էր Միջագետքում նրա կառավարման տարիներին: Հոր վախճանվելուց հետո Վահրամը գուցե ստանձնել է նրա պաշտոնը: Ինչպես նշվեց, ժամանակին Գրիգոր Մագիստրոսը որդուն հորդորում էր դիմակայել Բյուզանդական Նիկողաս զորապետին, որը կամենում էր գրավել Հայաստանի տարածքները:

Վահրամին նվիրված բանաստեղծության մեջ Գրիգոր Մագիստրոսն ամենից առաջ որդուն հորդորում է ունենալ վեհ ու բարեմիտ խոկումներ, խորշել վատթարից, ուսումնասիրել հելլենական իմաստասիրությունը և, նախքան «տերունական ճեմարանում ուսանելը, պահպանել հայրենին, հասնել «բաբունական եռանձնեան» լուսավոր կոչմանը և չմոռանալ հայրենի ավանդությունները: Նա նաև որդուն գրում է, որ նրան է թողնում ոսկուց ու թանկարժեք քարերից ավելի մեծ նվեր՝ հոգևոր հարստություն, որն անկապտելի է, և ձեռք է բերել «յոքնական առաքինութեամբ... և փոխարէնս հայցեմ ի քէն զաւանդութիւնն մեր ոչ մոռանալ երբէք և զփոյթ սիրոյն առ Քրիստոս Աստուած մեր և զլոյս ճրագի նախնւոյն մերոյ ոչ շիջուցանել...»[384]:

Մատթեոս Ուռհայեցին մեծ գովեստով է հիշում Վահրամին, նշում, որ դեռ մինչև Հայոց կաթողիկոսի գահին բազմելը, նա հայտնի անձնավորություն էր[385]: Ընդառաջելով որդու գիտական հակումներին, Գրիգոր Մա-

---

382 Մատթեոս Ուռհայեցի, էջ 213-214: Տես նաև Սմբատ, էջ 83-84: Փիլարտոս Վարաժնունու մասին տես՝ В. Степаненко, Государство Филарета Варажнуни (1071-1084/86) гг.("Античная древность и средние века", 1975, N 12).

383 Տես Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 235, Ներսես Շնորհալի, Վիպասանութիւն, էջ 111-112:

384 Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 235-236:

385 Մատթեոս Ուռհայեցի, էջ 155: Մ. Օրմանյանը Վահրամին է վերագրել նաև նրա հոր մասին Ուռհայեցու հետևյալ խոսքերը. «այր քաջակիրթ և ամենայն հմտութեանց հետևեալ և բովանդակ հասեալ սորա ի վերայ հին և նոր կտակարանացն Աստուծոյ. և սա ի յամբիոնսն նստէր ընդ իմաստասէրսն ի մէջ սրբոյն Սոփեաց և

գիստրոսը, ինչպես նշվել է, նրա խնդրանքով շարադրեց «Մեկնութիւն քերականի» գործը, որը դասագիրք էր ծառայում նաև որդու համար:

Ներսես Շնորհալին գրում է, որ Վահրամը սկզբնապես «զօրաց իշխող եղեալ, ի հայրենին աթոռ նստեալ, մինչ յաշխարհի օրէնս կապեալ»: Սակայն կողակցի մահը բեկում մտցրեց նրա կյանքում, և Վահրամն «ըստ ամենայնի իր փոփոխեալ», մտավ վանք և սկսեց «յերկնային ուղին», հեռու մնալով աշխարհական գործերից՝ «զիշխանական կամար լուծեալ»[386]: Այդպիսով սկսվում է նրա կյանքի երկրորդ և ավելի փոթորկալից ու հագեցված ժամանակաշրջանը:

խօսէր ընդ վարդապետացն Հոռոմոց, և ի կարգի վարդապետացն էր սա ազգիս Հայոց» (Մատթ. Ուռհայեցի, էջ 183, Մ. Օրմանյանի մոտ՝ Մատթ. Ուռհայեցու Երուսաղեմի 1869թ. հրատ., էջ 220 (տես Ազգապատում, Ա, սյունակ 1491): Սակայն Ուռհայեցին նկատի ունի ոչ թե Վահրամին, այլ նրա հորը՝ «Վասակի որդի Գրիգոր Պահլավունուն»:

[386] Տես Ներսես Շնորհալի, Վիպասանութիւն, էջ 111-116:

Երկրորդ մաս

Պահլավունիները XI դ. 2-րդ կեսին և XII-XIII դդ.

Գլուխ առաջին

Գրիգոր Վկայասեր Պահլավունի կաթողիկոսը

1066թ. ապրիլին Գրիգոր Մագիստրոսի որդի Վահրամ Պահլավունին հրաժարվելով աշխարհիկ գործերից, բազմեց Հայոց կաթողիկոսների հողմածեծ գահին, ընդունելով Գրիգոր անունը[387]: Նա փաստորեն հիմնադրեց Պահլավունի տոհմի կաթողիկոսական հարստությունը և վերականգնեց Հայոց կաթողիկոսական իշխանությունը, որի աթոռը դեռևս 1060թ. (Խաչիկ II Անեցու վախճանվելուց հետո) բյուզանդական իշխանությունների կամքով թափուր էր մնում: Հայոց պետականության կորստի պայմաններում հույժ կարևոր էր Հայոց կաթողիկոսության վերականգնումը, ինչը առավել հրատապ դարձավ 1065թ. հետո: Այդ տարի Կարսի (Վանանդի) Գագիկ թագավորը ահաբեկված սելջուկ-թյուրքերի հարձակումներից, հատկապես Անի քաղաքի բնակչության զարհուրելի կոտորածից, իր թագավորության մեջ ընդգրկված տարածքները հանձնեց Բյուզանդիայի Կոստանդին Դուկաս կայսրին և փոխարենը ստացավ Փոքր Հայքի Օամնդավ, Ամասիա, Կեսարիա քաղաքները և այլ վայրեր՝ հարակից շրջաններով[388]: Նույն թվականին Գագիկը, սթափ գնահատելով ստեղծված կացությունը, միջնորդեց կայսեր առջև, ստանալով Հայոց հայրապետ ընտրելու իրավունք: Այս առթիվ վարդան Արևելցին գրում է. «Թագաւորն Կարուց Գագիկ որդի Աբասայ նեղեալ յերկիւղէ թուրքացն՝ տայ զհայրենիս իւր ի Յոյնս... Եւ գնացեալ առ կայսր խնդրէ հրամանս ձեռնադրել Հայոց պատրիարգ զՎահրամ որդի Գրիգորի Մագիստրոսի և տուկի. որ կոչեցաւ ի ձեռնադրելն՝ Գրիգորիս»[389]:

---

[387] Վարդան Արևելցի, էջ 102:

[388] Տես Մատթեոս Ուռհայեցի, էջ 151, Սմբատ, էջ 60: Այս մասին տես Հ. Երեմյան, Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке («Լրաբեր հաս. գիտությունների», 1971, N 3, էջ 12-13):

[389] Վարդան, ՕԸ, էջ 102: Մի կարծիքի համաձայն, Գրիգոր Վկայասերը կաթողիկոս է ընտրվել Գագիկ Արծրունի թագավորի հրամանով: Իբրև կռվան վկայաբերվում է Մատթ. Ուռհայեցու մի հաղորդումը, (Ուռհայեցի, էջ 155) ուր սակայն խոսքը Կարսի Գագիկ թագավորի մասին է (տես Գր. Հակոբյան, Ներսես Շնորհալի, Երևան, 1964, էջ 51): Նշենք նաև, որ Գագիկ Արծրունին վախճանվել է 943 թվին:

Գրիգոր Պահլավունին իր աթոռը հաստատեց Հայոց բնաշխարհից դուրս՝ Գագիկ Աբասյանի նստավայր Ծամնդավում, քանի որ Հայաստանն արդեն գրավել էին թյուրք-սելջուկները, որոնց շահատակությունների հետևանքով, ինչպես վկայում է Ուռհայեցին, «արեամբ լցաւ առհասարակ ամենայն աշխարհն, որ իբրև զծով ծփայր ծայրէ ի ծայր, և քակտեալ ապականեցաւ հայրենատունն մեր խլեալ, խախտեցաւ հիմն բնակութեան Հայաստան ազգացս, ոչ մնաց տեղի յուսոյ ապաւինի, եղաք մատնեալք ի ծառայութիւն ազգաց անօրինաց և օտար գազանաց...»[390]: Հայաստանից դուրս կաթողիկոսի աթոռի հաստատումն անշուշտ, նաև Բյուզանդիայի հայադավ քաղաքականության հետևանք էր:

Գրիգորը մեծ հեղինակություն էր վայելում հայ մտաշխարհում: Ուռհայեցու հավաստմամբ, նա կաթողիկոս ընտրվեց, քանզի «էր յոյժ առաւելեալ հռչակաւոր անուամբ, լցեալ սրբութեամբ և արդարութեամբ, և տիրեալ ամենապայծառ առաքինութեամբ և հասանէր ի վերայ հռետորական իմաստութեանց...»[391]: Գրիգորի կաթողիկոս ընտրվելու գործում հավանաբար, նշանակություն ունեցավ նաև այն հանգամանքը, որ նրա տոհմը սերած էր համարվում Գրիգոր Լուսավորչից: Մատթեոս Ուռհայեցին նույնիսկ կարծում է, որ իբր Սուրբ Հոգին էր Գրիգորին հայտնել, որ բազմելու է «յաթոռ Սուրբ Լուսաւորչին Գրիգորի նախնւոյն իւրոյ»[392]: Սակայն այլ էր Գրիգորի տարերքը: Նա գերադասեց զբաղվել գրական, վկայաբանական երկերի ուսումնասիրությամբ, դրանց մեջ գտնելով իր հոգու ճարակը: Եվ նա, ինչպես վկայում է Ուռհայեցին՝ «լցեալ առհասարակ զեկեղեցի Աստուծոյ ամենայն աստուածային կտակարանօք. և սա պայծառացոյց զկարգ կրօնաւորութեանն յազգս Հայոց, և սովաւ նորոգեցաւ աթոռ սուրբ Լուսաւորչին Գրիգորի ի Հայաստան աշխարհս»[393]:

Գրիգոր Պահլավունի հայրապետը փաստորեն Սահակից ու Մաշտոցից հետո դարձավ հայոց երկրորդ թարգմանիչ-կաթողիկոսը, որը Ղ. Ալիշանի արտահայտությամբ, եղավ «գլուխ երկրորդ թարգմանչաց և դպրութեան Հայոց... մեր դպրութեան արծաթի դարուն[394] պարագլուխ»[395]: Հարկավ նա իր տարերքը գտավ մտավոր զբաղումներում, ուստի հրա-

---

[390] Մատթեոս Ուռհայեցի, էջ 151:
[391] Նույն տեղում, էջ 155:
[392] Նույն տեղում:
[393] Նույն տեղում, էջ 156:
[394] «Արծաթի դար» արտահայտության տակ պայմանականորեն նկատի է առնվել հայերի ուսման, դպրության ծաղկումը XII-XIII դարերում: Այդ գործընթացի նախակարապետը Գրիգոր Վկայասերն էր:
[395] Ղ. Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, էջ 27:

ժարվեց կաթողիկոսական իշխանությունից[396] և որոշեց մեկնել Կոստանդնուպոլիս մայրաքաղաք, որը հռչակված էր հելլենական գիտությամբ, ուստի առինքնում էր լուսաբաղձ հոգիներին: Նա իր մտահղացումն իրագործեց մեկ տարի հետո, Ծամնդավից մեկնելով այնտեղ: Համաձայն Վարդան Արևելցու վկայության, Գրիգորը Ծամնդավում «ամ մի կալեալ... անցեալ գնայ ի Կոստանդնուպօլիս ի թարգմանութիւն»[397]: Եվ այնուհետև, ինչպես հաղորդում է Ուռհայեցին,- Գրիգոր Վկայասերը «խորհեցաւ թողուլ զգահընկալ և զմեծ պատիւ աթոռոյ հայրապետութեանն»[398]: Թեև Գագիկ Աբասյանը և հայ իշխանները ջանացին նրան պահել Ծամնդավում (ինչը կբարձրացներ իրենց իշխանության հեղինակությունը), սակայն կաթողիկոսը մնաց անդրդվելի: Ավելին, նա կամենում էր Կոստանդնուպոլսից հետո այցելել Եգիպտոս և «շրջել ընդ ամենայն անապատս Եգիպտացւոց», վկայում է պատմագիրը[399]: Եգիպտոսում Գրիգորը պետք է այցելեր հայ գաղթականությանը, հաղորդակցվեր ղպտի եկեղեցականների հետ: Բայց մինչև Եգիպտոս մեկնելը, նա դիմեց ճգնակեցության:

Գագիկ Աբասյանը և նրա շուրջը համախմբված հայ ազնվականները չկամենալով Հայոց հայրապետի գահը թողնել թափուր վիճակում, կաթողիկոսարանի դպրապետ Գեորգ Լոռեցուն բազմեցրին կաթողիկոսական աթոռին: Թեև վերջինս Գրիգոր Վկայասերին խոստացավ ուղեկցել և կիսել նրա ճգնասուն առօրյայի դժվարությունները, «երդմամբ կապեալ զբանն գնալ զհետ իրերաց ի միայնակեցութեան ճանապարհն»[400], սակայն նա դրժեց խոստումը և փառատենչ մղումներով բազմեց հայրապետական աթոռին: Գրիգոր Վկայասերին անակնկալի բերեց իր դպրապետի վարմունքը: Այնուամենայնիվ նա վերադարձավ Ծամնդավ և Գեորգ Լոռեցուն ձեռնադրեց կաթողիկոս: Գուցե նա չէր կամենում բարձիթողի վիճակում թողնել իր աթոռը: Իհարկե, Գրիգոր Վկայասերը պատշաճ չէր համարում եկեղեցական ուխտը թյուրող այդ կղերականի բազմելը Հայոց հայրապետի գահին: Ուռհայեցու վկայությամբ Գրիգորը փաստորեն հակադիր դիրքավորում ուներ Գեորգ Լոռեցու նկատմամբ: Եվ,-գրում է մատենագիրը,-«եմուտ հակառակութիւն ի մէջ երկուց հայրապետացն Գրիգորիսի և Գէորգայ: Եւ գնաց Տէր Գրիգորիս ի խորհուրդս հոգևոր ճանապար-

---

396 Մատթեոս Ուռհայեցի, էջ 190:

397 Վարդան, ԾԸ, էջ 102:

398 Մատթեոս Ուռհայեցի, էջ 190, հմմտ. Սմբատ, էջ 82: Քանի որ Ծամնդավը գտնվում էր Բյուզանդիայի սահմաններում, ուստի դյուրին էր այնտեղից Կ. Պոլիս մեկնելը:

399 Մատթեոս Ուռհայեցի, էջ 190:

400 Նույն տեղում:

հաց իւրոց առ ի բնակել ի լերինս ընդ միանձունսն ճգնաւորացն Քրիստոսի»[401]:

Այդպիսով Գրիգոր Պահլավունին հրաժարական է տվել ու հեռացել լեռները, ապրել անապատականի, ճգնակյացի խստամբեր կյանքով: Նա,- գրում է Ներսես Շնորհալին,- «ի յիւրայնոցն հրաժարեալ եւ յանապատս հետևեալ. համակրօնից հաւասարեալ, առաքինի վարուք կրթեալ, յօրէնս Տեառն ի տուէ խորհեալ... յանապատի առանձնացեալ»[402]: Ճգնակեցության նա երկար չտրվեց քանի որ նպատակադրվել էր լինել քրիստոնեաբանության կենտրոններում, հունարենից հայերենի թարգմանել քրիստոնեական հավատի համար կյանքները զոհաբերած մարտիրոսների վկայաբանությունները, ուստի կոչվեց «Վկայասեր» պատվանունով[403]: Գրիգորը գրեց նաև զանազան մեկնություններ, «լուսաւորեաց զՀայաստան աշխարհս բազում և ազգի ազգի մեկնութեամբ, որ և յամենայն ազգաց թարգմանութիւնս արարեալ»[404],- գրում է Ուռհայեցին:

Գուցե, նա ոչ միայն հունարենից է կատարել թարգմանություններ, այլև ասորերենից, որը քրիստոնեաբանության լեզու էր:

Գրիգոր Վկայասերը կամենում էր ամենից առաջ մեկնել Երուսաղեմ, սակայն փոթորկահույզ ծովի ալիքները նրան տանող նավը նետեցին Եգիպտոսի ափերը[405]: Այդպիսով Կ. Պոլիս մեկնելուց հետո Գրիգոր կաթողիկոսը ժամանեց Եգիպտոս, որտեղ նա, ինչպես վկայում է Մատթեոս Ուռհայեցին, «շրջեցաւ ընդ անապատսն ամենայն առաջին սրբոց հարցն և կատարեաց զամենայն փափագումն սրտին իւրոյ»: Նա Եգիպտահայերի համար հաստատեց եպիսկոպոսական աթոռ և իր քեռորդի Գրիգոր Պահլավունի եպիսկոպոսին կարգեց Եգիպտահայոց առաջնորդ՝ օծելով կաթողիկոս: Քեռու ազդեցությամբ Գրիգոր Պահլավունին մոտ 1110թ. թարգմանեց Ոնուփրիոս անապատականի Վարքը և Գրիգոր Վկայասերի ու Կիրակոսի հետ կարգավորեց ճաշոցը: Գրիգոր Վկայասերը Եգիպտոսում նորոգեց «զամենայն կարգ սուրբ եկեղեցւոյ»[406]:

---

[401] Նույն տեղում, էջ 190-191:

[402] Ներսէս Շնորհալի, Վիպասանութիւն, էջ 113:

[403] Սամուել Անեցի, էջ 113, Սմբատ Սպարապետ, էջ 62:

[404] Մատթեոս Ուռհայեցի, էջ 156, Սմբատ Սպարապետ, էջ 62:

[405] Վարդան, էջ 102: Եգիպտոս Գրիգոր Վակայասերի մեկնումը դրվում է 1074 կամ 1075թ.թ. (Տես G. Dedejan, Les Armenies..., I, p. 261): Բայց դա կատարվել է ամենայն հավանականությամբ, 1071 կամ 1072թ.թ.: Ուռհայեցին Եգիպտոս Վկայասերի մեկնելը դնում է Հայոց ՇԻԳ(523, իմա՝ 1074) թվականին, ինչը սխալ է, քանի որ Եգիպտոսից կաթողիկոսի վերադարձը նա թվագրում է 1072թ., ուստի անբնական կլինի այդ երկիր նրա ժամանելը դնել այդ թվականից հետո:

[406] Մատթեոս Ուռհայեցի, էջ 211:

Նա ինչպես գրում է Ուռհայեցին «բազում փառք և մեծութիւն ընկալաւ... ի թագաւորեն Եգիպտոսի»[407]: Ուռհայեցու վկայությամբ, այդ ժամանակ Եգիպտոսում հաստատվեցին բազմահազար հայեր[408], որոնք աչքի էին ընկնում այդ երկրի հասարակական-քաղաքական կյանքի այլևայլ բնագավառներում: 1070-ական թթ. Եգիպտոսի վեզիրը հայ էր[409]: Նա սատարել է Վկայասերին, որին ջանաց երկար պահել Եգիպտոսում: Բայց 1072թ. Վկայասերը վերադարձավ Օամնդավ, որտեղ գժտություն ծագեց նրա և հայրապետի պաշտոնը վարող վերոնշյալ Գեորգ Լոռեցի վարդապետի միջև (կաթողիկոսական գահի շուրջ), որը հանգեցրեց վերջինիս գահընկեցությանը: Ըստ Ուռհայեցու, «ի թուականութեանն Հայոց ՇԻԱ (521), իմա 1072 թ.) եղև հակառակութիւն ի մէջ Տէր Գրիգորիսի և Տէր Գէորգեայ. և առաքեաց Տէր Գրիգորիսն և ընկեց զՏէր Գէորգն յաթոռոյ հայրապետութեանն և առեալ զքօղն ի գլխոյ նորա. և Գէորգն վիրաւորեալ գնաց ի Տարսոն քաղաքն և անդ մեռաւ»[410]:

Օամնդավ բերդաքաղաքը ենթակա էր սելջուկ-թյուրքերի սպառնալիքներին, ուստի Գրիգոր Վկայասերը գերադասեց հեռանալ այնտեղից: Նա , ինչպես հավաստում է Մատթեոս Ուռհայեցին, «եկեալ բնակեցաւ ի Մուտառասուն առ Գագիկ որդի Գուրգենայ»[411]: Մուտառասունը բյուզանդական Մուտալասսա կամ Դալասսա ավանն էր Մելիտենե քաղաքից ոչ հեռու, Եփրատի ափին: Այն պատկանում էր ծագումով հայ Դալասինների տոհմին[412]: Սակայն Գագիկի որդի Գուրգենի ինքնությունը պարզ չէ: Արդյոք նա Դալասինների գերդաստանից էր, դժվար է ասել: Գուցե նա բազմաթիվ այն ազատներից էր, որը սելջուկ-թյուրքերի կողմից Հայաստանը գրավելուց հետո հեռացել էր բյուզանդական կողմերը, հաստատվելով Մուտառասունում, ըստ երևույթին վասալական ծառայության մեջ մտնելով Դալասինների մոտ:

---

[407] Նույն տեղում:

[408] Տես Մատթեոս Ուռհայեցի. ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1869, էջ 254: Ուռհայեցու վաղարշապատյան (1898թ.) հրատարակության մեջ (էջ 211) երուսաղեմյան հրատ. «եւ բազումք ժողովեցան հայոց յեգիպտոս իբրև երեսուն հազարաց» դարձածի փոխարեն գրված է «Եւ բազում զօրք ժողովեցան յեգիպտոս իբրև երեսուն հազարաց»: Ավելի ստույգ է երուսաղեմյան հրատարակության վկայությունը:

[409] Տես Ա. Ալպոյաճեան, Պատմութիւն հայ գաղթականութեան. հ. Բ, Գահիրէ, 1955, էջ 459-461:

[410] Մատթեոս Ուռհայեցի, էջ 205-206, տես նաև Սմբատ, էջ 78:

[411] Մատթեոս Ուռհայեցի, էջ 206:

[412] N. Adontz, Notes Armeno-Byzantines («Etudes Armeno-Byzantines», Lisbonne, 1965, p. 172-173).

Այս Գագիկը նույնացվել է Գագիկ Աբասյանի հետ[413], ինչը սակայն համոզիչ չէ, քանի որ Մատթեոս Ուռհայեցին քանիցս հիշատակում է թե՛ Գագիկին և թե՛ նրա հորը և քաջատեղյակ է նրանց հետ առնչվող իրադարձություններին, ուստի հազիվ թե շփոթեր նրանց: Բացի այդ, Գագիկ Աբասյանը կենդանի չէր Սուտառասուն Գրիգոր Վկայասերի տեղափոխման ժամանակ: Նա վախճանվել էր տակավին 1069թ.[414]:

Այնուհետև Գրիգոր Վկայասերն այցելեց Անի քաղաք, եղավ ծերացած մոր մոտ, ապա Անիի եպիսկոպոս ձեռնադրեց իր քեռորդի Բարսեղին (Վասակ Ապիրատյանի որդուն[415], որը հետագայում դարձավ հայոց կաթողիկոս: Սակայն Անին արդեն գրավել էին սելջուկ-թյուրքերը: Թեև Անիում այդ ժամանակ մեծ ազդեցություն ուներ Գրիգոր Վկայասերի մյուս քեռորդին՝ Գրիգոր իշխանը (Վասակի որդին), բայց Անի քաղաքին տիրում էր Մանուչե ամիրան[416]: Ուստի Գրիգոր Վկայասերը չկամեցավ մնալ օտարի գերիշխանությանը ենթակա քաղաքում և հեռացավ Սև լեռներ՝ Ամանոս (որոնք այդպես են կոչվել իրենց ժայռերի սև գույնի պատճառով), որտեղ նա մի ժամանակ կրոնավորել էր: Այժմ նա հաստատվեց Շուղր վանքում: Սև լեռները գտնվում էին ծագումով վասպուրականցի Փիլարտոս Վարաժնունու իշխանության սահմաններում: Վերջինս 1070-ական թ.թ. ընդգրկում էր Կիլիկիայի հարավ-արևմտյան գավառները՝ Մարաշ կենտրոնով, ինչպես նաև Ասորիքի հյուսիսային շրջանները և հյուսիս-արևմտյան Միջագետքը: Այն զորեղ ուժ էր թշնամիների դեմ[417]: Փիլարտոսը կամենում էր գրավել նաև Սասունը, որտեղ 1070-ական թ.թ. իշխում էր Գրիգոր Վկայասերի քրոջ ամուսին Թոռնիկ Մամիկոնյանը: Վերջինս դավանում էր քաղկեդոնականություն: Ըստ Ուռհայեցու, նույն դավանանքն էր ընդունել նաև Փիլարտոսը[418]: Թեև Միքայել Ասորին գրում է, որ իբր Փիլարտոսն ընդունել էր մահմեդականություն[419], սակայն դա, եղել է 1086 թ., երբ նա հնազանդվեց սելջուկյան սուլթան Մելիքշահին:

Փիլարտոսը փորձեց Գրիգոր կաթողիկոսի միջնորդությամբ հնազանդեցնել Թոռնիկին: Այդ նպատակով նա Գրիգոր Վկայասերին ուղարկեց Սասուն, ասելով. «Քո փեսայ է Թոռնիկն, գնա և կոչեա զնա ինձ ի

---

[413] Մ. Օրմանեան, Ազգապատում, Ա, սյունակ 1505-1506:
[414] Սամուել Անեցի, էջ 113:
[415] Մատթեոս Ուռհայեցի, էջ 211, Սմբատ Սպարապետ, էջ 82:
[416] Վարդան, ՇԹ, էջ 103-104:
[417] Michel le Syrien, Chronique, t. III, p. 173.
[418] Տես Մատթեոս Ուռհայեցի, էջ 206 («վարքն և կրօնքն զիոռոմոցն ունէր»,- կարդում ենք մատենագրի մոտ Փիլարտոսի մասին):
[419] Տես Chronique de Michel le Syrien, t. III, p. 173.

հնազանդութիւն»[420]: Գրիգոր Վկայասերը մեկնեց Սասուն, հանդիպեց Թոռնիկին և պատմեց իր գալստյան դրդապատճառի մասին, որից հույժ զարմացած Թոռնիկն ասաց. «Զիարդ ոչ պատկառեցաւ երեսք անօրինին ի սաստիկ լրբութեանցն իւրոց յուղարկել զքեզ առ իս իբրև զդեսպան հանդերձ սուտ երդմամբ»[421]: Վկայասերի ձախողված դեսպանագնացությունից հետո Փիլարտոսը զորքը նետեց Սասունի դեմ, սակայն հազիվ էր այն ոտք դրել Հանձիտ գավառի Ալելուա (Խարբերդի) դաշտ, երբ նրա վրա խոյացան Թոռնիկի զորագնդերը, պարտության մատնելով հզոր ախոյանին և նրան զորակցող ութ հարյուր ֆրանկ զորայիններին[422], որոնք մինչ այդ իբրև վարձկան ծառայել էին Բյուզանդիայում:

Սակայն Փիլարտոսը չհաշտվեց պարտության մտքի հետ և մահմեդական ամիրայի միջոցով դավ նյութելով Թոռնիկի դեմ, սպանել տվեց այդ քաջազուն իշխանին: Վրիժածարավ Փիլարտոսը, ինչպես ցավով նշում է Ուռհայեցին, Թոռնիկի գանգից պատրաստել է տալիս գինու թաս, այրելով նրա մարմինը[423]: Այս հաշվեհարդարից ցնցված Վկայասերն այլևս հրաժարվեց իր աթոռը թողնել Փիլարտոսի տիրույթներում:

Բայց, նշում է մատենագիրը,- «անօրէնն Փիլառտոս յղարկեաց և կոչեաց զտէր Գրիգորիս յաթոռ հայրապետությանն իւրոյ. և նա ոչ եկն ի կոչն նորա, վասն զի զարհուրեալ էր ի չարաշունչ գազանէն»[424]: Անշուշտ, Վկայասերը երկյուղում էր, որ Փիլարտոսն իր հանդեպ կարող է բռնություն գործադրել: Երբ վերջինս երկրորդ անգամ դիմեց Վկայասերին նույն առաջարկով, կաթողիկոսը թեև հրաժարվեց կատարել նրա պահանջը, սակայն չկամենալով սրել հարաբերությունները հզոր ու փառատենչ այդ իշխանի հետ, նրան պատասխանեց, որ կարող է իր փոխարեն նրա տիրույթների հովվապետ կարգել Պետրոս Գետադարձի քեռորդի Սարգսին, որին առաքեց նույնիսկ կաթողիկոսական գավազան և խաչափայտ: Փիլարտոսը համաձայնվեց այդ առաջարկին, հույս ակնկալելով, որ հայոց կաթողիկոսի գահաթոռը հաստատվելու է իր նստավայրում: Նա Զահան գավառի Հոնի քաղաքում (Մարաշ քաղաքից ոչ հեռու) մոտ 1076թ. գումարել տվեց «ժողով եպիսկոպոսաց և հարանց վանականաց և կրօնաւորաց», որտեղ Սարգիսը ձեռնադրվեց կաթողիկոս[425]:

---

[420] Մատթեոս Ուռհայեցի, էջ 206-207: Տես նաև Սմբատ, էջ 80:
[421] Նույն տեղում, էջ 208: Տես նաև Սմբատ, էջ 80:
[422] Տես Ուռհայեցի, էջ 208:
[423] Տես նույն տեղում, էջ 209, Սմբատ, էջ 81: Թոռնիկի մահը դրվում է 1073թ. (տես G. dedeyan, Les Armeniens entre Grecs, Musulmans et Croises, I, p. 327-328): Հ. Մանանդյանն այն դնում է 1078 թ. (տես Երկեր, Գ, էջ 81) :
[424] Մատթեոս Ուռհայեցի, էջ 210:
[425] Նույն տեղում: Տես նաև Սմբատ Սպարապետ, էջ 82:

Հոնիում կաթողիկոսական աթոռի հաստատումը բնավ չէր նշանակում, թե Գրիգոր Վկայասերը հրաժարվում է Հայոց կաթողիկոսի պաշտոնից: Նորընծա Սարգիս կաթողիկոսին նա համարում էր իր աթոռակիցը, որը պետք է հովվապետեր սոսկ Փիլարտոսի իշխանության ոլորտներում, Վկայասերին ազատելով այնտեղ այցելելուց: 1077թ. վախճանվեց Սարգիս կաթողիկոսը, և Փիլարտոսի հրամանով կաթողիկոս ընտրեցին Թեոդորոսին (Թորոսին)՝ «զդրան եպիսկոպոսն Տեառն Սարգսի Հայոց կաթողիկոսին, զմեծ երաժիշտն ձայնաւորաց՝ որ մականուն ասի Ալախօսիկ, ի քաղաքն՝ որ կոչի Հոնի, ի Ջահան գաւառի»[426]: Թեոդորոսն իբրև հակաթոռ կաթողիկոս, իր նախորդի հետևողությամբ մոտ 13 տարի հովվապետություն էր իրականացնում Փիլարտոսի իշխանության սահմաններում:

Մի կողմից թյուրք-սելջուկյան ցեղերի հարուցած սպառնալիքները, մյուս կողմից Բյուզանդիայի կայսերականացված եկեղեցու դավանաբանական բռնացումները ալեկոծում էին Գրիգոր Վկայասերի կյանքը: «Չարչարիմք իբրև զպատժապարտս և ոչ ունիմք հանգիստ»,-հետագայում (1102թ.) գրում է նա, հավելելով նաև, որ իր բոլոր դեգերումները, փախուստն ու տառապանքները, տևել են մոտ 40 տարի՝ սկսած այն պահից, երբ «զիմ հայրենի տունն ի խաղաղութեան ժամանակի թողի՝ ի յայս փոխեցայ»: Բայց դրանք իրեն բնավ չեն կարողացել շեղել հայրենատիր հավատքից[427]:

Իր հայրապետական հոգսերը թեթևացնելու նպատակադրումով 1081թ. Գրիգոր Վկայասերը իրեն տեղապահ կարգեց իր քեռորդի Բարսեղին՝ Գրիգոր Մագիստրոս Բջնեցու թոռանը (դստեր գծով), Վաւակի որդուն: Եռանդուն ու կարողունակ Բարսեղն իբրև կաթողիկոսական փոխանորդ, փայլուն կերպով դրսևորեց իր կազմակերպչական ավյունը, փաստորեն դառնալով ամբողջ հայության գործող հայրապետն ու հոգևոր առաջնորդը: Նա հատկապես մեծ հեղինակություն էր վայելում քաղաքամայր Անիում, Պահլավունիների ոստանում, որտեղ քաջ գիտեին նրա տոհմի և հենց իր ազգամետ գործունեության մասին: Բարսեղը հայ բնաշխարհն ապահովեց հոգևոր-եկեղեցական ընդհանրությամբ, որը տվյալ պահին ուներ նաև քաղաքական հնչեղություն: Կաթողիկոսական գահի երերուն ու թափառաշրջիկ, մասնատված կացությունը հաճախ առ ոչնչի էր հանգեցնում Եկեղեցու միարարական ջանքերը: Սակայն Բարսեղը կարողացավ վերականգնել Եկեղեցու համախմբող գործառույթները, քեռուն ազատելով կաթողիկոսական հոգսերից: Այնուհետև Վկայասերը հեռանալով Սև լեռներից,

«Ի Մէջերկրեայս անդուստ փոխեալ,

---

[426] Մատթեոս Ուռհայեցի, էջ 215:

[427] Նույն տեղում, էջ 291:

որ Եփրատայ մերձ առկայեալ
Քաղաք Քեսոն իմն անուանեալ
Յոր հուպ է վանք Կարմիր կոչեալ:
Անդ յիշխանէ պատուասիրեալ,
Աստուածասէր անձն երևեալ,
որոյ Վասիլ անուն ծայնեալ[428]»:

Այսպես է գրում նրա քեռորդի Ներսես Շնորհալին, հավելելով, որ Վկայասերը պատվի է արժանացել նաև Գող Վասիլի տիկնոջ կողմից:

Այդպիսով Գրիգոր Վկայասերի կաթողիկոսական գահն այս անգամ հանգրվանում է Գող Վասիլի Ուռհայեցու բնորոշմամբ «Հայոց մեծ իշխանի» իշխանության նստոց Քեսուն քաղաքում: Այդ իշխանությունը հիմնվեց 1080-ական թ.թ. կեսերին, ընդգրկելով Սև լեռների (Ամանոսի) ստորոտները և Կիլիկիայի ուրիշ շրջաններ: Այն հաջողությամբ հետ էր մղում սելջուկ-թյուրքերի հարձակումները: Թյուրքերի դեմ հանկարծակի ու հաջող կատարած հարձակումների շնորհիվ, համաձայն Մատթեոս Ուռհայեցու վկայության, Վասիլի իշխանության մեջ հավաքվել էին «մնացեալ զօրքն Հայոց և ամենայն ազգն Բագրատունեացն և Պահլաւունեացն և որդիք թագաւորացն Հայոց, և ամենայն ազգն Պահլաւունեացն հանդերձ ազատագունդ զօրօքն Հայոց առ նա կային հանգուցեալ մեծաւ փառաւորութեամբ...»[429]: Այդպիսով Պահլավունիները չեն հեռացել Բյուզանդիա, այլ հաստատվել են Կիլիկիայում և, հավանաբար, Գող Վասիլի իշխանության վերացումից (1112թ.) հետո զորակցել են Ռուբինյաններին: Վասիլի իշխանությունը առինքնում էր նաև Գրիգոր Վկայասերին, քանզի, վկայում է Ուռհայեցին,- Վասիլը «տիրեալ էր բազում գաւառաց իւրով զօրութեամբ, և ամենայն երամք կրօնաւորաց, եպիսկոպոսաց, հարց և վարդապետաց առ սա ժողովեցան...»[430]:

Բյուզանդիայի նենգ քաղաքականության հետևանքով Հայոց կաթողիկոսարանը մատնվեց թափառաշրջիկության, ժողովուրդը ցրվածության, որի հետևանքով էապես խարխլվեցին Հայոց հոգևոր իշխանության, եկեղեցու հինավուրց հիմքերը: Ստեղծված պայմաններում Գրիգոր Վկայասերի օրոք կաթողիկոսներ հռչակվեցին մի քանի եկեղեցականներ, թեև անվանապես Հայոց հայրապետի պաշտոնը վերապահված էր մնում Գրիգոր Վկայասերին: Հոնիում նույն ժամանակ աթոռակալեց Թեոդորոսը,

---

[428] Ներսէս Շնորհալի, Վիպասանութիւն, էջ 121-122:

[429] Մատթեոս Ուռհայեցի, էջ 323:

[430] Նույն տեղում, էջ 324: Ինքը Վասիլն աչքի էր ընկնում բարեպաշտությամբ: Նա,- գրում է Սմբատ Սպարապետը,- «եղեւ այր աստուածասէր և բարեպաշտ, շինիչ աշխարհի, պայծառացուցիչ եկեղեցեաց, զարդարիչ վանօրէից, պարգևատու քահանայից...» (Սմբատ, էջ 122):

Մարաշում՝ Պողոսը, Անիում՝ Բարսեղը, Տարսոնում՝ Գեորգը: Իսկ Հայկական Աղվանքում կաթողիկոսական իշխանություն ունեին տեղական եկեղեցու հայրերը: Վերը հիշված հովվապետերը, ինչպես վկայում է Ուռհայեցին, յուրաքանչյուրն ինքնուրույնաբար «առնէին ձեռնադրութիւնս և օծանէին եպիսկոպոսունս և տային օրհնութիւնս սուրբ ծիթոյն, և ի նոցանէ օրհնէին քահանայք, և լինէր պատարագ և մկրտութիւն և պսակն կուսանաց»[431]:

Այս պայմաններում հայությունը հոգևոր-եկեղեցական առումով տարանջատվում էր իբրև միածույլ ազգ, խաթարվում էր նրա դեռ չսպառած հոգևոր և քաղաքական կենսունակությունը: Նման իրավիճակում, սրտի մորմոքով գրում է մատենագիրը.-«գայլք եղեն պահապանք հօտին Քրիստոսի»[432]: Անշուշտ, դա հետևանք չէր միայն Վկայասերի վարչական անկարողության: Եկեղեցական-վարչական առումով հույժ բացասական դեր էր ստանձնել Բյուզանդիայի կայսրը, որը Խաչիկ կաթողիկոսի մահվանից (1060թ.) հետո հայերին արգելել էր նոր կաթողիկոս ընտրել[433]: Այնուամենայնիվ, որոշ տարածքներում հայկական անկախ իշխանությունների մեջ հաստատվեցին Հայոց եկեղեցական նոր կենտրոններ: Սակայն Բարսեղ Պահլավունու նպատակասլաց ջանքերի շնորհիվ դրանք հետզհետե վերացան: Սթափ գնահատելով առկա դրությունը, Բարսեղը նաև կարողացավ քաղաքական կողմնորոշման նժարը թեքել դեպի նվաճողները, բարելավեց հարաբերությունները սելջուկյան սուլթան Մելիքշահի հետ: 1090թ. նա «հանդերձ ազատօք և եպիսկոպոսօք և քահանայիւք», մեծագին նվերներով մեկնեց նրա մոտ և կարողացավ նրանից կորզել Հայոց եկեղեցու ապահարկության և քրիստոնեությունն ազատ դավանելու երաշխիքներ[434]: Այս փաստն անշուշտ, բարձրացրեց Քեսունում հանգրվանած Հայոց կաթողիկոսության վարկը: Բարսեղը Վկայասերի կողմից օժտվեց մեծ լիազորություններով, փաստորեն դառնալով երկրի հոգևոր իշխանության առաջնորդը, որը տարված էր համերկրային մտահոգություններով: Մելիքշահի մոտից վերադառնալուց հետո նա մեկնեց Ջահան գավառ և գահընկեց արեց Հոնիի Թեոդորոս կաթողիկոսին «և արար միահեծան զհայրապետութիւնն իւր»,- գրում է Ուռհայեցին[435]: Իհարկե, անվանապես Հայոց կաթողիկոսի պաշտոնում մնում էր Գրիգոր Վկայասերը: Սակայն գործնականում Եկեղեցու առաջնորդը Բարսեղն էր, որի ազդեցությամբ Կաթողիկոսական աթոռից հրաժարվեց նաև Մարաշում նստող

---

431 Մատթեոս Ուռհայեցի, էջ 229-230:
432 Նույն տեղում, էջ 230:
433 Տես Նույն տեղում, էջ 137, Սմբատ, էջ 61:
434 Տես Մատթեոս Ուռհայեցի, էջ 240:
435 Մատթեոս Ուռհայեցի, էջ 240-241:

մյուս հակաթոռ կաթողիկոս Պողոսը[436]: Բարսեղը ծրագրված շրջահայեցությամբ շարունակեց ի մի ծուլել հայոց տեղական եկեղեցական կենտրոնները, դրանք դնելով քեռու Գրիգոր Վկայասերի հոգևոր տեսչության տակ: Այդ առաքելությամբ 1091թ. նա ժամանեց Կեսարիա, Անտիոք, Եդեսիա և այլ վայրեր: Բարսեղի ներդրած ջանքերի շնորհիվ հայոց աստանդական հայրապետությունը վերստին ձեռք բերեց հեղինակություն: Հատկանշելի է նաև այն իրողությունը, որ Բարսեղի տեղապահության ժամանակ և նրա եռանդուն գործունեության շնորհիվ Գրիգոր Վկայասերը կարողացավ թոթափել կաթողիկոսական հոգսերի բեռը (որն այնքան ծանրացել էր հայրապետի ուսերին), և ազատ ու անկաշկանդ կերպով դրսևորել իր իմացախոհական ավյունը, մտավոր կարողությունները:

Խաչակիր զորքի կողմից 1099թ. Երուսաղեմի գրավման պահին այնտեղ էր գտնվում նաև Գրիգոր Վկայասերը: Մատթեոս Ուռհայեցին գրում է, որ նախքան խաչակիրների կողմից Երուսաղեմի գրավումը, տեղացի բնակիչները կամեցան սպանել Վկայասերին, բայց «Տէր փրկեաց զնա ի ձեռաց նոցա»[437]: Հասկանալի էր քրիստոնյա զորքի հարձակման պահին տեղացիների նման վերաբերմունքը Հայոց հովվապետի նկատմամբ:

Բյուզանդիան չէր վարանում դավանաբանական խնդիրներ արծարծել մյուս եկեղեցիների դեմ: 1102թ. կայսրության եկեղեցին զատկական տոնի օրվա առթիվ վեճեր հարուցեց Հայոց եկեղեցու դեմ: Հայտնի իրողություն է, որ տակավին VI դ. Հուստինիանոս I կայսեր նշանավոր տոմարագետ Իրիոնը (Եռիոն) նրա հրամանով գործածության մեջ էր դրել տոմարական նոր աղյուսակ, որով այդ տոնն ընկնում էր ապրիլի 5-ին: Կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիները Զատիկը նշում էին ըստ այդ տոնացույցի: Սակայն Հայ եկեղեցին այն մերժեց: Ականավոր տոմարագետ Անանիա Շիրակացին իր «Զատկի ճառ» գրվածքում խիստ քննադատության ենթարկեց Իրիոնի աղյուսակն, այն համարելով խաբեպատիր ու ոչ ճշմարիտ[438]: Թեև քրիստոնեական մյուս եկեղեցիները (նաև հակոբիկ ասորիները) ընդունել էին Իրիոնի սահմանած տոմարը, սակայն Հայ եկեղեցին Զատկի տոնը շարունակեց նշել ապրիլի 13-ին, ենթարկվելով մյուս եկե-

---

[436] Նույն տեղում, էջ 229: Սամուել Անեցու երկում տեղ գտած տեղեկության համաձայն, Բարսեղը «զամենայն հակառակսն հնազանդեցուցանէ որք էին յայնմ ժամանակի Զ կաթուղիկոսք...»: (Ըստ Կ. Մաթևոսյանի (Տես նրա Սամուել Անեցու ժամանակագրության հնագույն ձեռագրերը, էջ 42), այս հաղորդումը հետագայի հավելում է:

[437] Մատթեոս Ուռհայեցի, էջ 267:

[438] Տես Անանիա Շիրակացու Մատենագրությունը, էջ 297-298:

ղեցիների հարձակումներին: Սուր հարձակման թիրախ դարձան հատկապես Ուռհա (Եդեսիա) քաղաքի հայերը:

Անսալով Ուռհայի հայրենակիցների օգնակոչին, Գրիգոր Վկայասերը, որն այդ պահին հաստատվել էր Սև լեռների ստորոտում, Քեսուն քաղաքի մոտ գտնվող Արեգի անունով մենաստանում, հուսադրող թուղթ հղեց նրանց՝ հորդորելով «անշարժ կեալ ի հաւատս ուղղափառութեան»: Նա նշեց նաև, որ թեպետ ինքը ուռհայեցիներին խրախույսներ է տալիս, քաջալերում է «համբերել ամենայն իմաստութեամբ», սակայն ինքը ևս կիսում է նրանց մտահոգությունն ու տառապանքները: Նա գրում է. «Ոչ իբրև զվատասրտեալ հովիւ արտաքոյ մնամ կրիցն, այլ կամաւորութեամբ ես մահակից ձեզ գտանիմ յամենայն գործս և ի տեսակս տանջանաց և ոչ օտարանամ...»[439]:

Այդպիսով Գրիգոր Վկայասերը ուռհայեցի հայրենակիցների կողքին էր փորձության ժամին և ըստ ամենայնի պատրաստ էր կիսելու նրանց բաժին հասած տառապալից մտատանջությունները, նույնիսկ նրանց հետ միասին դիմել մահվան: Անշուշտ, այդ թուղթը ստույգ արտացոլք է նրա հայրենասիրական, քաղաքացիական վսեմ հավատամքի, ազգանվեր ուղեգծի: Նա համոզված էր, որ հայերն ի դեմս իրենց առաքելաշավիղ եկեղեցու, նույնպես ընթանում են այն լուսածիրով, որ սահմանել էր երկնավոր Առաքյալը՝ Քրիստոս Աստված: Վկայասերն ուռհայեցիներին ոգեպնդեց արիաբար դիմակայել փորձություններին, «որպես Քրիստոսի քաջ զինվորներ՝ հանուն ճշմարտության հաղթանակի» և համոզված լինել, որ չեն թյուրում աստվածադիր հավատքը, ընթանում են Հայոց սուրբ Լուսավորիչների նախանշած անեղծանելի շավղով[440]: Ընդ որում Վկայասերը նույն թղթում օրինակ էր բերում իր բազմածուփ ու տվայտալից դեգերումներով ու տագնապներով առլեցուն կյանքը, նշում, որ դրանք բնավ չեն սասանել իր հոգին, և որ տառապակիր կյանքը չի խաթարել իր հավատը, և «զուղղափառն և զանթերին ունիմ զհաւատն»[441],- գրում է նա: Այդպիսով Պահլավունյաց քաջասուն տոհմի ներկայացուցիչ Գրիգոր Վկայասերը կարողացավ տագնապահույզ ուռհայեցիներին հորդորել, որպեսզի չկորցնեն դիմադրության եզրերը և կուլ չգնան օտար հորձանքին ու իրենց դեմ հյուսվող որոգայթներին:

Հայոց հայրապետի նամակը սպասված ներգործությունը թողեց ուռհայեցիների վրա, որոնք հավատարիմ մնացին հայրենադիր դավանությանը և զատկական տոնը նշեցին ոչ թե ապրիլի 6-ի կիրակի օրը, (ինչպես լատինների և քաղկեդոնականների մոտ էր), այլ՝ ապրիլի 13-ի

---

[439] Յ. Տէր-Ղազարեան, Հայկական Կիլիկիա, էջ 71

[440] Մատթեոս Ուռհայեցի, էջ 286-290: Տես նաև Սմբատ, էջ 121:

[441] Մատթեոս Ուռհայեցի, էջ 291:

կիրակի օրը[442]: Ուռհա քաղաքի հայերի և նրան տիրացած ֆրանկների կոմս Բալդվինի միջև հարաբերությունների բարելավման նպատակադրումով Գրիգոր Վկայասերի գիտությամբ 1103թ. Ուռհա մեկնեց Բարսեղ Պահլավունին, որը շարունակում էր վարել Հայոց եկեղեցու ընդհանուր գործերը: Նա Ուռհա մեկնեց «ի քաղաքէն Անւոյ ամենայն պաշտօնէիւք իւրովք և ազատօք, եպիսկոպոսօք և քահանայիւք»: Այս դեսպանագնացությունը տվեց սպասված արդյունքները: Կոմս Բալդվինը, գրում է մատենագիրը,- «յոյժ մեծարեաց զնա մեծաւ պատուով որպէս վայել է հայրապետի, և գիւղս և տուրս պարգևէր նմա, և յոյժ սիրեաց զհայրապետն Հայոց»[443]: Այդ կերպ հարթվեցին ուռհայեցի հայերի և ֆրանկների միջև արծարծված դավանաբանական վեճերը և, հավանաբար, վերադարձվեցին դրանց ընթացքում Ուռհայի հայոց եկեղեցուց խլված կալվածները, ելնելով մահմեդականներով շրջակալված եկեղեցիների և նրանց հոտի միաբանության անհրաժեշտությունից: Անշուշտ, որոշակի ազդեցություն ունեցավ նաև այն հանգամանքը, որ այդ պահին Գող Վասիլը ոչ միայն հաջողությամբ հետ էր մղում թյուրք-սելջուկյան ամիրայությունների գրոհները, այլև զորակցում էր հավատակից խաչակիրներին, թեև Արևելքում վերջիններիս ստեղծած առաջին իշխանությունը՝ Եդեսիայի կոմսությունը 1098թ. հիմնվել էր այդ քաղաքի հայազգի կառավարիչ Թորոսի (Թեոդորոսի) ուխտադրուժ սպանությամբ՝ նույն Բալդվինի սադրանքով[444]: Հետագայում Բալդվինը շարունակեց իր դավադիր խաղերը նաև Գող Վասիլի հիմնած իշխանության նկատմամբ: Այդուամենայնիվ, նա չէր կարող հաշվի չառնել այդ իշխանության զորությունը, թյուրք-սելջուկյան ամիրայությունների դեմ Գող Վասիլի տարած փայլուն հաղթանակները, որոնց մասին ոգևորությամբ գրում է Ուռհայեցին[445]:

1103թ., երբ նոր էր Բարսեղը վերադարձել Ուռհայից, հարկ եղավ զբաղվել Աղվանից եկեղեցու վախճանված հովվապետի փոխարեն նոր առաջնորդի ընտրության խնդրով: Նա Անիից մի եպիսկոպոսի ուղարկեց Գանձակ քաղաք, որտեղ գումարված Աղվանքի եպիսկոպոսների ժողովում Աղվանից կաթողիկոս ընտրվեց փոքր-ինչ առաջ վախճանված Ստեփանոսի եղբայրը: Սակայն վերջինս վատ վարք դրսևորեց, ուստի բանադրվեց արդեն պաշտոնապես Հայոց կաթողիկոս ճանաչված Բարսեղի կողմից և զրկվեց «յաթոռոյ և ի պատուոյ հայրապետութեանն»[446]:

---

[442] Տես նույն տեղում, էջ 292:

[443] Մատթեոս Ուռհայեցի, էջ 294:

[444] Մատթեոս Ուռհայեցի, էջ 260-262, Անանուն Եդեսացի, ժամանակագրություն, թարգմ., առաջաբան և ծանոթագրութ. Լ. Տեր-Պետրոսյանի, Երևան, 1982, էջ 38:

[445] Մատթեոս Ուռհայեցի, էջ 306-307:

[446] Նույն տեղում:

Այնուհետև Բարսեղը մեկնեց Գերմանիկե (Մարաշ), իսկ փոքր-ինչ հետո Քեսուն Գրիգոր Վկայասերի մոտ, ըստ երևույթին նրանից անհրաժեշտ հանձնարարություններ ստանալու մտադրությամբ: Քեսունում Բարսեղը երկար չմնաց, Անին ձգում էր նրան: Սակայն նա նոր էր ժամանել Անի, երբ Վկայասերից լուր սատացավ՝ ցավագին շեշտադրությամբ: Վերջինս գրում էր, թե «հասեալ է ժամանակ իմ, եկ յուղարկեա զիս առ Տէր»՝ կռահելով այս աշխարհին իր հրաժեշտ տալու պահը: Բարսեղն առանց հապաղելու մեկնեց Վկայասերի աթոռանիստ՝ Քեսունի Կարմիր վանք «յուսալով վերջին օրհնութեանն»[447]: Ճանապարհին Ծովքի Մենծկերտ բերդի մերձակայքում նա ենթարկվեց ավազակների հարձակմանը, սակայն յուրայինների հետ «քաջասրտաբար արիացեալ» հակահարված տվեց ավազակներին, որոնք ստիպված էին բավականանալ նրանից կորզած փոքր գումարով[448]:

Բարսեղը Քեսուն հասավ այն պահին, երբ դեռ ողջ էր Վկայասերը, որն արդեն մահվան մահճում Վասիլ իշխանի և Բարսեղի ներկայությամբ վերջինիս քեռորդուն (որը Վկայասերի քրոջ թոռն էր) Գրիգորին (Ապիրատի որդուն) կարգեց Հայոց կաթողիկոս (իհարկե, նա այդ լուծը կրելու էր Բարսեղի մահվանից հետո) «և միջնորդ կացուցանէր զիշխանն Հայոց զՎասիլն զտէրն Քեսնոյ և ամենայն աշխարհաց նորա»: Փոքր-ինչ հետո, 1105թ. հունիսի 3-ին Գրիգոր Վկայասերն ընդմիշտ փակեց աչքերը և թաղվեց Քեսունի Կարմիր վանքում[449], «ոչ ի նախնեաց դիրս թաղեալ, այլ յօտարաց պանդխտացեալ»[450],- ցավով նշում է Ներսես Շնորհալին:

Գրիգոր Վկայասերի 40 ամյա հովվապետության ընթացքում Հայաստանն անցավ քաղաքական փոթորիկների խաչուղիներով: Սակայն երբեք չմարեց Վկայասերի մտքի ջահը: Գտնվելով հայ բնաշխարհից դուրս, նա իր շնորհասուն զարմիկի ու փոխանորդի՝ Բարսեղի միջոցով կարողացավ իր աջը պարզել համայն հայության վրա, կատարեց իր չարչարաբեկ հոգու սրբանվեր ուխտը՝ կոփեց Հայոց հավատը, առաջ մղեց հայ քրիս-

---

[447] Վարդան, էջ 113: Մի հետազոտողի կարծիքով Գրիգոր Վկայասերը Հռոմկլան դարձրել է «ամենայն հայոց կաթողիկոսարան» (տես Հ. Թուրշյան, Պահլավունիների վերելքն ու անկումը XI-XIII դարերում («Պատմաբանաս. հանդես», 1974, N1, էջ 147): Մինչդեռ Հայոց կաթողիկոսարանը Ծովք դղյակից Հռոմկլա է տեղափոխվել 1150թ. Գրիգոր III Պահլավունի կաթողիկոսի օրոք (Վարդան, էջ 128):

[448] Տես նույն տեղում, 113:

[449] Մատթեոս Ուռհայեցի, էջ 300, Սմբատ, էջ 126:

[450] Ներսես Շնորհալի, Վիպասանութիւն, էջ 123: Գրիգոր Վկայասերի աշակերտ Վարդան Հայկազնն իր ուսուցչի մահվան առթիվ գրած ներբողականում գրում է, որ Վկայասերն իր ճառերով «բերկրեալ զոգիսըն լսողաց, պատուող ամէն սուրբ վկայաց... Նաւակատիս մարտիրոսաց յուրախութիւն ժողովրդաց...» («Բազմավէպ», 1873, հ.Ա, էջ 267):

տոնեաբանական միտքը: Հարկավ, ինչպես նշում է Ուռհայեցին, նրա մահվամբ «եղև անկեալ սիւնն հաւատոյ Հայաստանեայց և պարիսպ սրբոյ եկեղեցւոյ տանն արևելից Հայաստանեայց. վասն զի սա եղև սքանչելագործ ի մէջ Հայաստանեայց... Նորոգեաց զկարգ հաւատոց Հայաստանեայց և անհանգիստ թարգմանութեան էր պարապեալ, և զամենայն պակասութիւն կտակարանացն Աստուծոյ առ մեզ կարգաւ կատարեալ զարդարեաց ի Յունաց և յԱսորւոց թարգմանութեան հոգս տարեալ՝ անդադար խորհրդով և ամենայն պայծառութեամբ Սուրբ Գրոց ելից զեկեղեցի Հայաստանեայցս... Յամենայն կողմանց կարող էր օգնել հօտին Քրիստոսի, վասն զի էր բանիբուն կորովի գրոց շնորհաց»[451]:

Գրիգոր Վկայասերը իր հոգու ճարակը գտավ մտավոր-աստվածաբանական զբաղումներում և երբեք կուլ չգնաց օտար դավանություններին և առմիշտ հավատարիմ մնաց նախնավանդ հավատքին: Նրա օրոք Հայ Առաքելական Եկեղեցին հավատարիմ իր արմատ-ակունքներին, անխաթար պահեց իր դավանական դիմագիծը, միաժամանակ չխուսափելով քրիստոնեական մյուս եկեղեցիների հետ հոգևոր հաղորդակցությունից: Նրա գրական վաստակից փշրանքներ են պահպանվել («Վասն մոլորման Զատկին», «Հաւատով Խոստովանիմք», «Կիւրակէին» և այլն): Վկայասերն իր նպաստն է բերել Հայսմավուրք ժողովածուների ստեղծման գործին[452], էապես սատարելով ալեխռով այդ ժամանակների Հայոց լեզվի ու գրականության զարգացմանը: Ինչպես նշվել է, Գրիգոր Վկայասերը հիմք դրեց Պահլավունի տոհմից սերած կաթողիկոսական դինաստիային, վաստակելով Գրիգոր Լուսավորչի հանգած տան վերականգնողի փառապսակը: Նա իրեն համարում էր Լուսավորչի Աթոռի լիիրավ ժառանգորդ: Ուշագրավ է, որ Վկայասերը հույն թարգմանչի օգնությամբ իր կողմից թարգմանված Հովհան Ոսկեբերանի Վարքի 1102 թվակիր հիշատակարանում գրում է. «Ես Գրիգոր որդի Գրիգորի Մագիստրոսի ի Հայկազունւոյ, ըստ աշխարհի Պարթեւ, ըստ ժառանգութեան Պահլաւիկ, ըստ ցեղընտիր լինելոյ յազգէ Արշակունի, կոչեցայ ի դիտապետութիւն Ասքանազեանս եւ բնիկ աթոռ հայրապետութեան նախնեացն իմոց, եւ բազում նեղութիւն կրեալ մեր յայլասեռ ազգաց հեթանոսաց եւ ի յե[ր] կաբնակաց: եւ ապա ի յառաջասացեալ ամդ հասաք ի սուրբ լեառնն, զոր Սեաւն կոչեն, ի մեր սեփհական պարգեւական եկեղեցիքն յուխտն սուրբ... եւ անդ յերեսուն եւ ի վեց ամի մերոյ աթոռակալութեանս թարգմանեցի զվարս ճգնութեան մեծ եւ սքանչելի առնն Աստուծոյ Յովհաննու Ոսկեբերանի...[453]:

---

[451] Մատթեոս Ուռհայեցի, էջ 298-299:

[452] Տես Մ. Ավդալբեգյան, «Յայսմաւուրք» ժողովածուները, Երևան, 1982, էջ 32 և հտ.:

[453] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ., էջ 135-136: Նկատենք նաև, որ տակավին 1076թ., «ի սաստկացեալ սրոյ Սկիւթացւոցն», Վկայասերը թարգմանել էր տվել Ոսկեբերանի «Մեկնութիւն գործոց առաքելոցն» երկը (տես Գ. Յովսէփեանց, Յիշատ. ձեռագրաց, էջ 255): Նա նաև թարգմանել է տալիս

Գլուխ երկրորդ

Պահլավունի Վահրամը Եգիպտոսի լիազոր-վեզիրի պաշտոնում

969 թվականից Եգիպտոսում իշխանության գլուխ անցած Ֆաթիմյան տոհմի խալիֆաները թեև հիմնել էին թեոկրատական պետություն, սակայն լինելով շիա դավանանքի հետևորդներ և, հաշվի առնելով երկրի բազմացեղ ու բազմակրոն կացությունը, հանդուրժող վերաբերմունք էին ցուցաբերում այլակրոնների (քրիստոնյաներ, հրեաներ և այլն) նկատմամբ: Ֆաթիմյանների օրոք Եգիպտոսում իսլամը դավանողների դեմ կանգնած քրիստոնյաների միասնական եկեղեցին և նրա շուրջը համախմբված քրիստոնյաները պատկառելի ուժեր էին[454]: Երկրի միասնությունն ապահովելու, նրա ներքին կացությունը կայունացնելու նպատակադրումով Ֆաթիմյան խալիֆաները առաջ էին քաշում կարողունակ այլազգիների, այդ թվում նաև հայերի: Տակավին 1073թ. Ֆաթիմյան Մուստանսիր խալիֆան (1036-1094) ի զորու չլինելով վճռական միջոցներով երկրում կայունություն հաստատել, իշխանությունը հանձնել էր երկրի զորքերի գլխավոր հրամանատարին՝ հայազգի Բադր ալ-Ջամալին, նրան վերապահելով լիազոր-վեզիրի իրավազորություն: Քանի որ Շարիաթի օրենքով ոչ քրիստոնյան (զիմմին) չէր կարող լիիրավ լինել, ուստի Բադր ալ-Ջամալին ընդունեց իսլամը:

Ֆաթիմյանների օրոք քրիստոնյա վեզիրներն ունեին միայն գործադիր իշխանություն, բայց զուրկ էին լիազոր-վեզիրի իրավունքներից: Բացառություն էր Հաֆիզ խալիֆայի (1130-1149) օրոք լիազոր-վեզիրի պաշտոնին հասած Վահրամը Պահլավունի տոհմից: Անշուշտ, նրա կարճատև վեզիրության համար Եգիպտոսում արդեն հող էր նախապատրաստված ի դեմս ամենազոր Բադր ալ-Ջամալիի և նրան հաջորդած վեզիրների, որոնք հիմնականում հայեր էին:

Վահրամ Պահլավունին ծնվել էր Եդեսիայի իշխանության Եփրատացվոց երկրամասի Թլպաշար բերդաքաղաքում, որը Պահլավունիների սեփականությունն էր: Նա Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի քեռորդին էր:

(1101թ.) Գրիգոր Նազիանզացու Վարքը «ի յիշատակ իւր եւ ծնաւղաց իւրոց եւ ազգի իւրոյ (Հայերեն ձեռ. հիշատակարաններ Ե-ԺԲ դդ. էջ 137): Վկայասերը թարգմանել է տալիս նաև V դարի ասորի ուղղափառ եկեղեցական Բարծումայի (այլ է նույն անունը կրող նեստորական վարդապետից) Վարքը (Տես նույն տեղում, էջ 160), ինչպես նաև մի Տոնական (Տոնացույց)՝ հունարենից (նույն տեղում, էջ 139):

[454] A. Мец, Мусульманский ренессанс, М., 1973, с. 56-57.

Ըստ Ներսես Շնորհալու, նրա մի եղբայրը Գրիգորիսն, ինչպես վերը նշվեց, քեռու կողմից 1076թ. կարգվել էր Եգիպտոսի հայոց առաջնորդ, մյուս եղբայրներն էին Վասակն ու Ապիրատը: Եգիպտոսի լիազոր-վեզիր Բադր ալ-Ջամալին էապես սատարեց Պահլավունիներին:

Վահրամ Պահլավունին Եգիպտոս է ժամանել 1073թ.[455], գժտվելով իր հակառակորդների հետ, որոնք նրան թույլ չէին տվել ժառանգել Թլպաշարի վախճանված իշխանի պաշտոնը[456]: Հավանաբար, Վահրամը Եգիպտոս է մեկնել քեռու Գրիգոր Վկայասերի Եգիպտոս ժամանելուց հետո[457]: Հետագայում Հաֆիզ խալիֆայի կողմից Սիկիլիայի նորմանացի Ռոջեր II թագավորին (1130-1154) հղած երկրորդ նամակից երևում է, որ Եգիպտոս ժամանելու պահին Վահրամը թեև բոլորովին զուրկ էր ունեցվածքից, դրամից, մերձավորներից, սակայն շուտով նա կարողացավ ձեռք բերել մեծ կարողություն[458]:

Վահրամ Պահլավունին նույնպես գրավեց Բադր ալ-Ջամալիի ուշադրությունը: Վերջինս, անշուշտ, հաշվի առնելով Վահրամի տոհմական ծագումն ու կարողությունները, նրան նշանակեց Ղարբիյա նահանգի (ընկած էր Նեղոսի դելտայում) կառավարիչ[459]: Այդ ընթացքում վառ կերպով դրսևորվեցին Վահրամ Պահլավունու վարչական, քաղաքական կարողությունները: 1135թ. Եգիպտոսում գահի շուրջը պայքար բռնկվեց: Հաֆիզ խալիֆայի որդի Ալ-Հաշիմն օգտվելով հոր թուլությունից, ապստամբեց նրա դեմ, իր կողմնակիցներով գրավեց Կահիրե մայրաքաղաքը և կամեցավ տիրանալ խալիֆայի գահին: Խռովարարներին հակահարված տալու և երկրում անդորր հաստատելու նպատակով զորքը Վահրամ Պահլավունուն խնդրեց ստանձնել վեզիրության պաշտոնը և վճռական քայլեր ձեռնարկել Ալ-Հաշիմի ու նրա կողմնակիցների դեմ: Վահրամը զորքն առաջնորդեց և շարժվեց դեպի Կահիրե, պաշարեց այն և պահանջեց երկու տարուց ի վեր թափուր մնացած վեզիրության պաշտոնը հանձնել իրեն: Ելնելով ստեղծված իրավիճակից, անշուշտ, նաև տեղի տալով Վահրամի կողմն անցած զորուժի առջև, Հաֆիզ խալիֆան 1135թ. մարտի

---

[455] M. Canard, Notes sur les Arméniens en Egypte a l' epoque Fatimide («Annales de l' Institut d' Etudes Orientales», t. XII, Alger, 1955, p. 153).

[456] M. Canard, Un vizir chretien a l' epoque Fatimide: l' armenien Bahram («Annales de l' Institut d' Etudes Orientales», t. XII, Alger, 1954, p. 90-91).

[457] Գ. Մըսրլեան, Ականաւոր հայէր Եգիպտոսի մէջ, Գահիրե, 1947, էջ 65:

[458] M. Canard, Un vizir chretien p. 92.

[459] Գ. Մըսրլեան, Ականաւոր հայէր, էջ 65, Ա. Տեր-Ղևոնդյան, Վահրամ Պահլավունին Ֆաթիմյան խալիֆայության վեզիր, («Արևելագիտության հարցեր», 1-2, Երևան, 1983, էջ 111):

30-ին լիազոր-վեզիրի պաշտոնը հանձնեց Վահրամ Պահլավունուն[460], որն արդեն գրեթե բոլորել էր իր ութսուն տարին[461]:

Լինելով միակ քրիստոնյան լիազոր-վեզիրների մեջ, Վահրամ Պահլավունին մահմեդական ժողովրդի վստահությունը շահելու համար իր երկամյա վեզիրության (1135-1137) ընթացքում վերացրեց երկրում բնավորված անիշխանությունը, վերականգնեց ներքին կարգը, կատարեց բարեՊորոգչական աշխատանքներ: Այդուհանդերձ նա քաջ գիտեր, որ իբրև քրիստոնեական հավատին հավատարիմ մնացած լիազոր-վեզիր, չի կարող երկար ժամանակ վստահություն վայելել երկրի մահմեդական վերնախավում: Ուստի անհրաժեշտ էր ունենալ հուսալի հենարան՝ ի դեմս հայերի: Այդ նպատակադրումով Վահրամ Պահլավունին Կիլիկիայից ու Եփրատեցվոց երկրամասից Եգիպտոս հրավիրեց բազմաթիվ հայերի և նրանցից կազմավորեց յոթ հազարանոց զորաբաժին՝ բաղկացած հիմնականում Սասունի ու Խութի լեռնականներից[462]: Այն պահվում էր պետական միջոցներով և իր գոյությունը պահպանեց 32 տարի՝ մինչև 1172թ., երբ Սալահեդդինը տապալեց վերջին Ֆաթիմյանին և անցավ իշխանության գլուխ[463]:

Իր վեզիրության ընթացքում Վահրամը բազմաթիվ հայերի Եգիպտոսի պետական համակարգում նշանակեց բարձր պաշտոնների: Նրա մի եղբայրը՝ Գրիգորիսը, ինչպես նշվեց, ժամանակին քեռու՝ Գրիգոր Վկայասերի կողմից նշանակվել էր Եգիպտոսի հայոց հոգևոր առաջնորդ, որը սակայն եղբոր վեզիրության ժամանակ արդեն կնքել էր իր մահկանացուն[464]: Վահրամը մյուս եղբորը՝ Վասակին կարգեց Վերին Եգիպտոսի Գուս նահանգի կառավարիչ: Հավանաբար, կարևոր պաշտոնում նշանակվեց նաև նրա մյուս եղբայրը՝ Ապիրատը: Վահրամ Պահլավունու եղբորորդիներ Վասիլն ու Զորավարն օժտվեցին վարչական և զինվորական պաշտոններով: Վահրամը շարունակեց նորանոր հայերի ներգրավել պետական համակարգում: Վահրամի վեզիրության տարիներին եգիպտահայերի թիվը

---

[460] Գ. Մըսրլեան, էջ 65, Հր. Աճառյան, Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002, էջ 449, Ա. Տեր-Ղևոնդյան, նշվ. աշխ., էջ 111:
[461] M.Canard, Notes sur les Arméniens, p. 153.
[462] Հ. Թուրշյան, XI և XII դարերի եգիպտահայ գաղութի պատմությունից («Արևելագիտական ժողովածու», II, Երևան, 1964, էջ 313-315), Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 2-րդ, Երևան, 2003, էջ 292:
[463] Հայ գաղթաշխարհի պատմություն, հ.2-րդ, էջ 292-293:
[464] M. Canard, Notes sur les Armeniens, p. 152.

հասավ 30 հազարի[465]: Հայերին գրավում էր Եգիպտոսի ղպտիական եկեղեցու հակաքաղկեդոնական դիրքավորումը[466]:

Վահրամ Պահլավունու հայամետ գործելակերպը հարուցեց մահմեդական վերնախավի դժգոհությունը: Նրանց գործակցում էր Հաֆիզ խալիֆան[467]: Այդ դժգոհության ալիքի վրա բարձրացած Ղարբիյյայի նահանգապետ Ռիդուան իբն ալ-Վալախշին, որը պատկանում էր սուննի դավանության ծայրահեղ մոլեռանդությամբ հայտնի մալիքի հոսանքին, սրբազան պատերազմ հայտարարեց Վահրամի դեմ, նրան մեղադրելով բոլոր պաշտոնները քրիստոնյաներին հանձնելու, տեղացիներին պաշտոնազրկելու մեջ: Նա իր շուրջը համախմբեց 30 հազար մոլեռանդների և հարձակվեց Կահիրեի վրա, գրավեց այն, կոտորեց բազմաթիվ հայերի, կողոպտել տալով նրանց տները, եկեղեցիները: Պղծվեց Վահրամի եղբոր Գրիգորիս եպիսկոպոսի գերեզմանը[468]:

Վահրամ Պահլավունին հայերից ու մահմեդականներից կազմված իր զորքը հանեց Ռիդուանի դեմ, բայց մարտի վճռական պահին մահմեդականներից բաղկացած զորաբաժինը լքեց նրան և անցավ հակառակորդի կողմը: Այդպիսով Վահրամի երդվյալ ախոյան Ռիդուան իբն ալ-Վալախշին 1137թ. տիրացավ վեզիրի պաշտոնին, շարունակելով անլուր հալածանքները հայերի դեմ, պաշտոնազրկելով, կոտորելով նրանց, ավերելով նրանց վանքերն ու եկեղեցիները[469]:

Վահրամի հայկական զորամասը կամեցավ հակահարված տալ Ռիդուանի զորքին, սակայն նոր արյունահեղությունից խուսափելու միտումով ծերունազարդ Վահրամը կամովին հրաժարվեց վեզիրության պաշտոնից և հայ զորականների հետ հեռացավ Վերին Եգիպտոսի Գուս նահանգ եղբոր Վասակի մոտ, որը սակայն այդ պահին սպանված էր Ռիդուանի կողմնակիցների կողմից: Կատարվածից ցնցված Վահրամը փորձեց վրիժահատույց լինել թշնամիներից, սակայն տեղի տալով նրանց գերակշիռ ուժերի առջև, ստիպված հեռացավ Նուբիայի սահմանագլխին գտնվող հայկական ճերմակ անունով վանք: Այդ պահին նա «խիստ շատ տկար և

---

[465] Մատթեոս Ուռհայեցի, էջ 211, M. Canard, Un vizir chretien, p. 100.

[466] S. Dadojan, The Fatimid Armenians, Leiden, 1997, p.81.

[467] Ա. Ալպոյաճեան, Արաբական միացեալ հանրապետութեան Եգիպտոսի նահանգը և հայերը, Գահիրե, 1960, էջ 31:

[468] Նույն տեղում, էջ 31: Ռիդուանը համարվել է կրոնափոխ հայ (տես Л. Семенова, Из истории Фатимидского Египта, М., 1974, с.140): Սակայն սկզբնաղբյուրները հիմք չեն տալիս նման ենթադրության համար:

[469] Գ. Սըսրլեան, էջ 66-67, Ա. Տեր-Ղևոնդյան, էջ 113:

հիվանդ էր»[470]: Ըստ Իբն ալ-Ասիրի, այդտեղ կրոնավորող Վահրամը «լուր ուղարկեց Հաֆիզին, երաշխավորագիր խնդրելով: Վերջինս տվեց, և նա վերադարձավ ու բանտարկվեց պալատում: Որոշ ժամանակ մնալուց հետո վանական դարձավ ու դուրս եկավ բանտից»[471]:

Երկտարյա վեզիրության ընթացքում Ռիդուանը բռնարկու արարքներով խիստ վատթարացրեց երկրի վիճակը, հարուցելով վերնախավի, նաև խալիֆայի դժգոհությունը:

Դեպքերն իրենց հանգուցալուծումը գտան այն պահին, երբ խալիֆան իր պալատ հրավիրելով Վահրամին, նրան օժտեց խորհրդականի իրավունքներով, ինչի դեմ ըմբոստացավ Ռիդուանը, որը սակայն չարաչար պարտվեց խալիֆայի զորքից, ապա բռնվեց ու բանտ նետվեց, իսկ ութ տարի հետո սպանվեց[472]:

Հաֆիզ խալիֆան կտրուկ փոխեց իր վերաբերմունքը Վահրամի նկատմամբ: Ուշագրավ է, որ դեռևս Վահրամին Հաֆիզի գրած առաջին նամակում, որն ուղարկվել էր ի պատասխան Կահիրե վերադառնալու Վահրամի խնդրանքի, խալիֆան նրան է ուղղել հետևյալ խոսքերը. «Ո՞վ գերընտիր, զորացյալ և հաղթական հրամանատար, ուժ և ա՞րև խալիֆայության, թագ և սյուն պետության»[473]: Եվ 1139թ. մայիսին, շնորհազրկված Վահրամ Պահլավունուն դարձյալ տեսնում ենք խալիֆայի արքունիքում, փաստորեն օժտված երկրի կառավարիչի իրավունքներով: Թեև պաշտոնապես Եգիպտոսի վեզիր էր նշանակված Սելիմ իբն Միսալը, սակայն իրապես վեզիրի գործառնությունը վերապահված էր Վահրամին[474]:

Այս անգամ Վահրամ Պահլավունին անպաշտոն կերպով մեկ ու կես տարի կատարեց լիազոր-վեզիրի պարտականությունները, ապա 1140թ. դեկտեմբերի 7-ին կնքեց իր մահկանացուն, մոտ 85 տարեկան հասակում[475]:

Արաբ մատենագիրները վկայում են, որ Վահրամ Պահլավունու (Բահրամ ալ-Արմանիի) մահվան օրը Հաֆիզ խալիֆայի հրամանով երկրի պետական հաստատություններում դադարեցվել են բոլոր աշխատանքները: Եռօրյա սգից հետո խալիֆան հրավիրել է Եգիպտոսի հայոց առաջնորդին և միասին հոգ են տարել Վահրամի հուղարկավորությունն ըստ պատշաճի կազմակերպելու համար: Հանգուցյալի դագաղը խալիֆայի պալա-

---

[470] Աբուսահլ Հայ, Պատմութիւն եկեղեցեաց և վանորէից Եգիպտոսի, Վենետիկ, 1895, էջ 49:
[471] Իբն ալ-Ասիր, էջ 248:
[472] Ա. Ալպոյաճեան, նշվ. աշխ., էջ 32:
[473] Գ. Մըսրլեան, էջ 75:
[474] Գ. Մըսրլեան, էջ 75, Ա. Տէր-Ղևոնդյան, էջ 113:
[475] M. Canard, Un vizir chretien p. 110, M. Canard, Notes sur les Arméniens, p. 153.

տից դուրս է բերվել կեսօրին: Այն պատած էր զարդանախշված մետաքսով: Սգո թափորի մեջ էին ոչ միայն շարականներ երգող հայ եկեղեցականներ, այլև մահմեդական նշանավոր պաշտոնյաներ, Մուհամմեդ մարգարեից սերած ազնվականներ բոլորը հետիոտն: Թափորի հետևից ընթանում էր խալիֆան ձի նստած: Վահրամի աճյունն ամփոփվեց հայկական վանքում: Թաղման պահին խալիֆան արտասվեց[476]:

[476] Գ. Մըսրլեան, էջ 67, Ա. Տեր-Ղևոնդյան, էջ 114:

Գլուխ երրորդ

Բարսեղ Պահլավունի կաթողիկոսը

Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի վախճանվելուց հետո, Բարսեղ Պահլավունին, որը գործնականում կատարում էր Հայոց հայրապետի գործառույթները, 1105թ. ճանաչվեց Վկայասերի իրավահաջորդ՝ Հայոց կաթողիկոս: Անշուշտ, դրանում կարևոր դեր խաղաց այն փաստը, որ Բարսեղը նույնպես սերում էր Պահլավունիներից և Վկայասերի օրոք վառ կերպով դրսևորել էր իր կարողունակությունները եկեղեցական գործերում: Դեռևս նախորդ դարի 20-ական թվականներին Բարսեղի պապ Ապիրատը (Հասանի որդին) զորակից էր եղել Աշոտ IV Բագրատունուն, Հովհաննես-Սմբատի դեմ նրա մղած կռիվների ժամանակ: Իսկ 1031թ. Ապիրատը հիշվում է որպես Կեչառիսի վանքի կառուցող, նաև երևանում առու հանող[477]: Մատթեոս Ուռհայեցին Ապիրատին և նրա հորը հիշում է որպես «յազգէ քաջանց և ի պատերազմող զօրականաց, յազգէ Պահլաւունեաց»[478]: Ապիրատի որդի Վասակը Բարսեղ կաթողիկոսի հայրն էր, իսկ վերջինիս մայրը (որի անունը չի պահպանվել) Գրիգոր Մագիստրոսի դուստրն էր: Բարսեղի եղբայրներն էին Հասանն ու Ապլջահապը: Մատթեոս Ուռհայեցին նրանց բնորոշում է «արք քաջք և հզօրք» արտահայտությամբ[479], նշում, որ նրանք հոր հետ «նստուցին զՏէր Բարսեղ յաթոռ Տեառն Պետրոսի: Եւ եղև օրն այն օր մեծ և ուրախութիւն ամենայն տանն Հայոց, վասն զի տեսին նորոգեալ զաթոռ հայրապետութեանն ի քաղաքն յԱնի»[480]: 1020թ. Հովհաննես-Սմբատի և նրա թագապահանջ եղբոր Աշոտ IV-ի ընդհարումների ժամանակ Ապիրատ Պահլավունին Աշոտ IV-ին զորակցելու պատճառով «երկուցեալ ի թագաւորէն Յովհաննիսէ, ապստամբեալ փախեաւ ի նմանէ և գնաց ի Դուին քաղաք առ Ապուսուար զօրաւարն»: Ապիրատին ուղեկցում էր իր հեծյալ զորքը, որի թիվը Ուռհայեցին հասցնում է 12 հազարի: Աբու Ասվարը «մեծարեալ զնա բազում աւուրս», սակայն երկյուղելով Ապիրատի զորությունից, վերջինիս զորականներից գաղտնի «ի զրոյց սիրոյ կոչեաց զԱպիրատն և ի ծածուկ կորոյս զայնպիսի այր քաջ, հզօր և անուանի ի մէջ ամենայն աշխարհին Հայոց»[481]:

---

[477] Վարդան, էջ 97, Մխիթար Այրիվանեցի, էջ 73:
[478] Մատթեոս Ուռհայեցի, էջ 269:
[479] Նույն տեղում, էջ 221:
[480] Նույն տեղում, էջ 221-222:
[481] Նույն տեղում, էջ 10-11:

Ապիրատ Պահլավունու որդիներ Ապլջահապն ու Վասակը (Բարսեղ կաթողիկոսի հայրը) իրենց մոր Վանենիի հետ Սարի անունով իշխանի կողմից տեղափոխվեցին Անի (Դվինից) «հեծելագունդ զորքի» ուղեկցությամբ: Հովհաննես-Սմբատ թագավորը վրիժահատույց չեղավ նրանց նկատմամբ: Նա, ինչպես հավաստում է Ուռհայեցին,- «կարի ժոյժ ապաշաւէր զանիրաւ մահն Ապիրատին Հայոց իշխանին» և նրա որդիներին ի տիրություն տվեց «գաւառս և զիշխանութիւնս»[482]:

Վասակն ամուսնացավ Գրիգոր Մագիստրոսի դստեր հետ: 1046թ. Գրիգոր Մագիստրոսը Ապլջահապին ու նրա գերդաստանին հետը տարավ Միջագետք իր իշխանության ոլորտ[483]: Ապիրատի մյուս որդին Վասակը մնաց Անիում: Նա ունեցավ երկու որդի Գրիգոր իշխանը և Բարսեղը (հետագայի կաթողիկոսը):

Հայոց հովվապետի պաշտոնն ստանձնելով 1105թ. Բարսեղը հայրապետական Աթոռը փաստորեն տեղափոխեց Անի, անշուշտ, նկատի ունենալով արևելահայ եկեղեցականների կամքը: Հենց Անիում էլ տեղի ունեցավ Բարսեղի ձեռնադրությունը հոր ու եղբայրների մասնակցությամբ:

Բայց որովհետև հայկական իշխանությունների մեջ առավել զորեղն ու ազդեցիկը Գող Վասիլի իշխանությունն էր, ուստի նրա նստավայր Քեսուն քաղաքի մերձակայքի Կարմիր վանքը (Ամանոս (Սև) լեռների ստորոտին) շարունակեց մնալ կաթողիկոսանիստ: Եվ Բարսեղը թողնելով Անիի աթոռը, հաստատվեց Քեսունում[484], որպես Ամենայն Հայոց կաթողիկոս:

Բարսեղ Պահլավունին հավատարիմ մնալով քեռու Գրիգոր Վկայասերի պատվիրաններին, զարգացրեց նրա հովվապետական գործունեության լուսավոր եզրերը: Ընդ որում վերջինս Բարսեղի խնամքին էր թողել նաև Վկայասերի մյուս քրոջ (անունը չի պահպանվել) մանկահասակ որդիներ Գրիգորին (հետագայում կաթողիկոս) և Ներսես Շնորհալուն՝ Ծովքի Ապիրատ իշխանի զավակներին, որոնց հոգիները հասունացան ու առնականացան Բարսեղի հոգածության ներքո: Վերջինս դարձավ նրանց կենսական նեցուկը:

Իհարկե, Բարսեղի հայրապետական գործառույթները ոչ միշտ էին հնարավորություն տալիս ըստ ամենայնի զբաղվել նրանց դաստիարակությամբ, կրթությամբ, ուստի այդ հոգսերը նա դրեց կաթողիկոսական աթոռանիստի վանահայր Ստեփանոս վարդապետի վրա, որը հայտնի էր իր գիտունությամբ:

---

[482] Նույն տեղում, էջ 11:

[483] Ենթադրվում է, որ Գրիգոր Մագիստրոսը Միջագետքի կառավարիչ եղած ժամանակ փեսայի (Ապլջահապի) իրավասության տակ է դրել Ծովք դղյակը (տես Ն.Ակինեան, նշվ. աշխ., էջ 31): Բայց դա չի հաստատվում աղբյուրներով:

[484] Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, էջ 596-597:

Բարսեղը սերտ կապեր էր պահպանում Գող Վասիլի հետ, որին Վարդան Արևելցին կոչում է «Մեծ իշխանաց իշխան», բազում բերդերի, գավառների տիրակալ[485]: Բարսեղը, համաձայն Ուռհայեցու մի վկայության, Գող Վասիլի հոգաբարձուն և խոստովանահայրն էր[486]: 1112թ. Գող Վասիլը կնքեց իր մահկանացուն, և Բարսեղ կաթողիկոսը նրա հոգեորդի Վասիլին կարգել տվեց Գող Վասիլի իրավահաջորդ[487]: Երկրորդ Վասիլը, ինչպես նշվել է, «էր մայրենեօք յազգէ Կամսարական»[488]: Փաստորեն նրան իշխանությամբ օժտել է Բարսեղն իր բարձր հեղինակությամբ: Ըստ Ուռհայեցու,- «արար միաբան ժողով Տէր Բարսեղ և տայ զամենայն իշխանութիւնն ի տղայ Վասիլն»[489]:

Հաջորդ տարի 1113թ. մայիսի 26-ին Բարսեղ կաթողիկոսը ճակատագրի դաժան խաղով զոհ գնաց պատահարին: Ըստ Ուռհայեցու, Բարսեղն այդ օրն իր հովվապետական պարտքի մղումով բարձրանում է Քեսունի մոտակա Վարդահեր գյուղի տներից մեկի տանիքը քահանաների, եպիսկոպոսների հետ աղոթք վերառաքելու առ Աստված: Անսպասելիորեն տունը փլվում է, ծանր վնասվածքներ պատճառելով կաթողիկոսին (կոտրվել էր նրա ողնաշարը): Երեք օր հետո նա վախճանվեց, մահվանից առաջ կտակելով իր մարմինն ամփոփել Քեսունի Կարմիր վանքում, քեռու կողքին, ինչը կատարվեց պատշաճ սգահանդեսով[490]: Վարդան Արևելցին մի փոքր այլ ձևով է ներկայացնում Բարսեղի մահը: Վերջինս իր մահվանից փոքր-ինչ առաջ մտադրվում է գնալ Երուսաղեմ, սակայն նախքան մեկնելն, իր մորաքրոջ որդուն՝ Գրիգորին կամենում է ձեռնադրել եպիսկոպոս, «զի ինքն աներկբայ զառաջի եդեալ ճանապարհն վճարեսցէ»: Սակայն Կարմիր վանքին կից կառուցվող տան հեծանը վեր հանելիս պոկվում է շինարարների ձեռքից և պատճառ դառնում նրա մահվան: Պատահարից հետո դեռևս հինգ օր նա ողջ է մնում և հաստատում է Գրիգորին կաթողիկոսական իրավունք վերապահել[491]:

Հավատարիմ Պահլավունիների տան ավանդներին, Բարսեղն իր գիտակցական կյանքի ողջ ընթացքում ծավալեց հայրենամետ, ազգաշահ

---

[485] Վարդան, էջ 117:

[486] Մատթեոս Ուռհայեցի, էջ 324:

[487] Տես Վարդան, էջ 117, Մատթեոս Ուռհայեցի, էջ 324:

[488] Մատթեոս Ուռհայեցի, էջ 324: Վասիլ Պահլավունին կնության առավ Լամբրոնի իշխան Հեթումի դուստր Մարեմիկին (Մարիամին) Պալեռոնի տեր Սմբատի քրոջը (տես Ղ.Ալիշան, Հայապատում, էջ 414, G. Dedeyan, Les Armeniens entre Grecs, Musulmans et Croises, vol. II, p. 689, 1233):

[489] Մատթեոս Ուռհայեցի, էջ 324:

[490] Նույն տեղում, էջ 329, Սմբատ, էջ 141-142:

[491] Վարդան Արևելցի, էջ 116:

գործունեություն: Նա էականորեն արդյունավորեց Հայոց եկեղեցական կյանքը, կոփեց հայրենի հավատքը և վերջ տվեց կաթողիկոսական իշխանության տարանջատվածությանը, բացառելով առանձնացված հայրապետական աթոռների գոյությունը: Սակայն անժամանակ մահը կտրեց մեծաջան այդ կաթողիկոսի բեղմնավոր կյանքի թելը: Նրա մահվանից հետո, 1113թ., Աղթամարի Դավիթ Եպիսկոպոսը պատրվակ բռնելով Բարսեղի հաջորդի Գրիգոր Պահլավունու պատանեհասակ լինելը (նա 15 տարեկան էր), իրեն հռչակեց կաթողիկոս[492]:

[492] Նույն տեղում:

Գլուխ չորրորդ

Գրիգոր III Պահլավունին Հայոց կաթողիկոս

Գրիգոր II Վկայասեր Պահլավունու կտակով 1113թ. նրա քեռորդի Գրիգորը Օովք դղյակի տեր Ապիրատի որդին ընտրվեց Հայոց կաթողիկոս: Նա այդ ժամանակ հազիվ էր բոլորել իր 15 տարին: Սամուել Անեցին նշում է, որ Գրիգորը Հայոց հայրապետի գահին բազմեց «տղայ հասակաւ ժե»[493]: Նույն մատենագրի հավաստմամբ Գրիգոր III-ը «յաղագս աստուածընկալ և հոգիընկալ շնորհի ընկալելոյ և սրբական և մաքրափայլ վարուցն պատուեալ փառաւորութեամբ ոչ միայն ի մերազնեայ արանց՝ այլև յօտարաւսեռ քագաւորաց և յիշխանաց.մանաւանդ ի հռոմայեցւոց թագաւորացն և պատրիարգացն»[494]:

Գրիգոր III-ը,-գրում է Մատթեոս Ուռհայեցին,-«էր յազգէ Գրիգորոյ Մագիստրոսին որդւոյ Վասակայ Պահլաւունւոյ» (Գրիգոր III-ը Գրիգոր Մագիստրոսի դստեր թոռն էր): Նույն մատենագրի վկայությամբ Գրիգոր III-ը կաթողիկոս է ընտրվել Կարմիր վանքում գումարված ժողովում: «Զկնի մահուանն Տեառն Բարսեղի,- գրում է Ուռհայեցին,- եղև ժողով եպիսկոպոսաց և հարանց Կարմիր վանքն մերձ ի Քեսուն գաւառ և հրամանաւ Հոգւոյն ձեռնադրեցին զՏէր Գրիգորիս եպիսկոպոս ի վերայ ամենայն Տանն Հայոց. և ի նմին աւուր տան զձեռնադրութիւն կաթողիկոսութեան ի վերայ աթոռոյ սրբոյն Գրիգորի. և նստաւ ի հայրապետական աթոռն մինչ էր ի տղայութեան հասակին, վասն զի չև ևս էր լեալ սկիզբն մօրուացն. և էր բարձրահասակ և գեղեցկատեսիլ և բարուքն յոյժ խոնարհ»[495]:

Պահլավունիների տան ազդեցությունը մեծ էր ոչ միայն Հայոց բնաշխարհում այլև հայկական հոծ միջավայր ունեցող այն շրջաններում, որոնք Հայաստանից դուրս էին: Ուստի Գրիգոր III Պահլավունու հայրապետությունն առարկություն չհարուցեց ո՛չ Քեսուն գավառում, և ո՛չ էլ Կիլիկյան բարձունքներում արդեն (1080 թվից) հաստատված Ռուբինյան իշխանությունում: Նրա հայրապետությունը չվիճարկեցին նաև արևելահայ եկեղեցականները: Սակայն Վասպուրականի Դավիթ եպիսկոպոսը, պատրվակելով Գրիգոր III-ի դեռահաս տարիքը, ինչպես նշվել է, 1113թ.

---

[493] Սամուել Անեցի, էջ 124: Տես նաև Սմբատ Սպարապետ, էջ 142:
[494] Սամուել Անեցի, էջ 122:
[495] Մատթեոս Ուռհայեցի, էջ 329-330:

իրեն հռչակեց կաթողիկոս, հայտարարելով, որ «աթոռ է սա թագաւորացն Արծրունեաց և վայել է լինել և պատրիարգ»[496]:

Աղթամարի ինքնահռչակ կաթողիկոսին ճանաչեցին միայն Սյունիքի ու Արտազի հովվապետերը, որոնք սակայն մեկ տարի հետո «դարձան...ի հնազանդութիւն մեծ աթոռոյն և Աղթամար մնաց յիւրում ապստամբութիւն»[497],- վկայում է Սամուել Անեցին: Աղթամարի կաթողիկոսը փորձեց «ընծայիւք և աղաչանօք» իր կողմը գրավել Անիի և արևելահայոց մյուս հոգևոր հայրերին, սակայն կտրուկորեն մերժվեց նրանց կողմից, «մանաւանդ»,- վկայում է Վարդան Արևելցին,- ի յԱնւոյ գլխաւորացն. որոց գրէ մեծ շնորհակալութիւն օրհնութեամբ պատրիարգն Գրիգորիս ամենայն վանորէիւք Սեաւ լերինն, և շրջակայ եպիսկոպոսացն ձեռագրով»[498]:

Այնուամենայնիվ հակաթոռ կաթողիկոսի գոյությամբ Հայ եկեղեցին վերստին մասնատվեց: Ուստի Հայոց հոգևոր առաջնորդները ժողով գումարեցին Կարմիր վանքում և դատապարտեցին Դավիթ կաթողիկոսի պառակտիչ ուղեգիծը[499]:

Սակայն հազիվ էր բոլորել Գրիգոր III Պահլավունու հովվապետության երկու տարին, երբ Ուռհայի կոմս Բալդվինը պատերազմ սանձազերծեց Գող Վասիլին հաջորդած Վասիլ իշխանի դեմ և 1115թ. նենգությամբ կալանեց նրան: Ապա «գազանաբար ի խոշտանգանս արկանէր զայրն քաջ և զիզօր պատերազմող և բռնութեամբ առեալ ի նմանէ զամենայն գաւառն և խափանեաց զիշխանութիւնն Հայոց յայնմ աշխարհէն»[500], գրում է Ուռհայեցին: 1117թ. Բալդվինը իր դաշնակից Գալարան (Կալարան) կոմսի զորակցությամբ հարձակվեց նաև Ապլղարիպ իշխանի տիրույթների վրա: Վերջինիս Վարդան Արևելցին հիշում է որպես Հայոց իշխան, որդի Վասակի, եղբայր Լիկոսի, «որ էին տէրք հազար զօրականի, որ յառաջ ունէին զԹլպաշարն և զՊիրն, առեալ ի Թուրքաց մեծաւ քաջութեամբ»[501]: Բալդվինը, գրում է Ուռհայեցին, «զօրաժողով արար և գնաց ի վերայ Պիրին և ի հոգս առեալ զքրիստոնեայսն առաւել քան զթուրքն և զտարի մի ի խսար արկեալ զիշխանն Հայոց զԱպլղարիպն չարաչար և ազգի ազգի նեղութեամբ. և յայնժամ առ վտանգին և առ վշտացն անճարեալ լինէր Ապլղարիպն և տայր զՊիրն և զամենայն գաւառն ի Պաղտոյինն, և ինքն գնաց առ իշխանն Հայոց առ Թորոս Ռուբենայ որդին յԱնաւարզայ: Եւ կոմսն տայր զՊիրն և զամենայն գաւառն ի Կալարան իշխանն

---

496 Վարդան Արևելցի, էջ 116:
497 Սամուել Անեցի, էջ 124:
498 Վարդան, էջ 116:
499 Տես Ներսէս Շնորհալի, Թուղթ ընդհանրական, Վենետիկ, 1871, էջ 49:
500 Մատթեոս Ուռհայեցի, էջ 337:
501 Վարդան, Կէ, էջ 117-118: Հմմտ. նաև Սմբատ Սպարապետ, էջ 133:

Փոանգաց»[502]: Այս Ապլղարիպը համարվել է 1078թ. հույների կողմից եղբոր Լիկոսի հետ սպանված Վասակի Անտիոքի իշխանի որդի[503], որն ինչպես նշվել է, Գրիգոր Մագիստրոսի որդին էր: Անանուն Եդեսացին հետևյալն է հաղորդում Ապլղարիպի մասին. «Պիր կոչվող անառիկ ամրոցին տիրում էր մի հայ Ապլղարիպ անունով: Ուռհայի տեր Բաղդուինը իր ազգականներից մեկի Գալերան անունով փառահեղ պատանու և բազում ֆրանկ զինվորների հետ եկավ պաշարեց այդ ամրոցը: Պաշարումը երկար տևեց, քանի որ այն հնարավոր չէր կռվով գրավել, այլ միայն շրջափակումով: Երբ, ինչպես ասացինք, պաշարումը երկարաձգվեց, Ապլղարիպը նեղն ընկավ, որովհետև տեսավ, որ օգնության հասնող չկա: Ապա նա հանձնեց ամրոցը Բաղդուինին պայմանով, որ Գալերանը կնության առնի իր դստերը: Ամրոցը դարձավ նրա աղջկա օժիտը, և այսպես Պիրը հանձնվեց ֆրանկների ձեռքը»[504]:

Երբ Քեսուն քաղաքն (1115թ.) ընկավ խաչակիրների գերիշխանության տակ, զրկվելով մորական գծով Պահլավունի[505] Վասիլ իշխանի հովանավորությունից, Գրիգոր III Պահլավունին փորձեց իր աթոռը տեղափոխել Անի, որին թեև շարունակում էին տիրել Շադդադյան ամիրաները, սակայն իր հայահոծ բնակչությամբ, նվիրական հիշատակներով հայտնի այդ հռչակավոր քաղաքն իրավունք ուներ դառնալու Հայոց հայրապետության աթոռանիստը: Գրիգոր III Պահլավունին մոտ 1123թ. կարողացավ Անիի Աբուլ Ասվար Ամիրայից (որը 1110թ. հաջորդեց հորը՝ Մանուչեին) համաձայնություն կորզել կաթողիկոսական աթոռը Անի տեղափոխելու վերաբերյալ: Ըստ Սամուել Անեցու, «սրբազան հայրապետն և առաջնորդն հաւատոյ տէր Գրիգորիս, վասն զի ուխտ սիրոյ ունէր առ Ապլսուար վասն սեփական աթոռոյս գալ այսրէն նորա յօժար կամակցութեամբ»[506]: Աբուլ Ասվարը ջանում էր հայ բնակչությանը հեռու պահել հավատակից Վրաստանից: Սակայն նա հայերին խիստ դժգոհեցրեց, երբ Անիի Մայր տաճարը վերածեց մզկիթի և նրա գմբեթին բարձրացրեց իսլամի խորհրդանիշը համարվող մի մեծ մահիկ, կաթողիկոսին զրկելով այդ հոյաշուք տաճարը նախկինի պես հայրապետական գահանիստ

---

[502] Մատթեոս Ուռհայեցի, էջ 338:

[503] Տես Г. Микаелян, ук. соч., с. 79, Ն. Ակինեան, նշվ. աշխ., էջ 26:

[504] Անանուն Եդեսացի, էջ 56:

[505] Տես Մատթեոս Ուռհայեցի, էջ 324:

[506] Սամուել Անեցի, էջ 127: Սամուել Անեցին ժամանակակից էր այս իրադարձություններին: Նրա ժամանակագրության հովանավորողն ու պատվիրատուն Գրիգոր III-ն էր (տես այս մասին. Կ. Մաթևոսյան, Սամուել Անեցու «ժամանակագրության» ավարտման թվականը և պատվիրատուն (Պատմաբանաս. հանդես, 1992, N 1, էջ 158-159):

ռարձնելու հնարավորությունից: Ամիրայի այդ քայլից դժգոհած անեցիները 1124թ. դիմեցին վրաց թագավոր Դավիթ Բագրատունի Շինարարին, հրավիրելով գալ և գրավել Անին, որի դարպասները նրանք բացեցին վրաց զորքի առջև: Աբուլ Ասվար ամիրան գերի տարվեց Վրաստան, որտեղ և վախճանվեց[507]: Երկու տարի հետո Անիին տիրացավ Աբուլ Ասվարի որդի Փատլունը, ընդունելով վրաց թագավորի գերակայությունը: Դավիթ Շինարարին հաջորդած Դեմետրե թագավորի (ծնված հայ կնոջից) օրով Անիի Փատլուն ամիրան ու եղբայրներն «արարին սաստիկ երդումն, վասն զի սուրբ Կաթուղիկէն[508], որ էր յԱնի, հանապազ Հայոց կայցէ և մի մտցէ ի նա Տաճիկ և այլ մսլիման ազգ»[509]:

Սակայն Աբուլ Ասվարի որդիները դրժեցին Հայոց կաթողիկոսին իրենց հոր տված խոստումը: Փատլուն ամիրան հույժ անբարյացակամ վերաբերմունք ցուցաբերեց հայերի նկատմամբ: Նա, ինչպես հաղորդվում է Սամուել Անեցու ժամանակագրության մեջ, դիմում էր զանազան միջոցների, որպեսզի վրիժահատույց լինի հայերի հանդեպ, անշուշտ նրանց անկախ դիրքավորման, աճող ազդեցության պատճառով: Հայերին հետին դիրքեր մղելու նպատակադրումով Փատլունը ծանրացրեց հարկերը, ջանալով տնտեսապես թուլացնել նրանց: Ժամանակակից մատենագիրը վկայում է, որ այդ ամիրայի կողմից իրականացրած «հարկապահանջ յափշտակութեանց» պատճառով «եհաս ի վերայ մեր վերջին աղքատութիւն և տառապանք անհնարինք...»[510]:

Ստեղծված պայմաններում Գրիգոր III-ն «առաւել զայրացաւ տրտմագին ցասմամբ առ գործողս իրին»[511], և կաթողիկոսական գահաթոռն Անի տեղափոխելու հնարավորությունը գրեթե իսպառ բացառվեց:

Հայոց կաթողիկոսի գահանիստի աստանդական կացության պայմաններում Պահլավունի հայրապետները կարողացան պահպանել Հայոց ընդհանրական Աթոռի վարկն ու նվիրապետական համակարգը, Հայ եկեղեցին ձերբազերծվեց կազմալուծումից: Պահպանվեցին թեմակալների կանոնական իրավունքները: Դավանական տարաձայնությունների պայմաններում Քաղկեդոնական եկեղեցին ի զորու չեղավ թյուրել Հայոց եկեղեցու առաքելաշնորհ իրավունքները:

---

[507] Տես Վարդան, էջ 119, Մատթեոս Ուռհայեցի, էջ 359, Լ.Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները..., Ա, էջ 218:
[508] Նկատի ունի Անիի Մայր տաճարը:
[509] Մատթեոս Ուռհայեցի, էջ 365:
[510] Սամուել Անեցի, էջ 127: Այս մասին տես Հ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Երևան, 1980, էջ 90-97:
[511] Ս. Անեցի, էջ 127:

1139թ. Հայոց Աղվանքից Գրիգոր III Պահլավունուն «Թուղթ մաղթանաց» են հղում հայտնի օրենսգետ Դավիթը Ալավկա որդին և ուրիշ հոգևոր այրեր, խնդրելով եպիսկոպոս ուղարկել Աղվանք՝ նրա հովվապետին ձեռնադրել տալու համար: Գրիգոր III-ի հրամանով Կարինի եպիսկոպոս Սահակը մեկնեց Աղվանք և իրականացրեց նրա առաջնորդի (կաթողիկոսի) ձեռնադրումը[512]:

Թեև Հայոց կաթողիկոսի նստավայրը Կիլիկիայի Հայոց իշխանության կազմում չէր, սակայն Գրիգոր III-ը վայելում էր Ռուբինյան իշխանների հովանավորությունը: Վերջիններիս համար ճակատագրական եղավ 1137 թվականը, երբ Բյուզանդիայի Հովհաննես Կոմնենոս կայսրը գրավեց Կիլիկիան, գերի տանելով Լևոն I Ռուբինյանին: Սամուել Անեցին այդ անցքը դնում է 1132թ.[513], մինչդեռ այն տեղի է ունեցել ավելի ուշ 1137թ.[514]:

Փաստորեն Կիլիկիայի Հայոց իշխանությունը ժամանակավորապես վերացվեց, որով Հայոց կաթողիկոսությունը զրկվեց քաղաքական հենարանից: Կիլիկիայի հանդեպ նման վերաբերմունքն է՛լ ավելի խորացրեց հայ-բյուզանդական տարաձայնությունները, ուստի Գրիգոր III հայրապետը կողմնորոշվեց դեպի խաչակիր իշխանությունները, որոնք (հատկապես Անտիոքի դքսությունը) ջանում էին սիրաշահել հայերին, որպեսզի ձեռք բերեն նրանց զորակցությունը թշնամիների դեմ հնարավոր բախումների դեպքում: Գրիգոր III-ը և Ներսես Շնորհալին կողմ էին եկեղեցիների միությանը[515]: 1141թ. խաչակիր հոգևորականների կողմից Անտիոքում գումարված եկեղեցաժողովին հրավիրվեցին նաև Գրիգոր III-ը և Ներսես Շնորհալին: Այդ ժողովի միջոցով ավելի սերտացան Հայ և Լատին եկեղեցիների միջև եղած առնչությունները: Գրիգոր III-ը Իննոկենտիոս II պապից ստացավ «Սիրո գիր» և ընծաներ, հրավիրվեց Երուսաղեմում նրա գումարած եկեղեցաժողովին, որտեղ առաջին անգամ արծարծվեցին Հայ և Լատին եկեղեցիների ծիսադավանական խնդիրները: Ժողովում Գրիգոր III-ը պաշտպանեց Հայոց դավանանքը, ծիսակարգը և, իհարկե, Հայ եկեղեցու կանոնական իրավազորությունը: Երուսաղեմում,- գրում է Սամուել Անեցին,- «ծանուցեալ և իմացեալ զառատաւհոս ծաւալումն աստուածային շնորհին ի վերայ հայրապետին (Գրիգոր III-ի-Վ.Վ.), ազգն

---

[512] Տես Կիրակոս Գանձակեցի, էջ 199-200:

[513] Տես Սամուել Անեցի, էջ 130:

[514] Տես այս մասին Ա. Բոզոյան, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը, Երևան, 1988, էջ 117-119:

[515] G. Dédéyan, Le role complémentaire des frères Pahlawuni Grigor III, catolicos, et saint Nerses Snorhali, coadjuteur, dans le rapprochement avec les latins, a l' epoque de la chute d' Edesse (v. 1139-v. 1150). REA. t. XXIII, 1992.

Հռոմայեցւոց իշխողքն աշխարհաց, որք Ֆռանկք կոչին և ընդ վայելչագեաց և պատշաճագեղ տեսիլ մարմնոյն, ծանեան և զհոգւոյն գեղեցկութիւն և ի բանսն հաւատոյ զճշմարտութիւն ամենեիմբ զոր պայծառ և կանոնական կարգաւ և քանոնով վարդապետական ճոխութեամբ բարբառէր: Ուրախացան հաճելութեամբ և առաւել սէր հաստատեցին ընդ հայրապետին և ընդ ազգս մեր...»[516]:

Գրիգոր III կաթողիկոսը հույս ուներ խաչակիրների օգնությամբ վերականգնել Կիլիկիայի Հայոց իշխանությունը: 1145թ. նա պատգամավորություն առաքեց Հռոմի Եվգենիոս III պապի մոտ՝ ակնկալելով, որ նրա օգնությամբ հնարավոր կլինի վերականգնել Ռուբինյան իշխանությունը[517]: Բայց պապը չկարողացավ որևէ շոշափելի օգնություն ցուցաբերել կիլիկահայերին:

Սակայն կիլիկահայերը Լևոն I-ի քաջակորով որդու Թորոսի գլխավորությամբ վերականգնեցին (1145թ.) Ռուբինյան իշխանությունը:

Ստեղծված պայմաններում, երբ թյուրք-սելջուկյան ամիրայությունները (Արտուխյանների, Դանիշմանյանների) խիստ նեղում էին խաչակիրներին և հայերին, վերարծարծվեց Տրդատ III թագավորի և Հռոմի կայսր Կոստանդին Մեծի միջև կնքված դաշինքի գաղափարը, որը տեղ է գտել Ագաթանգեղոսի երկում[518]: Կիրակոս Գանձակեցու հավաստմամբ Գրիգոր III կաթողիկոսի օրոք «զհին դաշինսն Տրդատայ և սրբոյն Գրիգորի և Կոստանդիանոսի կայսեր և Սեղբեստրոսի հայրապետին վերստին նորոգեսցին»[519]: Դաշինքի գաղափարը վերահառնեց ի դեմս «Դաշանց թուղթ» հորջորջմամբ անվավեր գրվածքի[520], որի համաձայն, հայերի հավատակից ֆրանկներն արշավելու են Արևելք, ազատագրելու են Քրիստոսի գերեզմանը, նաև Արևելքի բոլոր քրիստոնյաներին մահմեդականների մարմնավոր լծից[521]:

Միքայել Ասորու վկայությամբ հույները, ֆրանկներն ու հայերը դաշնակցում էին միմյանց ընդդեմ թյուրք-սելջուկների[522]:

---

[516] Սամուել Անեցի, էջ 123:

[517] Կղեմես Գալանոս, Միաբանութիւն Հայոց Սուրբ Եկեղեցւոյն ընդ մեծի Սուրբ Եկեղեցւոյն Հռոմայ, Հռոմ, 1690, էջ 235: Տես նաև Մ. Օրմանեան, Ա, սյունակ 1601-1604: Ցավոք, հայ մատենագիրները ոչինչ չեն հաղորդում այս պատգամավորության մասին:

[518] Ագաթանգեղոս, էջ 462:

[519] Կիրակոս Գանձակեցի, էջ 118:

[520] Տես Հր. Բարթիկյան, «Դաշանց թուղթ. կազմը, ստեղծման ժամանակը, հեղինակն ու նպատակը («Պատմաբանաս. հանդես», 2004թ. N 2):

[521] Սամուել Անեցի, էջ 120, Գ.Յովսէփեանց, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, էջ 693 և այլն:

[522] Տես Michel le Syrien, Chronique, t. III, p. 297.

Գլուխ հինգերորդ

Ծովքի Պահլավունիները

1125թ. Գրիգոր III-ը կաթողիկոսարանը տեղափոխեց Վասիլ Պահլավունու իշխանանիստ Ծովք (Ծով) դղյակ, որն ընկած էր «յերկրին Անտիոքայ, ի գաւառին Տլքոյ»[523]: Վերջինս մտնում էր Եդեսիայի կոմսության կազմի մեջ: Վասիլ Պահլավունին որոշ կախվածություն ուներ Եդեսիայի կոմսերից: Ծովք անունով դղյակ է հիշվում նաև Ծոփքի Անձիտ գավառում[524]:

Տլուք գավառն ընկած էր Կիլիկիայի հարավ-արևելքում: Տակավին 1098թ. այն ընդգրկվել էր Արևելքում խաչակիրների ստեղծած առաջին պետության՝ Եդեսիայի կոմսության կազմի մեջ, իսկ հետագայում, վերջինիս բարձումից հետո՝ ենթարկվել Անտիոքի դքսությանը: Ուստի հայ մատենագիրները XIIդ. այն տեղադրում են «երկիրն Անտիոքայ» անունով վարչա-աշխարհագրական միավորի տարածքում: Բայց XII դ. սկզբներին չպետք է այն դիտել որպես Անտիոքի դքսության մաս[525]: Ծովքն այդպիսին դարձավ XII դ. երկրորդ կեսին: Ըստ Ուռհայեցու, 1161թ. Անտիոքի դուքս Ռենալդը ժամանում է «յերկիրն Տլքոյ» և Ծով դղյակ[526]:

Ականատեսի հավաստմամբ, Ծովք անունն են կրում Տավրոսյան լեռնաշղթայի ստորոտում, Բերդուս քաղաքից մոտ 20 կմ հարավ-արևելք ընկած երեք փոքր լճերը (այստեղից՝ «Ծովք» հոգնակի անվանաձևը): Ծովքի լճերը երկայնքով ձգվում են մոտ 10, լայնքով՝ 5 կմ: Ջրերը վճիտ են, քաղցրահամ, սառնորակ, լի ձկներով[527]: Ծովքի արևմուտքում էր Ծով դղյակը: Այս փոքրիկ բերդի մասին ականատեսը գրում է. «Հյուսիսէն ու արևմուտքէն ձորակներով անջատուած և անտառներով ծածկուած, հարաւէն լիճերու՝ Ծովքի ջուրը միացած Ագսու գետին հետ ոլորապտույտ կը հոսի բերդին ստորոտը քերելով»[528]:

Հայ մատենագրության մեջ Ծովքի և Ծով դղյակի մասին առաջինը հիշատակում է Ներսես Շնորհալին, 1112թ. դղյակի մատույցներում իր

---

523 Սոփերք հայկականք, ԺԴ, Վենետիկ, 1854, էջ 464:
524 Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 36-56-107:
525 Բ. Կիլէսէրեան, Ծովք. Ծովք-Տլուք և Հռոմ-կլայ, Վիեննա, 1904, էջ 13:
526 Մատթէոս Ուռհայեցի, էջ 427:
527 Յ. Տէր-Ղազարեան, նշվ. աշխ., 41:
528 Նույն տեղում, էջ 98:

հոր սպանության առնչությամբ[529]: Շնորհալին հորը՝ Ապիրատ Պահլավունուն հիշում է որպես Գրիգոր Մագիստրոսի թոռ[530] (դուստրերից մեկի գծով), հետևաբար, Ապիրատ իշխանի մայրը Մագիստրոսի դուստրն էր, որի անունը, ցավոք, չի պահպանվել: Ն. Ակինյանի կարծիքով[531] այս դստեր ամուսինն էր Ապլջահապը, որին հիշում է Մատթեոս Ուռհայեցին: Սակայն Ուռհայեցու մոտ (և ոչ էլ որևէ այլ աղբյուրում) չի նշված, որ Ապլջահապը Մագիստրոսի փեսան էր: Մատենագիրը վկայում է, որ «Ապիրատ ոմն, որ էր մեծ իշխան Հայոց, որդի Հասանայ», ծառանալով Հովհաննես-Սմբատ թագավորի դեմ, 12 հազար զորականների հետ փախավ Դվին քաղաք, Ապուսուար Ամիրայի մոտ: Վերջինս ինչպես նշվել է, դավադիր կերպով սպանել տվեց Ապիրատին, որի կինն ու զավակները հեռացան Անի: Հովհաննես-Սմբատ թագավորը Ապիրատի որդիներ Ապլջահապին ու Վասակին տվեց «գաւառս և զիշխանութիւնս»[532]: Ն. Ակինյանի հետևողությամբ Ապլջահապին Գրիգոր Մագիստրոսի փեսա են համարում նաև ուրիշ ուսումնասիրողներ[533]: Ենթադրվում է, որ երբ Գրիգոր Մագիստրոսը 1045թ. տեղափոխվեց Միջագետք, «իրեն հետ առաւ փեսան Ապլջահապ եւ զետեղեց Ցովք ամրոցին մէջ»[534]: Սակայն Անձիտ գավառում գտնվող Ցովքը և առավել ևս Տլուքի Ցովքը Գրիգոր Մագիստրոսի իշխանության մեջ չէին: Վերջինս Գագիկ II թագավորին հղած թղթում նշում է իրեն ենթակա շրջանները, իրեն հորջորջելով «Վասպուրականի և Տարօնոյ և Մանազկերտի, Արճիշոյ, Բերկրոյ, Միջագետաց տէր....»[535]: Եթե անգամ ընդունենք, որ Ապլջահապն իրոք Մագիստրոսի փեսան էր, ապա ինչու վերջինիս նա չպետք է ամրոց նվիրեր իր իշխանության ոլորտում:

Ընդունելի չէ նաև այն կարծիքը, որ իբր Մագիստրոսը փեսային է շնորհել Անձիտի Ցովք դղյակը, որի իշխան Ապիրատի սպանությունից հետո նրա որդիները՝ Գրիգոր III կաթողիկոսը և Ներսես Շնորհալին տեղափոխվում են Տլուք և Գող Վասիլ իշխանի հովանավորությամբ հիմնադրում նոր դղյակ և, «ի նշան իրենց հայրենիքի, այն կոչվում Ցովք»[536]:

Ներսես Շնորհալին իր հոր՝ Ապիրատի մասին գրում է.

---

529 Ներսես Շնորհալի, Վիպասանութիւն, էջ 131:

530 Նույն տեղում, էջ բ128-129:

531 Ն. Ակինեան, նշվ. աշխ., էջ 31:

532 Մատթեոս Ուռհայեցի, էջ 10-11:

533 Տես՝ Յ. Տէր-Ղազարեան, նշվ. աշխ., էջ 91, G. Dedeyan, Les Armeniens entre Grecs, Musulmans et Croises, vol. 2, p. 1245-1246.

534 Ն. Ակինեան, նշվ. աշխ., էջ 31:

535 Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 213:

536 Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ.II, Երևան, 1988, էջ 863:

Զպահլաւունին ազգաւ սերեալ,
Զհարազատ տերանցն եղեալ,
Աստուածային շնորհօք լցեալ
Եւ երկիւղիւն զարդարեալ,
Գեղապաճոյճ անձն երևեալ,
Իշխանութեամբ շքեղացեալ,
Զնախնական անուն առեալ,
Որ Ապիրատն էր յորջորջեալ,
Թոռն մեծի Գրիգորի լեալ,
Որ Մագիստրոս մականուանեալ,
Զայս տունկ բարի արմատացեալ
Իսմայելեան հողմոյն խլեալ,
Որք ըստ մեղաց մերոց շարժեալ,
Արմատախիլ զՀայք արարեալ:
Յարևելեան կողմանց սկսեալ
Մինչ յարևմուտս ժամանեալ,
Որոյ առ մեզ եկեալ հասեալ
Եւ զամրականն պաշարեալ[537]:

Հայտնի է Ապիրատ Պահլավունու կողակցի անունը՝ Վանեն, որին հիշում է Շնորհալու պատվերով 1173թ. Եվդոկիայում Ավետարանն ընդօրինակող գրիչը: Վերջինիս թողած հիշատակարանում նշված են Ներսես Շնորհալու և եղբոր՝ Գրիգոր III կաթողիկոսի հարազատները՝ «եղբայրն զԱպիրատ եւ զքոյր նոցա Մարիամ յայրութեան եւ ի սրբութեան վախճանեալ... եւ զմայրն նոցա Վանեն ընդ նոսին և զբարեհոգի մայր պսակաւորիս զՄարեմիկ դուստր Հեթմոյ Սեւաստաւսի»[538]:

Ներսես Շնորհալին 1151թ. շարադրած «Բան հաւատոյ» դավանաբանական պոեմի հիշատակարանում նախ նշում է եղբոր՝ Գրիգոր III կաթողիկոսի անունը, ապա հիշում մյուս եղբայրներ Վասիլին, Զորավարին և քրոջը՝ Մարիամին[539]: Եղբայրներին ու քրոջը Շնորհալին հիշում է նաև «Վիպասանութիւն» պատմական պոեմում, նշելով, որ Գրիգոր III կաթողիկոսն իր եղբայրներին՝

Յիշխանական գահ յառաջեալ.
Վասիլ անուն վեհ երևալ
Եւ Զօրավար համապատուեալ,
Եւ Մարիամ քոյր անուանեալ...[540]

---

[537] Ներսէս Շնորհալի, Վիպասանութիւն, էջ 128-129:
[538] Գ. Յովսէփեանց, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 458:
[539] Ներսէս Շնորհալի, Բանք չափաւ, Վենետիկ, 1928, էջ 244:
[540] Ներսէս Շնորհալի, Վիպասանութիւն, էջ 136:

Շնորհալին նրանց հիշատակում է նաև «Հիսուս որդի» հավատապատում-պոեմում՝ շարադրված 1152թ.:

Նախ վեհագոյ տեառնըն մեծի,
Ապա Վասլին վեհ իշխանի,
Զօրավարին բարձրագունի
Եւ ծնեալ նոցունցըն զաւակի
Եւ բովանդակ ազգատոհմի...
Եւ Մարեմայ ճըգնաւորի,
Քեռ ըստ մարմնոյ մեր պանծալի
Եւ Վահրամայ իւր զաւակի
Հանգուցելոյն առ Քրիստոսի...[541]

Վերը նշված տվյալներից երևում է, որ Ապիրատ Պահլավունու զավակներն են՝ Վասիլը, Գրիգոր III կաթողիկոսը, Ներսես Շնորհալին, Զորավարը և Մարիամը, որը տրվել է ճգնակեցության, հավանաբար, վաղամեռիկ որդու պատճառով:

Ապիրատ Պահլավունին և որդիները Ծովքին տիրում էին որպես հայրենատեր իշխաններ: Ներսես Շնորհալին «Բան հավատոյ» պոեմի հիշատակարանում եղբոր՝ Գրիգոր III կաթողիկոսի մասին գրում է.

Ի Ծով անուն դղեկէն ելեալ,
Զոր սեփհական ինքեան շինեալ...[542]

Ապիրատ Պահլավունին կարողացավ պահպանել Ծովքի փոքրաթիր իշխանությունը, դիմագրավելով սելջուկ-թյուրքական ցեղերի հարձակումներին: Ծովք ամրոցի պաշտպանները 1112թ. Ապիրատի գլխավորությամբ հերոսաբար դիմակայում և հետ են շպրտում ամրոցը պաշարած հրոսակներին, սակայն մարտն ավարտվելուց հետո դարանամուտ թյուրքը մահացու վիրավորում է նրան թունավոր նետով, որից փոքր-ինչ հետո Ապիրատը վախճանվում է, «եւ ի շիրիմ հարցն ամփոփեալ»,-գրում է Ներսես Շնորհալին[543]: Այս վկայությունից երևում է, որ մինչև Ապիրատը Ծովքի գերեզմանոցում ամփոփվել են նաև նրա տոհմակիցները: Վերջիններս 1045թ. հետո թյուրք-սելջուկյան ցեղախմբերի հարձակումներից խուսափելով հեռացել են Ամանոսի լեռներ, հաստատվելով Ծով դղյակում, որը 1080-ական թթ. կեսերից ընդգրկվել է Գող Վասիլի իշխանության կազմի մեջ և հովանավորվել նրա կողմից: Ըստ Մատթեոս Ուռհայեցու, այդ իշխանության մեջ հավաքվել էին «մնացեալ զօրքն Հայոց և ամենայն ազգն Բագրատունեացն և Պահլաւունեացն և որդիք թագաւո-

---

[541] Ներսէս Շնորհալի, Յիսուս Որդի, աշխ. Վ. Ղազարյանի, Երևան, 1991, էջ 220, 222:
[542] Յ. Թօփճեան, Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, Վենետիկ, 1962, էջ 23:
[543] Ներսէս Շնորհալի, Վիպասանութիւն, էջ 129-132:

ռացն Հայոց, և ամենայն ազգն Պահլաւունեացն հանդերձ ազատագունդ զօրօքն Հայոց առ նա կային հանգուցեալ մեծաւ փառաւորութեամբ. և Աթոռ հայրապետութեանն Հայոց առ նա եդաւ»[544]:

Ապիրատ Պահլավունուց հետո 1112-ից Ծովքին իշխում է նրա ավագ որդին՝ Վասիլը, որի մանկահասակ եղբայրներ Գրիգորը (հետագայում կաթողիկոս) և Ներսեսը (Շնորհալին) դրվեցին Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի խնամքի տակ: Վասիլը կնության առավ Լամբրոնի իշխան Հեթումի դստերը: Հեթումին հաջորդած Օշինին Վասիլն ամուսնացրեց իր եղբոր՝ Զորավարի դստեր հետ[545]: Ներսես Շնորհալին «Ի Սողոմոն արքայն» քերթվածում հիշում է.

Գովեալ Վասիլ իշխան առոյգ,
Եւ Զօրավար ընտրեալ ի կարգ[546]:

Զորավարը 1201թ. գրած հիշատակարանում կոչված է «մեծ սեւաստոս»[547], ինչը վկայություն է նրա բյուզանդական տիտղոս կրելու մասին: Մ. Չամչյանը Զորավարին հիշում է Շահան անունով, «զորավար»-ը դիտելով նրա մականուն[548]: Ըստ երևույթին նա ելնում է այն փաստից, որ Զորավարի դուստրը կրում էր Շահանդուխտ անունը, որը նա մեկնել է «Շահանի դուստր» և ըստ այդմ նրա հորն անվանել Շահան: Մինչդեռ «Շահանդուխտ» նշանակում է «թագավորների դուստր»[549]:

Վասիլ Պահլավունին ընդլայնեց Ծովքի իշխանության սահմանները, մոտ 1136թ. նրա մեջ ընդգրկելով նաև Կարկառ և Քեսուն բերդաքաղաքները, Հիսն-Մանսուրը՝ Սամոսատի հյուսիս-արևմուտքում[550]:

Կարկառն ընկած էր Եփրատի աջ ափին, աշխարհագրական հարմարավետ վայրում, Հայոց (Վերին) Միջագետքի սահմանամերձ գոտում: Տակավին 1060-ական թթ. այն դարձավ Միջագետքում հաստատված հայկական իշխանության կենտրոն: Նրա տերն էր «Ուռհայոյ տուկն, որոյ անուն ասէին Դաւատանոս, այր քաջ և հզօր ի պատերազմի և անուանի ի վերայ երկրի և նորա զօրաժողով արարեալ զՈւռհա և զԿարկառ և

---

[544]Մատթեոս Ուռհայեցի, էջ 323-324: Ինչպես նշվել է, Ուռհայեցին Գող Վասիլի որդեգիր և նրա իշխանությունը ժառանգած Վասիլին («Տղա» մականվանյալին) հիշում է որպես «մայրենեօք յազգէ Կամսարական» (տես նույն տեղում, էջ 324): Հավանաբար, Գող Վասիլը նույնպես Կամսարականների ժառանգն էր:
[545] Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 226:
[546] Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, էջ 392:
[547] Գ. Յովսէփեանց, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, էջ 691:
[548] Միք. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 18:
[549] Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երևան, 1948, էջ 106:
[550] R. Grousset, Histoire des Croisades et du Rojaume Franc de Jerusalem, t. II, Paris, 1935, p. 291.

զՀարսնմսուր և խաղայր զօրօք ի վերայ Տաճկաց...»[551]: Ուռհայի (Եդեսիայի) բնակչության ճնշող մեծամասնությունը հայեր էին[552]: Եդեսիայի իշխանության Թլպաշար (Թիլբաշիր) բերդաքաղաքը Պահլավունիների սեփական տիրույթն էր:

XI դ. վերջերից Կարկառի տերերը կախման մեջ ընկան Եդեսիայի կոմսերից: Այդ բերդաքաղաքի տեր Կոստանդինը զորակցում էր ֆրանկներին: Ըստ Անանուն Եդեսացու, 1100-ական թթ. «Կարկառի հայերը հնազանդվել էին ֆրանկներին»[553]: Վերջիններից Կոստանդինի կախվածության մասին վկայում է նաև Միքայել Ասորին[554]: Կոստանդինի տոհմական ծագման մասին աղբյուրները ոչինչ չեն հաղորդում: Նա համարվել է Սամիկոնյան[555]: Գուցե Կոստանդինը սերում էր Պահլավունիներից, որոնք հավանաբար այդտեղ են հաստատվել Գրիգոր Մագիստրոսի՝ Միջագետքի, Վասպուրականի և հարակից շրջանների կառավարչության տարիներին:

Եդեսիայի կոմսության մեջ ընդգրկվեց նաև Բիր (Պիր) քաղաքը (Պիրեճիկ), որը գտնվում էր Եփրատի գետանցի վրա: 1087թ. Ապլղարիպ Պահլավունին՝ Անտիոքի դուքս Վասակի որդին կարողացավ թյուրքերից գրավել այդ քաղաքը, դարձնելով իր իշխանության նստոցը: Նրա իրավունքները հետագայում ճանաչեցին Եդեսիայի կոմսերը: Սակայն, ինչպես նշվել է, 1117թ. Եդեսիայի կոմս Բալդվինը և իր վասալը՝ Սրուճ բերդաքաղաքի տեր Կալարանը հարձակվեցին Բիրի իշխանության վրա:Գրեթե մեկ տարի Բիրը ենթարկվեց նրանց հարձակումներին, որից ստիպված Ապլղարիպ Պահլավունին Բիրը «և զամենայն գաւառն» զիջեց Բալդվինին, հեռանալով Կիլիկիա՝ Թորոս իշխանի մոտ[556]: Նույն թվականին Բալդվինը վերջ տվեց նաև Կարկառի իշխան Կոստանդինի կյանքին[557]: Վերջինիս որդին՝ Միքայելը 1122թ. ստիպված կարկառը հանձնեց Բալդվինին: Այս մասին հիշատակում է Միքայել Ասորին, գրելով. «Միքայել հայը, որ գտնվում էր Կարկառում, տեսնելով, որ թյուրքերն իշխում են, Կարկառը հանձնեց (Բալդվին) թագավորին և դրա դիմաց նա առավ իր երկրում ընկած մի տեղ: Թագավորն ընդունեց Կարկառը և այնտեղ տեղակայեց կայազոր»[558]: Ըստ Անանուն Եդեսացու, Միքայելը Բալդվինին հանձ-

---

551 Մատթեոս Ուռհայեցի, էջ 142:

552 J. Laurent, Des Grecs aux Croisés. Étude sur l' histoire d'Edesse entre 1071 et 1098 («Etudes d' histoire arménienne», Louvain, 1971, p. 125).

553 Անանուն Եդեսացի, էջ 46:

554 Michel le Syrien, Chronique, t. III, p. 210.

555 Տես G. Dédéyan, Les Arméniens..., t. II, p. 1211.

556 Մատթեոս Ուռհայեցի, էջ 337-338, Վարդան Արևելցի, էջ 117-118:

557 Մատթեոս Ուռհայեցի, էջ 338:

558 Michel le Syrien, III, p. 210.

նելով Կարկառը, իրեն է, պահել Տլուք գավառը[559]: 1123թ. թուրքմենների Արտուխյան ամիրա Պալակը գրավեց Կարկառը[560], ապա վերջինիս տիրացավ Դանիշմանյան տոհմից Ղազի ամիրան[561]: Սակայն 1124թ. Միքայելը վերագրավեց այն[562]:

Այդպիսով Միքայելը պահպանել է Տլուք գավառի նկատմամբ իր իշխանությունը: Այդ գավառում էր նաև Ծովքը: Թե վերջինս և թե Տլուք գավառն ամբողջությամբ ընկած լինելով Եդեսիայի կոմսության տարածքում, կախվածության մեջ էին նրա տիրոջից[563]: 1125թ. Գրիգոր III կաթողիկոսը Եդեսիայի կոմսից 60 հազար դահեկանով գնում է Ծովքը՝ 15 գյուղերի հետ միասին[564], դառնալով դրանց սեփականատեր: Իսկ Վասիլ Պահլավունին Եդեսիայի կոմս Ջոսլինից 500 դինարով գնում է Կարկառը, սակայն ինչ-ինչ պատճառներով հակասություններ են ծագում Վասիլի և ֆրանկների միջև[565]: Հավանաբար Վասիլն ու եղբայրը՝ Զորավարը դրանից դրդված[566], հեռանում են Կահիրե, իրենց հորեղբոր՝ Եգիպտոսի լիազոր վեզիր Վահրամ Պահլավունու մոտ:

Եգիպտոսի Ղպտիական եկեղեցու քաղկեդոնամերժ դիրքավորման շնորհիվ այդ երկիրը դեպի իրեն էր ձգում հայերին: Եգիպտոսի շիա դավանությամբ Ֆաթիմյան խալիֆաները ինչպես նշվեց, հանդուրժող էին քրիստոնյաների հանդեպ[567]: Սիկիլիայի նորմանացի թագավոր Ռոջեր II-ին (1130-1154) Եգիպտոսի խալիֆա Հաֆիզի հղած երկրորդ նամակում վեզիր Վահրամ Պահլավունու օգնականներ են հիշվում Վասիլ (Basile) և Զորավար (Zarqa) եղբայրները[568]: Ինչպես նշվել է, Վահրամ Պահլավունին Եգիպտոս է ժամանել 1073-թվին[569]: Վասիլն ու Զորավարը հավանաբար Եգիպտոս են գնացել Վահրամի վեզիրության ժամանակ՝ 1135թ. և, ամենայն հավանականությամբ, Վահրամի պաշտոնանկության տարում՝ 1137թ. վերադարձել են Կարկառ, որն ըստ Միքայել Ասորու, 1148թ. Վասիլ

---

559 Սնանուն Եդեսացի, էջ 63:
560 Մատթեոս Ուռհայեցի, էջ 353:
561 Michel le Syrien, III, p. 219.
562 Մատթեոս Ուռհայեցի, էջ 359:
563 G. Dedeyan, les Armeniens..., t. II, p. 1253.
564 Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, էջ 161:
565 Michel le Syrien, Chronique, III, p. 244.
566 Հմմտ. G. Dedeyan, les Armeniens, II, p. 1231.
567 S. Dadojan, The Fatimid Armenians, p. 81, 97-98.
568 M. Canard, Un vizir chretien a l'epoque Fatimide: l' Arménien Bahram («Annales de l' Institut d' Etudes Orientales», t. XII, Alger, 1954, p. 109).
569 M. Canard, Notes sur les Arméniens en Egipte, a l' epoque Fatimide («Annales de l' institut d' Etudes Orientales», t. XII, Alger, 1955, p. 153).

Պահլավունու իշխանության տակ էր, բայց նույն թվին այն հարձակման է ենթարկվել Արտուխյան Կարա Արսլան ամիրայի զորքի կողմից: Կարկառի բնակիչներն ստիպված հեռացել և ապաստանել են Ս. Բարձումա անունով վանքում[570], որը Կարկառից հեռու չէր: Այն ասորի միաբնակների առաջնորդի նստավայրն էր:

Իր վերջալույսն ապրող Եդեսիայի կոմսությունը չկարողացավ որևէ օգնություն ցույց տալ ծնականորեն իրենից դեռևս կախյալ Կարկառին: Եդեսիայի գրավումից հետո այդ կոմսությունը, կաթվածահար վիճակում, դեռևս հինգ տարի գոյատևեց մերձեփրատյան շրջաններում, ենթարկվելով Արտուխյանների և Իկոնիայի սուլթանության հարձակումներին: 1149թ. Իկոնիայի սուլթան Մասուդը գրավեց Եդեսիայի կոմսության վերջին հենակետերից մեկը՝ Մարաշ քաղաքը, ասպատակներ սփռեց Թլպաշարի գավառում, սրածեց, գերեվարեց նրա բնակիչներին, սակայն չկարողացավ գրավել Թլպաշար բերդաքաղաքը: Մ. Չամչյանը գրում է, որ Վասիլ Պահլավունին Զոսլինի կնոջից տեղեկանալով Թլպաշարի պաշարման մասին, «էառ զզօրս իւր հանդերձ եղբարբ իւրով Շահանաւ՝ որ Զօրավար կոչիւր, և փութանակի գնաց յօգնութիւն ծոսլինոյ: Եւ մերձ լեալ ի քաղաքն երկոքին եղբարք կորովիք, և տեսալ զբազմութիւն զօրաց թշնամեացն՝ յանկարծակի անկան ի վերայ և արարին մեծամեծ քաջութիւնս. մինչև զարմացուցանել զիշխան նոցա»[571]:

Ըստ Մատթեոս Ուռհայեցու շարունակողի, 1149թ. Եդեսիայի կոմս Զոսլինն իր զորայինների հետ Կարկառ է ուղարկում «բարի ու մեծահաւատ իշխանին Վասլին, որ էր եղբայր կաթողիկոսին և տէր Կարկռայ», որպեսզի պարենամթերք հասցնեն բերդաքաղաքում պաշարված յուրայիններին[572]: Սակայն թշնամին կանխավ տեղեկանալով այդ մասին, Խլիճ-Արսլան ամիրայի գլխավորությամբ հարձակվում է նրանց վրա, գերի վերցնում Վասիլին ու նրա հետ եղած 400 զորականների, ապա նրանց տանում է Կարկառի բերդի առջև, «քանզի անդ էին կին և որդիք Վասլին»[573]: Ըստ Սմբատ Սպարապետի, «Վասիլն, եղբայրն տէր Գրիգորի, իշխանն Հայոց, կամեցաւ հաց տանել ի Կառկառ ի պետս բերդին, և առեալ զմնացեալ զօրս ծոսլինն օգնական արսն (400) և իբրեւ մերձ եղեն ի Կառկառ, Խլիճ Ասլանն տէրն Հանձթայ, անկեալ ի վերայ ձերբակալ արար զամենեսեան և առեալ գնաց առաջի բերդին և խնդրեաց զբերդն»[574]:

---

570 Michel le Syrien, III, p. 290-291.

571 Միք. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, հ.Գ, էջ 71:

572 Մատթեոս Ուռհայեցի, էջ 396:

573 Նույն տեղում:

574 Սմբատ Սպարապետ, էջ 167:

Այդպիսով Վասիլը Կարկառ է մեկնել ոչ թե Զոսլինի հանձնարարությամբ, այլ սեփական նախաձեռնությամբ: Ինչևէ, Կարկառում պաշարված Վասիլի կինը և զավակները կարողանում են երդում կորզել իրենց անվտանգության վերաբերյալ և հանձնում են բերդը, իսկ նրա բնակիչներն ուղարկվում են Սամոսատ քաղաք: Վասիլն ու իր ընտանիքը նույնպես տեղափոխվում են այդ քաղաք, և ամիրան քաղաքին հարող գավառում նրանց ի տիրություն է տալիս «երկիր»[575]: Նույնն է հավաստում նաև Սմբատ Սպարապետը[576]: «Երկիր»-ի տակ պատմագիրները նկատի ունեն բնակության համար հատկացված շրջաններ: Ըստ Միքայել Ասորու, թյուրք ամիրան «Վասիլին, որը նրան էր հանձնել Կարկառը, տվեց Աբդահարը և Կամահա երկիրը»[577], որն անշուշտ Սամոսատի գավառում էր: Այս շրջաններն ընկած էին Վերին (Հայոց) Միջագետքում, Սամոսատի (Շիմշատի) գավառում, որին նույնպես տիրացել էին Արտուխյան ամիրաները: Վերջիններիս կողմից Վասիլ Պահլավունուն հողեր շնորհելը նպատակ էր հետապնդում մասնատել քրիստոնյաների ուժերը, թուլացնել դեռևս գոյատևող Եդեսիայի կոմսությունը և վերջին ու վճռական հարվածը հասցնել նրան:

Հաջորդ տարի՝ 1150թ. Մասուդ սուլթանը, Արտուխյանների հետ ունեցած պայմանավորվածությամբ, հարձակվեց Եդեսիայի կոմսության վերջին հենավայրերի վրա, առաջին հարվածն ուղղելով Քեսուն բերդաքաղաքին: Նա գրավեց ոչ միայն Քեսունը, այլև Բեհեսնին, Ռապանը, որից հետո «գնաց յերկիրն Թլպաշարայ, զոր յանցեալ ամին քակեալ և աւերեալ էր», բայց այս անգամ նույնպես չկարողացավ գրավել այն[578]: 1151թ. Հալեպի Նուրադդին ամիրան դարան նյութելով, գերեց Եդեսիայի վերջին կոմս Զոսլին II-ին, որը Եդեսիայի գրավումից հետո հաստատվել էր Քեսունում, իսկ վերջինիս անկումից հետո՝ անցել մերձեփրատյան ուրիշ շրջաններ: Նույն ժամանակ այդ ամիրան կարողացավ գրավել Թլպաշարը, Տլուքը, Մարաշը և Եդեսիայի կոմսության ուրիշ բնակավայրեր[579]: Իսկ Մարդինի Արտուխյան ամիրան տիրացավ Պահլավունիների երբեմնի տիրույթ Բիր քաղաքին, որով իսկ մահմեդականների համակցված հարվածների տակ վերացվեց Եդեսիայի կոմսությունը:

Սակայն պաշտպանական տեսակետից անառիկ թվացող Ծովք դղյակում ևս Հայոց հովվապետն իրեն ապահով չէր զգում: Շուրջ-բոլորը վխտացող թյուրքական ցեղերն ալեկոծում էին նաև Ծովքի անդորրը: Ուստի Գրիգոր Պահլավունին և նրա հետ կղզում ապաստանած մյուս հոգևո-

---

575 Մատթեոս Ուռհայեցի, էջ 397:
576 Տես Սմբատ Սպարապետ, էջ 167:
577 Michel le Syrien, III, p. 294-295.
578 Մատթեոս Ուռհայեցի, էջ 398, տես նաև Սմբատ Սպարապետ, էջ 167-168:
579 Տես Իբն ալ-Ասիր, էջ 256-257:

ռականները Ծովքում նույնպես չգտան ցանկալի պաշտպանություն օտար հրոսակներից: Նա, ինչպես հաղորդում է Կիրակոս պատմիչը, Ծովքում «նեղեցաւ ի սկիւթականացն և ի տաճկաց այսր անդր յածելով»[580]:

Ստեղծված պայմաններում, 1147 թվականին Գրիգոր III-ը հարկադրված եղավ կաթողիկոսարանի սրբություններն ու Ս. Նշան վանքի սպասքները տեղափոխել Եփրատի ափին, Ծովքի հյուսիս-արևելյան կողմում գտնվող Հռոմկլա բերդաքաղաքի ամրոց, որը պատկանում էր Ֆրանկ իշխանի: Վերջինիս բարեպաշտ տիկնոջը Բեատրիսին Գրիգորը պահ տվեց իր սրբություններն ու սպասքները[581]:

Ողբերգական ընթացք ունեցավ Զոսլին II-ի հետագա ճակատագիրը: Գերվելով Հալեպի ամիրայի թյուրքական զորայինների կողմից, նա կուրացվեց և վախճանվեց գերության մեջ[582]: Ըստ Կիրակոս Գանձակեցու, Գրիգոր III-ը Զոսլին II-ի այրուց խնդրում է Հռոմկլա ամրոցը հանձնել իրեն, «զի լիցի նա աթոռ կաթողիկոսութեան Հայոց: Եւ կինն էտ յօժարութեամբ»: Ապա Գրիգոր III-ը Բեատրիսին ուղարկում է Կիլիկիայի իշխան Թորոսի մոտ, որը նրան շնորհում է «գիւղս և ագարակս և այլ կալուածս, և ուրախ արար զկինն յոյժ և ապա առաքեաց զնա յաշխարհն իւր»[583]: Այդպիսով 1150թ. Զոսլին II-ի այրին՝ Բեատրիսը Եփրատի ափին գտնվող Հռոմկլա ամրոցը հանձնում է Գրիգոր III Պահլավունի կաթողիկոսին, որն այն դարձնում է իր գահանիստը[584]: Կաթողիկոսի այդ քայլի դրդապատճառ է համարվում ոչ միայն թյուրքական սպառնալիքը, այլև Աղթամարի հակաթոռ կաթողիկոսության ազդեցության թուլացումը: Եվ այդ նպատակադրումով Գրիգոր III-ն իր աթոռը «մի փոքր մոտեցրեց Մեծ Հայքին»[585]: Սակայն կաթողիկոսի բուն նպատակը իր աթոռի ապահովությունն էր, ինչը հարկավ նա գտավ Հռոմկլայում: Ստեղծված դժնդակ պայմաններն էին թելադրողը: Ծովքի վրա դամոկլյան սրի պես կախված էր դժնաբարք ու այլահավատ ցեղերի հարաժամյա սպառնալիքը: Գրիգոր կաթողիկոսը եղբոր՝ Ներսես Շնորհալու հետ,- գրում է հիշատակագիրը,-բնակվում էին «յերկրին Անտիոքայ՝ ի գաւառին Սղբոյ, ի փոքր դղեակն Ծով կոչեցեալ, և աղաւթէին առ տէր ապրեցուցանել զնոսա ի չարաթոյն այլասեռիցն և ի մարդադէմ գազանացն, որ և փրկեալք լինէին և ապրեալք որպէս ճնճղուկ յորոգայթէ որսողաց: Իսկ ապա տեսեալ զտկարութիւնն զաւրութեան մերասեռիցս երկեան դադարել ի դղեակն Ծով, քանզի ոչ ունէր այնքան ամ-

580 Կիրակոս Գանձակեցի, էջ 108:
581 Նույն տեղում, էջ 108-109:
582 Մատթեոս Ուռհայեցի, էջ 397, Անանուն Եդեսացի, էջ 117:
583 Կիրակոս Գանձակեցի, էջ 109:
584 Սմբատ Սպարապետ, էջ 168-169:
585 Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հ. Ա, Երևան, 2005, էջ 353-354:

րութիւն, որ եթէ կարաւղ գոլ փրկել զնոսա...»: Ուստի,-շարունակում է հիշատակագիրը,- Պահլավունիները տեղափոխվեցին «զանմատչելի ամրոցն Հռոմկլայ... ազգայնաւք և ամենայն զարմիւք և սպասաւորաւք և ամենայն լրմամբ Սրբոյ աթոռոյն խաղաղացան անդորրաբար ի կասկածանաց և յերկիւղէ չարաշշուկ բռնաւորացն: Եւ թէպէտ և այլ շուրջաբնակ գաւառքն առան յայլազգեաց մինչև ի մեծն Անտիոք, այլ նոքա անփորձ մնացին ամրութեան տեղւոյն աղագաւ...»[586]:

Մեկ այլ հիշատակագիր շեշտում է, որ Հռոմկլայի նախկին տերն, այդ ամրոցից «անցելեալ յահէ նեղչացն փախուցեալ ըզսա կամաւ սմին տուեալ լինիլ սեփականեալ»[587]: Այդպիսով Բեատրիսը Հռոմկլան անհատույց հանձնում է Գրիգոր III կաթողիկոսին: Սակայն որոշ ժամանակ հետո Բեատրիսի որդին Ջոսլին III-ը ժամանում է արդեն Հռոմկլայում իր աթոռը հաստատած Գրիգոր III-ի մոտ և ամրոցի դիմաց պահանջում 15 հազար դահեկան, ինչը վճարվում է, ապա գործարքը վավերացվում է Ջոսլին III-ի կողմից, իր իսկ ձեռքով գրված երդմնագրով, որը պահ է տրվում կաթողիկոսական դիվանում[588]:

Համաձայն Սմբատ Սպարապետի վկայության, երբ թյուրքերը գրավեցին Քեսունը, Գրիգոր III-ը և իր դասակիցները «ի Ծովք բերդն իւրեանց երկնչէին դադարել, ապա խորհեցան գնալ յարեւելս առ թագաւորն Վրաց. զի Անի ի ծեռս նորա էր, թերևս անդ գտանիցեն անդորրութիւն և տեղի ապաստանի անկասկած ի թշնամեաց»[589]: Անի մեկնելու ճանապարհին Գրիգոր III-ը Թլպաշար ամրոցում հանդիպում է Ջոսլին II-ի տիկնոջը Բեատրիսին, (որին տակավին 1147թ. պահ էր տվել Հայոց եկեղեցու սպասքները) և հաղորդում արևելք մեկնելու շարժառիթների մասին: Բարեպաշտ տիկինը նրան ետ է դարձնում «ի ճանապարհէն տալով նմա զանմատչելի բերդն Հռոմկլայն ի բնակութիւն»: Ուստի Գրիգոր III-ը հրաժարվում է Անի տեղափոխվելուց և վերադառնում է Ծովք, իսկ փոքր ինչ հետո եղբոր՝ Ներսես Շնորհալու հետ գնում և ամրանում է Հռոմկլա դղյակում: «Եւ,- շարունակում է պատմագիրը,- զկնի ժամանակաց ետուն ճոսլինն ԺԵՌ (15000) դահեկան ի գինն Հռոմկլային, իսկ կոմս ճոսլինն ետ Տէր

---

586 Գ. Յովսէփեանց, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 428-429:

587 Յ. Թօփճեան, Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, էջ 22:

588 Սմբատ Սպարապետ, էջ 169: Սմբատի Տարեգրքի 1859թ. փարիզյան հրատարակության մեջ նշված է, որ «երետ կինն պարոն ճոսլինին զՀռոմկլայն սուրբ կաթողիկոսին Տէր Գրիգորիսի, ձեռնագրով զի մնասցէ աթոռ հայրապետութեան Հայոց» (Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Փարիզ, 1859, էջ 95):

589 Սմբատ Սպարապետ Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 169:

Գրիգորիսի և Տէր Ներսեսի զգիր ձեռին իւրոյ զի Հռոմկլայն յաւիտեան մնասցէ աթոռ հայրապետացն Հայոց»[590]:

Վարդան Արևելցու վկայությամբ Հռոմկլան Գրիգոր III-ին է հանձնել Զոսլին II-ի այրին Բեատրիսը, որը «ոչ վստահանայր միայն բնակիլ ի մէջ այլազգեաց քանզի տիրեալ էր Թուրքն բոլոր շրջակայ գաւառացն և սեփհականեցաւ աթոռ Հայոց զոր բարեպաշտ կին Զոսլին իշխանին շարժեալ ի Հոգւոյ ետ յերկոսեան հարազատսն ի Տէր Գրիգոր և Ներսէս»[591]: Վերջիններս Զոսլին II-ի տիկնոջն ու որդուն Զոսլին III-ին վճարում են «ինչս յոլով»[592]:

---

[590] Նույն տեղում:
[591] Վարդան, էջ 128:
[592] Նույն տեղում, տես նաև Ստեփաննոս Օրբելեան, էջ 443:

Գլուխ վեցերորդ

Պահլավունիները Հռոմկլայում

1150 թվականից Հռոմկլա անառիկ դղյակը դարձավ Հայոց կաթողիկոսանիստը և Պահլավունի տոհմի շառավիղների հանգրվանը: Գրիգոր III կաթողիկոսը իր աթոռը չտեղափոխեց Կիլիկիայի հայկական իշխանություն, քանի որ այնտեղ ևս դրությունը բարդ էր Բյուզանդիայի և Իկոնիայի սելջուկյան սուլթանության հարուցած սպառնալիքի պատճառով: Այդուամենայնիվ Հռոմկլայում հաստատված Պահլավունի հայրապետները իրենց հոգևոր իշխանությունը գործադրում էին նաև Կիլիկիայի Հայկական պետությունում, ինչպես նաև Մեծ Հայքում: Ստեփաննոս Օրբելյանը գրում է, որ Հռոմկլան «էր գահ հայրապետացն և աթոռ կաթողիկոսացն Հայոց: Յորում կային անպատմելի սրբութիւնք և նշխարք առաքելական»[593]:

Գրիգոր III-ը և մյուս Պահլավունիները Հռոմկլա ամրոցին տիրում էին որպես անկախ ավատիշխաններ: Գրիգոր III-ն այնտեղ հիմնում է հրաշազան հորինվածքով գմբեթավոր եկեղեցի[594]: Հռոմկլան իր անմատույց դիրքով ուներ պաշտպանական մեծ հնարավորություններ և հիմնականում զերծ էր մնում օտար ցեղերի շահատակություններից:

Ստեղծված իրավիճակում Վասիլ Պահլավունի իշխանը և եղբայրը՝ Զորավարը հավանաբար գերադասել են տեղափոխվել Հռոմկլա: Հիշատակագրի վերը նշված հաղորդումը Հռոմկլա Գրիգոր III-ի տեղափոխվելու մասին («ազգայնաւք և ամենայն զարմիւք») թույլ է տալիս կարծելու, որ վերջիններիս մեջ եղել են նաև Վասիլի ու եղբոր գերդաստանները: Վասիլ Պահլավունու դուստրերից մեկն ամուսնացած էր Կիլիկիայի Մլեհ իշխանի (1169-1175) հետ: Անանուն Եդեսացին գրում է, որ երբ Մլեհն սպանվեց, և իշխանության գլուխ անցավ Ռուբենը, Գրիգոր IV կաթողիկոսը ժամանեց Կիլիկիա և վերցնելով քրոջը բերեց Հռոմկլա[595]: Բացի Գրիգոր IV կաթողիկոսից, Վասիլի և Մարեմիկի զավակներ են հիշվում Սարգիս քահանան, «զԱպիրատն քաջ և զՀասան կորովին, զՎահրամն խոհեմն և զՎասակ հեզն, զՀեթում պատանի և մանուկ գեղեցիկ, որ ի քսանամենից մինչև ի տիս երիտասարդութեան վախճանեալ... Եւ զԴ կուսանսն բարեհոգիք քորք սոցին»[596]: Ըստ այդմ Վասիլն ունեցել է յոթ

---

[593] Ստեփաննոս Օրբելեան, էջ 443:
[594] Տես Կիրակոս Գանձակեցի, էջ 111:
[595] Անանուն Եդեսացի, էջ 135:
[596] Գ. Յովսէփեանց, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 458:

ուստր և չորս դուստր: Դուստրերից մեկը՝ Վանինեն կնության տրվեց Սասունի իշխան Զորտվանելին (Վիգենի որդուն), որի զավակներ են հիշվում Վասիլը, Շահնշահը և Թոռնիկը[597]: Վասիլի և Մարեմիկի երրորդ դստեր մասին հայտնի է միայն, որ նա Գրիգոր V Քարավեժ կաթողիկոսի (1193-1194) մայրն էր[598]: Վասիլի մյուս զավակների մասին տեղեկություններ չկան:

Վասիլի եղբոր՝ Զորավարի որդիներ են հիշվում Գրիգոր VI կաթողիկոսը (Ապիրատ կրկնանունով, 1194-1203), «Մեծ իշխան պարոն Միքայելը», որը Ծովային Կիլիկիայի Բերդկան (Բերդիկ) ամրոցի տերն էր: Նա մասնակցեց Լևոն II-ի թագադրման շքահանդեսին (1198թ. Տարսոնում)[599]: Զորավարի մյուս որդի Վասիլը 1201թ. հիշվում է «պարոն» պատվանունով, որպես Սողոմոնի առակներն ընդօրինակել տվող[600]: Զորավարի դուստրեր են հիշվում Թագուհին և Շահանդուխտը: Թագուհուն կնության առավ Պապեռոն բերդի տեր Բակուրանը: Թագուհու եղբայրը՝ Գրիգոր VI կաթողիկոսը 1194թ. փեսային նվիրած Ավետարանի հիշատակագրում խնդրում է նախ հիշել «զբարեպաշտ իշխանն՝ զմեծ սեւաստիաւսն զԲակուրան... ընդ նմին և քրիստոսասէր ամուսինն իւր զԹագուհի՝ զոր ըստ մարմնոյ քոյր իմ»[601]:Բակուրանը ևս մասնակցեց 1198թ. Լևոն II-ի թագադրման շքահանդեսին[602]:

Զորավարի մյուս դուստրը՝ Շահանդուխտը ինչպես նշվեց, կնության տրվեց Լամբրոնի իշխան Օշինին: Շահանդուխտի որդու՝ Ներսես Լամբրոնացու միջոցով մայրն ընդունեց կրոնական կոչում և մտավ վանք: 1190թ. Սկևռայի վանքում ընդօրինակված ձեռագրում հիշվում է Շահանդուխտը՝ «ամենաբարի և ճգնազգեաց, այժմ կրաւնաւորեալ ի ձեռաց որդոյ իւրոյ... երկու դստերաւք Շուշանաւ և Տալիթիւ, որք նորին ճգնող շաւղացն հետեւին...»: Իսկ մոտ 1198թ. օրինակված ձեռագրի գրիչը իր թողած հիշատակարանում խնդրում է հիշել Ներսես Լամբրոնացուն (ձեռագրի ստացողին) «և զաստուածասէր մայր իւր՝ տիկնաց տիկին՝ Շահանդուխտ կոչեցեալ, և զհարազատս իւր...»[603]:

Շահանդուխտի եկեղեցանպաստ գործունեության մասին վկայում է 1190թ. մոտերքը ընդօրինակված «Վարք սրբոց»-ի գրիչը՝ Լամբրոնի իշ-

---

597 Նույն տեղում, էջ 400:

598 Սմբատ Սպարապետ, էջ 204:

599 Տես Սմբատ, էջ 210, Գ. Յովսէփեանց, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, էջ 583:

600 Բ. Սարգիսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ.Ա, 1914, էջ 168:

601 Գ. Յովսէփեանց, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 583:

602 Սմբատ Սպարապետ, էջ 210:

603 Գ. Յովսէփեանց, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 540, 627:

խանների ծագմանը նվիրված բաժնում, նշելով, որ Օշինը կառուցում է կաթողիկե մեծ եկեղեցի՝ Ս. Փրկիչ անունով (իր իշխանանիստ Լամբրոն բերդաքաղաքում) և «բազմացոյց ի սմա եղբայրութիւնս, և հանապազ խնամս տանէր առ սոսա հանդերձ բարեզարդ զուգակցաւն իւրով՝ տիկնաց տիկին Շահանդուխտիւ»[604]:

Վասիլ և Զորավար Պահլավունիների մահվան թվականները հայտնի չեն: Ենթադրվում է, որ Վասիլը պետք է ողջ լիներ իր փեսայի՝ Մլեհի գահակալության տարում՝ 1169թ.[605]: Բայց այդ մասին հիշատակություն չկա աղբյուրներում: Անշուշտ, Մլեհի և Վասիլի դստեր ամուսնությունը կարող էր ավելի վաղ տեղի ունեցած լինել: Ցավոք, Վասիլի մահվան տարեթիվը չի նշված նաև նրա դամբանաքար-խաչքարի վրա փորագրված արձանագրության մեջ[606]:

Կաթողիկոսարանը Հռոմկլա տեղափոխելուց հետո Ծով դղյակը մնաց կանգուն, դիտվելով իբրեև վանական հաստատություն՝ «Ծովուց վանք»[607]: 1151թ. ընդօրինակված Ավետարանի վերջում նշվում է, որ այն գրվել է «յամրոցիս՝ որ կոչի Ծով, ընդ հովանեաւ Սրբոյ Աստուածածնիս և Սրբոյ Նշանիս»[608]: Գրիգոր Երեցը հաղորդում է, որ 1161թ. Անտիոքի դուքս Ռենալդը «իջանէր յերկիրն Տլքոյ եւ ի բերդն կաթողիկոսի, որ կոչի Ծով»[609]: Ծովքի վանական հաստատությունը դղյակով հանդերձ կանգուն էր նաև հետագա դարերում: Այսպես, 1478թ. օրինակված գանձարանի գրիչը նշում է, որ՝ «գրեցաւ սուրբ գանձարանս ի Ծովքս, ի դուռն Սուրբ Նշանիս...»[610]: Ականատեսի վկայությամբ XX դ. սկզբներին Ծով դղյակն ավերված էր՝ ծածկված ծառերով ու վայրի բույսերով[611]:

Վասիլ Պահլավունու որդի Գրիգորը ծնողների վախճանվելուց հետո որդեգրվեց Գրիգոր III հայրապետի կողմից, ժամանակակիցների ըմբռնմամբ դարձավ նրա որդին և այդ պատճառով ստացավ «Տղա» մականունը: Նկատենք նաև, որ Հռոմկլայում Գրիգոր III-ի հովանու ներքո էր գտնվում նաև իր եղբորորդի Ապիրատը Շահանի որդին հետագայում Գրիգոր VI կաթողիկոսը (1194-1203):

---

[604] Նույն տեղում, էջ 553:

[605] G. Dedeyan, les Armeniens..., t. II, p. 1244.

[606] Մինչև 1972թ. այդ խաչքարը մնում էր Հռոմկլայում, բայց նույն թվին տեղափոխվեց Բեյրութ (նույն տեղում, էջ 1245):

[607] Գ. Յովսէփեանց, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 357:

[608] Նույն տեղում, էջ 361:

[609] Մատթեոս Ուռհայեցի, էջ 427:

[610] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն II (1451-1480). կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1958, էջ 433:

[611] Յ. Տէր-Ղազարեան, Հայկական Կիլիկիա, էջ 98:

Գրիգոր III-ի օրոք Միջագետքում դեռևս իրենց զգալ էին տալիս թոնդրակյան աղանդավորները: Ըստ Ներսես Շնորհալու, Միջագետքում Թլկուրանի իշխանության մեջ ընդգրկված Ամայք և Շպղթան գավառներում բնավորված թոնդրակեցիների կողն էին հակվել նաև որոշ քահանաներ: Թլկուրանի իշխան Առյուծը դիմեց Գրիգոր III-ին, խնդրելով խրատական հրամաններ առաքել այդ քահանաներին[612]: Գրիգոր III-ը եղբորը Ներսեսին գրել տվեց հորդորալից նամակ ուղղված նշված գավառների թոնդրակյաններին, պահանջելով հրաժարվել իրենց մոլորաշավիղ գաղափարներից:[613] Նամակում հանգամանորեն քննարկվում էին աղանդավորների հերձամիտ գաղափարները և աստվածաբանական փաստարկումներով հերքվում նրանց սկզբունքները, հիմնավորվում էին եկեղեցու խորհուրդները, ծեսերը, պաշտպանվում էր խաչի պաշտամունքը և ապա խստիվ պահանջվում էր հրաժարվել իրենց մոլորություններից[614]:

Գրիգոր III-ի ջանքերով հնարավոր եղավ Ռուբինյանների հետ հաշտեցնել Լամբրոնի տեր Օշինին (Հեթումի որդուն)՝ Օշին գանձակեցու թոռանը: Տակավին 1070-ական թթ. սելջուկ-թյուրքերի ճնշման տակ Օշին իշխանն ստիպված հեռացել էր Ուտիքի իր տիրույթներից՝ «ի ժառանգութենէ իւրմէ որ կոչի Մայրեաց ջուրք հանդերձ Գանձակայ... եւ եկեալ յաշխարհն Կիլիկեցւոց... էառ ի Տաճկաց և զականաւոր բերդն Լամբրոն»[615]: Ընդհուպ մինչև 1160-ական թթ. Օշինյաններն ունեին բյուզանդամետ դիրքորոշում, ինչը հույժ թուլացնում էր Ռուբինյանների դիրքերը Կիլիկիայում: Օշինյանները զորակցում էին կայսրությանը Ռուբինյանների դեմ նրա մղած պատերազմներում: Սակայն 1152թ. Կիլիկիայի Թորոս իշխանի դեմ բյուզանդացիների ձեռնարկած հարձակման ժամանակ (երբ Օշինյանները զորակցում էին հույներին) Մանուել կայսեր զորքը չարաչար պարտություն կրեց: Ստեղծված պայմաններում Օշինյանները հարկադրված էին փոխել իրենց դիրքորոշումը Ռուբինյանների նկատմամբ, հատկապես այն պատճառով, որ նույն ժամանակ Կիլիկիայի Թորոս Ռուբինյան իշխանը պաշարեց նրանց Լամբրոն անառիկ ամրոցը[616]: Լամբրոնի իշխան Օշինն ամուսնացած էր Գրիգոր III Պահլավունու եղբայր Զորավարի դուստր Շահանդուխտի հետ, ինչը կարող էր դյուրացնել Գրիգոր III-ի

---

[612] Տես Ներսէս Շնորհալի, Ընդհանրական թուղթ, էջ 241-242:

[613] Տես նույն տեղում, էջ 269:

[614] Տես նույն տեղում, էջ 241-288:

[615] Սամուել Անեցի, էջ 117: Իրականում Լամբրոնը հարակից գավառով Օշինին էր հանձնել նրա աներ Ապլղարիբ Արծրունին, որը 1021թ. գաղթել էր Վասպուրականից և 1040թ. Կոստանդին Մոնոմախից ստացել էր Լամբրոնը, Ադանան, Մսիսը և այլն (տես Վարդան, էջ 106, տես նաև Г. Микаелян, ук. соч., с. 70):

[616] Г. Микаелян, ук. соч., с. 113.

կողմից ձեռնարկվող բանակցությունները Լամբրոնի տերերի հետ: Վերջիններիս և Կիլիկիայի իշխանի (Լևոն I-ի որդու) հաշտեցման առաքելության հաջողության դեպքում Կիլիկիայում հայկական մյուս (Լամբրոնի) իշխանությունը միավորվելու էր Ռուբինյանների իշխանության հետ, էականորեն զորակցելով նրան: Կիլիկիայի Հայկական պետության հզորացումն անշուշտ, նպաստելու էր նաև Հայոց եկեղեցու ազդեցության մեծացմանը:

1164թ. Գրիգոր III Պահլավունի կաթողիկոսը եղբորը՝ Ներսես եպիսկոպոսին (Շնորհալուն) ուղարկեց Լամբրոն, նրա տերերի հետ համաձայնության եզրեր գտնելու հույսով: Ներսեսին հաջողվեց հաշտեցնել կողմերին[617], որի շնորհիվ Օշինն ընդունեց Ռուբինյանների գերակայությունը: Ներսես Շնորհալու հաջող առաքելությունը պայմանավորված էր նաև այն իրողությամբ, որ Պահլավունիները խնամիացած էին ոչ միայն Ռուբինյանների, այլև Օշինի գերդաստանի հետ: Ինչպես նշվեց, Օշինի կինը Գրիգոր III-ի եղբոր դուստրն էր, իսկ Հեթումյան Թորոս իշխանի դուստրը կնության էր տրվել Գրիգոր III-ի մյուս եղբորը:

Պահլավունի հովվապետները փայփայում էին այն հույսը, որ Լամբրոնի իշխանի և Թորոս իշխանի միջև հաշտություն ձեռք բերելու պարագայում հնարավոր կդառնար միավորել կիլիկահայությանը, նրան դարձնել պետականորեն առավել կենսունակ և հաստատուն երաշխիքներ ստեղծել նրա հավաքական գոյապահպանման, Կիլիկիայի հայկական պետականության զորացման համար: Նրանք երազում էին նաև այդ կերպ հուսալի և ապահով հանգրվան ստեղծել իրենց աթոռի համար:

Երկու տարի հետո՝ 1166թ. Գրիգոր III-ը կնքեց իր մահկանացուն:

* * *

Գրիգոր III-ին հաջորդեց նրա կրտսեր եղբայր Ներսես Շնորհալին Գրիգոր Մագիստրոսի շնորհասուն թոռնորդին, ծնված մոտ 1100թ. Ծովք դղյակում: Ներսեսը նախնական կրթությունը ստացավ Շուղրի Կարմիր վանքում: Տակավին երիտասարդ Ներսեսը եղբոր Գրիգոր III-ի կողմից ձեռնադրվեց քահանա, ապա եպիսկոպոս, դառնալով կաթողիկոսի տեղապահն ու խորհրդատուն: Նա վաղ դրսևորեց իր հոգևոր տարերքը տաղերգուի, երաժշտի, երգահանի, եկեղեցաբանի և մատենագրի ծիրքը, անշեջ եռանդով ձեռնամուխ եղավ Հայոց եկեղեցու ծիսակարգը, ժամերգությունները բարեփոխելու շնորհակալ գործին: Կիրակոս Գանձակեցու հավաստմամբ, Գրիգոր III-ի հայրապետության տարիներին «էին վարդա-

[617] Ներսես Շնորհալի, Ընդհանրական թուղթ, էջ 86:

պետք անուանիք և իմաստունք Ներսէս սքանչելի, հարազատ նորուն կաթողիկոսի, և միւս Ներսէս եպիսկոպոս Լամբրոնեցի»[618]: Ըստ նույն պատմագրի, Շնորհալին «բազում ինչ կարգեաց... յեկեղեցիս քաղցր եղանակաւ խոսրովային ոճով շարականս, մեղեդիս, տաղս և ոտանաւորս... արար նա զքարոզ սրբոյ պատարագին քաղցր եղանակաւ, և տունս շարականաց նմին խորհրդաբար, և երկու գանձս ըստ գրոյ անուան իւրոյ մի «Վարդավառին» և մի «Փոխման աստուածածնին», որպէս Նարեկացին Գրիգոր»[619]:

Ներսես Շնորհալին հեղինակեց նաև պոեմներ, տաղեր, խրատներ, առակներ, աշխարհական կյանքն արտացոլող ժողովրդահաճո գործեր, որոնք կրում են իր ալեհույզ ժամանակի դրոշմը:Կիրակոս Գանձակեցին գրում է, որ «յամենայնի հանճարեղ էր Ներսէս, արար և առակս խորհրդաբարս ի գրոց, և հանելուկս, զի փոխանակ առասպելաց զայն ասասցեն ի գինարբուս և ի հարսանիս: Եւ էր ինքն հեզ ամենայնիւ և պարկեշտ, արժանաւոր այրն Աստուծոյ»[620]:

Դարակազմիկ նշանակություն ունեցավ Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական»[621] վերտառությամբ շրջաբերական նամակն՝ ուղղված հայ ժողովրդի բոլոր խավերին: Այն պարունակում է հեղինակի իրավական լուսախորհուրդ պատվիրանները, որոնք փաստորեն ունեին խրատական իրավանորմերի բովանդակություն: Դրանք բխում էին այն իրավիճակից, որի մեջ հայտնվել էր հայ ժողովուրդը հալածված թյուրք-սելջուկյան նվաճողների կողմից: Հայերը, ցավով նշում է Շնորհալին, եղել են ցանուցիր՝ «որք յարևելս ի սեփական աշխարհդ Հայաստանեայց բնակեալք, և որք յարևմտեան կողմանսդ սահեալք նժդեհութեամբ, և որք ի միջերկրեայս ի մէջ այլալեզու ազանց տարաբերեալք, և որք յիւրաքանչիւր յեզերս աշխարհաց ըստ մեղաց մերոց ցրուեալք ի քաղաքս և ի դղեակս, ի հիւղս և յագարակս...»[622]:

Շնորհալին շեշտում է նաև Հռոմկլայի Մայր Աթոռի մեկուսացված կացությունը, որի պատճառով ինքն ի վիճակի չէր ազատ շրջել ու քարոզել հայահոծ միջավայր ունեցող շրջաններում՝ «յաղագս ժամանակիս չարութեան և բազմիշխանութեան: Եվ քաղաք թագաւորական և բազմաժողով ոչ գոյ ազգի մերում, որպէս զի անդանօր նստելով յաթոռ հայրա-

---

[618] Կիրակոս Գանձակեցի, էջ 111:

[619] Նույն տեղում, էջ 119-120:

[620] Նույն տեղում, էջ 147:

[621] Օգտագործել ենք Վենետիկի 1871թ. և Երևանյան (1995թ.) հրատարակությունները:

[622] Ներսէս Շնորհալի, Թուղթ ընդհանրական, աշխ. է. Բաղդասարյանի, Երևան, 1995, էջ 53:

պետութեան և վարդապետութեան ուսուցանեաք ժողովրդեան մերոյ զաստուածային պատուիրանս... Այլ եմք իբրև զայծեամն յորսորդաց և ի շանց փախուցեալք՝ ի քարանձաւիս[623] յայս բնակելով»[624]: Նա նաև նշում է, որ Մայր Աթոռը զրկված է նյութական միջոցներից: Հռոմկլայում ապաստանած կաթողիկոսարանը զուրկ էր ապրուստի համար անհրաժեշտ կենսամիջոցներից «ի գիւղից, կամ յագարակաց, յորոց ունիմք և ոչ մի: Նաև ոչ անդաստան հողոյ, զի վաստակօք և աշխատութեամբ զայէտս մեր լնուաք, և ոչ օգնութիւն ուստեք»[625]:Եվ որովհետև,- գրում է Շնորհալին,- «մեք իբրև ի կամաւոր բանտէ և ի կապանաց յայսմ տօթագին քարանձաւի արգելեալք», ուստի ինքն ստիպված է գրավոր ձևով հաղորդակցվել իր հոտի հետ «որպէս բերանով ընդ ամենեսին»[626]:

Շնորհալու «Թուղթ ընդհանրականն» այդ խառնակ պայմաններում փոխարինեց նախկինում Հայոց եկեղեցաժողովների սահմանած կանոնական որոշումներին, իհարկե, մի էական վերապահությամբ, որ այն չուներ եկեղեցու սահմանած իրավանորմերին հատուկ պարտադիր բնույթը: «Թուղթ ընդհանրականի» հեղինակը գրում է, որ իր պատվիրանները կատարել «ոչ պահանջեմք յումեքէ», այլ «աղաչեմք ընկալարուք սիրով և յօժարութեամբ», որպես «հոգու համար օգտակար դեղեր»[627]: Տարամերժ ու շփոթ իրավիճակը եկեղեցուն թույլ չէր տալիս կանոնական նոր որոշումներ կայացնել: Թեև Շնորհալու և նրա հաջորդների օրոք գումարվեցին նոր եկեղեցաժողովներ, սակայն դրանցից Չագավանի 1270 թ. ժողովը նոր կանոններ ընդունեց[628]: Փաստորեն «Թուղթ ընդհանրականի» միջոցով Շնորհալին կարողացավ ստեղծել տարասփռված հայ ժողովրդի, հոգևորականության համար գործուն և օրինապատշաճ կանոնական պատվիրաններ, որոնք երկար ժամանակ գործադրվեցին Հայոց եկեղեցու կողմից, կարելիության շրջանակներում վերջինիս շուրջը համախմբելով ժողովրդի բոլոր խավերին:

«Թուղթ ընդհանրականի» առաջին բաժինն ուղղելով հոգևոր դասին, իբրև ժողովրդի առաջնորդի ու նախապատվելի խավի, Շնորհալին նրանց է դիմում հետևյալ խոսքերով՝ «Սիւնք էք աշխարհի և պարիսպ ընդդէմ թշնամւոյն՝ աղօթիւք ձեր և բարի վարուք. հրեշտակք ի մարմնի, և աս-

---

[623] Նկատի ունի Հռոմկլայի ամրոցը:

[624]Ներսէս Շնորհալի, Թուղթ ընդհանրական, էջ 60:

[625] Նույն տեղում:

[626] Նույն տեղում, էջ 62:

[627] Տես նույն տեղում, էջ 72:

[628] Տես Գ. Յովսէփեան, Չագավանից ժողովը («Շողակաթ», Վաղարշապատ, 1913):

տեղք լուսատուք յերկրի...»[629]: Նա կրոնավորներին պատվիրում է չհեռանալ իրենց դասակիցներից, առանձին չբնակվել, չզբաղվել անձնական շահստացությամբ: Շնորհալու ժամանակ կյանքի աշխարհականացման ազդեցությունից զերծ չեր նաև եկեղեցին, որի որոշ սպասավորներ չէին զլանում այգի մշակելուց, զանազան կենսապիտույքներ, դրամ վաստակելուց: Նրանք գերադասում էին ապրել ծոխ ու վայելուչ կենսակերպով և ոչ թե քարշ տալ միաբանի խղճուկ գոյությունը: Հոգևորականների այս բնույթի կանոնական մեղանչումները մեղմելու նպատակով Շնորհալին իբրև վերապահություն, կարգազանց եկեղեցականներին պատգամում է ստացած եկամուտների մի մասը բաշխել ընչազուրկներին: «Մեք,- գրում է նա,- ոչ դնեմք օրէնս այսպիսի կրօնաւորաց ամենևին ի բաց կալ ի տնկագործութենէ և յամենայն գոյից ստանալոյ», բայց, հավելում է նա,- «զպտղաբերացն ծերոց մասն տուք Աստուծոյ ի ծեռս աղքատաց և կարօտելոց»: Նա կոչ է անում մարմնական տքնությամբ սեփական հոգիների համար ամբարել գանձեր[630]: Շնորհալին վանականների իմաստությունն ու սրբակենցաղ վարքը համարում է նրանց զույգ աչքերը, որոնցից մեկի հիվանդության դեպքում նրանց իմաստությունն ու գործերը կլինեն պակասավոր ու թեական, ի հետևանս որի «բազում անկարգութիւնս մտանէ յեկեղեցի»[631]:

Եպիսկոպոսներին ուղղված խոսքում Շնորհալին հորդորում է լինել հեզաբարո և պարկեշտ, «հեզութեամբ և հանդարտութեամբ հովուել զժողովուրդս, որպէս հովիւք զհօտս, և ոչ ճոխութեամբ և սաստկութեամբ ըստ աշխարհի իշխանաց», և Հիսուսի պես հրաժարվել հպարտությունից, գոռոզությունից, լինել արդարադատ, զերծ մնալ բոլոր տեսակի ախտերից, լինել բարեսեր, սակավապետ և հյուրասեր, հեռու մնալ արծաթասիրությունից, որը մայրն է «ամենայն չարեաց»[632]: Եթե եպիսկոպոսները «ոչ իցեն վարժեալք վարդապետական բանիւ», պետք է իրենց մոտ ունենան աստվածաբանության մեջ խորագիտակ խորհրդատուների[633]: Դատապարտում է նրանց, ովքեր իրենց եպիսկոպոսական իշխանությունն ամրապնդելու համար, «վասն սնոտի փառացն» եկեղեցուց և ժողովրդից մաքսավորի պես կորզած հարստությամբ կաշառում են ամիրաներին, «աճեցուցանեն զկապալս ի վերայ եկեղեցւոյ...»[634]:

---

[629] Ներսէս Շնորհալի, Թուղթ ընդհանրական, էջ 74:
[630] Նույն տեղում, էջ 82-83:
[631] Նույն տեղում, էջ 96:
[632] Ներսէս Շնորհալի, Թուղթ ընդհանրական, էջ 105 և հտ:
[633] Տես նույն տեղում, էջ 113:
[634] Նույն տեղում, էջ 115:

Քահանաներին (որոնց աստիճանով երկրորդն է համարում եպիսկոպոսներից հետո) Շնորհալին հորդորում է «արիաբար և հոժարամիտ սրտով և առանց ծուլանալու» սահմանված ժամերին, անթերի կերպով «մաքուր հոգւով և սուրբ սրտիւ անարատ հաւատով և մեծաւ յուսով և պարզ մտօք և կատարեալ ահիւ» կատարել աղոթքներ և իբրև «հարք և ծնողք ժողովրդեան ծերոյ յամենայն ժամ տուք նոցա զհոգևոր խրատս»[635]: Նա քահանաներին պատվիրում է «զմիտս և զգայարանս... պարսպել յամենայն վնասակար իրաց», հեռու մնալ աշխարհային վայելքներից, հատկապես քաղաքի վաճառափողոցներում շրջելուց[636]: Հորդորում է Մկրտության խորհուրդը կատարելիս կամ հաղորդություն տալիս արծաթ չպահանջել, «այլ որ ունին և տան սիրով, որպէս զնուէր եկեղեցւոյ առէք, և որ աղքատ լինին մի բռնադատէք»[637]:

Շնորհալին պատվիրում է պսակադրությունը կատարել տղաներին 15, աղջիկներին 12 տարեկան հասակում: Արգելում է աղջիկ առևանգողին պսակելը: Գտնում է, որ այր ամուսինը կնոջից պետք է տարիքով ավելի մեծ լինի, ինչպես որ Ադամը Աստծու կողմից առաջինն ստեղծվեց, նոր ապա նրա զուգակիցը Եվան: Քահանաներն առանց պսակվողների կամքը հաշվի առնելու, չպետք է պսակեն: Արգելում է ազգականների ամուսնությունը մինչև չորս աստիճան[638]: Արգելում է նաև աշխարհիկ տերերի և այլազգիների ներկայությամբ հոգևոր այրերի կողմից դատ վարելը: Քահանան,- գրում է Շնորհալին, դատ կարող է անել միայն սրբակյացների առջև, քանզի Պողոս առաքյալը գրում է, որ պետք է դատել միայն սրբերի առաջ[639]: Քահանան իրավունք չունի վարել քաղաքի կամ գյուղի հոգաբարձուի կամ գավառապետի պաշտոնը, կամ լինել «գրօղ հարկաց կամ սակից, կամ յայլ ինչ գործակալութիւն աշխարհի», որով նա ծառայում է երկու տիրոջ, մինչդեռ նա պարտավոր է ծառայել միայն Աստծուն: Արգելում է քահանաներին զենք վերցնել և ձի նստել, նետեր արձակել, մասնակցել ձիընթացարանի խաղերին, քանզի, ինչպես Պողոսն է ասում, «մեր զենքը մարմնավորը չէ»:[640] Շնորհալին թույլ է տալիս զենք վերցնել միայն ուղևորության ընթացքում հնարավոր վտանգներից պաշտպանվելու համար[641]:

---

635 Տես նույն տեղում, էջ 119-121:
636 Տես նույն տեղում, էջ 125:
637 Նույն տեղում, էջ 130-131:
638 Տես Ներսէս Շնորհալի, Թուղթ ընդհանրական, էջ 133-134:
639 Տես Ա Կորնթ., Զ, 1:
640 Տես Ա Կորնթ., Ժ,4:
641 Տես Ներսէս Շնորհալի, Թուղթ ընդհանրական, էջ 137-138:

Հայ իշխաններին ուղղելով իր պատգամները, Շնորհալին գրում է. «Առ իշխանսդ, որք ի նուազեալ ժամանակիս տիրէք ի տեղիս տեղիս բազմաց և կամ սակաւուց, զօրաց և գաւառաց, զորս աղաչեմ, մի անհնազանդ լինիք օրինացն Աստուծոյ», և ինչպես որ ձեր ծառաներն են անթերի կերպով, հնազանդորեն կատարում ձեր հրամանները և թերանալիս պատժվում են ձեր կողմից, նույնպես և դուք, քանի որ «բնութեամբ ծառայք էք Աստուծոյ, ծառայեցէք Տեառն երկիւղիւ և հնազանդութեամբ... մի անիրաւաբար վարիք առ հնազանդեալսդ ծանր և դժուարակիր հարկադրութեամբ, զոր ոչ կարեն բառնալ, այլ օրինօք դատեցէք և ըստ չափոյ զօրութեան զիւրաքանչիւր ոք...մի նեղէք զաղքատս և զտնանկս, զի մի բողոքեսցեն առաջի Աստուծոյ վասն ձեր, ...Մի չար և անիրաւ գործակալս և գաւառապետս կացուցանէք ի վերայ աշխարհի ձերոյ»[642]: Իշխաններին կոչ է անում «անբան կենդանիների» տեղ չդնել ծառաներին և ապահովել նրանց ապրուստի միջոցով, չկրճատել զինվորների ռոճիկները, չափից ավելի չբռնանալ նրանց հանդեպ, որպեսզի վախից մղված չփախչեն և չդրժեն տված երդումը: Նաև կոչ է անում առանց օրենքի, զայրույթի թելադրանքով մահավճիռ չկայացնել, լինել վրիժառուաց ու ներողամիտ[643]:

Զինվորական դասին հղած պատվիրաններում Շնորհալին հորդորում է «հնազանդ լինել տերանց ձերոց յամենայնի», ինչի դիմաց Աստված հատուցելու է: Իսկ եթե զինվորը նենգություն է դրսևորում իր իշխանի, նրա ամրոցի, սեփականության նկատմամբ, այդպիսով դավում է Աստծուն: Հորդորում է հավատարմորեն ծառայել այլազգի այն տերերին, որոնց ենթակա են: Երբ զորականները իշխանների կողմից վերակացու են կարգվում որևէ գործի վրա, պետք է վարվեն «արդարութեամբ և իրաւամբ առ հնազանդեալսն», չբռնանալ, բավարարվել ռոճիկով և չհափշտակել աղքատների ունեցվածքը, պատերազմներում զինավառվել «առաւել քան մարմնական զինուք, հաւատոյ զինովն»[644]:

«Առ քաղաքականսդ» բաժնում քաղաքաբնակ առևտրականներին, արհեստավորներին պատվիրում է առևտուր անելիս չխաբել «անմեղ գնողաց», չթերակշռել, շինականներին չքամահրել և չհամարել անգետներ, հրաժարվել վաշխով փող տալուց, ողորմալ «կարօտելոց և աղքատաց»[645]:

Երկրագործներին ու համայն ժողովրդին հղած պատվիրաններում կոչ է անում խոստովանությամբ քավել մեղքերը, հրաժարվել հոգի, երես ու բերան հայհոյելուց, քանի որ հոգի հայհոյողն Աստծուն է հայհոյում,

---

642 Նույն տեղում, էջ 142-143:
643 Նույն տեղում, էջ 143-144, 149-152:
644 Նույն տեղում, էջ 153-155:
645 Նույն տեղում, էջ 156-157:

«զի հոգի յԱստուծոյ է փչումն և երեսն պատկեր է Աստուծոյ, նոյն և բերանն ընդունող է մարմնոյ և արեանն Քրիստոսի»: Նաև հորդորում է հրաժարվել հարբեցությունից, «որ է մայր պոռնկութեան և ամենայն պղծութեան և անիրաւութեան և վիճման և աղտեղի բանից անարգանաց, յորմէ և սպանութիւնք լինին»: Կոչ է անում երեխաների մեջ սնուցել սեր Աստծու նկատմամբ, գթասիրություն և սեր միմյանց հանդեպ և ողորմագութ վերաբերմունք աղքատների նկատմամբ[646]:

«Առ կանանց դասս» պատգամներում պատվիրում է ամենայնիվ լինել պարկեշտ ու բարեձև, անձները զարդարել ամոթխածությամբ ու պատկառանքով «առաւել քան ոսկւով և արծաթով», չպչրվել, հեռու մնալ կավատությունից, չհետևել կախարդության և աղանդների, «քանզի կավատը նմանող լիցի օձին գործի անօրենութեան լինելով սատանայի», իսկ «կախարդութիւնն ի սատանայէ է»: Շնորհալու կարծիքով աղանդը դատապարտելի է քանի որ եթե «այլ մեղք ի գործսն է վնասն», ապա աղանդն հարվածում է «ի հաւատն»[647]:

Ներսես Շնորհալու «Ընդհանրական թուղթը» դարաշրջանի անխարդախ հայելին է, որի մեջ ստույգ արտացոլք են գտել ալեհույզ իրականության հոռի կողմերը: Շրջաբերական այդ ընդարձակ նամակով հեղինակը կամեցել է սրբագրել հասարակական հարաբերությունները, ախտահանել մեղապարտ հոգիները:

Շնորհալին քաջածանոթ էր նաև աստվածաբանական, փիլիսոփայական, բնագիտական և ճարտասանական արվեստներին[648]:

Ներսես Շնորհալու ստեղծագործությունների պսակը նրա չափածո գործերն են, որոնք աչքի են ընկնում իրենց անպաճույճ ու դյուրասահ ոճով: Հեղինակի նվիրական համոզումով տոգորված այդ երկերը դարձան դարաշրջանի անխարդախ հայելին: Մոտ 1122թ. Շնորհալին շարադրում է «Վիպասանութիւն» պատմական պոեմը, Մովսես Խորենացու հետևողությամբ վեր հանելով Հայոց անցյալի պատմարժան եղելությունները: Սկսելով հայերի անվանադիր Հայկ նահապետից, նա հիշատակում է Արտաշեսյան և Արշակունի թագավորների կատարած գործերը, դրվատանքով է խոսում Արտաշեսի, Տիգրան Մեծի, Տրդատ Մեծի, ինչպես նաև Գրիգոր Լուսավորչի, Մեսրոպ Մաշտոցի և Ավարայրի քաջապանծ հերոս Վարդան Մամիկոնյանի մասին: Հեղինակը պատշաճն է հատուցում նաև Պահլավունի տոհմից սերող գործիչներին, նրանց մեջ առաջին տեղում հիշելով Վասակ Պահլավունուն, գովեստով է պատմում վերջինիս շնորհաշատ որդու Գրիգոր Մագիստրոսի մասին, հատկապես շեշտում է նրա

---

646 Ներսէս Շնորհալի, Թուղթ ընդհանրական, էջ 158-159:
647 Նույն տեղում, էջ 161-162:
648 Տես Գր. Հակոբյան, Ներսես Շնորհալի, էջ 34:

իմաստությունը[649]: Հիշում է նաև Պապ թագավորին, Ներսես Մեծին[650]: Հեղինակը պատմում է նաև արաբական խալիֆայության, սելջուկ-թյուրքերի կողմից Հայաստանին պատուհասած արհավիրքների մասին: Շնորհալին ցավով է հիշում նաև «հոգիների կորուստը» հավատուրացությունը, այն որակելով իբրև չարիքներից մեծագույնը[651]:

Այս պոեմով Ներսես Շնորհալին շարունակեց և ավելի զարգացրեց Գրիգոր Մագիստրոսի սկսած պատմաքաղաքական ժանրը[652]: Այդ առումով առավել հնչեղություն ունի Շնորհալու «Ողբ Եդեսիո» պոեմը, որն իրավամբ համարվում է նրա չափածո երկերի գլուխգործոցը: Պոեմում պատմվում է Հալեպի Զանգի անունով թյուրք ամիրայի կողմից 1144թ. Եդեսիայի (Ուռհա) պաշարման, նրա քրիստոնյա բնակչության հերոսական դիմադրության, նույն թվականի դեկտեմբերի 23-ին այդ քաղաքի գրավման և նրա բնակիչների սարսափելի կոտորածի մասին: Ներսես Շնորհալու եղբորորդի Գրիգոր Ապիրատը տեղեկանալով եդեսացիների ապրած ողբերգության մասին, մեկնում է Օովք ամրոց հորեղբայրների մոտ, նրանց իրազեկում Եդեսիայում կատարվածի մասին և Շնորհալուց խնդրում է գրի առնել այն: Ամենայն հավանականությամբ Շնորհալին իր պոեմը շարադրել է այդ անցքերի թարմ տպավորության տակ, հավանաբար 1145թ. սկզբին:

«Ողբ Եդեսիո» պոեմում Եդեսիա քաղաքը ներկայանում է որպես որդեկորույս, այրիացած կին, որը սգազգեստով նստել է քաղաքի ավերակների վրա և արտասվում, մազերն է փետում, ողբում է սարսափելի աղետը: Քաղաքը դիմում է Հայաստանին և հիշեցնում նրա փառավոր անցյալը, խնդրում պատասխանել, թե ինչու այն կորավ ու անեացավ երազի պես: Ու՞ր է «թագ քո զարդի... պսակն հրաշալի», ու՞ր է հայրապետական աթոռը, հայոց թագավորների գահերը, որտե՞ղ են նախարարները, հայ զորականները: Եդեսիան դիմում է նաև Անի մայրաքաղաքին, շեշտում, որ նա ևս կիսել է իր դառն ճակատագիրը, տալով անթիվ-անհամար զոհեր: Այնուհետև պատկերվում է Եդեսիայի պաշարումը, գրավումն ու նրա բնակչության սարսափելի կոտորածը, որի ընթացքում չէին խնայվում անգամ ծերերն ու երեխաները: Պոեմի վերջում Շնորհալին իր հոգու մորմոքը միաձուլում է Եդեսիայի, նրա բնակիչների ողբին, արտահայտելով ոչ միայն իր մեջ ահագնացող զայրույթը, այլև ժամանակի քաղաքական

---

[649] Տես Ներսես Շնորհալի, Վիպասանութիւն, էջ 108:
[650] Տես նույն տեղում, էջ 90:
[651] Տես նույն տեղում, էջ 106:
[652] Տես Գր. Հակոբյան, Ներսես Շնորհալի, էջ 171:

տրամադրությունները: Շնորհալին դատափետում է արյան նախճիրներ գործող թյուրքերին[653]:

Այդ պոեմում դրսևորված է հայ ժողովրդի անել կացության, նրա ճակատագրի հանդեպ հեղինակի մտահոգությունը: Հայտնի իրողություն է, որ նշված ժամանակաշրջանում Եդեսիայի բնակչության մեծ մասը հայեր էին[654], որոնց սակայն օգնության չհասան մյուս քրիստոնյաները: Շնորհալին վայրագ ոսոխի դեմ պայքարի հուսալի միջոց է համարում քրիստոնեության զորացումը[655]:

1151թ. Գրիգոր Ապիրատի խնդրանքով Շնորհալին շարադրեց նաև «Բան հաւատոյ» դավանաբանական պոեմը, որի առաջին մասում նա հիմնավորում է Հայոց հավատքը, քննադատում քաղկեդոնյան երկաբնակությունը: Երկրորդ մասը Հովհաննու Ավետարանի չափածո վերապատումն է, իսկ երրորդ մասում պատկերվում է վերջին դատաստանը: Պոեմի «Յիշատակարան»-ում դրվատվում են Արշակունի և Պահլավունի տոհմերի հայրենասեր գործիչները[656]:

Կատարյալ հավատապատում է Շնորհալու «Հիսուս որդի» պոեմը: Այն նմանության եզրեր ունի Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի հետ, որի հետևողությամբ Շնորհալին ինքնախարազանմամբ մտացածին մեղքեր է վերագրում իրեն՝ իբրև «յախտըս խորին» գահավիժածի, ապա աղերսում է Աստծուն՝

Զիս պահեա ի հեղեղէ
Յաշխարհածուփ ալեաց չարին[657]:

Կամենալով մեղսազերծել սեփական անձը, Շնորհալին խոստովանում է, որ ինքն առլեցուն է երկրային, մարմնական ախտերով, իր մեջ կրում է «անօթ չարին»: Բարձրյալին աղերսում է երկրային մեղսածուփ կյանքից տեղափոխել «ի հայրենին»՝ երկինք: Նարեկացիական շունչ կա նրա հետևյալ տողերում.

Եմ նըման բեկեալ նաւին
Տարաբերեալ ի մէջ ծովին[658]:

---

[653] Ներսէս Շնորհալի, Յաղագս երկնի և զարդուց նորա, հանելուկներ, Ողբ Եդեսիոյ, էջ 50, 56, 93:

[654] Տես J. Laurent, Des grecs, aux croises. Etude sur l' histoire d' Edesse entre 1071 et 1098 («Etudes d' histoire Arménienne», p. 125).

[655] Տես Հ. Որսկանյան, Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմի կրոնական հենքը («Էջմիածին», 2004, Զ, էջ 77-78):

[656] Տես Ներսէս Շնորհալի, Բանք չափաւ, Վենետիկ, 1830, էջ 225 և հտ.:

[657] Ներսէս Շնորհալի, Հիսուս որդի, աշխ. Վ. Ղազարյանի, Երևան, 1991, էջ 20-21:

[658] Նույն տեղում, էջ 28:

Շնորհալին հին կտակարանյան մոտիվներով վերարծարծելով փրկագործության խնդիրը, չի թաքցնում այդ հետնախորքի վրա իր ապրած ողբերգությունը, որը բխում էր դարաշրջանի կրոնական աշխարհընկալումից: Մի կողմից նրան դյուրում է երկրայինը աշխարհականացող կյանքի թովչանքը, մյուս կողմից երկնային կյանքի վայելքներին արժանանալու չխամրող հույսը: Սակայն նրա մեջ երկրայինն այն աստիճանի է տիրապետող դարձել, որ ստիպված դիմում է ինքնաձաղկման, գրելով.

Ես ըզհոգիս իմ զերկնային
աղտեղեցի գործովք չարին...[659]:

Քերթողական ավյունով հնչեցնելով իր սրտի հույզերը, Շնորհալին այն աստիճանի է տարվում երկրայինով, որ նույնիսկ իրեն համարում է դժոխքի բոցերում կիզվող և Ամենակալից խնդրում է փրկել իրեն:

Սակայն Ներսես Շնորհալին համոզված է, որ չի կարող ազատվել աշխարհիկ գայթակղություններից, ուստի գրում է, որ իր աչքերը զրկվեցին երկնային լույսից, կուրացան և սովորեցին նայել ոչ թե Աստծու լույսին, այլ «յաշխարհ նայիլ ինձ ուսուցին»[660]: Նարեկացու նման Շնորհալին նույնպես տառապում է կանացի սեռի նկատմամբ հեշտավետ մեղանչումների պատճառով: Նա գրում է, որ իր սիրտը նետահարված է կանացի գեղեցկությամբ և անզոր է նրա հարուցած թովչանքի նկատմամբ: Ի քավություն իր վշտակիր հոգու, խոստովանում է, որ իր ականջներում մշտապես հնչում են Բարձրյալի պարսավալից խոսքերը «տռփանք ես տածում կնոջ հանդեպ, շնանում ես քո սրտում»[661], և որ «կապված ու գերի ես կանացի հեշտասիրությանը», մարմնի սիրույն հոգին զրկել ես երկնային բարիքներից, ծառայելով «մարմնական գոյին»[662]:

Այնուամենայնիվ Շնորհալին չի կարողանում ազատվել գեղեցիկ սեռի հանդեպ ունեցած թովչանքից և սրտի մորմոքով գրում է, որ «քաղցր մեղքից չեմ հագենում»[663], ուստի Քրիստոս Աստծուց խնդրում է մեռցնել իր անձի ներսում եղած ախտածին հակումները, որպեսզի «թողնի աշխարհի հանդեպ սերը» նաև շեշտում է, որ երկրային մեղսածուփ կյանքի ալիքները իրեն ընկղմել են «ի ծով մեղաց»[664]:

«Հիսուս որդի» գործում Ներսես Շնորհալին հավատարիմ է մնում իր հոգևոր և քաղաքացիական հավատամքին, բարոյաբանական սկզբունքներին ու կենսահայեցողությանը: Նա ընչավետ խավի ներկայա-

---

[659] Նույն տեղում, էջ 44:
[660] Ներսես Շնորհալի, Հիսուս որդի, էջ 54,60:
[661] Նույն տեղում, էջ 90:
[662] Նույն տեղում, էջ 118,150:
[663] Նույն տեղում, էջ 134:
[664] Նույն տեղում, էջ 172, 176, 190:

ցուցիչներին զգուշացնում է չտարվել շահակեզ աշխարհին հատուկ ագահության մեղսածին ախտով, բարեգութ լինել աղքատների հանդեպ, քանզի Քրիստոսն իր երկրորդ գալստյան ժամանակ դատաստան է տեսնելու զրկողների նկատմամբ[665]: Գրիգոր Ներեկացու պես նա Աստծուց խնդրում է

Տէր, ի մեղաց դարձո զհոգիս,
պարտեացն իմոց գիր ջնջեսցին...[666]

Պոեմի հիշատակարանի վերջում հեղինակը մաղթում է հիշել նաև Քեսունի տերերին

Վասլին վեհ իշխանին
Զորավարին բարձրագունի[667]:

1160թ. խորահմուտ բժշկապետ, աստղագետ Մխիթար Հերացու խնդրանքով Ներսես Շնորհալին շարադրում է «Յաղագս երկնից և զարդուց նորա» տիեզերաբանական պոեմը, որտեղ տիեզերախույզի պես ջանում է պատկերել երկնոլորտը, նույնիսկ անձնավորում այն: Նկարագրվում են երկնային մարմինները արևը, լուսինը, այն ժամանակ հայտնի մոլորակները: Երկինքը, տիեզերքները Բարձրյալի մարմնացումն են: Երկինքը պատմում է իր մասին, իրեն համարում «այս նյութական գոյության» հիմքն ու ավարտը, որը հավերժորեն շարժման մեջ է, երբեք չի հնանում, կենաց անսպառ աղբյուրն է, նրա ժամանակը բաշխողը[668]:

Ներսես Շնորհալին գրել է նաև բարոյակրթական տաղեր, որոնցում հնչում են նրա հոգելից խրատներն ուղղված սովորող սերնդին: Նշելի է նրա «Խրատ ուսումնականաց մանկանց» բանաստեղծությունը, որտեղ նա մանուկներին հորդորում է սիրել ուսումը և սովորել համբերատար տքնությամբ, լինել ընթերցասեր, գրասեր, աշխատանքը սիրող, տոկուն, զուսպ ու ժուժկալ, գոյակիցների, ուսումնակիցների նկատմամբ բարեմիտ և հեզաբարո, խուսափել հարբեցողությունից, զազրախոսությունից[669]: «Ի խրատ ոգւոց համայնից» տաղում Շնորհալին բոլոր չարիքների աղբյուր է համարում ագահությունն ու ընչասիրությունը, հարստություն կուտակելու տենչը: Թագավորներին հորդորում է զերծ մնալ գոռոզամտությունից, ամբարտավան վերաբերմունք չդրսևորել ստորադրյալների հանդեպ, լինել «քաղցր և հեզ խոնարհական»[670]:

---

[665] Տես Ներսես Շնորհալի, Հիսուս որդի, էջ 198:
[666] Նույն տեղում, էջ 54:
[667] Նույն տեղում, էջ 220:
[668] Տես Ներսես Շնորհալի, Յաղագս երկնի և զարդուց նորա, էջ 22-23:
[669] Տես Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, էջ 342-348:
[670] Տես նույն տեղում, էջ 330,335:

Անկասկած, ճանաչողական նշանակություն ունեն նաև Ներսես Շնորհալու հեղինակած հանելուկները, որոնց թիվը հասնում է մոտ երեք հարյուրի: Դրանք արտացոլում են ժողովրդական կյանքն ու զբաղմունքները: Շնորհալին նաև հոգևոր երգերի ժրաջան մշակ էր: Հորինել է հարյուրավոր երգեր: Նա նաև հմուտ երաժիշտ էր, երգիչ, տեսաբան, խազագետ, գեղագետ, երգուսույց, երգավարժ: Ընդ որում հայկական հոգևոր երգարվեստը ներկայացնող երեք ժողովածուներում (Շարակնոց, ժամագիրք և Պատարագ) ընդգրկված են Շնորհալու ավելի քան 200 հոգևոր երգեր, որոնք կազմում են նրա հորինած երգերի երկու երրորդը[671]: Ուշագրավ է, որ Կիրակոս Գանձակեցին հավաստում է, որ Շնորհալին «բազում ինչ կարգեաց ... յեկեղեցիս քաղցր եղանակաւ, խոսրովային ոճով[672] շարականս, մեղեդիս, տաղս և ոտանաւորս... Արար նա զքարոզ սրբոյ պատարագին քաղցր եղանակաւ և տունս շարականաց...»[673]: Շարականները նվիրված են տերունական տոներին, հատկապես շատ են վկայաբանական ու դավանաբանական թեմաներով հորինվածները:

Ներսես Շնորհալին հեղինակել է նաև ազգային-հայրենասիրական երգեր նվիրված Տրդատ Մեծին, Աշխեն թագուհուն, արքայադուստր Խոսրովիդուխտին (Տրդատ Մեծի քրոջը), Վարդանանց և Ղևոնդյանց նահատակներին[674]: Դրանցում անքակտելիորեն միահյուսված են հայոց անցյալի փառալից հիշատակների նկատմամբ նրա տածած սերն ու հպարտությունը, որոնք ունեին սուր հնչեղություն: «Նորահրաշ պսակաւոր» շարականում Շնորհալին գովերգում է Վարդան Մամիկոնյանին ու նրա զինակիցներին, որոնք Ավարայրի դաշտում իրենց արյամբ «պսակեցին եկեղեցին», քաջաբար հեռու վանելով չարադավ արքային, քրիստոնեական խաչի թշնամիներին[675]:

Շնորհալուց պահպանվել են նաև զանազան թղթեր, նամակներ նվիրված հայ-բյուզանդական եկեղեցիների միությանն առնչվող խնդիրներին: Ուշագրավ է նաև Արևորդիներին ուղղված նրա թուղթը: Հարավային Հայաստանում, Միջագետքում բնավորված արևապաշտ աղանդա-

---

[671] Տես Ն. Թահմիզյան, Արևելյան քրիստոնեական երգարվեստը և Ներսես Շնորհալին («Ներսես Շնորհալի» հոդվածների ժողովածու), Երևան, 1977, էջ 110-113): Տես նաև Ն. Թահմիզյան, Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Երևան, 1973:

[672] Պարսից Խոսրով արքայի անվամբ քաղցրալուր, թովիչ (պահլավերեն «լավ, բարի» և «լսել, լուր» բառերից (տես Հր.Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Բ, Երևան, 1944, էջ 530):

[673] Կիրակոս Գանձակեցի, էջ 119-120:

[674] Տես Գր.Հակոբյան, Շնորհալին և հայոց հոգևոր երգը («Ներսես Շնորհալի» ժողովածու, էջ 130-135):

[675] Տես Ձայնքաղ շարական, էջմիածին, 1833, էջ 462-463:

վորների մի մասը Սամոսատ քաղաքից, կամենում են ընդունել Հայոց դավանությունը և 1170-ական թվերին պատվիրակ են ուղարկում Ներսես Շնորհալու մոտ, խնդրելով իրեն ընդունել Հայ եկեղեցու գիրկը: Արևորդիներին հղած թղթում[676] Շնորհալին համաձայնություն է հայտնում, և նրանք հրաժարվում են այդ աղանդից: Այդ թուղթն անշուշտ, արժեքավոր սկզբնաղբյուր է նշյալ աղանդի պատմության ուսումնասիրման համար:

Գրիգոր III-ի և Ներսես Շնորհալու օրոք Հայոց եկեղեցին շփումներ ունեցավ Բյուզանդիայի քաղկեդոնադավան և ասորվոց (Հակոբիկ) եկեղեցիների հետ: Այդ հետնախորքի վրա նորովի վերարծարծվեց եկեղեցիների միության չարչրկված խնդիրը: Այն հարուցվեց Բյուզանդական եկեղեցու նախաձեռնությամբ: Վերջինս կամենում էր պարզել, թե Հայոց եկեղեցու որդեգրած դավանությունը որքանով է համապատասխանում ուղղափառ հավատքին: Գրիգոր III կաթողիկոսի գահակալության վերջին երկու տարիներին 1165-1166թթ. Կիլիկիայի բյուզանդական զորապետն էր Մանուել կայսեր փեսա Ալեքս Աքսուխը, որը կայսեր հանձնարարությամբ միջամուխ եղավ դավանական միության խնդիրներին: 1165թ. նա Մամեստիայում հանդիպեց Ներսես Շնորհալուն և նրանից պահանջեց գրավոր ներկայացնել Հայոց դավանության ամփոփ բովանդակությունը կայսեր հանձնելու համար: Թեև Ալեքս զորապետի (դքսի) հարցումները չեն պահպանվել, բայց դրանց առնչությամբ Շնորհալու տված պատասխանից պարզ է դառնում հարցումների բովանդակությունը: Ըստ Կիրակոս Գանձակեցու, Շնորհալին գրավոր պատասխանը կազմել է Հայոց ՈԺԴ (614), իմա 1165 թվականին[677]:

Ներսես Շնորհալին պատասխան թղթում նախ հավաստում է, որ Հայ եկեղեցին ընդունում է «զամենասուրբ զերրորդութիւնն զՀայր, և զՈրդի, և զՍուրբ Հոգին, յերիս անձնաւորութիւնս բաժանեալ, և ի մի բնութիւն, և աստվածաթիւն ժողովեալ»[678]: Շարունակելով ապացուցել Հայ Առաքելական Եկեղեցու ուղղադավանությունը, Շնորհալին մեկառմեկ հերքում է Բյուզանդական եկեղեցու կողմից Հայոց եկեղեցուն ներկայացրած մեղադրանքները, հիմնավորում Հայ եկեղեցու ընդունած հավատո հանգանակը: Նա ապացուցում է նախնական քրիստոնեության ոգուն Հայոց ծիսակարգի հարազատությունը, հիմնավորում հունվարի վեցին Քրիստոսի ծննդյան և մկրտության տոնը նշելը, սրբապատկերների հան-

---

[676] Տես Ղ. Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, էջ 401-403, Р. Бартикян, Еретики ареворди («сыны солнца») в Армении и Месопотамии и послание армянского католикоса Нерсеса Благодатного («Эллинистический Ближный Восток, Византия и Иран», Москва,1967, с.108-112).

[677] Տես Կիրակոս Գանձակեցի, էջ 122:

[678] Նույն տեղում:

դեպ հարգալից վերաբերմունքը, սրբասացության ժամանակ «խաչեցար» արտահայտության օգտագործումը, պատարագ մատուցելը, խաչի օրհնության, պահեցողության կարգը և այլն[679]:

Մեկ տարի հետո մոտավորապես 1166թ. հուլիսին, Մանուել կայսրը վերստին նամակ է հղում Գրիգոր III կաթողիկոսին, միության շուրջ բանակցություններ վարելու համար: Կայսրը վերջինիս մոտ է ուղարկում իր պալատի սպասավոր Սմբատին, որը պետք է նաև ուղեկցեր Շնորհալուն կայսրության մայրաքաղաքում բանավարությունները շարունակելու համար: Սակայն երկարատև ուղեգնացությունից հետո, երբ Սմբատը ժամանում է Հռոմկլա, Գրիգոր III-ն արդեն վախճանվել էր: Կայսեր պատվիրակի ժամանումն այդպիսով տեղի է ունեցել 1166թ. օգոստոսի 8-ից (Գրիգոր III-ի մահվան օրվանից) հետո (գուցե հաջորդ ամսին):

Սակայն Շնորհալին չկամեցավ մեկնել Կոստանդնուպոլիս, այլ կայսրին հրավիրեց ժամանել Արևելք եկեղեցիների միջև ցանկալի միությունը հաստատելու համար, պայմանով, որ նա հրաժարվի հայերին հալածելուց: Շնորհալին իր պատվիրակների միջոցով, վերոնշյալ Սմբատի ուղեկցությամբ, Մանուել կայսրին ուղարկում է նամակ, որտեղ բանիբուն կերպով շարադրում է Հայոց դավանանքի հիմնական սկզբունքները[680]: Նույն թվականի վերջին կայսեր պահանջով Շնորհալին շարադրում է «Սահմանք հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ» թուղթը[681], որտեղ մեկ անգամ ևս հիմնավորում է Հայոց եկեղեցու դավանությունը, ի մասնավորի նշելով, որ ճշմարիտ հավատի համար տոների, ծեսերի տարբերությունները առանցքային չեն կարող լինել միջեկեղեցական հարաբերություններում և բնավ չպետք է դառնան ազգերի միջև թշնամության պատճառ:

Թե Գրիգոր III-ը և թե Ներսես Շնորհալին դեմ չէին եկեղեցիների միության[682], որի միջոցով հույս ունեին միաբանված տեսնել բոլոր քրիստոնյաներին ընդդեմ թյուրքական ցեղերի հարաճուն ճնշման: Բայց Շնորհալին դեմ էր Բյուզանդիայի կայսերականացված եկեղեցուց Հայոց եկեղեցու կախյալ լինելուն, որին հասնել էր ջանում Կոստանդնուպոլսի պատրիարքությունը և անձամբ Մանուել կայսրը: Շնորհալին գտնում է, որ երկու եկեղեցիների միջև զիջումները պետք է լինեն փոխադարձ հի-

---

679 Տես Կիրակոս Գանձակեցի, էջ 122-147:

680 Տես Ա. Բոզոյան, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը (1165-1178թ.թ.), Երևան, 1995, էջ 41-42:

681 Տես Ընդհանրական թուղթ սրբոյն Ներսիսի Շնորհալւոյ, էջ 120-129:

682 G. Dédéyan, Le role complémentaire des frères Pahlawuni Grigor III, catolicos, et saint Nerses Šnorhali, coadjuteur, dans le rapprochement avec les latins, a l' epoque de la chute d' Edesse (v. 1139-v. 1150). REA, t. XXIII, 1992., p.240-249.

մունքներով և ոչ թե կողմերից մեկի թելադրությամբ[683]: Ուշագրավ է, որ հենց նույն ժամանակ նա կայսրին ուղարկեց նոր նամակ՝ «Յաղագս աւանդութեանց եկեղեցւոյ»[684] վերտառությամբ, առաջարկելով ճշմարտախույզ քննությամբ լուծել ծիսական արարողակարգին առնչվող խնդիրները: Նամակում Շնորհալին գտնում է, որ յուրաքանչյուր եկեղեցի պետք է պահպանի հայրենավանդ ծեսերն ու սովորությունները և բնավ կուլ չգնա մյուս կողմին:

1169թ. նոյեմբերին Մանուել կայսրը գրում է իր առաջին նամակն ուղղված Ներսես Շնորհալուն[685]: Այդտեղ կայսրը համոզմունք է հայտնում, որ երկու եկեղեցիների միավորումն ուղղափառ հավատքի շուրջ դրական լուծման է հանգելու: Նա Հայոց հայրապետին հորդորում է ընդունել բանակցություններ վարելու նպատակով նրա մոտ առաքված իր պատվիրակների՝ Թեորիանոսի և Աթմանի առաջարկները:

1170թ. հոկտեմբերի սկզբին Շնորհալին պատասխան նամակ է ուղարկում կայսրին, նշելով, որ բանակցությունների միջոցով լիովին վերացել են Բյուզանդական եկեղեցու նեստորամետ ուղեգծի վերաբերյալ հայ եկեղեցականների մեջ եղած կարծիքը, ինչպես և Հայոց եկեղեցու կողմից Եվտիքեսի ծայրահեղ միաբնակությունը որդեգրելու մասին հիմնագուրկ կասկածները: Նամակում նաև նշվում էր, որ հայերը զրկված լինելով թագավորությունից, հարկադրված են եղել հեռանալ Հայրենի երկրից, բաժանվելով նրա հոգևոր հայրերից: Առանց վերջիններիս համաձայնության հնարավոր չէ լիարժեք պատասխան տալ կայսրին, ուստի կամենում են հրավիրել Հայաստանի հոգևոր հայրերին և միասին քննության առնել կայսեր առաջարկը[686], որից հետո կջանան գտնել համաձայնության եզրեր: Նամակով Շնորհալին հայտնում է, որ ուղարկում է Հայոց եկեղեցու դավանության մեկնությունը:

Շնորհալու այս նամակին ի պատասխան, Հռոմկլա ուղարկվեց կայսեր երկրորդ նամակը, որի հեղինակն էր Կ. Պոլսի պատրիարքը: Նամակում ներկայացվում էին Բյուզանդական եկեղեցու հավատքի սկզբունքները և Հայոց եկեղեցու դավանանքի նկատմամբ քաղկեդոնական եկեղեցու վերաբերմունքը[687]: Այս և կայսեր կողմից Հռոմկլա առաքած հաջորդ թղթերում Բյուզանդիայի կայսերականացված եկեղեցին ցուցահանում է իր բուն նպատակադրումը՝ կախման մեջ գցել Հայոց եկեղեցին և նրան պարտադրել քաղկեդոնական դավանությունը: Նույն նպատակաուղղվա-

---

683 Տես Մ. Օրմանեան, Ազգապատում, Ա, սյունակ 1653-1654:
684 Տես Ներսէս Շնորհալի, Ընդհանրական թուղթք, էջ 130 և հտ:
685 Տես նույն տեղում, էջ 144-145:
686 Տես նույն տեղում, էջ 145 և հտ:
687 Տես Ա. Բոզոյան, նշվ. աշխ., էջ 56-57:

ծությունն ուներ նաև Կ. Պոլսի Միքայել պատրիարքի կողմից Շնորհալուն հղած թուղթը: Վերջինս 1172թ. սկզբներին ուղարկում է պատասխան նամակ[688], որտեղ հավաստում է, որ դեմ չէ երկու եկեղեցիների միավորմանը, բայց միաժամանակ մեկ կամք և մեկ իշխանություն է տեսնում Սուրբ Երրորդության մեջ և նշում, որ ինչպես երկնային քահանայությունն է բաժանված ինը դասերի և միավորված երեք խմբերում, նույն կերպ, կայսեր առաջնորդությամբ միություն են կազմելու տիեզերական եկեղեցու տարանջատ մասերը: Շնորհալին խոստանում է առաջիկա եկեղեցաժողովում ջանքեր ներդնել երկու եկեղեցիների միությունը գլուխ բերելու համար: Սակայն Հայոց հովվապետը չհասցրեց ժողով գումարել: Հռոմկլան իր վատառողջ կլիմայով քայքայել էր գրեթե քսան տարի այդ ամրափակ դղյակում ապրած Ներսես Շնորհալու առողջությունը: Ուստի 1173թ. օգոստոսի 13-ին նա ընդմիշտ փակեց աչքերը, հրաժեշտ տալով այս աշխարհին:

* * *

Ներսես IV Շնորհալի կաթողիկոսը մահվան մահճում պատվիրեց իրեն հաջորդ նշանակել իր եղբոր՝ Վասիլի ավագ որդի Գրիգոր Տղա արքեպիսկոպոսին[689]: Ըստ Վարդան Արևելցու, Ներսես Շնորհալու վախճանվելուց հետո «Առնու զքօղն Գրիգոր եղբօրորդի իւր ծեռնտուութեամբ Նուրադնին»[690]: Փաստորեն Գրիգոր IV գահակալել է Հալեպի ամիրա Նուր-ադ-դինի օգնությամբ: Կաթողիկոսական գահանիստ Հռոմկլան Նուր-ադ-դինի ամիրայության սահմաններում էր, ուստի հնարավոր է, որ Գրիգոր IV-ի և ամիրայի միջև առկա էր որոշակի մերձակցություն, առանց որի հնարավոր չէր վերջինիս կողմից Գրիգոր IV-ին սատարելը: Դրանում հավանաբար որոշակի նշանակություն ունեցավ նաև Գրիգոր IV Տղայի քրոջ ամուսնու՝ Կիլիկիայի Հայոց իշխան Մլեհի (1169-1175) և Նուր-ադ-դինի

---

688 Տես Ներսէսի Շնորհալւոյ Հայոց կաթողիկոսի նամականի, Վենետիկ, 1838, էջ 282-290:

689 Տե ս Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 191: «Տղա» մականունն անշուշտ, հետևանք չէր Գրիգոր IV-ի մանկահասակության, քանի որ ինչպես նշվել է, երբ նա ապաստան գտավ Հռոմկլայում հաստատված Գրիգոր III Պահլավունու մոտ, փաստորեն դարձավ նրա որդին, ուստի ստացավ «Տղա» մականունը: Իսկ 1173թ. նա արդեն երեսունն անց տարիքի էր:

690 Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի, էջ 129: Տես նաև Michel le Syrien, III, p. 353-355.

միջև կնքված զինադադարը[691], որը չէր կարող չանհանգստացնել Բյուզանդիայի Մանուել կայսրին: Վերջինս տեղեկանալով Ներսես Շնորհալու մահվան մասին, չվարանեց նրան դասել տալ եկեղեցու սրբերի կարգը, իսկ նորընծա Գրիգոր IV կաթողիկոսին առաքեց «Թուղթ մխիթարութեան», հույս հայտնելով, որ նա հետևելու է Շնորհալու ուղեգծին[692]:

Ստեղծված պայմաններում, երբ թե Բյուզանդիան և թե՛ հայության բոլոր հատվածները ենթակա էին թյուրքական ցեղերի հարաճուն ճնշմանը, որոշակի հող էր ստեղծվել միջեկեղեցական կնճիռները վերացնելու համար: Բյուզանդիան ի դեմս հայերի, կամենում էր ձեռք բերել հուսալի դաշնակիցներ ընդդեմ թյուրքերի: Դրանում անշուշտ, շահագրգռված էին նաև հայերը: Կողմերը փոխադարձաբար ջանում էին միմյանց նկատմամբ զիջումների գնով հասնել երկուստեք համաձայնության: Այս հետնախորքի վրա թվում էր թե ուրվանշվում են երկու եկեղեցիների միավորման համար որոշակի պայմաններ: Միության կայացմանն էր նպատակաուղղված նաև Բյուզանդական եկեղեցու կողմից Հայոց եկեղեցու որդեգրած դավանանքն աղանդ համարելու կարծրացած տեսակետի ժխտումը: Այնուամենայնիվ, Գրիգոր IV կաթողիկոսը չաճապարեց իր համաձայնությունը տալ միությանը, նկատի առնելով կայսրության հույն բնակչության հարուցած հալածանքները, նաև Մանուել կայսեր կողմից Հայոց եկեղեցուն պարտադրված ծիսադավանական պահանջները, որոնք հակասում էին Հայոց հայրենավանդ հավատքի հիմունքներին: Հայ հոգևորականության մտահոգության դրսևորումն էր 1174թ. Գրիգոր IV կաթողիկոսի կողմից Մանուել կայսրին ուղարկած նամակը, որտեղ Գրիգոր IV հավաստիացնում էր, որ հավատարիմ մնալով իր ուսուցչի՝ Ներսես Շնորհալու սկզբունքներին, ցանկանում է իրականացած տեսնել հայ և բյուզանդական եկեղեցիների միությունը: Սակայն կաթողիկոսը հարկ համարեց նաև նշել, որ միությանը կարող են խանգարել կայսեր և նրան ենթակա քաղկեդոնիկ եկեղեցու առաջադրած որոշ պահանջներ, ուստի ցանկալի է դրանց մեղմացումը[693]: Գրիգոր IV նկատի ուներ երկաբնակության ոգուց բխող ծիսադավանական այն պահանջները, որոնք ընդունելի չէին հայ հոգևորականության ու ժողովրդի կողմից:

Երկու եկեղեցիների միության կայացմանը նպատակաուղղված գործընթացներում Հայոց եկեղեցու դավանաբանական դիրքերն ամ-

---

[691] Տես Սմբատ Սպարապետ, էջ 187: Մլեհի սպանությունից հետո Գրիգոր IV-ը քրոջը Սիսից տեղափոխեց Հռոմկլա: Մինչ այդ Մլեհի հաջորդ Ռուբենը Կիլիկիայում նրան երեք բերդ էր շնորհել (Անանուն Եդեսացի, էջ 135):

[692] Տես Ա. Բոզոյան, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թվականներին, Երևան, 1988, էջ 246:

[693] Տես Ընդհանրական թուղթք սրբոյն Ներսիսի Շնորհալւոյ, էջ 166-167:

ռապնդելու նպատակով 1175թ. Գրիգոր IV-ը 22-ամյա Ներսես քահանա Լամբրոնացուն կարգեց արքեպիսկոպոս և Լամբրոնի ու Տարսոնի եկեղեցաթեմի առաջնորդ: Վերջինս Գրիգոր IV հայրապետի ուշադրությունը գրավեց ոչ միայն իր մտավոր բարձր կարողությունների, այլև մոր կողմից Պահլավունի և հոր կողմից Օշինյան ազատազնյա գերդաստաններից սերելու[694] իրողության շնորհիվ: Իբրև հայ և բյուզանդական եկեղեցիների միության կողմնակից, Ներսես Լամբրոնացին տեսական, գաղափարաբանական առումներով սատար էր կանգնելու կաթողիկոսին:

1176թ. աշնանը երկու եկեղեցիների միավորման խնդիրը վերստին առաջ քաշվեց Մանուել Կոմնենոս կայսեր կողմից, որը Գրիգոր IV կաթողիկոսին ուղարկած նամակում համոզմունք էր հայտնում, որ հայերը կարող են ընդունել Քաղկեդոնի ժողովի հաստատած դավանական բանաձևը Քրիստոսի երկու բնության մասին, որով պետք է ուղի հարթվեր եկեղեցիների միությունը նվիրագործելու համար: Գրիգոր IV Տղային նամակ է ուղարկում նաև Կ. Պոլսի պատրիարք Միքայելն իր և կայսրության մյուս նշանավոր հոգևոր հայրերի ստորագրությամբ[695]: Այդ նամակում նույնպես առաջադրվում էր Քրիստոսին երկու բնություն վերագրելու բանաձևը:

Հայոց եկեղեցու հայրերը՝ Գրիգոր IV Տղայի գլխավորությամբ և Ներսես Լամբրոնացու, Գրիգոր Ապիրատ եպիսկոպոսի մասնակցությամբ, որոշում են կայսեր և պատրիարքի առաջարկներին պատասխանելու համար գումարել եկեղեցական ժողով: Ժողովին հրավիրվեցին Մեծ Հայքի, Երուսաղեմի և Սև լեռան վանքերի հոգևոր հայրերը, որոնց ծանուցվեցին կայսեր և պատրիարքի պահանջները: Սակայն հյուսիս-արևելյան Հայաստանի վարդապետները բացասաբար արձագանքեցին միության վերաբերյալ առաջարկին և Գրիգոր IV Տղային նամակ հղեցին՝ Անիի Բարսեղ արքեպիսկոպոսի[696] (Բարսեղ I-ի եղբորորդու), Սանահնի վանքի առաջնորդ Գրիգոր Տուտեորդու, Հաղբատի վանքի առաջնորդի, Նոր Գետիկի վանքից Մխիթար Գոշի, Հաղարծնի, Խորակերտի վանքերի վարդապետների անուններից: Նամակում կտրուկ մերժվեց Բյուզանդական եկեղեցուն դավանանքային որևէ զիջում անելու գաղափարը և երկու բնության վերաբերյալ բանաձևը, որը համազոր համարվեց նեստորական հերձվածին[697]:

---

694 Տես Ն. Ակինեան, Ներսես Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 11:

695 Տես Ընդհանրական թուղթք սրբոյն Ներսիսի Շնորհալւոյ, էջ 169 և հտ.:

696 Բարսեղն իբրև կաթողիկոսական փոխանորդ, իրականացնում էր հյուսիս-արևելյան Հայաստանի եկեղեցական իշխանությունը:

697 Տես Ընդհանրական թուղթք սրբոյն Ներսիսի Շնորհալւոյ, էջ 308-311:

Գրիգոր IV քաջ գիտակցում էր, որ Բյուզանդիան այլևս ազդեցություն չունի Մեծ Հայքում, ուստի հնարավոր չէ նրա վարդապետներին պարտադրել կայսեր և պատրիարքի կամքը: Բայց քանի որ Փոքր Ասիայում կայսրության ազդեցությունը տակավին զգալի էր տալիս իրեն, ուստի Հայոց կաթողիկոսի համար դժվար էր եկեղեցիների միության առաջարկին ընդդիմանալը: Այնուամենայնիվ նա փորձեց տարհամոզել արևելահայ հոգևոր հայրերին, որոնց հղած թղթում նա հորդորեց ընդունել եկեղեցիների միության առաջարկը, չմոռանալով նշել նաև Բյուզանդական եկեղեցու կողմից խոստացված հնարավոր զիջումների մասին[698]:

1178թ. ապրիլի 9-ին գումարված Հռոմկլայի եկեղեցաժողովը պետք է պատասխաներ երկու եկեղեցիների միության վերաբերյալ Մանուել կայսեր առաջարկին: Ժողովին մասնակցում էին արևելահայոց հոգևոր առաջնորդներն Անիի Բարսեղ Պահլավունի արքեպիսկոպոսի գլխավորությամբ, ինչպես նաև Հարավային Հայաստանի վեց եպիսկոպոսներ, նաև Աղվանից կաթողիկոսը և ուրիշ եկեղեցականներ: Սանահնի վանքի հոգևոր այրերը Գրիգոր վարդապետ Տուտեորդու գլխավորությամբ հրաժարվեցին մեկնել Հռոմկլա և դատապարտեցին կայսեր կողմից առաջարկված միությունը: Գրիգոր Տուտեորդին այդ առնչությամբ նամակ է ուղարկում Գրիգոր IV Տղային: Նամակը թեև մեզ չի հասել, բայց կաթողիկոսի կողմից Գրիգոր Տուտեորդուն ուղարկած պատասխանից երևում է, որ վերջինս դատապարտել է եկեղեցիների միության և կրոնական նորամուծությունների կողմնակիցներին և պաշտպանել Հայոց եկեղեցու հայրենադիր դավանությունը: Կաթողիկոսը Գրիգոր Տուտեորդուն մեղադրում է որպես խռովարարի, կռվազանի, կաթողիկոսական իշխանությանն ընդդիմացողի և փորձում է հերքել իր և մյուս ժողովականների հասցեին նրա կողմից հնչեցրած մեղադրանքները[699]: Այնուամենայնիվ Գրիգոր Տուտեորդու հղած թուղթն ունեցավ իր ներգործությունը, և Հռոմկլայի ժողովն անսալով Հայոց բնաշխարհից հնչած զգուշացնող ձայներին, մերժեց միության վերաբերյալ Մանուել կայսեր առաջարկը և դատապարտեց Քաղկեդոնի ժողովի ընդունած հավատո բանաձևը («Լևոնի տոմարը»)[700]: Գրիգոր IV Տղան և նրա հետևորդները Հայոց եկեղեցու միասնությունը

---

[698] Տես նույն տեղում, էջ 314-315:

[699] Տես Գրիգորի կաթողիկոսի Տղայ կոչեցելոյ Նամականի, Վենետիկ, 1838, էջ 5 և հտ.:

[700] Տես Ընդհանրական թուղթք սրբոյն Ներսիսի Շնորհալւոյ, էջ 190-196: Գրիգոր Տուտեորդու մասին տես Ա. Բոզոյան, Գրիգոր Տուտեորդի վարդապետին վերաբերող վկայությունների քննություն («Շողակաթ» հանդես, Ստանպուլ, 1995, էջ 55-62):

վեր դասեցին հզորազոր կայսրության եկեղեցու հետ միության հեռանկարից:

Մանուել կայսեր հաջորդները չհրաժարվեցին եկեղեցիների շուրջ բանակցությունների դիմելուց: Իսահակ II Անգելոս կայսրի (1185-1195) օրոք Գրիգոր Տղան իր բանակցությունները շարունակեց բյուզանդական արքունիքի հետ: Դա հավաստվում է 1185 կամ 1186թ.թ. կաթողիկոսին կայսեր պատասխան նամակով, որից երևում է, որ Գրիգոր IV –ը երկու նամակներով շարադրել է Քրիստոսի բնության մասին Հայոց եկեղեցու դավանությունը, մերժելով երկաբնակությունը[701]: Ավելորդ համարելով խաղաղ եղանակներով հայերին դավանափոխելու, Բյուզանդական եկեղեցուն ենթարկելու ձեռնարկումները, կայսրը որոշեց բռնի միջոցներով նրանց պարտադրել քաղկեդոնական երկաբնակությունը: Նա, ինչպես վկայում է Վարդան Արևելցին,- «յարոյց հալածանս և չարչարանս հայադաւան ազգաց, զի դարձցին յաղանդ նոցա»[702]: Պատմագիրը, ինչպես տեսնում ենք, քաղկեդոնականությունը որակում է իբրև աղանդ: Իսահակ կայսեր հարուցած դավանական բռնություններին վերջ տալու ակնկալությամբ Գրիգոր IV Տղան հատուկ թղթով նրանից խնդրեց «խաղաղանալ ընդ ժողովրդեանն Աստուծոյ», սակայն ապարդյուն: Կայսրը չանսաց Հայոց հովվապետին և շարունակեց դավանափոխության գործընթացները, որոնց հետևանքով նա «զյոլովս դարձոյց ի կրօնս իւր, և զայլս հալածականս արար»[703]: Արդյունքում շատ հայեր հարկադրված եղան ընդունել քաղկեդոնականություն:

Գրիգոր IV Տղան ի հակակշիռ Իսահակ II կայսեր դավանական ոտնձգությունների, փորձեց ձեռք բերել Լատին եկեղեցու զորակցությունը և 1185թ. իր պատվիրակ Գրիգոր եպիսկոպոսին ուղարկեց Հռոմի Լուկիոս III պապի մոտ՝ Վերոնա քաղաք: Վերջինս պատվով ընդունեց Հայոց կաթողիկոսի պատվիրակին, խոստացավ օգնել հայերին նաև, իհարկե, առաջարկեց Հայ եկեղեցին միավորել Հռոմի եկեղեցու հետ: Պապը նրբախնդրորեն շրջանցեց Քրիստոսի երկու բնության հարցը, բայց առաջարկեց Հայոց եկեղեցու ծիսակարգում մուծել մի քանի համեմատաբար թեթև կաթոլիկական ծեսեր (հաղորդության բաժակում մի քիչ ջուր խառնել, Քրիստոսի ծննդյան տոնը նշել դեկտեմբերի 25-ին, մյուռոնն օրհնել յուրաքանչյուր տարվա ավագ հինգշաբթի օրը, եպիսկոպոսի ձեռնադրությունը կատարել կիրակի օրը և այլն)[704]:

---

[701] Տես Հր. Բարթիկյան, Իսահակ Անգեղոս կայսեր պատասխան նամակը Հայոց կաթողիկոս Գրիգոր Տղային («Էջմիածին», 1967 N 4, էջ 53-55):

[702] Վարդան Արևելցի, ՀԹ, էջ 133:

[703] Նույն տեղում:

[704] Տես Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, Գ., էջ 144:

Վարդան Արևելցին հաղորդում է, որ Հռոմի պապը Գրիգոր IV Տղայի պատվիրակի միջոցով նրան ուղարկում է «վակասն և զպսակն և զկօշիկն, զի զայն զգեցեալ պատարագեսցէ մատանեաւ հանդերձ: Եւ ասէ ցեպիսկոպոսն Գրիգոր. տար և զգեցո պատրիարգին. և յայնմ հետէ նմա լիցի իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից»: Եվ իբր Լուկիոս III պապն իր մոտ է հրավիրում Գերմանիայի կայսրին, Անգլիայի և Ֆրանսիայի թագավորներին, հոգևոր առաջնորդներին «և ի խորհուրդ մտեալ նոքօք», նրանց անունից հրաման է արձակում, որպեսզի «Հայոց պատրիարգն յայնկոյս ծովու իշխանութիւն կալցի ի վերայ Հայոց և Յունաց և ամենայն ազգաց, որպէս մեք յայսմ կողմանէ երկնաւոր և երկրաւոր բանալեօք»[705]:

Պատմագրի չափազանցված այս վկայության մեջ նկատելի է Արևելքի քրիստոնեական աշխարհում Հայոց եկեղեցուն առաջատար դեր վերապահելու՝ Կաթոլիկ եկեղեցու միտումը, անշուշտ, ի հեճուկս Հռոմին հակոտնյա Ուղղափառ եկեղեցու: Հռոմի պապը նաև կամենում էր Արևելքի քրիստոնյաների նկատմամբ ապահովել հոգևոր գերակայություն՝ հենվելով Հայոց եկեղեցու աջակցության վրա: Նրա մտադրությունը հասկանալի է դառնում խաչակրաց երրորդ արշավանքի նախապատրաստման հետ կապված իրողությունների քաղաքական հետնախորքի վրա: Լուկիոս III պապը հույս էր ակնկալում Կիլիկիայի հզորացող Ռուբինյան պետությունը դարձնել խաչակիրներին զորակցող ուժ[706]: Դրանում անշուշտ, մեծ էր կաթողիկոսի կատարած դերը: Վերջինս նաև ուներ իր զորայիններ-ը, որոնք նրա հրամանով պաշտպանում էին կաթողիկոսանիստ Հռոմկլան[707]: Գրիգոր IV-ի կոչով կիլիկահայությունը կարող էր զորակցել խաչակիրներին: Ուշագրավ է, որ հետագայում՝ 1189թ. մայիսի 29-ին Հռոմի Կղեմես III պապը նամակ է հղում Գրիգոր IV Տղային, խնդրելով զորակից լինել խաչակիր զորքին[708]: Պապի այս քայլն անշուշտ ուներ նաև ուրիշ դրդապատճառներ: Կղեմես III-ին չէր կարող չանհանգստացնել խաչակիրների հանդեպ Բյուզանդիայի Իսահակ II կայսեր թշնամական դիրքավորումը, որը հատկապես ցայտուն դարձավ Հայոց կաթողիկոսին նրա ուղարկած նամակից մոտ մեկ ամիս հետո, երբ կայսրը պայմանագիր կնքեց Եգիպտոսի հզորազոր սուլթան, խաչակիրների երդվյալ հակառակորդ Այուբյան Սալահ ադ-Դինի հետ[709], որը գրավել էր Երուսաղեմը: 1189թ. Գրիգոր IV-ը նամակ է ուղարկում խաչակրաց երրորդ արշավանքի դիմած գերմանական Ֆրիդրիխ Բարբարոսա կայսեր, որն այդ պահին

---

[705] Վարդան Արևելցի, ՀԹ, էջ 134:

[706] Հմմտ. Г. Микаелян, История ук. соч., с. 154.

[707] Տես Michel le Syrien, Chronique, vol. III, p. 395.

[708] Տե՛ս Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, Գ, էջ 155-156:

[709] Տե՛ս История Византии, т. II, М., 1967, с. 341.

արդեն գրավել էր Իկոնիայի թուրքական սուլթանության տարածքները[710]: Իր հերթին կայսրն արդեն երեք անգամ դիմել էր Լևոն II Ռուբինյանին, խնդրելով զորակից լինել իրեն[711]: Ֆրիդրիխ Բարբարոսան Գրիգոր IV Տղային գրավոր կերպով իրազեկում է, որ շուտով ժամանելու է նրա մոտ և թագադրելու է Լևոն II-ին՝ համաձայն կաթողիկոսի ցանկության: «Ահա,- գրում է նա,- ունիմ թագ և զգեստ, զի օծցես թագաւոր Հայոց՝ զոՀ ընտրես»[712]: Այդպիսով կայսրը հույս ուներ ձեռք բերել Կիլիկիայի հայության զինական աջակցությունը խաչակիր զորագնդերին: Կայսրը չհասցրեց դաշինք կռել Լևոն II-ի հետ, քանի որ նույն թվականի ամռանը խեղդվեց գետում լողանալիս: Խաչակրաց երրորդ արշավանքը ձախողվեց, քանի որ քրիստոնյա զորքին կարողացավ նեղը լծել Եգիպտոսի տիրակալը, որի ուժերը գնալով ավելի էին աճում: Վերջինս սպառնում էր նաև Կիլիկիայի հայկական պետությանը: Փխրուն էր նաև կաթողիկոսանիստ Հռոմկլայի դրությունը, քանի որ այն շարունակում էր մնալ Եգիպտոսի Այուբյան սուլթանության գերիշխանության ոլորտում[713]: Ուստի Գրիգոր IV-ը նամակով դիմում է նաև Եգիպտոսի սուլթան Սալահ-ադ-Դինին[714]:

Սալահ-ադ-Դինի օրոք Եգիպտոսի բանակի ղադի (դատավոր), արաբ պատմագիր Իբն Շադդադն իր «Սալահ-ադ-Դինի պատմության» մեջ գրում է, որ վերջինս «մի նամակ ստացավ Հայոց առաջնորդ կաթողիկոսից, որը Եփրատի կողմը գտնվող Հռոմկլայի տերն էր»: Նամակում Գրիգոր IV Տղան սուլթանին հորջորջում է «հավատացյալների պետ, որ բարձր է բռնում արդարության և բարեգործության դրոշը, որ ինքնին խաղաղության հաստատումն է աշխարհի և կրոնի»: Այնուհետև կաթողիկոսը հաջողություններ է մաղթում Եգիպտոսի տիրակալին, գրելով. «Թող Աստված տևական դարձնի իր բարգավաճումը, կրկնապատկի իր վեհությունը և հաջողությամբ պսակի իր բոլոր հույսերն ու նպատակները և պահի

---

[710] Տես Սմբատ Սպարապետ, էջ 201:

[711] Տես Г. Микаелян, ук. соч., с. 144.

[712] Վարդան Արևելցի, էջ 136:

[713] Արաբ մատենագիր Յակուտը (1178-1229) իր «Աշխարհագրական բառգիրք»-ում հետևյալն է գրում Հռոմկլայի մասին. «Ամուր բերդ է Եփրատի արևմտակողմում... Աթոռն է Հայոց պատրիարքի, որը Մեսիայի փոխանորդն է նրանց մոտ: Այդ բերդը ընկնում է մուսուլմանական հողերի մեջտեղ և այն էլ միայնակ, որ մնացել է հայերի ձեռքում, մինչդեռ շրջապատն ամբողջովին գրավված է» (Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 100):

[714] Այս մասին տես Յ. Քյուրտեան, Գրիգոր Տղայ և Սալահ էդ-տին («Բազմավէպ», 1975, էջ 172 և հտ.), տես նաև Վ. Տեր-Ղևոնդյան, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145-1226 թվականներին, Երևան, 1994, էջ 90-92:

նրան ճոխության և կատարելության մեջ»: Կաթողիկոսը չվարանեց տվյալներ հաղորդել «Ալամանների թագավորի» (Ֆրիդրիխ Բարբարոսայի) գլխավորած խաչակիր զորքի արշավուղիների մասին, ինչպես նաև Բյուզանդիայի կայսեր, Իկոնիայի սուլթանի դեմ խաչակիր զորքի մղած մարտերի, Լևոն II-ի հետ Ֆրիդրիխ Բարբարոսայի առնչակցության վերաբերյալ: Ավելին, Գրիգոր IV –ը սուլթանին խոստանում է նաև տեղեկացնել առաջիկա եղելությունների մասին[715]:

Սալահ ադ-Դինին Գրիգոր IV Տղայի հղած նամակի մասին որոշ տվյալներ է հաղորդում նաև դեպքերին ժամանակակից արաբ մեկ այլ մատենագիր՝ Աբու-Շամաթը, գրելով. «Հայաստանի պետը՝ Կալաթ ար-Ռումի տերը, ապահովված (լինելով) այդ ամուր դղյակի մեջ, շրջապատված Եփրատի հարկատու բնակչությամբ, սուլթանին ուղղեց մի նամակ՝ լի խորհուրդներով ու հոգածությամբ, որի մեջ նա ցույց է տալիս մուսուլման երկրների նկատմամբ իր մտադրությունը, վեր հանելով արշավող բանակի ուժը և նրա դեմ գնացող բանակների թուլությունը»[716]:

Դեպի ուժեղը կողմնորոշվելու դիրքավորումը բնորոշ էր ոչ միայն Հայոց հայրապետին: Հեթում պատմիչն իր «Տարեգրության» մեջ վկայում է, որ մի քանի տարի հետո՝ 1192թ. նույնիսկ Անգլիայի թագավոր Ռիչարդ Առյուծասիրտն «արար սէր ընդ Սալահատինն», որը քրիստոնյաներին հանձնեց Միջերկրական ծովի արևելյան ափին գտնվող չորս քաղաք[717]: Գրիգոր IV Տղայի դիրքորոշումը նրա խաղաղասիրական միտումների դրսևորումն էր: Հայոց զգոնամիտ հայրապետը ջատագով էր տարբեր ժողովուրդների համերաշխության ու խաղաղակեցության՝ անկախ կրոնական, դավանական և այլ բնույթի խտրոցներից: Նա ելնում էր ամենից առաջ տարբեր ազգերի հետ կողք-կողքի ապրող իր հայրենակիցների անվտանգության շահերից, համոզված էր, որ խաղաղության են հակված նաև մյուս ազգերը: «Ամենայն ոք,- գրում է Գրիգոր IV-ը,- ծարաւի է խաղաղութեան և սիրոյ Աստուծոյ, Ֆռանկք, Յոյնք, Սուրիացիք, Նեստորականք և Իսմայէլացիք...»[718]:

Սակայն-Սալահ ադ-Դինի նվաճողական ձեռնարկումները հետզհետե ընդլայնվեցին, սպառնալով Արևելքի քրիստոնեական աշխարհին, նաև Կիլիկիայի հայկական պետությանը: Սալահ ադ-Դինը կարողացավ

---

[715] Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 294-297:

[716] Նույն տեղում, էջ 302: Աբուսահլը վկայում է, որ Ռուբեն III-ը և Գրիգոր Տղան պատվիրակություն են ուղարկում Սալահ-ադ-Դինի, նրա եղբոր և Եգիպտոսի փոխարքայի մոտ, սակայն պատվիրակությունը ցանկալի արդյունքների չի հասնում (տես Աբուսահլ Հայ, էջ 31):

[717] Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. I, էջ 77:

[718] Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, Էջմիածին, 1865, էջ 454:

գրավել Սիրիան, Վերին Միջագետքը և ոչ շուրջը համախմբել այնտեղ հաստատված մահմեդական իշխանությունները, մինչդեռ քրիստոնեական աշխարհը մնում էր մասնատված, ինչին Գրիգոր IV Տղան ցավով է արձագանքում: Նա «Ողբ Երուսաղէմի» պոեմը գրեց 1189թ.՝ խաչակրաց երրորդ արշավանքի տարում, երբ քրիստոնյաների առջև վերստին ծառացավ այլահավատների դեմ միավորվելու անհրաժեշտությունը: Հայոց հայրապետը միավորման մեջ էր տեսնում Արևելքի քրիստոնյաների, այդ թվում նաև հայերի գոյատևման երաշխիքը: «Ողբ Երուսաղեմի» պոեմում 1187թ. Սալահ-ադ-Դինի կողմից գրավված Երուսաղեմ քաղաքը բողոքում է, որ քրիստոնյա տիրակալները զորակից չեղան իրեն, ի հետևանս որի՝

Թողեալ լքայ որպէս զայրին,
Աշխատեցայ միայն լռին,
Եւ ոք չհասաւ ինձ ի թիկին...
Այսօր չգտաւ ոք բնաւին
Ինձ օգնական յանյոյս վայրին
Ոչ ի թիկունս եկեալ հասին,
Ոչ ձեռն ետուն պատերազմին
Առ հաւասար բարձի թողին
Զիս միայնիկ ըստ կաքաւին...

Քրիստոնեության սրբավայրը տրտնջում է, որ իր եղբայրներն ու քույրերը լքեցին իրեն՝

Եւ առաւել զայն սիրեցին
Որք խոցոտեալ զիս խեթկեցին
Վասնորոյ գայլքն կատաղին,
Որք արեանս իմ ծարաւ էին...

Անգամ Հռոմի պապը,- բողոքում է Երուսաղեմը,- օգնության չհասավ իրեն:

Ամենեքեան անտեսեցին
Զերուսաղէմս, ուր պարծէին,
Յիս թիկունս դարձուցին...

Սուրբ քաղաքը բողոքում է նաև այն բանի համար, որ քրիստոնյաները խախտեցին իրենց երդմնադաշինքը, «չյիշեցին զուխտս դաշացն, զոր եդին»[719]:

---

[719] Գրիգոր Տղա, Բանաստեղծություններ և պոեմներ, Երևան, 1972, էջ 268-271: Ժամանակակից քրիստոնյաների ըմբռնումով Երուսաղեմի պահպանումը նույնանում էր իրենց հավատի փրկության և Քրիստոսի փառքի հետ: Ուրբանոս I պապը ստանալով Երուսաղեմի գրավման լուրը, վախճանվեց կաթվածից: Երուսաղեմի գրավումը համարվում էր աստվածառաք պատիժ: (Г. Минто, История Крестовых походов. Москва-С. Петербург, 2004, с. 115):

Երուսաղեմի դառն ճակատագիրը կարող էր կիսել նաև Կիլիկյան Հայաստանը: Դա լուրջ մտահոգության տեղիք էր տալիս նաև Հռոմկլայի հայրապետանոցի հոգևոր հայրերի միջավայրում: Տագնապահարույց էր հատկապես 1193թ. Սալահ ադ-Դինի վերջնագիրը, որով նա Լևոն II-ից պահանջում էր իրեն հանձնել Կիլիկիան և հեռանալ այնտեղից: Կտրուկ մերժում ստանալով Լևոն II-ից, սուլթանն իր ահեղազոր բանակը շարժեց Կիլիկիայի հայկական պետության դեմ[720]: Դժվար է ասել, թե ինչ արհավիրքներ էր կրելու Կիլիկիայի մեկ միլիոնի հասնող հայ բնակչությունը, եթե Սալահ ադ-Դինի հանկարածահաս մահը չկասեցներ այդ արշավանքը[721]:

Ժամանակակից գրչի թողած հիշատակարանում Երուսաղեմի գրավումն աղերսակցվում է Կիլիկիայի Հայոց պետության դեմ Սալահ ադ-Դինի և նրա արբանյակների ձեռնարկած արշավանքների հետ: Հիշատակարանում արտացոլք է գտել Գրիգոր IV Տղայի վերաբերմունքը նվաճողների հանդեպ: Նա ըստ հարկի զորակից էր հայ ռազմիկներին և իր մարտասնույց հորդորներով ոգեվառում էր նրանց, կատարում այն, ինչ ցանկանում էր իր չարչարաբեկ հոգին: Եվ երբ Սալահ-ադ-Դինը զորքով դիմում է Կիլիկյան Հայաստանի վրա՝ «նոյնպէս կարծելով զնոսա անարիս գոլ», Գրիգոր IV Տղա հայրապետը, որը բազում տառապանքներ էր կրել «ի շրջաբնակ այլազանիցն... խրատէր և զաւրացուցանէր զթագաւորն և զզաւրսն Կիւղիկեցւոց՝ ընդդէմ կալ նորա չարութեանն որ և ոչ եւս կարաց ձեռն արկանել ի նոսա»[722]: Գրիգոր IV Տղայի «Ողբ Երուսաղէմի» պոեմում խաչակիր զորքին հաղթած թշնամիները գրոհում են Կիլիկիայի վրա, սակայն Լևոն II-ը «որպէս զարծիւ» մտնում է մարտադաշտ և պարտության մատնում ոսոխին: Պոեմի հեղինակը Լևոն II-ին նմանեցնում է աստվածաշնչական հերոս Մակաբեին, հայերի նախահայր Հայկ դյուցազունին, Տիգրան Մեծին և ուրիշների[723]:

Վերը նշված հիշատակարանի հեղինակի հավաստմամբ, Գրիգոր IV կաթողիկոսը ականատես լինելով քրիստոնյաների կրած անլուր տառապանքներին, «զառումն սրբոյ քաղաքին և զաւերումն սրբոյ տաճարացն և զգերութիւն ժողովրդեանն Աստուծոյ, և զայլանդակ գործ պղծութեան նոցա... խնդրէր զփրկութիւն սրբոյ քաղաքին և ժողովրդեանն Աստուծոյ, գրէր և ցուցանէր զամենայն թագաւորացն Յունաց և Հռովմայեցւոց, զի թէ իցեն ինչ ձեռնհաս, եկեսցեն յաւգնութիւն քրիստոնէից»[724]:

---

[720] Տես Սմբատ Սպարապետ, էջ 204:
[721] Տես նույն տեղում:
[722] Գ. Յովսէփեան, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, էջ 568:
[723] Գրիգոր Տղա, Բանաստեղծություններ և պոեմներ, էջ 303-305:
[724] Գ. Յովսէփեան, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, էջ 568:

Դժնդակ այս ժամանակներում Գրիգոր IV-ը հոգածու վերաբերմունք էր ցուցաբերում նաև Մեծ Հայքի հոգևորականներին հուզող խնդիրների նկատմամբ: Ստեփաննոս Օրբելյանի վկայությամբ Սյունիքի եպիսկոպոս Ստեփաննոս III-ը որոշում է իր աթոռանիստը Տաթևից տեղափոխել Վայոց ձոր գավառ, Ամաղուի Նորավանք, քանի որ սելջուկ-թյուրքերը 1170թ. ավերել էին Սյունյաց թագավորության մայրաքաղաք Բաղաբերդը, կողոպտել Տաթևի վանքը: Զաքարյանների հովանու ներքո Վայոց ձորը քաղաքական անդորր էր վայելում: Նոր աթոռանիստ փոխադրվելու համար Սյունյաց հովվապետը դիմում է Գրիգոր IV Տղային և «խնդրէ թուղթ շրջաբերականի ի մեծ կաթողիկոսէն Հայոց ի տէր Գրիգորէ զի լիցի սեպհական վիճակ ժառանգութեան այս գաւառք սուրբ ուխտին Նորավանից»[725],- գրում է Սյունյաց պատմագիրը:

Գրիգոր IV Տղան նախանձախնդիր էր Հայոց եկեղեցու դավանական անաղարտության, նրա հինավուրց հավատքի պահպանման գործում: Նա ջանքեր էր ներդնում հայ ժողովրդին իսլամի ահագնակուլ հորձանքից պաշտպանելու համար: Գրիգոր IV գրեց նաև հավատաբանության խնդիրներ շոշափող գործեր՝ ուղղված քաղկեդոնականության, ինչպես նաև իսլամի դեմ: Իր բանաստեղծություններում նա շոշափում է նաև փրկագործության խնդիրը, անդրադառնում գիտական, իմաստասիրական, աստվածաբանական, խրատական բնույթի հարցերի, ազդվելով Գրիգոր Նարեկացուց և Ներսես Շնորհալուց: Նա դատափետում է ժամանակի հասարակական կեցության հոռի կողմերը, ջանալով սրբագրել դրանք, որպեսզի հայությունը զերծ մնա պառակտման վտանգից[726] և ի զորու լինի միասնաբար դիմակայել իսլամի հարաճուն ազդեցությանը: Այդ նպատակով Գրիգոր IV-ը որոշակի ջանքեր ներդրեց հայոց ինքնուրույն օրենքների ստեղծման և համակարգման համար: 1191թ. Մեծ Հայքից Կիլիկյան Հայաստան են ժամանում մի խումբ հոգեվորականներ, որպեսզի ձեռք բերեն հայերեն դատաստանի գիրք: Նրանք դիմում են Գրիգոր IV-ին, որը սակայն չի կարողանում գոհացում տալ նրանց՝ այն պարզ պատճառով, որ տակավին չէր ստեղծվել նման օրինագիրք: Կաթողիկոսը Ներսես Լամբրոնացուն հանձնարարում է հայերենի վերածել ասորերեն դատաստանագիրքը: Լամբրոնացին թարգմանում է այն, ինչպես նաև հռոմեական որոշ օրինադրույթներ (հունարենից): Լամբրոնացին այդ առթիվ գրում է. «Որք իսմայելացւոցն էին իշխանք ի քաղաքս և դատաւորք՝ զդատ Հայաստանեայցս ոչ դատէին, այլ զխնդրողսն իրաւանց՝ առ իւրեանց աւրէնս առաքէին. զի այս էր ի նախգլուխ մելիքացն հրաման առ

---

[725] Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 351:

[726] Տե՛ս Գրիգոր Տղա, Բանաստեղծություններ և պոեմներ, էջ 179-243, 334-425:

դատաւորս քաղաքաց. յիւրեանց յօրինացն դատ թողուլ զնոսին»[727]: Բայց դրանք չգործադրվեցին Հայաստանում: Տարաստիզված հայ զանգվածներին միասնական իրավակեցությամբ օժտելու, Հայոց պետականության ավանդները վառ պահելու նպատակով Գրիգոր IV Տղան սատարեց Մխիթար Գոշին՝ ստեղծելու իր «Գիրք դատաստանի» կոթողային աշխատությունը, որի հիշատակարանում հեղինակը դիմելով Գրիգոր IV Տղային, գրում է. «Ձսուրբ և զաստուածարեալ գլխոյդ եկեղեցացս Հայաստանեայց և հանուրց կարգաց պետի անուանակրութեամբ, Տեառնդ մերոյ հոգեւորի եւ Լուսաւորչին մերոյ սրբոյ կոչման եւ աթոռոյ ժառանգաւորի, զհարկ հոգեւոր հրամանի նուաստս յամենայնի ամենայնիւ Մխիթար ընկալայ զոր վասն գրոցս էր դատաստանի ի ձեռն եղբաւր եկելոյ ի Ձենջ... Աստուծոյ վարկանելի է զձերդ վճիռ»[728]:

Գրիգոր IV Պահլավունին հովանավորում էր նաև ականավոր բժիշկ և բնագետ Մխիթար Հերացուն, որը նրա պատվերով 1184թ. շարադրեց «Ձերմանց մխիթարութիւն» աշխատությունը: Այդ առթիվ Հերացին գրում է. «Հաւաքեցի, և թարգմանեցի ի հայ բառ: Պատճառ ունելով այսմ աշխատութեան և զսէր և զյոժարութիւն սրբոյ և աստուածապատիւ կաթողիկոսին Հայոց, տեառն Գրիգորի, որ մականոչի Տղայ... որ և պատճառն է գրոցս»[729]:

Գրիգոր IV Տղան նաև մեծ գրասեր, գրահավաք էր: Այս փաստը շեշտում է Մխիթար Հերացին[730]: Հատկանշելի փաստ է, որ Սանահնի վանքի վանահայր Գրիգոր Տուտեորդուն ուղարկած նամակներից մեկում Գրիգոր IV Տղան գիրքը վեր է դասում գանձից և հավաստում է, թե որևէ այլ ցանկություն չունի, բացի «զաստուածային գրեանս ժողովելոյ»[731]: Նա անդուլ հետևողականությամբ հարստացնում էր Հռոմկլայի հայրապետանոցի գրատունը, մտավոր եռանդ էր հաղորդում հոգևոր դասին,

---

[727] Տես Կ. Բասմաջեան, Քաղաքային օրէնք Ներսէսի Լամբրոնացւոյ, Պարիս, 1907, էջ 5, Ն. Ակինեան, Ներսէս Լամբրոնացի, էջ 246: Ներսես Լամբրոնացու թարգմանած օրենքները մնացին լոկ որպես ձեռագիր արժեքներ:

[728] Ցուցակ հայերէն ձեռագրաց Ձմմառի վանքի Մատենադարանին, Վիեննա, 1964, էջ 425: «Գիրք դատաստանի» գործի հիշատակարանում հեղինակը գրում է. «...Հրաւիրեցաք ի ձեռնարկութիւնս գրոց դատաստանիս եւ յորդորմամբ ի ձեռն թղտո տեառն Գրիգորիսի հաց կաթողիկոսի ձեռնարկի եւ սկսա ես՝ տառասելս Մխիթար, որ եւ Գոշ, եւ յետին ի գիտնականս...» (Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, աշխ. Խ. Թորոսյանի, Երևան, 1975, էջ 172):

[729] Մխիթար Հերացի, Ձերմանց մխիթարութիւն, Վենետիկ, 1832, Առաջաբան:

[730] Նույն տեղում:

[731] Ա. Տէր-Միքելեան, Միջին դարերի կաթողիկոսների ձգտումները եկեղեցական խաղաղութեան համար («Արարատ», 1893, էջ 232-233):

ներշնչում հարգանք հայրենավանդ ստավոր արժեքների նկատմամբ և կորովամտություն՝ ընդդեմ օտարամույծ հոսանքների:

Գրիգոր IV Պահլավունին վախճանվեց Կիլիկիայի հայոց պետության մայրաքաղաք Սիսում, 1193թ. մայիսի 16-ին: Նրա աճյունն ամփոփվեց Սիսի հարավ-արևմտակողմում գտնվող նշանավոր Դրազարկ վանքում[732], որը Ռուբինյան գահակալների դամբանատեղին էր:

Գրիգոր IV պահլավունին իր նախորդների պես մեծ ավանդ ունեցավ իր սերնդի հոգևոր ձևավորման գործում, լիաբուռն ջանքերով կոփեց նրա հույսն ու հավատը: Հարևան հզոր պետությունների ամենակուլ քաղաքականության պայմաններում կարողացավ իր հոտը պաշտպանել իսլամի զորեղ ազդեցությունից, կանխեց քաղկեդոնական ծիսածների մուտքը Հայոց առաքելաշավիղ եկեղեցի: Նա իր մեջ զուգորդում էր ազգայինն ու համամարդկայինը, մշտապես ջանում թեթևացնել հարազատ ժողովրդի ուսերին ծանրացած փորձությունների բեռը:

Գրիգոր IV Տղայից հետո կաթողիկոսական գահաթոռին բազմում է նրա քեռորդի, Պահլավունի Գրիգոր V Քարավեժը[733], որը հավատարիմ մնաց Պահլավունյաց տոհմի հոգևոր ավանդներին, հետևեց իր նախորդի դավանաբանական սկզբունքներին: Սմբատ Սպարապետի վկայությամբ Գրիգոր V-ը ոչ ոքի չէր ենթարկվում, այլ «ինքնիշխանութեամբ տանէր զհայրապետութիւնն, որպէս տեսեալն էր ի քեռին իւր»: Որոշ «ավագագույն մարդիկ» թշնամանքով առլցվելով նրա հանդեպ, Լևոն II թագավորին հաղորդում են, որ իբր Գրիգոր V-ը չունի «իմաստութիւն վարել զհայրապետութիւն որպէս արժան է»: Նրանք կաթողիկոսին ամբաստանում են Լևոն II-ի առջև այնքան ժամանակ, մինչև որ վերջինիս հակում են իրենց կողմը[734]: Չարախոսողները հավանաբար լատինասեր իշխաններն ու եկեղեցականներն էին: Ենթադրվում է, որ Լևոն II-ն ընդառաջում է նրանց, քանի որ չէր կամենում հարաբերությունները վատացնել կաթոլիկադավան տիրակալների հետ, որոնք իրեն թագ էին խոստացել: Բայց առանց նրանց կողմից թագ ստանալու, նա ուներ իրեն արքա հռչակելու բոլոր հնարավորությունները:

Հավատարիմ Պահլավունի տոհմի ավանդներին, Գրիգոր V-ը պահպանում էր մերձակցությունը արևելահայ հոգևորականության հետ, ի հեճուկս լատինասեր կղերականների[735]: Գրիգոր V-ը մտացի եկեղեցական էր: Սմբատ Սպարապետը գրում է, թե նա կաթողիկոսի գահին բազ-

---

732 Տես Սմբատ Սպարապետ, էջ 204, Սամուել Անեցի, էջ 139, 164:

733 Տես Սմբատ, էջ 204-205:

734 Տես Մ. Օրմանեան, Ա, սյունակ 1759:

735 Տես Գրիգորի կաթողիկոսի Տղայ կոչեցելոյ Նամականի եւ Ներսեսի Լամբրոնացւոյ Ատենաբանութիւնք եւ Թուղթ եւ ճառք, Վենետիկ, 1865, էջ 226-227:

մեց պատանի («տղայ») հասակում[736]: «Տղայ» վերադիրն այստեղ լոկ մականուն է, որ գործածում են նաև Վարդան Արևելցին, Կիրակոս Գանձակեցին և ուրիշներ, անշուշտ, նկատի ունենալով նրա տարիքը, գուցե և բազմափորձ չլինելը: Այնուամենայնիվ, Գրիգոր V-ը մինչև հայրապետ ընտրվելն արդեն ստացել էր եպիսկոպոսական աստիճան[737]:

Լևոն II-ը նպատակադրվել էր իր ազդեցությունը տարածել նաև Մեծ Հայքի հոգևորականության վրա, ուստի թվում էր, թե պետք է բարեհաճ վերաբերմունք ցուցաբերի արևելահայ հոգևորականների համակրանքը վայելող Գրիգոր V-ի նկատմամբ: Սակայն թագավորն ընդառաջ գնաց կաթոլիկամետ կղերականներին և նրանցից Սիս քաղաքի Հովհաննես արքեպիսկոպոսին ու նրա ուղեկիցներին ուղարկեց Հռոմկլա, արտոնելով լայն իրավազորությամբ: Վերջիններիս, ինչպես վկայում է Սմբատ Սպարապետը, Հռոմկլայում ընդունեցին մեծ պատիվներով: Սակայն հենց որ նրանք նստեցին սեղանի շուրջը, Հովհաննես արքեպիսկոպոսի ազդանշանով նրա մարդիկ փակեցին ամրոցի դարպասները, առիթ տալով աղմուկի ու խառնաշփոթության: Հույժ զարմացած կաթողիկոսի հարցումին ի պատասխան, արքեպիսկոպոսն ասում է. «դու կալանված ես», որից հետո նրա մարդիկ բռնում են Գրիգոր V-ին և նետում բանտ: Կաթողիկոսի ծերբակալումը հուզեց շրջակա գյուղերի բնակիչներին, որոնք երեք օր փորձեցին ազատել հայրապետին, բայց ապարդյուն: Հովհաննես արքեպիսկոպոսը Գրիգոր V-ին տեղափոխեց Սիս՝ Լևոն II-ի մոտ, որը նրան փակել տվեց Կոպիտառ ամրոցում[738]:

Կիրակոս Գանձակեցու վկայությամբ Գրիգոր V-ը մյուս Պահլավունիների նման գեղանձն ու պարթևահասակ էր: «Բայց,- գրում է մատենագիրը, զի մախողք բազում էին նորա, արկին բարուրս ինչ ի վերայ նորա եպիսկոպոսքն նախանձոտք և մատնեցին զնա ստութեամբ Լևոնի թագաւորի: Եւ նա հրամայեաց արգելուլ զնա ի բերդ մի, մինչ քննութիւն լիցի ճշմարտութեամբ վասն նորա»: Լևոն II-ը կամեցավ դատաքննությանը վերահասու դարձնել նաև արևելահայ հոգևորականներին, ուստի «գրեաց թուղթ յԱրևելս՝ յաշխարհն Հայոց առ վարդապետս և եպիսկոպոսս, եթէ զինչ կամք իցեն նոցա վասն այնր»[739]: Ըստ Վարդան Արևելցու, Գրիգոր V-ը Լևոն II-ի կողմից բանտ է նետվել կաթողիկոսի աթոռին նստելուց «զկնի ամի միոյ»[740]: Սամուել Անեցին Գրիգոր V-ի կաթողիկոսության ժա-

---

[736] Տես Սմբատ, էջ 205:

[737] Մ. Օրմանյանը (Ազգապատում, Ա, սյունակ 1753) կարծում է, որ Գրիգոր V-ը հայրապետ օծվելիս 25 տարեկանից պակաս չպետք է լիներ:

[738] Տես Սմբատ, էջ 205-206:

[739] Կիրակոս Գանձակեցի, էջ 147-148:

[740] Վարդան, ՁԳ, էջ 139:

մանակը հաշվում է երկու տարի[741]: Ըստ Սմբատ Սպարապետի, Գրիգոր V-ը կաթողիկոսի աթոռին բազմել է 1193թ. և վախճանվել 1194թ.[742]: XIIIդ. մատենագիր Ստեփաննոս եպիսկոպոսի տարեգրության մեջ Գրիգոր V-ի մասին նշված է «Կաթողիկոս տէր Գրիգորիս ամ Ա»[743]: Հավանաբար, Գրիգոր V-ն աթոռակալել է սոսկ մեկ տարուց մի փոքր ավելի ժամանակամիջոցում: Նրա կյանքն ընդհատվեց ողբերգական հանգամանքներում: Մինչև Գրիգոր V-ի նկատմամբ կկայանար նախատեսվող քննությունը, նրա կողմնակիցները, համաձայն Սմբատ Սպարապետի մի վկայության, գաղտնի կապ են հաստատում նրա հետ և հորդորում հնար գտնել ամրոցից փախչելու համար, խոստանալով, որ իրենք կաթողիկոսին ձիով կտանեն Հռոմկլա իր աթոռանիստը: Կաթողիկոսն իբր միամտորեն հավատ ընծայելով նրանց խոսքերին, գիշերը փորձում է սպիտակեղենից հյուսված պարանի միջոցով իջնել պարսպապատից, սակայն սպիտակեղենը չի դիմանում նրա մարմնի ծանրությանը, և կաթողիկոսը ցած է ընկնում ու տեղնուտեղը վախճանվում[744]:

Ըստ երևույթին արևելահայ հոգևորականները կտրուկ դեմ են եղել Գրիգոր V-ի կալանմանը: Կիրակոս Գանձակեցին գրում է, որ մինչև արևելահայերից պատասխան կգար, Գրիգոր V-ը պարսպից ցած ընկնելով կնքել է իր մահկանացուն[745]: Սակայն մատենագիրը նաև նշում է, որ ըստ շրջանառվող լուրերի, «մախողքն նորա ընկեցին՝ եպիսկոպոսքն, որք ակն ունէին ժառանգել զաթոռն»[746]: Նրանցից հանվանե հիշվում են Հովհաննես արքեպիսկոպոսը և Ներսես Լամբրոնացին: Լևոն II-ը հավանաբար, չի կամեցել սրել հարաբերությունները արևելահայ հոգևորականների հետ և նրանց մասնակցությամբ փորձել է օրինական տեսք տալ Գրիգոր V-ի աթոռընկեցությանը: Սակայն վերջինիս ախոյանները չեն սպասել մինչև քննության կայանալը, երկյուղելով, որ Լևոն II-ը կարող է զիջել արևելահայ եկեղեցու հայրերին, որոնք խրախուսում էին Գրիգոր V-ի ինքնուրույն գործելակերպը և, ամենայն հավանականությամբ, զորավիգ էին լինելու տարաբախտ հովվապետին: Ինչևէ, Գրիգոր V Քարավեժի եղերական մահը ծանր կորուստ էր լատինամերժ հոգևորականության համար:

---

741 Տես Սամուէլ Անեցի, էջ 143:
742 Տես Սմբատ, էջ 204-205:
743 Տես Սանր ժամանակագրություններ, I, էջ 36:
744 Տես Սմբատ, էջ 206: Հմմտ նաև Վարդան, էջ 139:
745 Տես Կիրակոս Գանձակեցի, էջ 148:
746 Նույն տեղում:

* * *

Գրիգոր V Պահլավունու եղերական մահվանից հետո Տարսոն քաղաքում կայացած ժողովում Հայոց կաթողիկոս ընտրվեց Ներսես Շնորհալու ավագ եղբոր՝ Զորավարի որդին՝ Գրիգոր VI-ը՝ Ապիրատ կրկնանունով (որը նրա ավազանի անունն էր)[747]: Ներսես Շնորհալին գրում է, որ Ապիրատը երիտասարդական տարիներին եղել էր Կոստանդնուպոլսում, տրվել աշխարհիկ գայթակղությունների[748]: Այնուհետև նա իրեն նվիրել է հոգևոր զբաղումների և հորեղբոր (Շնորհալու) կողմից ձեռնադրվել եպիսկոպոս:

Համաձայն Վարդան Արևելցու վկայության, Գրիգոր IV Տղայի կաթողիկոս ընտրվելու ժամանակ Գրիգոր Ապիրատը մեկնեց Լամբրոն «և խնամէր զՏարսոնի վիճակն»[749]: Բայց այդ պաշտոնում նա մնաց ընդամենը մեկ և կես տարի, քանի որ, ինչպես նշվել է, 1175թ. Տարսոնի ու Լամբրոնի եպիսկոպոս կարգվեց Ներսես Լամբրոնացին: Այնուհետև Գրիգոր Ապիրատը նշանակվել է Անտիոքի արքեպիսկոպոս[750], մասնակցել Հռոմկլայի ժողովին, իսկ կաթողիկոս ընտրվելիս արքեպիսկոպոսի պաշտոն է վարել Կեսարիայում[751]: Հավակնելով Հայոց կաթողիկոսի գահին, Գրիգոր Ապիրատը ներհակում էր Գրիգոր V Քարավեժի ինքնուրույն ձեռնարկումներին՝ ի հաճույս նրա հակառակորդների, ինչպես և Լևոն II-ի[752]:

Գրիգոր VI Ապիրատ Պահլավունին Հայոց կաթողիկոս ընտրվեց 1194թ., Լևոն II-ի կամքով: Անշուշտ, կաթողիկոսի գահի արժանի թեկնածու էր Ներսես Լամբրոնացին, սակայն վերջինիս նկատմամբ արևելահայ եկեղեցականների բացասական դիրքավորումը ստիպեց Լևոն II-ին նախապատվություն տալու արդեն 70 տարիքը բոլորած, թույլ ու համակերպվող բնավորության տեր և իր հետ մտերմացած Գրիգոր Ապիրատ Պահլավունուն, որի տոհմական պատկանելությունը կարող էր հանդարտեցնել արևելահայ հոգևորականների միջավայրում եռացող կրքերը: Վերջիններիս համակրանքը շահելու նպատակադրումով Լևոն II-ը խիստ բացասամետ դիրք բռնեց կաթողիկոսի աթոռին հավակնող Ներսես Լամբրոնացու (Շահանդուխտ Պահլավունու որդու) նկատմամբ, որին դատափետեց նրա եղբոր Լամբրոնի իշխան Հեթումի առջև, Ներսեսի գործելա-

---

747 Սմբատ Սպարապետ, էջ 206, Վարդան, էջ 139:
748 Տես Ներսէս Շնորհալի, Բանք չափաւ, էջ 325-326:
749 Վարդան, ՀԵ, էջ 129:
750 Տես Ներսէս Շնորհալի, Ընդհանրական թուղթք, էջ 198:
751 Տես Մ. Օրմանեան, Ազգապատում, Ա, սյունակ 1751:
752 Հմմտ. Սամուել Անեցի, էջ 144:

կերպը համարելով «անկարգ ու անօգուտ» և նախնյաց ուղուց շեղված[753]: Դրան հետևեց Ներսես Լամբրոնացու կողմից Լևոն II-ին ուղղված նամակը, որտեղ նա շանթ ու կրակ է տեղում արևելահայ եկեղեցականների, հատկապես Գրիգոր Տուտեորդու և Դավիթ Քոբայրեցու Հաղբատի միաբանների մտացի ներկայացուցչի, նաև Բարսեղ Անեցի Պահլավունու վրա, նրանց դիտելով իբրև «պիղծ» ու «տգետ աղվեսներ», «շներ» և այլն[754]: Արևելահայ եկեղեցականների նկատմամբ Լամբրոնացու այդօրինակ վերաբերմունքը բխում էր նաև հռոմեադավան և քաղկեդոնական եկեղեցիների հանդեպ նրանց ցուցաբերած ժխտողական դիրքորոշումից: Լամբրոնացին կողմ էր մյուս եկեղեցիների նկատմամբ հոգևոր մերձակցության միության, նույնիսկ որոշ զիջումների[755], դրանցում տեսնելով հայերի փրկությունը: Սակայն պատմությունը ցույց տվեց, որ նրա ուղեգիծը թեական էր և հակասում էր ազգային շահերին:

Իսկ արևելահայ հոգևորականները ջանալով Հայոց հայրապետական աթոռը հաստատել Հայ բնաշխարհում՝ Անի ոստանում, հրաժարվեցին ճանաչել Գրիգոր Ապիրատի կաթողիկոսությունը և 1195թ. Հայոց հայրապետ հռչակեցին Անիի արքեպիսկոպոս Բարսեղ Պահլավունուն: Նրանք պահանջեցին բեկանել Գրիգոր Ապիրատի ընտրությունը և կատարել կաթողիկոսի նոր ընտրություն: Արևելահայ եկեղեցականները Լևոն II-ին առաջարկեցին մեկուսացնել Ներսես Լամբրոնացուն և թույլ չտալ, որ նա միջամտի եկեղեցական, նաև քաղաքական խնդիրներին: Լևոն II-ը բարեհաճ վերաբերմունք ցուցաբերեց արևելահայ պատվիրակների նկատմամբ, բավարարեց Լամբրոնացուն առնչվող նրանց պահանջները[756]: Բայց նա բոլորովին չփորձեց աթոռընկեց անել Գրիգոր Ապիրատին, ելնելով նրա օրինապահությունից, հնազանդ վարքից:

1197թ. օրակարգում էր Լևոն II-ի թագադրման հարցը: Լևոնը կամենում էր թագ ստանալ երկու հզորազոր վեհապետներից Բյուզանդիայի կայսր Ալեքսիոս III-ից և գերմանական կայսր Հենրիխ VI-ից: Նկատի առնելով Ներսես Լամբրոնացու հունասեր հակումները, Լևոն II-ը 1197թ. նրա գլխավորությամբ պատգամավորություն ուղարկեց Կոստանդնուպոլիս[757]: Սակայն Բյուզանդիայի ամենակուլ հավակնություններն այս անգամ նույնպես զգալ տվեցին իրենց: Կայսրությունն առաջարկեց առանց փո-

---

[753] Տես Գրիգոր Տղա, Նամականի և Ներսես Լամբրոնացի, Ատենաբանությունք և թուղթ և ճառք, էջ 213:
[754] Տես նույն տեղում, էջ 232-243:
[755] Տես Ն. Ակինեան, Ներսէս Լամբրոնացի, էջ 103,306-307:
[756] Տես Գրիգոր Տղա, Նամականի և Ներսէս Լամբրոնացի, Ատենաբանութիւնք եւ թուղթ եւ ճառք, էջ 228 և հտ.:
[757] Տես Սմբատ Սպարապետ, էջ 207:

խաղարձ զիջումների, Հայադավան եկեղեցին Բյուզանդական եկեղեցուն ենթարկելու և վերջինիս դավանությունն անվերապահորեն ընդունելու մերժելի պահանջներ: Դրանց չընդառաջեց անգամ Ներսես Լամբրոնացին, անշուշտ կանխավ համապատասխան ցուցումներ ստանալով Գրիգոր Ապիրատից և Հայ եկեղեցու մյուս հայրերից[758]:

Լևոն II-ը և Գրիգոր VI կաթողիկոսը դեմ էին Բյուզանդիայի դավանական նկրտումներին: Կիլիկիայի Հայոց պետությունը մագլցում էր իր հզորության գագաթնակետը, անկախ կայսրության քաղաքական ու դավանական մտահղացումներից: Վերջինս այլևս ի զորու չէր իր կամքը պարտադրել Հայոց պետությանն ու նրա եկեղեցուն:

Լևոն II-ը չէր կամենում սրել հարաբերությունները կաթոլիկ Եվրոպայի հոգևոր առաջնորդի՝ Հռոմի պապի հետ, անշուշտ, ելնելով քաղաքական նկատառումներից: Հայ եկեղեցականները դեմ էին հռոմեադավան եկեղեցու հանդեպ զիջումներին: Լևոն II-ը 1198թ. հունվարի 6-ին Տարսոն քաղաքում թագադրվեց[759]: Նա կարողացավ հանդարտեցնել հայ եկեղեցականների մտքերը, հասկացնելով, որ Հռոմի նկատմամբ դավանական զիջումները լինելու են առերևույթ: Դիվանագիտական նկատառումներով Լևոն II-ը միություն առաջարկող Հռոմի պապի բանագնացներին հավաստիացրեց, որ լիովին ընդունելու են պապի դավանական առաջարկները: Այդ նպատակով Տարսոնում Լևոնի հրավիրած ժողովի մասնակիցներից մի քանիսն ընդունեցին նրա առաջարկը (իր թագադրության շքահանդեսին մասնակցող 17 եպիսկոպոսներից 12-ը)[760]: Լևոնի առաջարկը մերժել է գուցե նաև Գրիգոր կաթողիկոսը, որը դեմ էր կաթոլիկ եկեղեցու հետ միությանը (որի կայացմամբ նա արևելահայերի մոտ վարկազրկվելու էր)[761]: Կիրակոս Գանձակեցին նրան չի հիշում Լևոն II-ի առաջարկն ընդունած եկեղեցականների մեջ[762]:

Լևոն II-ին թագավոր օծեց Գրիգոր VI Պահլավունին[763]: Վերջինս թեև դեմ էր լատին եկեղեցու հետ միությանը, բայց ստիպված էր հաշվի առնել ստեղծված իրավիճակը, երբ պապությունն ապրում էր իր հզորության գագաթնակետը և ի զորու էր քաղաքական եղանակ ստեղծել լատինադավան Եվրոպայում: Ուստի կաթողիկոսը և Լևոն II-ը չվարանեցին Ին-

---

[758] Տես Յ.Տաշեան, Ցուցակ ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա, էջ 335: Տես նաև Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 425:
[759] Տես Սմբատ Սպարապետ, էջ 208:
[760] Տես Կիրակոս Գանձակեցի, էջ 157-158:
[761] Հմմտ. Մ. Օրմանեան, Ա, սյունակ 1798-1799:
[762] Տես Կիրակոս Գանձակեցի, էջ 157-158:
[763] Տես Սամուել Անեցի, էջ 144, Վահրամ Բաբունւոյ Ուռանաւոր պատմութիւն Ուրբինեանց, Փարիզ, 1859, էջ 215:

նոկենտիոս III պապին հղել շնորհակալագիր, հավաստելով իրենց հավատարմությունը քրիստոնեական աշխարհի միության գաղափարին: Եթե հավատանք Կղեմես Գալանոսի խոսքերին, Գրիգոր VI-ը հատկապես շեշտել է Հռոմի կողմից վիշապի բերանն ընկած հայությանը զորակցություն ցուցաբերելու անհրաժեշտությունը վերջինիս անհավասար պայքարում ընդդեմ «թշնամեաց խաչին Քրիստոսի»: Նա նաև նշել է, որ պապի ուղարկած թագով հայությունը վերագտավ վաղուց կորցրածը: Լևոն II-ը դիվանագիտական նկատառումներով նույնպես արտահայտել է իր ակնկալությունն Արևմուտքի օգնության նկատմամբ[764]:

Սակայն ասվածից չի հետևում, թե Լևոն II-ը կամենում էր դաշնակցել խաչակիր զորքին: Նա այդպիսի դաշինքը համարում էր վտանգավոր իր երկրի համար[765]: Այլ էին Հռոմի պապի ակնկալիքները հայերի նկատմամբ: Նա գտնում էր, որ հայերը պետք է զորակից լինեն սրբազան պատերազմի ելած խաչակիր զորագնդերին: Նման գաղափարով էին ներծծված Իննոկենտիոս III պապի կողմից 1199թ. նոյեմբերի 23-ին Գրիգոր VI Պահլավունի կաթողիկոսին և Հայոց թագավոր Լևոն II-ին ուղարկած նամակները: Հռոմի պապն այն համոզմանն էր, որ հայերի զորակցությունը էապես նպաստելու էր խաչակրաց նոր արշավանքի հաջող ընթացքին: Ի դեպ՝ տակավին խաչակրաց առաջին արշավանքի ժամանակ, 1098թ. հունիսի 3-ին հայ ազնվական Փիրուզի օգնությամբ խաչակիրները գրավել էին Անտիոք քաղաքը[766]:

Հռոմի պապը 1199թ. նոյեմբերի 24-ին և դեկտեմբերի 17-ին Լևոն II թագավորին ուղղած նամակներում հույս էր հայտնում, որ Հայոց թագավորը օգնելու է խաչակիր զորքին պարենով ու զորքով: Պապը հատուկ պատվիրակի միջոցով Լևոն II-ին ուղարկեց Ս.Պետրոսի անվամբ դրոշն իբրև նշան հանուն Քրիստոսի խաչի մղվող պատերազմում հայերի և խաչակիրների դաշինքի: Լևոն II-ը և Գրիգոր VI կաթողիկոսը չվարանեցին այդ առթիվ շնորհակալագիր հղել Հռոմի պապին[767]: Սակայն խաչակիրների հետ հայոց զինադաշինքն այդպես էլ չկայացավ:

Լևոն II-ը ջանքեր ներդրեց երկրի ներքին կայունությունն ապահովելու համար: Նրան սատար կանգնեց Գրիգոր VI Պահլավունին, որի քեռորդի Հեթում իշխանը (Օշինի որդին և Ներսես Լամբրոնացու եղբայրը) հրաժարվում էր ենթարկվել Լևոն II-ին ի հաճույս Բյուզանդիայի կայսեր: Նա իշխում էր անառիկ Լամբրոն ամրոցին և շրջակա գավառին: Ավելորդ

---

764 Տես Կղեմէս Գալանոս, Միաբանութիւն Հայոց Սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի Սուրբ եկեղեցւոյն Հռոմայ, էջ 347-348, 358:

765 C. Mutafian, la Cilicie au carrefour des empires, I, Paris, 1988, p.168-169.

766 S. Runsiman, A History of the Crusades, Cambridge, 1951, p. 231.

767 Կղեմէս Գալանոս, էջ 359-362:

արյունահեղությունից խուսափելու համար Լևոն II-ը 1201 թվականին Հեթում Լամբրոնացուն առաջարկեց քաղաքական դաշինք, որը պետք է ամրապնդվեր ամուսնությամբ. Հեթումի ավագ որդի Օշինին կնության էր տրվելու Լևոն II-ի եղբոր Ռուբենի դուստրը: Հարսանյաց տոնախմբությունը կատարվեց Տարսոն քաղաքում, որտեղ դեռ 1198թ. Լևոն II-ի թագադրման հանդեսին հրավիրվել էր նաև Հեթումը[768]: Այս անգամ Հեթումն իր գերդաստանով հարսանիքի մեկնեց Տարսոն, որտեղ Լևոն II-ը ձերբակալեց նրան, ապա զորք ուղարկեց Լամբրոն և առանց դժվարության գրավեց այն: Բայց որոշ ժամանակ անցնելուց հետո Լևոն II-ն ազատ արձակեց Հեթումին և շնորհեց նրան Դրազարկի վանքը: Դա, անշուշտ կատարվել է Գրիգոր VI հայրապետի կամակցությամբ: Վերջինս Հռոմկլայից մեկնեց Սիս՝ իր քրոջ որդուն բանտի կապանքներից ազատելու համար: Նրան հաջողվեց հաշտեցնել Լևոն II-ին և Հեթումին, որն ազատ արձակվեց և կաթողիկոսի կողմից օժտվեց եկեղեցական աստիճանով[769]: Այդուհետև Լևոն II-ը և Հեթում Լամբրոնացին դարձան մերձավորներ, համագործակցեցին միմյանց: 1210թ. Լևոն II-ն իր որդեգիր Ռուբենի համար արքայական թագ բերելու նպատակով Հռոմի պապի և գերմանական կայսեր մոտ ուղարկեց Հեթումին, որը հաջողությամբ կատարեց այդ առաքելությունը[770]:

Կաթողիկոսի միջնորդությամբ Լամբրոն ամրոցի տերերի հնազանդեցումը էապես նպաստեց երկրի զորացմանը, Լևոն II-ի թագավորության հեղինակության մեծացմանը: Լևոն II-ը գնահատեց Գրիգոր VI Պահլավունու կողմից իր թագավորությանը սատար կանգնելու ջանքերը և, իր հերթին, օգնեց նրան Հայոց եկեղեցու ինքնուրույնությունը պահպանելու գործում: Նա կարողացավ վիժեցնել Հայոց կաթողիկոսության նկատմամբ Անտիոքի պատրիարքության կողմից գերակայություն ունենալու նկրտումները[771]: Լևոն II-ը հատուկ թղթով Հռոմի Իննոկենտիոս III պապից պահանջեց, որպեսզի Անտիոքի աթոռը հրաժարվի Հայոց եկեղեցու իրավազորությանը ենթակա շրջանների նկատմամբ գերակայության հավակնություններից: Հռոմի պապը Լևոն II-ին դիտում էր որպես խաչակիրների հնարավոր զորակից, ուստի ընդառաջեց նրա պահանջին և 1202թ. հունիսի սկզբին հատուկ հրովարտակով կարգադրեց որպեսզի ոչ

---

[768] Տես Սմբատ Սպարապետ, էջ 210:

[769] Տես նույն տեղում, էջ 211-212:

[770] Տես նույն տեղում, էջ 217:

[771] Դեռևս 1098թ. հունիսին խաչակիրները Գրավելով Անտիոք քաղաքը, այնտեղ հիմնեցին կաթոլիկ պատրիարքություն, որը հավակնում էր ոչ միայն Անտիոքի հին պատրիարքության իրավասությանը ենթակա երկրամասերի, այլև Կիլիկիահայության նկատմամբ եկեղեցական գերակայության:

ոք հոգևոր գերիշխանություն չունենա Կիլիկիայի Հայոց թագավորության նկատմամբ, «բաց ի հայրապետէն Հռոմայ»[772]: Անտիոքի հավակնություններին վերջ տալու նպատակով Հայոց եկեղեցու հայրերը հարություն տվեցին «Դաշանց թղթին», այն մուծելով Ագաթանգեղոսի երկասիրության որոշ օրինակների մեջ: Այդ փաստաթղթի համաձայն, Տրդատ Մեծի և Գրիգոր Լուսավորչի ու Հռոմի Կոստանդիանոս կայսեր և Սեղբեստրոս պապի միջև կնքված դաշինքով Անտիոքի, Ալեքսանդրիայի, Երուսաղեմի պատրիարքները պետք է ծեռնադրվեին Հռոմի պապի փոխանորդը հանդիսացող Հայոց կաթողիկոսի հայեցողությամբ[773]: Իրականում Ագաթանգեղոսի պատմության բնագրում սոսկ նշված է այդ դաշինքի մասին և ոչ մի խոսք չկա հիշյալ պատրիարքների նկատմամբ Հայոց կաթողիկոսի գերակայության մասին[774]:

Դժվար է ասել, թե «Դաշանց թուղթը» վերահառնել տալու գործընթացին ինչ մասնակցություն է ունեցել Գրիգոր VI կաթողիկոսը: Բայց այն փաստը, որ հենց նրա հովվապետության տարիներին էր, որ սուր կերպով իրենց զգալ տվեցին Անտիոքի պատրիարքության ցուցաբերած եկեղեցաքաղաքական հավակնությունները Հայոց կաթողիկոսության նկատմամբ, թույլ է տալիս ենթադրելու, որ հենց Գրիգոր VI-ի օրոք է կիլիկահայ եկեղեցական միջավայրում սնուցանվել «Դաշանց թղթի» վերարծարծման գաղափարը: Սակայն այդ ուղղությամբ ծեռնարկված աշխատանքներն ամենայն հավանականությամբ, հիմնականում կատարվել են Գրիգոր Ապիրատի հաջորդ Հովհաննես VI Սսեցու օրոք (1203-1221), երբ հայրապետական գահանիստ դարձավ Սիս մայրաքաղաքը:

Գուցե Գրիգոր VI Ապիրատն իր կյանքի վերջին տարիներին անշուշտ, ընդառաջելով Լևոն II թագավորի հորդորներին, հակված է եղել Սիսը կաթողիկոսանիստ դարձնելու մտքին: Հատկանշելի է, որ երբ արդեն ուքսունը բոլորած Գրիգոր VI-ը մեկնեց Սիս իր քեռորդի Հեթում Լամբրոնացուն կալանքից ազատելու համար, նա այլևս չվերադարձավ Հռոմկլա և հենց Սսում էլ կնքեց իր մահկանացուն (1203թ. մարտին) և թաղվեց եպիսկոպոսանիստ Արքակաղին վանքում[775] (Մամեստիայի մոտակայքում):

Գրիգոր VI-ը Պահլավունյաց տոհմի վերջին կաթողիկոսն էր, որը սակայն չունեցավ Պահլավունի հաջորդ, քանի որ այդ տոհմից այլևս

---

[772] Տես Կղեմես Գալանոս, էջ 364, Ղ. Ալիշան, Սիսվան, էջ 943:

[773] Տես Ագաթանգեղոս, Գիրք վիպասանութեան, Կ. Պոլիս, 1709, էջ 415:

[774] Տես Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, էջ 462-463: «Դաշանց թղթի» մասին տես Հր. Բարթիկյան, «Դաշանց թուղթը», կազմը, ստեղծման ժամանակը, հեղինակն ու նպատակը («Պատմաբանաս. հանդես», 2004, N2):

[775] Տես Սմբատ Սպարապետ, էջ 213:

չկար կաթողիկոսի գահի որևէ թեկնածու: Ուստի Հայոց հայրապետի գահին բազմեց Լամբրոնի տեր Օշինի թոռ Կոստանդինը՝ Սսի եպիսկոպոսը, որի տոհմը խնամիություն ուներ Պահլավունիների հետ:

Գրիգոր VI-ի մահվամբ վերջ գտավ Պահլավունիների կաթողիկոսական հարստության 138 տարի տևած գահակալությունը: Դրամատիկ իրադարձություններով հագեցված այդ պատմաշրջանը պսակվեց Կիլիկիայում Հայոց թագավորության հռչակմամբ: Պահլավունիները դիմակայեցին քաղաքական բռնաշունչ հողմերին և պահապան կանգնեցին հայրենավանդ հոգևոր արժեքներին: Պահլավունի տոհմից սերած հայրապետներն իրենց խորախորհուրդ պատգամներով ու հայրենանվեր գործունեությամբ պաշտպանեցին Հայոց հավատքը, էականորեն նպաստեցին երկրի հոգևոր և քաղաքական ինքնության պահպանմանը:

Գլուխ յոթներորդ

Պահլավունիները Հյուսիս-արևելյան Հայաստանում (XI դ. վերջ- XII դ.)

Գրիգոր Մագիստրոս Բջնեցու դուստրերից մեկի ամուսին Վասակը (Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի որդին) ունեցավ չորս որդի Բարսեղը, Հասան մագիստրոսը, Ապլջահապը և Գրիգորը, որը հառնել տվեց Պահլավունյաց տոհմի զինական հռչակը: Մատթեոս Ուռհայեցին այս իշխանին հիշում է որպես «յազգէ Պահլաւունեաց», «կուրապաղատն արևելից», որն իշխում էր Շիրակ գավառին, իշխանանիստ դարձնելով Անի քաղաքը: Նա հռչակված էր իբրև «այր քաջ և հզօր պատերազմող»[776]:

Դեռևս 1064թ. Շադդադյան քրդական տոհմաճյուղերից մեկի ամիրա Փատլուն II-ը (1067-1072) տիրանալով Անի քաղաքին, նրա կառավարիչ կարգեց եղբորը Մանուչեին, որը նկատի առնելով հայերի խաղացած գերազդեցիկ դերը Անիում, աշխատեց սիրաշահել, իր հետ կապել հայ վերնախավին: Այդ նպատակադրումով նա իր մոտ է հրավիրում հայ իշխաններին, նրանց թվում նաև Գրիգորին: Մանուչեն, ըստ Վարդան Արևելցու,-«ած ի քաղաքն զամենայն մնացեալ իշխանսն. որպէս և մեծաւ հանդիսիւ ընդ առաջ ելեալ մուծանէր ի ներքս զԳրիգոր զորդին Վասակայ, զթոռն Ապիրատին զոր ասեն ունել ի գլուխ ազատաց կանանցն հինգհարիւր թագս երևելիս. զի տէր էր մեծ զօրաց և բազում ազատաց»[777]:

1090-ական թվականների սկզբներին Գրիգորը ջախջախում է Անիի վրա հարձակված թյուրք-սելջուկյան յոթ հազարանոց զորքին, որին գլխավորում էր փոքր-ինչ հետո Երուսաղեմը խաչակիրներից ետ գրավող Ելխազ ամիրայի եղբայրը[778]:

Գրիգորի զորավարական կարողությունները չվրիպեցին նաև Գանձակի Փատլուն ամիրայի աչքից: Կամենալով նրա զորակցությամբ գրավել Սյունիքը, Փատլունը Գրիգոր Ապիրատին նշանակում է իր զորաբաժիններից մեկի հրամանատար և 1094թ. մեծաստվար զորքով ռազմի ելնում Սյունիքի (Բաղաց) թագավոր Սենեքերիմի դեմ, որի թագավորությունը Գանձակի ամիրաները «խոչ մեծ համարէին ինքեանց»: Փատլունի

---

[776] Մատթեոս Ուռհայեցի, էջ 268-269:

[777] Վարդան Արևելցի, ՕԹ, էջ 103-104: Այս մասին տես՝ Հ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, էջ 83-87:

[778] Վարդան Արևելցի, էջ 109:

հետ էր «Շիրակայ իշխանն Գրիգոր Ապիրատեան»[779], գրում է Սյունյաց պատմիչը:

Չկարողանալով պարտության մատնել Սյունյաց թագավորին, Փատլունը նրա մոտ է առաքում Գրիգորին, հանձնարարելով երդման միջոցով համոզել Սենեքերիմին «գալ առ իս և առնեմք ընդ միմեանս սէր. և մեծամեծ պարգևօք արձակեմ զնա»: Ամիրան սպառնում է, որ գլխատելու է Գրիգորին, եթե չկատարի իր հանձնարարությունը: Գրիգոր Ապիրատը հավատ ընծայեց ամիրային և, համոզված, որ նա իրոք կամենում է բարեկամական հարաբերություններ հաստատել Սենեքերիմ Սյունեցու հետ, մեկնեց նրա մոտ և հաղորդեց ամիրայի ցանկության մասին: Սենեքերիմը Գրիգորի հետ ժամանեց Փատլուն ամիրայի մոտ: Սակայն նենգադրուժ ամիրան չվարանեց սպանել Սենեքերիմին, հուսալով, որ այդ կերպ ինքը կարող է տիրանալ Սյունյաց թագավորության հողերին: Իհարկե, դա նրան չհաջողվեց: Սենեքերիմին հաջորդած որդու Գրիգոր Ի-ի օրոք Սյունյաց թագավորությունը պահպանեց իր անկախությունը[780]:

1099թ. Արշարունիք գավառի Կաղզվան ավանում Գրիգորն իր զորքով ջախջախեց թյուրք-սելջուկներին, մահից փրկելով Մանուչէ ամիրային: Պահլավունյաց այս քաջակորով իշխանը, հաղթական պատերազմից հետո վերադառնում էր Անի, երբ դարանամուտ թյուրք զինվորը նետահար անելով սպանեց նրան: Գրիգոր Ի Ապիրատյանի մահվան պատճառով «եղև սուգ մեծ Շիրակայ և ամենայն տանն Հայոց»,-ցավով նշում է Մատթեոս Ուռհայեցին[781]: Գրիգորի դին մեծ հանդիսավորությամբ թաղեցին Կեչառիսի վանքում: Հուղարկավորների թափորի մեջ էին նրա եղբայրը Բարսեղ կաթողիկոսը, Մանուչէ ամիրան «և ամենայն զօր բանակին Հայոց»[782]:

Վասակ Պահլավունու որդիների Հասանի և Ապլջահապի մասին տեղեկությունները սակավաթիվ են: Միայն հայտնի է, որ 1081թ. նրանք հիշվում են իրենց եղբորը Բարսեղին Հայոց կաթողիկոսի գահաթոռին բազմեցնողների մեջ: Այդ մասին նշում է Ուռհայեցին, գրելով. «Եւ ելեալ գայր Բարսեղ կաթողիկոսն Հայոց ի թագաւորաբնակ քաղաքն Անի, և ելեալ ամենայն տունն Շիրակայ գալ ընդ առաջ նորա. և ահա գայր Վասակ հայրն Տէր Բարսեղի և եղբայրք նորա՝ Հասան և Գրիգոր և Ապլջահապ, արք քաջք և հզօրք հանդերձ եպիսկոպոսօք, և նստուցին զՏէր Բարսեղ յաթոռ Տեառն Պետրոսի»[783]:

---

779 Ստեփաննոս Օրբելեան, ԾԹ, էջ 319-320:
780 Տես Ստեփաննոս Օրբելեան, էջ 319-320:
781 Տես Մատթեոս Ուռհայեցի, էջ 268-269:
782 Տես Վարդան Արևելցի, ԿԳ, էջ 109:
783 Մատթեոս Ուռհայեցի, էջ 221:

Հասանի որդի է հիշվում նաև Ապիրատ իշխանը, որը համածայն Վարդան Արևելցու մի վկայության, թեև 1174թ. կալանված էր Կարս քաղաքի բանտում, բայց կարողացավ ազատվել և ժամանել Անի: «Ի նմին ժամանակի,-վկայում է պատմագիրը,-ել ի բանտէն Կարուց մեծ իշխանն Ապիրատն և եկն ի յԱնի. սա էր եղբայր եպիսկոպոսի քաղաքին Տեառն Բարսղի, որ աղաչեաց զթագաւորն Վրաց, և ետ փոխան նմա ամիրայ, և առ զնա և եօթնևտասն հազար դահեկան»[784]: Այս տեղեկությունից երևում է, որ Անիի Բարսեղ արքեպիսկոպոսը Ապիրատի եղբայրն էր: Հետագայում (1178թ.) արևելահայ եկեղեցականների կամքով նա հռչակվեց Գրիգոր VI կաթողիկոսի հակաթոռ: Ընդսմին վերջինիս միջնորդությամբ էր Կարսի բանտից ազատ արձակվել Բարսեղ արքեպիսկոպոսի հայրը: Վրաց Գեորգի III թագավորն անսալով Բարսեղ արքեպիսկոպոսին, նպատակահարմար համարեց գերեվարված ամիրայի հետ փոխանակել և Անի վերադարձնել Գրիգորին, որը ծառայության մտավ վրաց արքունիքում:

1176թ. Վրաստանի թագավոր Գեորգի III-ի դեմ ապստամբություն բռնկվեց ամիրսպասալար Իվանե Օրբելիանիի գլխավորությամբ: Օրբելիները ձգտում էին անկախության և ինքնուրույնության[785]: Ապստամբության կենտրոնը Լոռիում Օրբելիներին ենթակա գավառներն էին[786], ուստի Լոռիի հայ իշխանները ներքաշվեցին ապստամբության մեջ, հույս ակնկալելով, որ ապստամբության հաղթանակի դեպքում Օրբելիներից կստանան հողատիրույթներ, կընդլայնեն իրենց իրավունքները: Ապստամբությանը հարեց նաև Ապիրատի որդի Գրիգորը, որը հավանաբար դժգոհ էր Անիի նկատմամբ թագավորի որդեգրած քաղաքականությունից և կամենում էր հասնել այդ քաղաքի ինքնուրույնության ընդլայնմանը[787]: Սակայն սթափ գնահատելով ստեղծված կացությունը, Գրիգորը անհեռանկար համարեց վրաց թագավորի դեմ ընդվզելը և զորակցեց նրան[788]: Ըստ երևույթին նա հույս ուներ Գեորգի III-ին ճանաչել տալ իր տոհմական իրավունքները Անիի, Շիրակի նկատմամբ: Տակավին 1174թ., երբ վրաց զորքերը երկրորդ անգամ գրավեցին Անին, Գեորգի III-ը իր մուտ հրավիրեց «եպիսկոպոսին Բարսղի եւ եղբարց նորա, որդւոցն մագիստրոսին Հասանայ»,- վկայում է Մխիթար Գոշը[789]: Հնարավոր է, որ Գեորգի III-ը

---

[784] Վարդան, ՀԶ, էջ 130:

[785] Տես Հ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, էջ 166:

[786] Ստեփաննոս Օրբելեան, էջ 384, Վ. Հակոբյան, Դավիթ Քոբայրեցու հիշատակարանը («Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ», 1952, N 8, էջ 119):

[787] Տես Հ Մարգարյան, նշվ. աշխ., էջ 155-156:

[788] Ստեփաննոս Օրբելեան, էջ 385, Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 10-11:

[789] Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 390:

ապստամբության ժամանակ խոստումներ է տվել նաև Գրիգորին, որի իրավազորությունը մեծացվել է: Այս տեսակետից ուշագրավ փաստ է, որ երբ ապստամբությունից հետո՝ 1178թ. ավազակները գրավում են Կեչրոր քաղաքավանը, ինչպես և Բարսեղ արքեպիսկոպոսի Ծառաքար բերդավանը՝ (Անիի մերձակայքում), թյուրք ամիրայի կողմից այնտեղ բնակեցվում են «արս վնասակարս որք ոչ դադարէին յարենհեղուութենէ ի տուէ և ի գիշերի. մինչև զքրիստոնեայս ի խաւարային անդունդս ընկղմեալ սովով և գարշ հոտով առաջնոց մեռելոցն սպանանէին...», Պահլավունիները չհանդուրժելով իրենց հայրենատիրույթի նկատմամբ գործած վայրագությունը, 1186թ. ազատագրում են Ծառաքարը: Վարդան Արևելցու վկայությամբ «ի վեցհարիւր երեսուն և հինգ թուին առին Անեցիք զԾառաքար զհայրենիս տեառն Բարսղի, յանխնայ կոտորելով զորս անդ, բաց ի կանանց և ի մանկանց»[790]: Այս իրադարձությունն անշուշտ, վկայություն է Պահլավունի տան զորության, ինքնուրույնության մասին:

Բարսեղ արքեպիսկոպոսի ազդեցությունը հատկապես մեծ էր Անիում: Նրա օրոք Անիի Առաքելոց եկեղեցին Պահլավունիների հովանու ներքո ծաղկում ապրեց: Վերջիններիս հիմնած այդ նշանավոր վանքի որմի մոտ 1184թ. Բարսեղը կանգնեցրել է մի հուշակոթող, որը բացվեց Անիի 1909թ. պեղումների ժամանակ[791]:

1191թ. Բարսեղ արքեպիսկոպոսը փրկավճար տալով՝ թյուրքերից ազատագրում է Շիրակի Լմբատավանքը (այժմյան Արթիկ քաղաքից ոչ հեռու), որի պատին նա թողնում է արձանագրություն, ուր ասվում է. «Ես տէր Բարսեղ գնեցի զվանքս յանօրինաց»[792]:

Անշուշտ, այն փաստը, որ Բարսեղ արքեպիսկոպոսը Բարսեղ կաթողիկոսի եղբորորդին էր, Պահլավունյաց գերդաստանի զավակ, բարձրացնում էր նրա վարկը:

Անիի «Աբրահամի բուրգ» անունով հուշարձանի վրա այն կերտողի թողած 1160 թվակիր արձանագրության մեջ նշվում է. «Ի ՈԹ թուին ի թագաւորութեանն Փատլնոյ, ի հայրապետութեանն տէր Բարսղի, ես Աբրահամ շինեցի զբուրջս...»[793]: 1172թ. գրված մի հիշատակարանում նշյալ Բարսեղը բնորոշվում է որպես «վերատեսուչ համայն քրիստոնէից Հա-

---

[790] Վարդան, էջ 130-131, 133, տես նաև Մխիթար Անեցի, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխ. Հ. Մարգարյանի, Երևան, 1983, էջ 109-110:

[791] И. Орбели, Краткий путеводитель по городищу Ани. Избранные труды, с.117.

[792] Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 164:

[793] Դիվան հայ վիմագրության, I, էջ 2:

յոց», որն «էր ի հարց և ի հաւուց ազատ յազատաց եւ մեծազգի ի մեծազգեաց»[794]:

Պատմաղբյուրներում հանդիպում ենք իրարամերժ տեղեկությունների Բարսեղի կաթողիկոսության վերաբերյալ: Թեև, ինչպես նշվել է, արևելահայ հոգևորականներն 1178թ. էին Բարսեղին հռչակել կաթողիկոս, բայց նա ավելի վաղ է կրել այդ տիտղոսն[795], այդպիսով հանդես գալով որպես հակաթոռ կաթողիկոս: Ընդսմին Բարսեղը Հայոց կաթողիկոս է հիշվում նաև 1173թ., «աստուածապատիւ եւ հոգեւոր Տեառն Բարսղի Հայոց կաթողիկոսի» հորջորջմամբ[796]: Իսկ 1174թ. արձանագիր հիշատակարանում ի մասնավորի ասվում է. «Ի հայրապետութեան նահանգիս մերում Տեառն Բարսղի»[797]: 1181թ. Հռոմոսի վանքում ընդօրինակվում է մի Ավետարան «ի հայրապետութեան տեառն Բարսղի և յառաջնորդութեան ուխտիս Խաչատրոյ»[798]:

Նույն վանքում 1187թ. Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայք» երկասիրությունն օրինակող գրչի թողած հիշատակարանում ասվում է. «Ի հայրապետութեան մեծարգոյ եւ հռչակաւոր առնն Աստուծոյ տեառն բարսղի...»[799]: Բարսեղը կաթողիկոս է հիշվում նաև 1195 և 1198 թվակիր արձանագրությունների մեջ[800]:

Ստացվում է, որ Բարսեղը Հայոց կաթողիկոսի տիտղոսը կրել է Պահլավունի մյուս կաթողիկոսների Գրիգոր III-ի (1113-1166), Ներսես IV Շնորհալու (1166-1173), Գրիգոր IV Տղայի (1173-1193), Գրիգոր V Քարավեժի (1193-1194) օրոք: Եթե ընդունենք, որ Բարսեղը վախճանվել է 1206թ.[801], ապա կստացվի, որ նա հայոց կաթողիկոսի պաշտոնը վարել է նաև Գրիգոր VI Պահլավունու (1194-1203 և Հովհաննես VI Սսեցու (1203-1221) հայրապետության ժամանակաշրջանում:

Մի արձանագրության մեջ Բարսեղ II Պահլավունու գահակալման առաջին տարի է նշված 1195թ.: Այստեղ ասվում է. «Ի թվ. ՈՒԴ. յառաջին ամի կաթողիկոսութեան տեառն Բարսղի...»[802]: Սակայն Բարսեղ II-ը, ամենայն հավանականությամբ, կաթողիկոս է հռչակվել Հռոմկլայի 1178թ. ժո-

---

[794] Գ. Յովսէփեանց, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, էջ 407-410: Այս Բարսեղը տարբեր է Բարսեղ Պահլավունուց (տես Հ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 213-214):
[795] Տես Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 41:
[796] Տես Դիվան հայ վիմագրության, I, էջ 47:
[797] Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 21:
[798] Գ. Յովսէփեանց, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, էջ 484:
[799] Նույն տեղում, էջ 518:
[800] Տես Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 22:
[801] Տես Մ. Օրմանեան, Հայոց եկեղեցին, էջ 91,255:
[802] Տես Ղ.Ալիշան, Շիրակ, էջ 22:

ղովի գումարման տարում, երբ արևելահայ հոգևորականությունը մերժեց Մանուել կայսեր կողմից արված երկու եկեղեցիների միության առաջարկը: Իհարկե, այն փաստը, թր Բարսեղը 1160-ական թվականներից փաստորեն կանգնած էր Արևելահայ եկեղեցու գլուխ, ժամանակակիցներին հիմք է տվել նրան հիշել Հայոց կաթողիկոսի պատվատիտղոսով: Սակայն պաշտոնապես նա կաթողիկոս է կոչվել Հռոմկլայի վերոնշյալ ժողովից հետո, երբ ծայր աստիճան սրվել էին Հռոմկլայի աթոռի և արևելահայ հոգևորականության միջև հարաբերությունները:

Բարսեղի արքեպիսկոպոսության տարիներին Զաքարյանների հովանու ներքո հյուսիս-արևելյան Հայաստանը վերելք ապրեց: Զաքարյանները կարողացան միաբանել հայ իշխանական տներին, կամենալով վերականգնել երկրի քաղաքական անկախությունը[803]: Նրանք կամենում էին Հայոց կաթողիկոսական Աթոռը վերահաստատել իրենց իշխանության մայրաքաղաք Անիում: Մինչդեռ Ռուբինյան թագավորները ջանում էին կաթողիկոսական գահաթոռը տեղափոխել Կիլիկիայի Հայոց թագավորության մայրաքաղաք Սիս: Հռոմկլայի նույն ժողովին հրավիրվածների մեջ, իբրև հրավիրագիր-շրջաբերականի պատասխանողներ, առաջինը հիշվում է Բարսեղը, ապա Սանահնի առաջնորդ Գրիգոր Տուտեորդին[804]: Արևելահայերը Բարսեղին ընտրեցին հայրապետ, ելնելով այն իրողությունից, որ Հռոմկլայում, ապա նաև Սիս տեղափոխված կաթողիկոսարանում հետզհետե ուժեղանում էին Հայոց և Կաթոլիկ եկեղեցիների միության միտումները:

Գրիգոր VI կաթողիկոսն ու նրա կիլիկիահայ համախոհները, և Լևոն II թագավորը, որևէ քայլ չձեռնարկեցին Բարսեղ Անեցու դեմ:

---

803 Լ. Բաբայան, Զաքարյանների իշխանության առաջացման հարցի մասին («ՊաՄԱբանաս. հանդես», 1962, N 1, էջ 116-122):

804 Տես Ներսես Շնորհալի, Ընդհանրական թուղթք, էջ 308:

Գլուխ ութերորդ

Պահլավունի տոհմից վերընձյուղված գործիչները XII-XIII դարերում

Գրիգոր Մագիստրոս Բջնեցու երրորդ դուստրը կնության տրվեց Սասունի Թոռնիկ իշխանին, որի երակներում հոսում էր Մամիկոնյան տոհմի արյունը: Մագիստրոսի կողմից փեսային ուղղված թուղթը կրում է «Առ իշխանն Մամիկոնեան Թոռնիկ»[805] վերնագիրը: Թեև Սասունի իշխանությունը չէր ենթարկվում Բյուզանդիային, սակայն Թոռնիկի վրա զգալի էր բյուզանդական ծառայության մեջ գտնվող աներոջ ազդեցությունը: Թոռնիկը նամակագրություն ուներ նրա հետ: Պահպանվել են միայն Թոռնիկին ուղղված աներոջ նամակները, որոնք հիմնականում ունեն խրատական, առտնին բովանդակություն:

Սասունի քաջակորով իշխան Թոռնիկ Մամիկոնյանն իշխում էր նաև հարևան Տարոնում: Նրա ազդեցությունը մեծ էր նաև հարևան ամիրայություններում: Արաբները նրան անվանում էին «Մուշալիք պատրիկ»[806] (հոր Մուշեղի (Մուշալիքի) անվամբ):

Թոռնիկ իշխանը հաջողությամբ կարողացավ դիմակայել սելջուկ-թյուրքերին: Մատթեոս Ուռհայեցին վկայում է, որ 1059թ. սելջուկ-թյուրքական զորքը հարձակվում է Տարոնի վրա, բանակելով «առ ստորոտ լերամբն Տօրոսի մերձ ի Սասուն»[807]: Տեղեկանալով այդ մասին, Թոռնիկը զորահավաք է անում և շարժվում է թշնամիների վրա: «Յայնժամ,- գրում է մատենագիրը,-զօրք այլազգեացն հնչեցուցանէին զփողս պատերազմին և միաբան ելին ի պատերազմ: Եւ եղև օրն այն մեծ և ահաւոր, վասն զի որպէս զջոկս առիւծոց զմիմեանս բախէին երկոցունց կողմանցն. և յայնժամ գոչեաց քաջն Թոռնիկ և ձայն տուեալ աջոյ թևին իւրոյ և հասանէր ի վերայ ձախոյ թևին այլազգեացն և պատառէր զնոսա մեծաւ յաղթութեամբ»: Թշնամին չարաչար պարտվում ու բռնում է փախուստի ճանապարհը, «և քաջն Թոռնիկ մեծաւ ուրախութեամբ դարձաւ ի Սասունք...»[808]:

Անշուշտ, Թոռնիկին զորակից էր նաև աները: Սակայն իրավիճակը փոխվեց վերջինիս մահվանից հետո: Փիլարտոս Վարաժնունին, ինչպես նշել ենք, փորձեց տիրանալ Թոռնիկի տիրույթներին, սակայն Հան-

---

[805] Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, էջ 213:
[806] Տես Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 63, 69:
[807] Տես Մատթեոս Ուռհայեցի, էջ 130:
[808] Նույն տեղում, էջ 130-131:

ծիթ գավառի Ալելուա դաշտում (Խարբերդի դաշտ) Սասունի իշխանության զորքը (որի թիվն Ուռհայեցին հասցնում է 50 հազարի) ջախջախում է թե Փիլարտոսի զորքին և թե նրան զորակցող բյուզանդական վարձկան ֆրանկ զորականներին: Ի վրեժ այդ պարտության, Փիլարտոսը կարողացավ թյուրք ամիրայի ձեռքով սպանել տալ Թոռնիկ իշխանին, երբ վերջինս, դավին անտեղյակ, ընդունեց ամիրայի հրավերը և մեկնելով նրա մոտ, սպանվեց խնջույքի պահին[809]: Թոռնիկի դին ամփոփվեց Ս.Կարապետ վանքում:

Ի դեմս Թոռնիկ Մամիկոնյանի և նրա Պահլավունի կողակցի, վերընձյուղված Պահլավունիները շարունակեցին իշխել Սասունում: Թոռնիկին հաջորդած Չորտվանելը թեև մանկահասակ էր[810], բայց Սասունի իշխանությունը շարունակեց գոյատևել, հավանաբար նրա մոր գործուն աջակցությամբ: XII դ. առաջին կեսին Սասունում իշխում էր Չորտվանելի որդի Վիգենը, որի օրոք Սասունի իշխանությունը վերստին հզորացավ: 1132թ. Վիգենը պարտության մատնեց Խլաթի Սուքմանյան ամիրայի զորքին, գերի վերցրեց ամիրային[811]: Վիգենի որդի Չորտվանելը կնության առավ Վասիլ Պահլավունու դուստր Վանենին (Վանինե)[812]:

Վիգենի հաջորդները ընդհուպ մինչև XIIդ. 70-ական թվականների վերջերը. պահպանեցին Սասունի և Տարոնի իշխանության անկախությունը: Այնուհետև այն ստիպված էր ամփոփվել Սասունի Լեռնաստանում: XII դ. վերջերին և XIII դ. սկզբներին Պահլավունիների վերընձյուղված շառավիղներից հիշվում են Ապուղամրի (մագիստրոս պատվանունը կրող) որդիները՝ Անիի արքեպիսկոպոս Գրիգորը և Ղարիբը (Խարիփ): Ապուղամրի մասին որևէ այլ տեղեկություն հայտնի չէ: Գրիգոր արքեպիսկոպոսն իր հորեղբոր՝ տեր Բարսեղի միջոցով Շիրակի Լմբատավանքին նվիրում է դրամով իր գնած Թաղք գյուղը (այժմյան Արթիկ քաղաքի մերձակայքում): Քանի որ Գրիգորը նվիրատվությունը կատարել է տեր Բարսեղի միջոցով, ուստի վերջինս պետք է լիներ Լմբատավանքի առաջնորդը: Ըստ վանքում թողած անթվակիր արձանագրության, Գրիգորը Անիի և Շիրակի առաջնորդն էր, իսկ հորեղբոր մահվանից հետո՝ նաև Լմբատավանքի սեփականատերը: Արձանագրության մեջ ասվում է. «Կամաւք բարերարին Աստուծոյ այս մեր արձան անջնջելի եւ յիշատակ մշտնջենաւոր Տէր Գրիգորոյ արհիեպիսկոպոսի մայրաքաղաքին Անւոյ եւ նահանգիս Շիրակա ժառանգորդի սեփհական մերո աթոռոյս որ ետու նուէր յիմ հաւրեղբաւրն յաստո-

---

809 Տես Մատթեոս Ուռհայեցի, էջ 207-209:

810 Տես նույն տեղում, էջ 210:

811 Վարդան Արևելցի, էջ 124:

812 Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 394, Գ.Արվանձտեանց, Թորոս աղբար, հ.Ա, Կ.Պոլիս, 1879, էջ 117:

ւածապատիւ Տեառն Բարսղի, հալալ արդեամբք ստացեալ սուրբ ուխտս Լմբատ զնորին գանձագին գեղս մերձ ի յԱրդիք որ կոչի անուն հայրանց Թաղք ընձաեցի զսա Սուրբ Ստեփանոսի հայրենիք մինչ ի կատարած յաւիտենիս, յաղագս յիշատակի մերոյ եւ արեւշատութեան եղբաւր իմոյ Ղարփին եւ հոգեւոր Տեառն Բարսղի ստացողի սոցա եւ ծնողաց մերոց. եւ եդի լուծ ի վերայ սպասաւորաց սորա ի տարին վեց աւր պատարագ փոխարէնս հատուցանել ի տաւնի Ղազարուն. զերկուսն Տեառն Բարսղի, զերկուսն իմ հաւրն Ապուղամրի, զերկուսն իմ մաւրն Մահմլըքին...»[813]:

Արձանագրությունից երևում է, որ արդեն վախճանվել էին Գրիգորի ծնողները և հորեղբայրը, որոնց հոգիների հանգստության համար պատարագներ էին մատուցվելու:

Լմբատավանքում թողած մեկ այլ արձանագրության (անթվակիր) համաձայն, նույն Գրիգոր արքեպիսկոպոսը վանքին նվիրում է իր սեփական Արդիք (այժմյան Արթիկ քաղաքը) գյուղը: Արձանագրության մեջ ասվում է. «Կամաւքն Աստուծոյ ես Տէր Գրիգոր, որդի Ապուղամրի Անւոյ եպիսկոպոս տուի զԱրդիք եւ զԲորենոյ զիրիցութիւնն Լմբատա իմ հայրենեացն. եւ նոքա տարին Ա աւր պատարագ ինձ...»[814]:

Գրիգոր արքեպիսկոպոսն ու եղբայրը՝ Ղարիբը 1225թ. նորոգում են Մարմաշենի վանքը, հողեր, կալվածներ ընծայաբերում նրան: Այդ առթիվ նրանց թողած արձանագրության մեջ ասվում է. «Ի ժամանակս բարեպաշտից եւ աստուածասիրաց պատրոնաց մերոց աթաբակ Իւանէի եւ մանդատորթա խուցէս Շահնշահի հրամանաւ սոցին վերըստին նորոգումն եղեւ հրաշափառ տաճարի... սրբոյ կաթողիկէիս Մարմաշինոյ ի ձեռն որդւոց Ապուղամրի մագիստրոսի տէր Գրիգորոյ արհիէպիսկոպոսի եւ հարազատի իմոյ Խարփին թոռանց Վահրամա իշխանաց իշխանին զարմից եւ շառաւեղի սրբոյն Գրիգորի, շինողի ի հիմանց մեծաւ տենչմամբ եւ յուսով զսայ վասն բազմագումար քահանայից եւ պարգեւեալ արդիւնս յոլովս. գեղաւրայս այգեստանս կուղպականի եւ ջաղացանի որ եւ ցուցանէ իւր արձանագիրն մի ըստ միոջէ փարթամացուցեալ ամենայն գոյիւք առ ի լնուլ եւ առաւելուլ զպետս կարեւորս զիւրեանց եւ զեկաց. եւ ունէր ժամանակ իբրեւ ոչ սակաւս զի աւերեալ էր յանաւրինաց եւ զվանքս

---

[813] Հ. Եղիազարյան, Լմբատավանքը և նրա վիմագրությունները («Էջմիածին», 1960, Բ, էջ 56): Այս արձանագրությունը փորագրված է համարվում 1191թ. հետո (նույն տեղում, էջ 51): Լմբատավանքը (Ս. Ստեփանոս) գտնվում է Արթիկ քաղաքի մերձակայքում, բլրի վրա: (Ունի խաչաձև հիմք, գմբեթավոր է): «Իր անվիճելի ոճով» Ս.Ստեփանոս եկեղեցին դիտվում է որպես VII դարի կառույց (տես Թ. Թորամանյան, Նյութեր հայ ճարտարապետության պատմության, I, էջ 246, II, էջ 200: Տես նաև Վ. Հարությունյան, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992, էջ 155-156): Եկեղեցին վերանորոգվել է XIIIդ.:

[814] Հ. Եղիազարյան. Լմբատավանքը և նրա վիմագրությունները, էջ 56:

գեղ արարեալ զկաթողիկէս բերդանման ամրացուցեալ [եւ] կայր ի խաւարի եւ ի սգաւորութեան զրկեալ յամենայն գոյից մինչեւ յաւուրսս յայսոսիկ...»[815]:

Այնուհետև նշվում են վանքին Պահլավունի եղբայրների կատարած նվիրատվությունները. «Իսկ ՈՒԴ (1225) թուականիս Հայոց քաջ եւ արի զաւրականն Քրիստոսի սիրելի եղբայրն իմ Խարիփն իմով կամակցութեամբ խորհուրդ բարի ի միտ արկեալ ազատել զսա ի [տող] մուտ եւ ի զազիր մթնազգածութենէն հասուցանել նախկի փառաւորութեանն հանեալ արտաքս զշինականսն եւ եղեւ բնակարան սրբոց քահանայից և կրաւնաւորաց հաճոյացելոց Աստուածայ. զարդարեցաք զսա սպասիւք պայծառազգեստիւք եւ սրբութեամբք ոսկեղէն եւ արծաթեղէն եւ հին եւ նոր կտակարանաւք էկեղեցականաւք: Եւ ընծայեցաք ի սմայ նուէր զմեր հայրենի գեղն զԱզատա: Եւ որ ի վանիցս հաղիս վերայշինեցաք եւ անուանի տիրաշէն եւ ի յայս կոյս գետոյն ջաղացանի որ կան ի կարմընջէն ի վայր եւ վեր զխոտ զհող եւ զոր ինչ ի սկզբանէ ունէին. եւ ի քաղաքիս զմեր պապէնի հայրենիք էկեղեցին զսուրբ Ստեփանոս բոլոր ամենայն ժողովրդեամբն եւ երկու այգի ի Մարմետի որ ի նախնեաց մերոց ի մեզ էր հասեալ: Եւ միաւորեցաք զվերիվանքն մեծ վանիցս իւր ամենայն ստացուածաւք...»[816]:

Սակայն նույն տարում Ղարիբը պատերազմի է մեկնում Խորեզմշահ Ջալալ ադ-դինի զորքի դեմ և նահատակվում: «Կատարեցաւ առժամայն,- նշվում է արձանագրության շարունակության մեջ,- գեղեցկագեղ եղբայրն իմ Խարիփ մագիստրոսն գովելն յամենայն լեզուաց մարտիրոսացաւ ի պատերազմի անաւրինաց եւ միայն մնացին ես Գրիգոր եղկելի եւ զրկեալ ի նմանէ»[817]:

Ղարիբի դին մարտադաշտից տեղափոխվում է Մարմաշենի վանք և ամփոփվում Պահլավունիների տոհմական գերեզմանոցում. «առ դրան սրբոյ կաթողիկէիս մերձ առ նշխարս հաւուն մերոյ Վահրամայ իշխանի»: Անիի Առաքելոց եկեղեցու արևելյան որմին թողած արձանագրության մեջ Գրիգոր արքեպիսկոպոսը նշում է, որ Ղարիբը զոհվել է «ի պատերազմի խորազմեցեաց ի ՈՒԴ»[818], իմա՝ 1225թ. օգոստոսի վերջին Գառնիի մոտ տեղի ունեցած ճակատամարտում, որը մղվում էր Իվանե Զաքարյանի գլխավորած հայ-վրացական զորքերի և Խորեզմի շահի որդու Ջալալ

---

[815] И. Орбели, Надписи Мармашена. с. 443. Գրիգոր արքեպիսկոպոսը հիշվում է նաև ուրիշ արձանագրություններում (տես Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 23, 26, 63, 118 և այլն: Տես նաև Դիվան հայ վիմագրության, I, էջ 15):

[816] И. Орбели, Надписи Мармашена, с.443

[817] Նույն տեղում:

[818] Դիվան հայ վիմագրության, I, էջ 18:

ադ-դինի գլխավորած ուժերի միջև: Այդ ճակատամարտն, ինչպես հայտնի է, ավարտվեց հայ-վրացական զորքի պարտությամբ[819]:

Հավանաբար Գրիգորի ու Ղարիբի քույրն էր Սիթի Պահլավունին, որն իր ամուսնու Գրիգորի միջոցներով 1210թ. նորոգում է Անիի Ս.Սարգիս եկեղեցին (կոչված «Սիթի Պահլավունու եկեղեցի»): Այս մասին Սիթիի թողած արձանագրության մեջ ասվում է. «Ի թւին ՈՃԹ (1210) շնորհիւն Քրիստոսի, յիշխանութեանս մանդատորքախուցէս ամիրսպասալար Շահնշահ Զաքարիայի ես [Սի] թի... զուգակից Գրիգորի մեծաւ յուսով եւ [պարոն] աց հրամանաւն վերստին շինեցի զսուրբ Սարգիս ի [հալալ արդ]եանց առն իմո վասն [փրկութեան] հոգոյ նորա եւ ի յիշատակ ծնողաց մերոց եւ զաւակաց մերոց եւ [թոռան]ց մերոց»: Ապա պատվիրում է, որպեսզի եկեղեցու սպասավորները պատարագ մատուցեն «յանուն հարազատին իմոյ կատարել Ղարփին սպանելոյն ի պատերազմի»[820]: Քանի որ Ղարիբը զոհվեց 1225-ին, ուստի նրա հիշատակին պատարագ մատուցելու վերաբերյալ Սիթիի պահանջը արձանագրվել է հետագայում՝ Ղարիբի սպանվելուց հետո:

Սիթին հիշվում է նաև նույն եկեղեցու 1226 թվակիր արձանագրության մեջ, ուր ասվում է. «Ի ՈՀԵ: Ես Տէր Գրիգոր թոռի զհարկ թաղման քահանայիս Անոյ. եւ սպասաւորք սուրբ եկեղեցոյս պարտին զաւագ ե շաբաթն պատարագսն Գրիգորի զշաբաթն աւրն Գրիգորայ եւ Սիթէ: Արդ եթէ ոք զյիշատակս մեր խափանէ, դատի եւ որք հաստատ պահեն աւրինեալ եղիցին յԱստուծոյ և ի սրբոց նորա»[821]:

1232թ. Գրիգոր արքեպիսկոպոսը դեռ կենդանի էր: Այդ թվականին իշխանաց իշխան Խավռասը (Զաքարե և Իվանե սպասալարների մորեղբորորդին) ընդօրինակել է տվել մի Ավետարան և նվիրել Բագնայրի վանքին «ի տէրութեանն տեղւոյն տեառն Գրիգորոյ, որ մագիստրոսն ասի, վերայդիտող [ա] թոռոյս Անւոյ...»[822]:

Գրիգոր արքեպիսկոպոսը և նրա եղբայր Ղարիբը հիշվում են Պահլավունիների տոհմում սովորական դարձած «մագիստրոս» պատվատիտղոսով[823]:

Գրիգոր արքեպիսկոպոսը վախճանվել է մինչև 1239թ. և թաղվել Պահլավունիների գերեզմանոցում (Մարմաշենի), եղբոր Ղարիբի կողքին:

---

819 Տես այդ մասին Հ.Մարգարյան, Գառնիի ճակատամարտի պատմության շուրջ («Լրաբեր հաս.գիտութ.», 1982, N3, էջ 72-80):

820 Դիվան հայ վիմագրության, I, էջ 55:

821 Նույն տեղում:

822 Գ. Յովսէփեանց, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, էջ 888:

823 Տես И. Орбели, Избранные труды, с. 443, Յովսէփեանց, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, էջ 888, Դիվան հայ վիմագրության, I, էջ 17:

Անիի Առաքելոց վանքի առաջնորդ Բարսեղ արքեպիսկոպոսը, որը գուցե Պահլավունի էր, 1239թ. նույն վանքի արևելյան որմին թողած արձանագրության մեջ Գրիգոր արքեպիսկոպոսին հիշում է արդեն որպես վախճանված: Արձանագրության մեջ նշված է. «ՈՁԸ (1239)... ես Բարսեղ արքեպիսկոպոս, որդի Ամիր Երկաթայ առաջնորդ մայրաքաղաքիս Անոյ, հաստատեցաք ի մեր սեփական ժառանգութենէս զսուրբ Ստեփանոս հայրենիք սուրբ ուխտին Սարմաշինոյ վանիցն, սխրատեսիլ սուրբ կաթողիկէին, զոր մաքիստրոսն Գրիգոր շնորհեալ և հաստատեալ էր, ընդ որոյ հովանեաւ ինքն եւ եղբայր իւր Խարիփ կան հանգստարանի»[824]:

Հավանաբար, Պահլավունիներից էր սերում նաև Անի քաղաքի կառավարիչ («ամիրա») Վահրամը, որը 1218թ. Գրիգոր արքեպիսկոպոսի («մաքիստրոսի») հետ հաստատում է վրաց Եպիփան կաթողիկոսի հորդորը Անիի եկեղեցականների և աշխարհականների պարտականությունների, ինչպես նաև Անիի բնակչության կողմից վճարվող տուրքերի կարգավորման մասին: Վրացերեն արձանագրությունից հետո հայերեն արձանագրությունն է, ուր նշված է.

«ԹՎ.ՈԿԷ. ես տէր Գրիգոր...[եպի]ս[կո] պոս. ես Վահրամ ամիրայ քաղաքիս վկայենք, որ կաթաղիկոսին հրամանք...»[825]: Այստեղ «հրամանք» բառեզրն ունի հորդոր իմաստը: Այդ ժամանակ վրաց Բագրատունիները խիստ թուլացել էին[826], ուստի նրանց իշխանությունը հյուսիսային Հայաստանում դարձել էր ձևական: Բացի այդ, վրաց կաթողիկոսը չէր կարող Անիի հայադավան բնակչության նկատմամբ հրաման արձակել: Նշված արձանագրության մեջ Գրիգորն ու Վահրամը սոսկ կամեցել են հաստատել արձանագրությունը Եպիփանին պատկանելու փաստը:

Անիի բնակչության կողմից վճարվող տուրքերի գանձումը կարգավորում էին քաղաքի հայ հոգևոր և աշխարհիկ կառավարիչները: Եպիփանի նշված արձանագրությունից դեռևս մեկ տարի առաջ 1217թ. Գրիգոր արքեպիսկոպոս Պահլավունին հատուկ շրջաբերականով կարգավորել էր Անիի,Շիրակի բնակչության կողմից վճարվող եկեղեցական տուրքերի գանձումը այն թեթևացնելու նպատակադրումով: Այդ մասին անեցիների Պահլավունի հովվապետի մի արձանագիր հիշատակարանում ասվում է. «...Ի միւսում ամի որ էր թուականս ՈԿԶ (1217) կամաւքն Աստուծոյ

---

[824] Դիվան հայ վիմագրության, I, էջ 17:

[825] Տես Н. Марр, Надпись Епифания, католикоса Грузии (из раскопок в Ани 1910г.). «Известия Императорской Академии наук», С. Петербург, 1910, с. 1439, Դիվան հայ վիմագրության, I, էջ 61, արձ. 187, Պ. Մուրուսդյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977, էջ 43:

[826] Տես Ա. Շահնազարյան, Զաքարյան Հայաստանի նվաճումը մոնղոլների կողմից («Պատմաբանաս. հանդես», 2004, N2, էջ 143-144):

ես Տէր Գրիգոր, որդի Ապուղամրի Արքեպիսկոպոս, կամեցաք բառնալ զեղեալ հարկ ի մեր գաւառէս Շիրակա, եւ քաղաքիս եկեղեցեացս ի յԱնոյ...»[827]:

Մարմաշենի վանքի գլխավոր եկեղեցու պարսպապատի վրա Գրիգոր արքեպիսկոպոս Պահլավունու որդի Սարգիս արքեպիսկոպոսի և վերջինիս երբոր Աբուղամրի թողած արձանագրության մեջ ասվում է.

«Շնորհիւն Աստուծոյ այս արձան մշտընջենաւոր է Գրիգորոյ որդոյ Աբուղամրի թոռին Վահրամա որ հաստատեալ է ի սկզբանէ զկաթողիկէ եկեղեցի...»: Նույն տեղում նրանց թողած մյուս արձանագրությունն ունի նվիրատվական բովանդակություն: Այդտեղ ասվում է.

«Ես Աբուղամր եւ եղբայր իմ Տէր Սարգիս տուաք... տեղի յայն տանն որ Բ այլ կայր եկեղեցոյս որ... [մե]ղոյ Վահրամ իշխանին կիսաւրեայ ժամանակաւ փոխեց...»[828]:

Սարգիս արքեպիսկոպոսը հիշվում է նաև Բագնայրի 1262թ. մի արձանագրության մեջ, ուր նշված է.

«ՉԺԱ. ի վերադիտողութեան մայրաքաղաքիս Անու տէր Սարգսի, տեառն տեղոյս»[829]:

Սարգիս արքեպիսկոպոսի որդի է համարվել տեր Գրիգորը[830], որը սակայն Մարմաշենում իր թողած արձանագրության մեջ հիշվում է որպես Սարգսի եղբորորդի[831]:

Գրիգոր արքեպիսկոպոսի մյուս որդին Աբուղամրը Բագնայրի վանքում թողած նվիրատվական արձանագրության մեջ ասում է. «Չժ - կամաւն Աստուծոյ. ես Ապուղամր որդի Մաքիստրոսի որ գնեցի զկէս Կաղզուցն ի Տիգրանանց եւ ետու ի սուրբ Աստուածածինս, ի մեր սուրբ ուխտս: Որ զփոխարէնն մաւտ ի Քրիստոս ի Վահրամ իշխանն ի յիմ եղբայրն վճարէ» [832]:

Նվիրատվական բնույթի է նաև Աբուղամրի կողմից Բագնայրում թողած մեկ այլ արձանագրություն, որտեղ ասվում է.

«ՉԺԱ (1262). կամաւն Աստուծոյ ես Ապուղամր, որդի Մաքիստրոսի, թոռն Վահրամ իշխանին, վասն ի Քրիստոս յուսոյն ետու զիմ գանձագին հայրենիքն, զԿաղզուց կէսն իւր հողովն ու ջրովն ի սուրբ Աստուածա-

---

827 Դիվան հայ վիմագրության, I, էջ 16:
828 И. Орбели, Надписи Мармашена, с. 447.
829 K. Basmadjan, Les inscriptions, p. 368-369, արձ. 180.
830 Ն. Ակինեան, Պահլաւունի և Լամբրոնի Հեթմեանց ազգաբանութ., էջ 42:
831 Տես И. Орбели, Надписи Мармашена, с.445.
832 K. Basmadjan, Les inscriptions, p. 365-366, արձ. 177:

մայրս, ի մեր սուրբ ուխտս, որ մաւտ ի Քրիստոս զփոխարէնն ի յիմ մայրն վճարէ, ի Մամքան»[833]:

Աբուղամրի որդի է հիշվում Յովհաննես եպիսկոպոսը: 1308թ. Բագնայրի վանքում օրինակված Ավետարանի հիշատակարանում նրա մասին հետևյալն է ասվում.

«Ի հայրապետութեան մերոյ նահանգիս Շիրակ գաւառիս հեզի եւ մարդասիրի Տէր Յովհաննիսի, որդոյ Ապուղամրի, իշխեցող տեղոյս»[834]:

XIII դ. սկզբներին հիշվում են նաև Ապիրատ Պահլավունին և իր որդիները Անիի եպիսկոպոս Սարգիսը և Շարափշահը: Սարգիսը մասնակցեց Զաքարե սպասալարի կողմից 1208թ. Լոռե քաղաքում գումարած եկեղեցաժողովին, որը պետք է բավարարեր Զաքարեի խնդրանքը՝ Հայոց զորքի մեջ ունենալ պատարագի, հաղորդության համար անհրաժեշտ շարժական սեղան (հայերն այն ունեին Արշակունյաց և մարզպանության շրջանում): Ժողովի մասին խոսելիս Կիրակոս Գանձակեցին հիշում է նաև «Սարգիս աթոռակալ Անւոյ»[835], նկատի ունենալով Սարգիս եպիսկոպոսին:

Ժողովականների մի մասը համաձայնվեց Զաքարեի առաջարկին[836]: Անշուշտ, նրանց մեջ էր նաև Սարգիս Պահլավունին, որը, վայելել է Զաքարյան իշխանների հովանավորությունը: Անիի Առաքելոց վանքի 1220 թվակիր արձանագրության մեջ (Սարգիս եպիսկոպոսի թողած) ասվում է. «Ի թիւս ՈԿԹ (1220) շնորհիւն Աստուծոյ, ես Տէր Սարգիս, որդի Ապիրատին, առաջնորդ մայրաքաղաքիս Անւոյ եւ կամակցութեամբ Ամիրաիս Երկաթա, յաղագս բարեպաշտ եւ աստուածասէր պատրոնաց մերոց աթաբակ Իւանէի եւ ամիրսպասալար Շահնշահ Սարգսի եւ Աւագի յերկարակենդանութեան եւ յիշատակի մեծ սպարապետին Հայոց Զաքարէի, ազատեցաք զամենայն քաղաքիս քահանայիցս զիրիցակնոջ մուտք զմահու եւ զկենաց եւ զմատղաց զփարթամաց եւ զաղքատաց զեկաց և զբնակաց...»[837]: Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայում պահվող մի ձեռագրում (ընդօրինակված 1298թ. Անի քաղաքում) նույն ժամանակ հիշվում է Անիի մերձակայքում գտնվող Առջոառիճ գյուղի վանքի վանահայր «Մագիստրոսենց Տեր Յովհաննեսը»[838],որը նույնպես Պահլավունի էր:

---

[833] Նույն տեղում, էջ 368, արձ. 179:

[834] Գ. Յովսէփեանց, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, էջ 891:

[835] Կիրակոս Գանձակեցի, էջ 172: Սարգսի դուստր է հիշվում Թայիկը, որը 1290 թ. Վայոց Ձորի Քարագլուխ գյուղում կանգնեցրել է խաչքար (տես Ղ. Ալիշան, Սիսական, էջ 162):

[836] Նույն տեղում:

[837] Դիվան հայ վիմագրության, I, էջ 17:

[838] К. Юзбашян, Армянская рукопись 1298г. («Բանբեր Երևանի համալսարանի», 1971, N 2, էջ 81)

Երրորդ մաս

Պահլավունյաց շառավիղները XIV-XVII դդ

XIV դարում, Պահլավունիների շառավիղները շարունակում էին հավատարմորեն ծառայել Զաքարյան իշխանապետներին: Շահնշահ II ամիրսպասալարի օրոք՝ XIV դարի սկզբներին Զաքարյան տան հեջուբի բարձրագոդեցիկ պաշտոնը վարում էր Զաքարիա I Պահլավունին: Մի ձեռագիր հիշատակարանում (1313թ.) նա հիշվում է որպես «հեջուբ և առաջնորդ տանս մեծի աթաբակ ամիրսպասալար Շահնշահի» և բնորոշվում իբրև «քաջ և ընտիր պատերազմող»[839]:

Զաքարիա I Պահլավունուն տրված այս բնութագիրը խոսուն վկայություն է այն իրողության, որ նա օժտված է եղել նաև զինվորական գործառնությամբ՝ անշուշտ, պատերազմական իրավիճակում, իսկ խաղաղ պայմաններում կատարել է հեջուբի պարտականությունները: Հավանաբար նա եղել է Շահնշահ II-ի խորհրդականը նաև զինվորական գծով: Հեջուբը Զաքարյան իշխանության սենեկապետի պաշտոնն էր[840]:

XIV-XVII դարերում Պահլավունիները նախկինի պես տիրում էին նաև Հավուց Թառի Ամենափրկիչ վանքին և նրա հողատիրույթներին: Սիմեոն Երևանցի կաթողիկոսը (1763-1780) վկայում է, որ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու (Բջնեցու) սերունդները հաջորդաբար իշխել են այդ վանքում գրեթե մինչև իր ժամանակները: Նրանք վանքը դարձրել են «զհայրենի մուլք» և «որդիք և թոռունք և յետագայ ազգատոհմք սորին (Գրիգոր Մագիստրոսի-Վ. Վ.), մի զկնի միոյ յաջորդեցին զառաջնորդութիւնն սորին ոչ միայն ի յիշխանութիւնն Հայոց, այլ և ի ժամանակս թագաւորացն պարսից մինչև գրէթէ ի ժամանակս մեր»[841]:

1340-1350-ական թթ. Հավուց թառի առաջնորդն էր Նաթանայել եպիսկոպոսը, որը հաջորդեց 1333-ին վախճանված տեր Սարգսին[842]:

XV դարի առաջին կեսին Հայաստանի եկեղեցական կյանքում ազդեցիկ դեր էր խաղում արքեպիսկոպոս Զաքարիա Հավուց թառեցի Պահլավունին, որը էապես սատարեց Հայոց կաթողիկոսական գահաթո-

---

[839] Գ. Յովսէփեանց, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 8:

[840] Հեջուբի պաշտոնի մասին տես՝ Հ. Մանանդյան, Երկեր, Գ, Երևան, 1977, էջ 182:

[841] Զամբռ, էջ 276: Հավուց թառի վանքի հիմնադրման մասին տես՝ Գ. Սարգսյան, Հավուց թառի հիմնադրման վկայագրի շուրջ («ՀԽՍՀ ԳԱ Լրաբեր» (հաս. գիտ.), 1988, N 4):

[842] Տես Կ. Մաթևոսյան, Հավուց թառի վանքի և Ապիրատյան տոհմի պատմության նորահայտ տվյալներ («Բանբեր Մատենադարանի», N 17, (2006), էջ 150):

ռը Կիլիկիայից (Սիսից) իր նախնական վայր՝ էջմիածին տեղափոխելու գործընթացներին: Կիլիկիայում Հայոց թագավորության բարձումից (1375թ.) հետո Սիսի Աթոռը կորցրեց ոչ միայն պետական հովանավորությունը, այլև իր երբեմնի ազդեցությունն ու հմայքը, «զի ապականեցաւ կարգ եւ կանոնք սուրբ հարցն մերոց ի կիլիկեցոց առաջնորդացն»,- վկայում է Թովմա Մեծոփեցին[843]: «Նուիրակք եւ խրատատուք եւ եպիսկոպոսք նոցին գայթակղութեամբ զբազումս ի հաւատոցն Քրիստոսի ի բաց հանին եւ անհաւասար արարին»,-հավելում է նույն մատենագիրը, նշելով նաև այլ կարգի օրինազանցություններ, որ տեղ էին գտել Սիսի Աթոռում[844]:

1439 թվականից սկսած՝ Վայոց ձորի Հերմոնի վանքի սան և Գրիգոր Տաթևացու փառասուն աշակերտ Հովհաննես վարդապետի հետ միասին Թովմա Մեծոփեցին եռանդուն գործունեություն է ծավալում Կաթողիկոսական Աթոռը Սիսից էջմիածին տեղափոխելու համար: Նրանց սատար են կանգնում նաև Արտազի Գրիգոր եպիսկոպոսը, ինչպես նաև Զաքարիա Պահլավունի Հավուցքառեցի արքեպիսկոպոսը, Բջնիի եպիսկոպոս Հովհաննեսը: Նրանց ջանքերով և Կարա-կոյունլու թուրքմենների փադիշահ Ջհանշահի, Երևանի կառավարիչ Յաղուբի օժանդակությամբ 1441թ. Վաղարշապատում գումարվում է համազգային ժողով, որին մասնակցում էին նաև հայ ազատներ, տանուտերեր: Ժողովականների մեջ հիշվում են նաև «տէր Զաքարէն Հաւուց Թառայ ի յազատորդեաց» և Պահլավունիների հինավուրց ոստան Բջնիից վերոհիշյալ Հովհաննես եպիսկոպոսը[845]:

Համերկրային այդ կաճառը վառ ապացույցն էր այն իրողության, որ էջմիածինը դարձել էր համազգային ձգողական այն ուժն ու մտավորմշակութային, հոգևոր-եկեղեցական կենտրոնը, որն ի զորու էր համախմբել ժողովրդին և դառնալ նրա գոյատևման հուսալի երաշխիքը: Էջմիածինը նաև քաղաքական հույսեր էր ծնում հայ ազատանու, ժողովրդական լայն խավերի մեջ: «Լրումն եհաս ժամանակի փրկութեան Թորգոմեան ազգիս»,- գրում է ժամանակակից պատմագիրը[846]:

Պահլավունիների շառավիղները լիովին հաղորդակից էին երկրում իշխող տրամադրությանը և գործուն աջակցություն էին ցուցաբերում էջմիածնի Մայր Աթոռի վերականգնման և ամրակայացման գործընթացներին: Անշուշտ, նաև նրանց աջակցությամբ էր, որ «զաջ Լուսաւորչին ի Սսոյ գողացեալ բերին յէջմիածին, և վերստին հաստատեցին զկաթողիկո-

---

[843] Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, աշխ. Լ. Ս. Խաչիկյանի, Երևան, 1999, էջ 224:
[844] Նույն տեղում, էջ 225-229:
[845] Նույն տեղում, էջ 219-220:
[846] Նույն տեղում, էջ 230:

սութիւն»[847], վկայում է Սամուել Անեցու շարունակողը: Կիրակոս Խորվիրապեցու կաթողիկոս ձեռնադրողներից էր նաև Զաքարիա Հավուցթառեցի Պահլավունին[848]:

Սակայն հաջորդ տարվա ընթացքում Հայոց նորընծա հայրապետի շուրջ ծավալվում է հակակրանքի բուռն հորձանք: Հոգևոր դասի որոշ պարագլուխներ դավ են նյութում նրա դեմ՝ գահընկեց անելու, հոգևոր բարձրագույն իշխանության ուղենիշներն իրենց կամեցած ձևով փոխելու մտադրությամբ: Կաթողիկոսի գահի հնարավոր հավակնորդներ էին դիտվում Հովհաննես Հերմոնեցին, Արտազի Գրիգոր եպիսկոպոսը և Զաքարիա II Հավուցթառեցի Պահլավունին: Վերջինս արդեն ծերացել, տկարացել էր և, թվում է, թե առանձին եռանդ չպետք է դրսևորեր այդ ուղղությամբ: Սակայն Հայոց կաթողիկոսի դեմ ծառացողները Զաքարիային հղած թղթում նրան մեղադրում են Կիրակոս Խորվիրապեցուն կաթողիկոս ձեռնադրելու համար: Արձագանքելով բանսարկուներին, Զաքարիան «ընդունակ եղեւ չարին» և նրանց հետ մեկնեց Հովհաննես Հերմոնեցու մոտ, որը «նոյն ժամայն ժողովեաց զբազում անուղղայ եպիսկոպոսք եւ քահանայք», որից հետո նրանք մտան էջմիածնի Մայր տաճար՝ «բարկութեամբ եւ սրտմտութեամբ լցեալ»: Կիրակոս կաթողիկոսը երկնչում և «փախուստ առեալ, մտանէ ի տուն քրիստոնէի միոջ գաղտագողի»: Բայց դավ նյութողները գտան նրան և բռնությամբ տարան Երևանի վերոնշյալ կառավարչի՝ Յաղուբ բեկի մոտ, նրա առջև Կիրակոսին բնութագրելով իբրև «ոչ քրիստոնյայի, կախարդի և հերձվածողի»[849]: Նրանք նպատակադրվել էին բեկի միջոցով տապալել կաթողիկոսին: Յաղուբն սկզբում մերժեց նրանց առաջարկը՝ հավանաբար, կաշառք ակնկալելով: Հարկավ, երբ Զաքարիա II Հավուցթառեցին նրան խոստացավ «անթիւ եւ անհամար արծաթ», բեկն իսկույն հրաման տվեց կաթողիկոս ձեռնադրել Արտազի Գրիգոր եպիսկոպոսին[850]: Վերջինս,- գրում է Սամուել Անեցու շարունակողը,- կաթողիկոսի Աթոռին «Նստաւ թուրքով և ղաբալով»[851]: Կիրակոս կաթողիկոսի գահընկեցությունը տեղի է ունեցել 1443թ. ապրիլի 21-ին[852]:

XV դարի վերջերին և XVI դարի սկզբին Հավուց Թառի վանահայր է հիշվում Զաքարիա վարդապետը, որը ևս Պահլավունի էր: 1487թ. նա վերստին տիրացավ Գառնիի շրջանում իր տոհմի ժառանգական կալ-

---

[847] Սամուել Անեցի, էջ 175:
[848] Թովմա Մեծոփեցի, էջ 264:
[849] Նույն տեղում, էջ 262-264:
[850] Նույն տեղում, էջ 265:
[851] Սամուել Անեցի, էջ 175:
[852] Մ. Օրմանեան, Ազգապատում, Բ, սյունակ 2487:

վածքներին, այդ կողմերին իշխող Ամիրքյամալ բեկից հինգ հազար դինարով գնելով Մանկուս, Ավանիկ, Կուտիս, Հայոց Թառ, Կուտուց վանք, Ավանասար, Թառնիս, Սուրբ Սարգիս գյուղերն ու Կոխդ գյուղի կեսը: Նշված ինը գյուղերի կալվածագրում Զաքարիան հանդես չի գալիս իբրև Հավուց Թառի վանահայր: Չի արձանագրվում, որ այդ գյուղերը վակֆ են արվում (նվիրաբերվում են) վանքին, քանի որ, ինչպես հավաստում է Սիմեոն Երևանցին, Զաքարիայի տոհմի անդամներն «ի բնէ անտի ազատազունք էին և անուանիք, շատազգ և հարուստք, յորոց թէպէտ ոմանք վանականք լինէին, ոմանք աշխարհականք, սակայն մի էին տամբք և ընչիւք, և իւրեանց էր համարեալ գեօղն և վանքն առանց խտրութեան»[853]:

Այս տողերում վկայված է հայ աշխարհիկ ու եկեղեցական հողատիրության միաձուլման իրողությունը[854]: Հետագայում նույն Զաքարիայի խնդրանքով Սեֆյան շահ Իսմայիլ I-ի (1502-1524) կողմից Հավուց թառի վանքին տրվեց ապահարկության իրավունք, որով վանքը «ոչ խարճ դիւանի, ոչ մուլք և ոչ այլ ինչ հարկ տայցէ ումէք»[855]: Սակայն հետագայում «ի նուազիլ կարողութեանց և իշխանութեանց սոցա և ի բաժանիլ ազգականացն յիրերաց, սկսաւ խտրութիւն անկանիլ ի մէջ վանականացն և աշխարահականացն վասն մլքից և այլոց ընչից»: Ստեղծված պայմաններում Զաքարիա վարդապետը և իր ազգական Համազասպը Հայոց թառ, Մանկուս, Ավանիկ, Քաղբերթ և Ս. Սարգիս գյուղերի հողաբաժինների կեսը վակֆ են տալիս Հավուց թառի Ամենափրկիչ վանքին: Զաքարիան կարողանում է շահ Իսմայիլ I-ի հաջորդ շահ Թահմասպից մոտ 1524թ. արտոնագիր ստանալ, որով նշված գյուղերը պետք է մուլք վճարեին Զաքարիային[856]: Այդպիսով Հավուց թառի կալվածները ոչ թե վակֆային սեփականություն էին, այլ Զաքարիա Պահլավունու սեփական մուլքերը[857]:

Սակայն ավելի ուշ դրությունը փոխվում է: Պահլավունի տոհմի աշխարհիկ ներկայացուցիչները հարկադրված են լինում Հայոց թառ, Կոխդ, Կուտուց վանք և Թառնիս գյուղերի մուլքերը վաճառել Հավուց թառի Ամենափրկիչ վանքին[858]:

Ձեռագիր մի հիշատակարանում հիշվում է Հակոբ վարդապետը, (XVIդ. երկրորդ կես), որը բնութագրվում է իբրև «քաջ և արի ուսուցչապետ (ռաբունապետ)», «մարդասեր և առաքինի, շնորհաբաշխ» և այլ

---

853 Զամբռ, էջ 277:
854 Հայ ժողովրդի պատմություն (ՀՀ ԳԱ հրատ), հ. IV, Երևան, 1972, էջ 66:
855 Զամբռ, էջ 277, Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 357:
856 Զամբռ, էջ 278:
857 Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ, I, կազմեց Հ. Փափազյան, Երևան, 1956, էջ 96:
858 Զամբռ, էջ 278:

որակումներով: Հակոբն, ըստ հիշատակագրի,- «է որդի հարազատի և նահատակի ի մեծ ազգէն պարթևացի»[859]: «Ազգէն պարթևացի» արտահայտությունը թույլ է տալիս կարծելու, որ Հակոբ վարդապետը Պահլավունիների շառավիղներից էր[860]: Նույն ձեռագիր հիշատակարանում նշված են Հակոբի մեծ պապը՝ պարոն Միրզեն, պապ Վելիճանը, հայրը՝ Շմավոն քահանան (նահատակված թուրքերի ձեռքով), մայր Ազիզը, հորեղբայրները՝ պարոնտեր Հակոբը և Մելիք Աղան, եղբայրները՝ Գրիգոր կաթողիկոսն ու Աղաճանը[861]: Գրիգոր կաթողիկոսը հավանաբար նույն Գրիգոր XII Վաղարշապատեցի կաթողիկոսն է (1570-1587)[862]:

Առաքել Դավրիժեցին XVI դարի սկզբին Հավուց թառի եպիսկոպոսներ է հիշում Մանուկին և Մանուելին: Նրանք ևս պետք է Պահլավունի շառավիղներից լինեին[863]: Մանուելն ապրեց այն բոլոր սարսափները, որ բաժին էր ընկել իր ժողովրդին, 1603թ. վերսկսված թուրք-պարսկական պատերազմի ընթացքում: Իսպանացի ուղեգիր Անտոնիո դե Գուվեան, որ ականատես էր այդ պատերազմին, Շահ-Աբբաս I-ի կյանքն ու գործունեությունը լուսաբանող իր արժեքավոր աշխատության մեջ պատկերել է 1602թ. աշնանից մինչև 1608թ. ընդգրկող ժամանակահատվածում տեղի ունեցած անցքերը: Շահ-Աբբասի զորքի արշավուղին ըստ այդ հեղինակի, ձգվում էր Ջուլֆայով, որը «բազմամարդ էր և բացառապես բնակեցված հայերով», Օրդուբադով, որը նույնի վկայությամբ՝ ուներ «յոթից ութ հազար բնակիչ, մեծ մասամբ հայեր», Նախիջևան քաղաքով, «որը համարյա նույնպես ամբողջությամբ բնակեցված էր հայերով»[864]: Շահ-Աբբասի զորաբանակը 1603թ. վերջին հասնելով Երևան քաղաք, պաշարում է այն: Երևանը, համաձայն նույն հեղինակի վկայության,- «ամբողջովին բնակեցված է հայերով, քաղաքի հողը մշակելի ու բերրի է և հարուստ ամեն տեսակի մթերքներով»: 1604թ. Շահ-Աբբասի կողմից կազմակերպված Այրարատի բնակչության բռնագաղթի հետևանքով հայերը հայտնվեցին ահազարհուր կացության մեջ: Հայրենի եզերքները թողնելու համար նրանց տրվեց երկու օր: Հարձակման անցած թուրքական զորքերի ճանապարհին ընկած Այրարատյան երկիրն անապատի վերածելու համար այն պետք է մարդաթափ արվեր:

---

859 Ցուցակ հայերէն ձեռագրերի Թիֆլիզի Ներսիսեան հոգևոր դպրանոցի, կազմեց Ստ. Կանայեանց, Թիֆլիզ, 1893, էջ 40:

860 Գ. Յովսէփեանց, Խաղբակեանք, էջ 421:

861 Ցուցակ հայերէն ձեռագրերի Թիֆլիզի Ներսիսեան հոգևոր դպրանոցի, էջ 40:

862 Գ. Յովսէփեանց, Խաղբակեանք, էջ 421:

863 Նույն տեղում:

864 Մ. Ջուլալյան, Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա, Երևան, 1990, էջ 138-139:

Շահի հրամանի դեմ ըմբոստացողներ եղան: Նրանցից էին Հավուց թառի Մանուել եպիսկոպոսը, որը Գեղարդա վանքի եպիսկոպոս Աստվածատուրի հետ «առեալ զարս ոմանս ի մերձաւորաց իւրեանց՝ կարգաւորս և աշխարհականս», հրաժարվեցին տեղահանվել և մտնելով Գեղարդածոր, թաքնվեցին մի քարայրում, հուսալով, որ պարսիկ զորականները չեն հասնի այդտեղ: Սակայն բռնագաղթն իրականացնող Ամիրգունա խան Ղաջարը տեղեկացավ այդ մասին և զինվորներ ուղարկեց նրանց գերելու համար: Զինվորներից մեկը մտավ քարայր և գլխատեց իր դեմ ծառացած Մանուել եպիսկոպոսին: Շահի զինվորները սրի քաշեցին նաև Գառնիի գավառի լեռնախորշերում ապաստանածներին, չխնայելով անգամ ծերերին ու երեխաներին[865]:

Այնուհետև Հավուց թառի վանահայր են հիշվում Մարկոս Ջուղայեցին[866] և ուրիշներ, որոնք հավանաբար այլ գերդաստաններից էին սերում:

Տակավին XIV դարում Պահլավունի տոհմի որոշ ժառանգներ, չհանդուրժելով օտար բռնատիրողների կամայականությունները, հեռացան Ղրիմի թերակղզի, որն ինչպես գրում է XVII դարի տաղաստաց, Կաֆա (Թեոդոսիա) քաղաքում ծնված Մարտիրոս Ղրիմեցին,- «ոչ էր այն մեզ երկիր սեփական, զի մեք հայ եմք ազգաւ և ցեղ Պահլաւեան»[867]:

Ղրիմում հաստատված Պահլավունիների մասին ուշագրավ տեղեկություններ կան Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող մի Հայսմավուրքում, որը գրել են տվել ջալալիների շահատակությունների պատճառով Նախիջևանից հոր հետ Ղրիմ գաղթած Աբրահամ Պահլավունու (Սագիի որդու) զավակներ Տրդատը և Աննան՝ 1690 թվին: Ջալալիների ավազակային հարձակումները կատարյալ պատուհաս էին հայության համար: Այդ մասին խոսուն վկայություններ են պահպանվել ձեռագիր հիշատակարաններում[868]:

1299 թվականին, ինչպես հավաստում է Հայսմավուրքի հիշատակագիրը, հայերից շատերը «թողլով զոսկեզօծ պալատս և զծաղկաւէտ դաշտս, զվանորայս և զեկեղեցիս աւեր, չուեալ եկին որպէս փախստա-

---

865 Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխ. Լ. Խանլարյանի, Երևան, 1990, էջ 83-85:

866 Զաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870, էջ 56:

867 Ա. Մարտիրոսյան, Մարտիրոս Ղրիմեցի, Երևան, 1958, էջ 144: Այս խոսքերը թույլ են տալիս ենթադրելու, որ Մարտիրոս Ղրիմեցին ևս սերում էր Պահլավունիներից:

868 Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.), հ. Ա, կազմեցին Վ. Հակոբյան և Ա. Գ. Հովհաննիսյան, Երևան, 1974, էջ 179, 235, 246-247, 288, 415 և այլն: Ջալալիների մասին տես՝ Մ. Ջուլալյան, Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ (XVI-XVII դարեր), Երևան, 1966:

կան ի յԱխսարայ, որ է ի մէջ Հաշտերխանա և Ղազանու»[869]: Սակայն այստեղ էլ նրանք ենթարկվում են թաթար-մոնղոլների կամայականություններին, ուստի որոշում են հեռանալ Ղրիմ, որը դեռևս 1239թ. գրավել էր Բաթու խանը: (Ավելի ուշ՝ 1443 թվականից Ղրիմը դարձավ ինքնուրույն խանություն՝ Գիրեյների թաթարական տան գերիշխանության ներքո): Տակավին XIII դարի երկրորդ կեսին ջենովացիները մոնղոլ-թաթարների հետ կնքված պայմանագրով տիրացան Ղրիմի հարավ-արևելյան ծովամերձ տարածքներին, կենտրոն դարձնելով Կաֆա քաղաքը: 1299թ. Ախսարայից գաղթած հայերն այդ քաղաքում հաստատված Ջենովայի հյուպատոսի հետ պայմանագիր («ուխտ») են կնքում, և հաջորդ տարի «իշխանք և ազնիւք և հասարակ ժողովուրդք՝ վառեալ զինու պատերազմելով ընդ թաթարացն ճեխքեալ գան ի Ղռիմ և բնակին ի Ֆեօտոսիա» և այլուր[870]: Ջենովացիները հաճությամբ ընդունեցին հայերին, իբրև քրիստոնյաների և գործարար հատկանիշներով օժտված տարրի: Նրանց բնակության համար հատկացվեց Կաֆայի շրջապարիսպներից դուրս ընկած լեռնոտ տեղանքը, որը նրանք պարսպապատեցին, բնակություն հաստատելով այնտեղ[871]: Նրանք այդտեղ հիմնեցին եկեղեցիներ (ջենովական իշխանությունները հայերին և հույներին արգելում էին Կաֆայի միջնաբերդում եկեղեցիներ կառուցել[872]):

Ղրիմում հայ գաղթականությունը հաստատվում է նաև ուրիշ բնակավայրերում՝ «ի Ղարասուպազար, ի Պաղջասարայ և ի Կեօզլով»[873]: Հայահոծ բնակչություն ունեին նաև Սուդակ, Սուրխաթ, Աքմեչիթ (Սիմֆերոպոլ), Բալակլավա, Օրաբազար (Արմյանսկ) և Տավրիկյան Խերսոնես բնակավայրերը: Հայերը մեծամասնություն էին կազմում Կաֆայում, որտեղ ջենովացիների թիվը մեծ չէր: Հայերը Կաֆան համարում էին «հոյակապ և հռչակավոր մայրաքաղաք»[874], «աստվածաշեն և երկնանման մայրաքաղաք»[875]:

Մարտիրոս Ղրիմեցին գրում է, որ Ախսարայից Ղրիմ տեղափոխված հայերը՝

Եկեղեցովք լցին զվայրսն ամենայն

---

869 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 7442, թ. 281:

870 Նույն տեղում:

871 Ք. Քուշներեան, Պատմութիւն գաղթականութեան Խրիմու Հայոց, Վենետիկ, 1895, էջ 103:

872 Վ. Միքայելյան, Ղրիմահայոց պատմություն, Երևան, 1989, էջ 17:

873 Ձեռ. 7442, թ. 281:

874 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 548-549:

875 Հայերեն ձեռագրերի ԺԵ դարի հիշատակարաններ, Ա, էջ 175 և այլն:

Փոխան եկեղեցեացն, որք ի Շիրական[876]:

«Շիրականի» տակ անշուշտ, մատենագիրը նկատի ունի Մեծ Հայքի Շիրակ գավառը, որտեղ իրենց եկեղեցաշինությամբ հայտնի էին Պահլավունիները: Կաֆայում կառուցվել է 24 հայկական եկեղեցի[877]: Տավրիկյան Խերսոնեսում հայտնաբերված խեցեղենը նմանություն ունի Անիում արտադրվածի հետ[878]: Խերսոնեսի միջնադարյան բաղնիքները նման են Պահլավունիների ոստան Ամբերդում հայտնաբերված բաղնիքներին[879]:

XIII դարի վերջին Նախիջևանից Ոսկե հորդա է գաղթում նաև Պետրոս Պահլավունին որդու՝ Դավիթի հետ: 1330թ. նրանք Մաղաքիա Պահլավունու հետ տեղափոխվում են Կաֆա, կառուցում նրա բերդը[880]: XV դ. առաջին կեսին Նախիջևանում հիշվում է Դավիթ Պահլավունին, որն ըստ վերոհիշյալ ձեռագիր հիշատակարանի, ունենում է Սեդրակ անունով որդի, իսկ վերջինից ծնվում է Մարգարը, սրանից էլ՝ Սագին:

1602թ. վերոնշյալ (Սագի Պահլավունու որդի) Աբրահամը որդու Տրդատի և դստեր Աննայի հետ գաղթում է Ղրիմի թերակղզի: Ըստ նույն հիշատակարանի, «ի յաւերելն ջելալին՝ զերկիրն Պարսից, բազումք ի յազգէ մերմէ չուեալ անտի գան ի Ղռիմ»[881]: Կաֆայում, ինչպես նշվեց, դեռևս XIV դարում ապաստան էին գտել Պահլավունիները: Աբրահամ Պահլավունին և իր քեռորդի Պետրոս Բագրատունին, Մուղալենց Մարգարի (որը գուցե մերձակցություն ուներ Կաֆայի Պահլավունիների հետ) հովանավորությամբ նույնպես հաստատվում են Կաֆայում: Մարգարը ջենովական հյուպատոսի կողմից օժտված էր լայն իրավազորությամբ: Նա իր տնօրինության տակ ուներ նաև զորաբաժին, որը Կաֆան պաշտպանում էր թաթարների հարձակումներից: Մուղալենց Մարգարը սիրահոժար կերպով ընդունեց Աբրահամ Պահլավունուն և նրա քեռորդուն, անշուշտ, նկատի առնելով նաև նրանց ծագումը: Նա, ինչպես հավաստում է հիշատակարանագիրը,- «ի տեսանելն Աբրահամին Պահլաւունենց և Պետրո-

---

[876] Ա. Մարտիրոսյան, Մարտիրոս Ղրիմեցի, էջ 146:

[877] Օ. Հալբախչյան, Армяно-русские культурные отношения и их отражение в архитектуре, Ереван, 1957, с. 20.

[878] А. Якобсон, Средневековый Херсонес (XII-XIV вв.), М.-Л. 1950, с. 105.

[879] Նույն տեղում, էջ 81:

[880] Ձեռ. 7442, թ. 281:

[881] Նույն տեղում: Ղրիմում հայերի հիմնած գյուղերից մեկը կրում էր Նախիջևան անունը, որը վկայված է գյուղի տարածքում եղած մահարձանի վրայի արաբերեն արձանագրությամբ (տես Մ. Բժշկեանց, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան եւ յայլ կողմանս բնակեալս ի հայկազանց սերելոյ ի նախնեանց Անի քաղաքին, Վենետիկ, 1830, էջ 329): Գյուղը կարող էին հիմնել Նախիջևանից գաղթածները, որոնց մեջ գուցե եղել են նաև Պահլավունիներ:

սին Բագրատունենց, պարգևեաց նոցա զբազում ինչս և զստացուածս և պալատ մի ի բնակութիւն ի պատիւ տոհմի նոցին»: Սակայն Պետրոս Բագրատունին «յետ ոչ բազում ժամանակաց առ Աստուած փոխեցաւ ՌԿԷ (1618) թուին»[882]:

1620-ական թվականներին Աբրահամ Պահլավունին կնության է առնում «զդուստրն ազնիւ Գէորքին Մուղալենց» և հարստանում նրանց օժանդակությամբ[883]:

Կաֆա քաղաքում (որտեղ հաստատվել էր Աբրահամ Պահլավունին) լայն չափերով դրսևորվեց «անեցի ղրիմաբնակ հայ ժողովրդոց ժամասիրութեան և եկեղեցաշինութեան եռանդը»[884], որին անմասն չէին Պահլավունիները: Աբրահամ Պահլավունու որդի Տրդատն իր քրոջ՝ Աննայի հետ Կաֆայում կառուցել է տալիս Ս. Նիկողայոս եկեղեցին, որը դարձավ նրանց տոհմական հիշատակների պահապանն ու սրբազնագործողը: Այդ ժամանակամիջոցում Կաֆայում դեռ պահպանվում էր կաթոլիկ եկեղեցու ազդեցությունը: (Տակավին ԺԳ դարից քաղաքի հայերն ունեին հայ-կաթոլիկ թեմական եպիսկոպոսներ[885]): 1475 թվականից ի վեր, երբ Ղրիմին տիրացան օսմանյան թուրքերը, հայերի վիճակը ծանրացավ, և ավելի մեծացավ ուծացման, ազգային-կրոնական դիմահեղման վտանգը: Սպառնալի չափեր էին ընդունել թուրք-թաթարական ցեղերի շահատակությունները: Մարտիրոս Ղրիմեցին՝ ժամանակակից տաղերգակը գրում է.

Յետ այսմ ամենայնի այնք որ ի Կաֆայն,
Խոշտանգեալ տաքնապին յազգէն հոնական,
Չի գայր պատերազմաւ դժնատես ազգն այն
Առնէր վնաս բազում ընչից և մարդկան...[886]

XVII դարում թաթարները բազմաթիվ հայերի գերում և վաճառում էին Ղրիմի շուկաներում: Նույն ժամանակաշրջանում Ղրիմի թերակղզում քարոզարշավ էին ծավալում կաթոլիկ միսիոներները՝ Դոմինիկյան միաբանությունից, որոնց 1625թ. Ղրիմի խանն արտոնեց ազատ կերպով գործունեություն ծավալել Ղրիմում: Այն հատկապես զգալի էր Կաֆայում[887]:

Ստեղծված պայմաններում Կաֆայում հաստատված Պահլավունիները առանձնահատուկ հոգածություն են դրսևորում իրենց տոհմի հա-

---

882 Ձեռ. 7442, թ. 281:

883 Ձեռ. 7442, թ. 282-283: Կնոջ անունը Թագուհի էր (նույն տեղում, թ. 283):

884 Ք. Քուշներեան, նշվ. աշխ., էջ 83:

885 Հայ-իտալական առնչություններ, ջենովական փաստաթղթերը ղրիմահայերի մասին, աշխ. Վ. Միքայելյանի, Երևան, 1974, էջ 31, 35:

886 Ա. Մարտիրոսյան, Մարտիրոս Ղրիմեցի, էջ 146:

887 Վ. Միքայելյան, Ղրիմահայ գաղութը Արևելք-Արևմուտք հարաբերությունների ոլորտում (13-18-րդ դարեր), Երևան, 2000, էջ 186-187:

ռատևման, նրա նվիրական ավանդների պահպանման համար: Ուշագրավ է, որ վերը հիշված Տրդատ և Աննա Պահլավունիներն իրենց հիմնած եկեղեցում պահվող Հայսմավուրքում արձանագրում և իրենց տոհմի շառավիղներին պարտավորեցնում են «յետ մահուան իւրաքանչիւրոց հարց աճեցուցանել զարական ճիւղս իւրեանց ի վերայ ծառոցն, առ ի յիշատակ տոհմին իւրեանց» և ամեն տարի նույն եկեղեցում տոնախմբությամբ ոգեկոչել Պահլավունի տոհմի նահատակների հիշատակը[888]:

[888] Տես ձեռ. 7442, թ.283:

Ամփոփում

IX-X դարերում Հայոց Բագրատունի թագավորների հովանու ներքո Հայաստանի նախարարական նշանավոր տոհմերից վերընծյուղվելով իշխանական որոշ տներ ականավոր դեր խաղացին երկրի հասարակական-քաղաքական կյանքում: Նրանց մեջ հատկապես աչքի ընկան Կամսարականների հռչակավոր տոհմից սերած Պահլավունիները, որոնք իրենց հայրենաշահ գործունեությամբ խոր հետք թողեցին հայրենի պատմության մեջ: Հայոց Բագրատունիների թագավորության, ապա Զաքարյանների իշխանության պետական համակարգերում նրանք էապես նպաստեցին Հայաստանի ռազմա-քաղաքական և հոգևոր-մշակութային կյանքի վերելքին, աչքի ընկնելով բարեփոխամետ ձեռնարկումներով, մտավոր-մշակութային եռանդով:

Պահլավունի տոհմի քաղաքական վերելքն սկսվեց 960-ական թվերից Ապուղամր Պահլավունու և նրա որդու Գրիգոր Համզեի օրոք, երբ Աշոտ III Ողորմած թագավորի կամքով 961թ. Անին հռչակվեց Հայոց թագավորության մայրաքաղաք: X-XI դարերում Պահլավունիները վարում են Բագրատունյաց թագավորության սպարապետի պաշտոնը: Նրանցից հատկապես ականավոր դեր էր վերապահված Գրիգոր Համզեի որդի Վահրամ Պահլավունի զորավարին, որի զինական ավյունը դրսևորվեց 998թ. Ատրպատականի Մամլան ամիրայի զորքերի դեմ Ցումբ գյուղի մոտակայքում մղված ճակատամարտում, էլ ավելի մեծ չափերով XI դ. առաջին կեսին, երբ Հայոց Բագրատունիների թագավորությունը Բյուզանդիայի լարած դավերի և սելջուկ-թյուրքական հարձակումների պայմաններում կենաց և մահու պայքար էր մղում երկրի անկախության պահպանման համար: Վահրամն աչքի ընկավ նաև շինարարական մեծագործությամբ, ի մասնավորի Մարմաշենի հռչակավոր վանքի կառուցմամբ, եկեղեցանպաստ ձեռնարկումներով: Հմուտ զորավար էր նաև Վահրամի եղբայրը Վասակ Հոլումը, որը նշանավոր դեր խաղաց սելջուկ-թյուրքերի դեմ մղած մարտերում: Ցումբի մոտ մղված ճակատամարտում զորապետի իր տաղանդով աչքի ընկավ նաև Վահրամի որդի Սմբատ Պահլավունին: Վահրամի եղբայր Վասակը Հայոց Բագրատունիների թագավորության իշխանաց իշխանն էր, իսկ մյուս եղբայրը՝ Ապլղարիբը 1020-1030-ական թ.թ. վարում էր երկրի մարզպանի պաշտոնը: Նա աչքի ընկավ նաև շինարարական ձեռնարկումներով:

Հայաստանի հասարակական-քաղաքական և մտավոր-մշակութային կյանքում հատկապես ականավոր դեր էր վերապահված Վասակ Հոլումի որդուն Գրիգոր Մագիստրոս Բջնեցուն, որը էապես սատարեց երկրի քաղաքական կայունության ամրապնդման գործընթացներին: Նա նաև

բազմագիտակ մտավորական էր, որն աչքի ընկավ նաև եկեղեցաշինությամբ: Նրա հովանավորությամբ ծաղկում ապրեցին Բջնիի, Հավուց թառի, Սանահինի, Կեչառիսի և ուրիշ եկեղեցիներ: Գրիգոր Մագիստրոսը նախանձախնդիրն ու ջերմեռանդ պաշտպանն էր Հայ եկեղեցու դավանական անաղարտության և ինքնուրույնության:

Պատմության մեջ նշանակալի հետագիծ են թողել նաև Գրիգոր Մագիստրոսի ժառանգները: Նրա ավագ որդին՝ Վասակը Բյուզանդիայի կայսեր կողմից 1070-ական թ.թ. կարգվեց Անտիոքի կառավարիչ՝ դուքսի պատվատիտղոսով: Սկզբնապես բյուզանդական ծառայության մեջ էր նաև նրա կրտսեր որդին՝ Վահրամը (Գրիգոր Վկայասերը): Վերջինս 1066թ. բազմեց Հայոց կաթողիկոսի գահաթոռին, հիմ դնելով Պահլավունիների կաթողիկոսական հարստության (1066-1203թ.թ.): Պահլավունի հայրապետները 138 տարի իրենց աջը պարզեցին համայն հայության վրա և նպատակասլաց ջանքերով միաբանեցին, հույս ներարկեցին նրան, կոփեցին հայրենավանդ հավատքը: Նրանց ոգեշնչած խնդիրներն իրենց դրոշմը թողեցին քաղաքականապես տկարացած, տարաստռված հայության ճակատագրի վրա, նպաստեցին նրա հոգևոր և քաղաքական համախմբմանը, զորավիգ եղան պետականորեն մտածելու և գործելու կարողունակ ուժերին: Պահլավունիները կարողացան պահպանել եկեղեցին՝ որպես ժողովրդի գոյատևման կենսունակ գործոն, դառնալով հայության քաղաքական հույսերի ու ակնկալությունների թարգմանը: Նրանք անմասն չէին նաև օտար հորիզոններում դեգերող հայության ճակատագրին: Գրիգոր Վկայասեր Պահլավունու քեռորդի Գրիգորը 1076թ. նրա կողմից կարգվեց Եգիպտոսի հայ համայնքի հոգևոր առաջնորդ: Վկայասերի մյուս քեռորդին՝ Վահրամը Եգիպտոսում իշխող Ֆաթիմյան Հաֆիզ խալիֆայի օրոք՝ 1135-1137թ.թ. վարում էր երկրի լիազոր վեզիրի գերազդեցիկ պաշտոնը: Պահպանելով քրիստոնեական հավատը, նա զորավիգ եղավ եգիպտահայությանը:

Գրիգոր Մագիստրոսի դուստրերից մեկի ամուսինը Սասունի իշխան Թոռնիկ Մամիկոնյանն էր, որը 1050-ական թվականներին փայլեց իր ռազմի կորովով, հաղթանակներ տանելով սելջուկ-թյուրքական զորքերի դեմ: Նրա որդի Չորտվանելի օրոք Սասունի իշխանությունը պահպանեց իր ինքնուրույնությունը:

Գրիգոր Մագիստրոսի մի թոռը (մյուս դստեր գծով) Բարսեղ I կաթողիկոսն էր: Մագիստրսի շառավիղներից էր նաև Գրիգորը, որը 1070-1090թ.թ. հայտնի էր իբրև քաջ զորական և աչքի ընկավ սելջուկ-թյուրքերի դեմ մղված մարտերում:

Գրիգոր Մագիստրոսի դուստրերից մեկի որդի Ապիրատը (Ներսես Շնորհալու հայրը), տիրում էր Ծովք դղյակին և Կարկառ ամրոցին: Նրա սպանվելուց հետո՝ 1112 թվականին Ծովքի իշխանությունը ժառանգեց

որդին՝ Վասիլ Պահլավունին, որը դաշնակցում էր Սասունի իշխան Չորտվանելին: Վասիլի որդին՝ Գրիգոր IV Տղան Հայոց կաթողիկոսն էր 1173-1193թ.թ.: Ծովք դղյակը ժառանգած Ապիրատ Պահլավունու որդին էր մեծաքանքար Ներսես Շնորհալին, որը 1166թ. բազմեց եղբոր Գրիգոր III-ի կաթողիկոսական գահաթոռին: Իր իմաստահեղ գործերով, քերթողական ավյունով նա խորը հետք է թողել հայոց մտաշխարհում, հեղինակել է տաղեր, պոեմներ, առակներ, խրատական, հավատաբանական գործեր: Հայ ժողովրդի բոլոր խավերին ուղղած շրջաբերական ընդարձակ նամակում «Թուղթ ընդհանրական»-ում Շնորհալին պատվիրում է հավատարիմ մնալ հայրենավանդ արժեքներին և զերծ մնալ զորեղ հարևանների ամենակուլ նկրտումներից:

Պահլավունիների վերընծյուղված շառավիղներից էին Ապուղամր մագիստրոսը և նրա որդիներ Գրիգորն ու Ղարիբը, որոնք 1220-ական թվականներին հայտնի դարձան իրենց եկեղեցանպաստ գործերով:

XIIIդ. հյուսիս-արևելյան Հայաստանում հայտնի էին նաև Պահլավունիների կողմնակի ճյուղերից սերած Անիի կառավարիչ Վահրամը, Ապուղամրը, Սարգիս արքեպիսկոպոսը և ուրիշներ:

XIVդ. Պահլավունիների հետնորդները Զաքարյանների իշխանության պետական համակարգում օժտված էին վարչական և զինվորական ու եկեղեցական բարձրազդեցիկ պաշտոններով: Նրանք պահպանում էին Պահլավունյաց տոհմում սովորական դարձած «մագիստրոս» պատվատիտղոսը:

XIV-XVII դարերում Պահլավունյաց տանից սերած հոգևորականները տիրում էին Հավուց թառի Ամենափրկիչ վանքին իբրև ժառանգական կալվածատերեր: Նրանք էական ներդրում ունեցան երկրի հոգևոր-եկեղեցական գործընթացներում: 1441թ. Զաքարիա Հավուցթառեցի Պահլավունին գործուն մասնակցություն ունեցավ Հայոց կաթողիկոսական Աթոռը Կիլիկիայից իր բնավայր էջմիածին տեղափոխելու դարակազմիկ միջոցառմանը:

Պահլավունիների շառավիղներից ոմանք չհանդուրժելով օտար տիրապետությունը և ջալալիների խժդժությունները, դեռևս XIV դ. հեռացել էին Ոսկե Հորդա, ապա Ղրիմի թերակղզի , բնակություն հաստատելով Կաֆա քաղաքում և հարակից շրջաններում: XVIIդ. սկզբներին Ղրիմում նրանք հայտնի դարձան իրենց շինարարական ձեռնարկումներով:

ՊԱՀԼԱՎՈՒՆԻՆԵՐԻ ՏՈՀՍԱԾԱՌԸ



ԾՈՎՔԻ ՊԱՀԼԱՎՈՒՆԻՆԵՐԸ



ՊԱՀԼԱՎՈՒՆԻՆԵՐ (ԱՊԻՐԱՏՅԱՆՆԵՐ)



ՊԱՀԼԱՎՈՒՆԻՆԵՐ (XIV-XVII դդ.)

Զաքարիա I (XIV դ. սկիզբ)

Զաքարիա II (XV դ. 40-50-ական թ.թ.)

Զաքարիա III (XV դ. վերջ-XVI դ. սկիզբ)

Միրզե (մոտ XIV դ. երկրորդ կես.)

Վիլիճան (XV դ. առաջին կես.)

- Շմավոն
  - Գրիգոր
  - Հակոբ
  - Աղաճան
- Հակոբ
- Մելիքաղա

Պետրոս (XIV դ. առաջին կես. Դրիմ)

Դավիթ

Սեդրակ

Մարգար

Սագի (XVI դ.)

Աբրահամ (XVII դ. 2-րդ կես, Դրիմ)

- Տրդատ
- Աննա

Մատենագիտական ցանկ

1.Սկզբնաղբյուրներ

Աբուսահլ հայ, Պատմութիւն եկեղեցեաց և վանորէից Եգիպտոսի, Վենետիկ, 1895:
Ագաթանգեղոս, Գիրք վիպասանութեան, Կ. Պոլիս, 1709:
Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխ. Գ. Տէր Մկրտչեան և Ստ.Կանայեանց, Տփղիս, 1909:
Անանիա Շիրակացու Մատենագրությունը, աշխ. Ա. Աբրահամյանի, Երևան, 1944:
Անանուն Եդեսացի, ժամանակագրություն, թարգմ., առաջաբան և ծանոթագրութ. Լ. Տեր-Պետրոսյանի, Երևան, 1982:
Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխ. Լ. Խանլարյանի, Երևան, 1990:
Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Նալբանդյան, Երևան, 1965:
Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901:
Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, ի լոյս ընծ. Կ. Կոստանեանց, Ալեքսանդրապոլ, 1910:
Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, աշխ. Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, Երևան, 1985:
Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, աշխ. Ա. Քյոշկերյանի, Երևան, 1981:
Գրիգորի կաթողիկոսի Տղայ կոչեցելոյ Նամականի, Վենետիկ, 1838:
Գրիգորի կաթողիկոսի Տղայ կոչեցելոյ Նամականի եւ Ներսիսի Լամբրոնացւոյ Ատենաբանութիւնք եւ Թուղթ եւ ճառք, Վենետիկ, 1865:
Գրիգոր Տղա, Բանաստեղծություններ և պոեմներ, աշխ. Ա. Մնացականյանի, Երևան, 1972:
Դիվան հայ վիմագրության, I, Անի քաղաք, կազմեց Հ. Օրբելի, Երևան, 1966:
Զաքարիա Սարկավագի Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870:
Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, աշխ. Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանի, Երևան, 2006:
Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, աշխ. Լ. Ս. Խաչիկյանի, Երևան, 1999:
ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950:
Իբն ալ-Ասիր, թարգմ., առաջաբան և ծան. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981:
Կանոնագիրք Հայոց, հ. Ա-Բ, աշխ. Վ. Հակոբյանի, Երևան, 1964, 1971:
Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961:
Հակոբյան Վ., Դավիթ Քոբայրեցու Հիշատակարանը («Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ» (հաս.գիտ.), 1952, N8):
Հայ-իտալական առնչություններ, ջենովական փաստաթղթերը ղրիմահայերի մասին, աշխ. Վ. Միքայելյանի, Երևան, 1974:

Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620թ.թ.), հ. Ա, կազմեցին Վ. Հակոբյան և Ա. Հովհաննիսյան. Երևան, 1974:
Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ Ե-ԺԲ դդ., աշխ. Ա. Մաթևոսյանի, Երևան, 1988:
Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի, Վենետիկ, 1862:
Հովհաննես Սկիւդեցի, Համառոտություն պատմությանց, թարգմ., առաջաբան և ծանոթագրութ. Հր. Բարթիկյանի, Երևան, 1979:
Մայր Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին, հ. Ա-Բ, Վենետիկ, 1914, 1924:
Մայր ցուցակ Սրբոց Յակոբեանց, հ. Ա-Բ, կազմեց Ն.Պողարեան, Երուսաղեմ, 1966, 1967:
Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դ.դ., հ. I-II, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1951, 1956:
Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ, I-II, կազմեց Հ. Փափազյան, Երևան, 1956, 1959:
Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898:
Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրություն, թարգմ., ներածութ. և ծանոթագրությունները Հր. Բարթիկյանի, Երևան, 1973:
Մխիթար Անեցի, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխ. Հ.Մարգարյանի, Երևան, 1983:
Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկուա, 1860:
Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, աշխ. Խ. Թորոսյանի, Երևան, 1975:
Մխիթար Հերացի, Ջերմանց մխիթարութիւն, Վենետիկ, 1882:
Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, աշխ. Վ. Առաքելյանի, Երևան, 1983:
Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխ. Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի, Տփղիս, 1913:
Մուրադյան Պ., Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան 1977:
Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:
Յովսէփեանց Գ., Յիշատակարանք ձեռագրաց, Ա, Անթիլիաս, 1951:
Ներսէս Լամբրոնացի, Պատճառք խնդրոյ միաբանութեան թագաւորին Հռոմոց Մանուէլի, Երուսաղեմ, 1871:
Ներսէս Շնորհալի, Բանք չափաւ, Վենետիկ, 1928:
Ներսէսի Շնորհալւոյ Հայոց կաթողիկոսի Նամակաւն, Վենետիկ, 1838:
Ներսէս Շնորհալի, Ընդհանրական թուղթք, Վենետիկ, 1871:
Ներսէս Շնորհալի, Թուղթ ընդհանրական, աշխ. Է. Բաղդասարյանի, Երևան, 1995:
Ներսէս Շնորհալի, Յաղագս երկնի և զարդուց նորա, հանելուկներ, Ողբ Եդեսիոյ, աշխ. Գ. Հակոբյանի, Երևան, 1968:
Ներսէս Շնորհալի, Վիպասանութիւն, աշխ. Մ. Մկրտչյանի, Երևան, 1981:
Ներսէս Շնորհալի, Հիսուս Որդի, աշխ. Վ. Ղազարյանի, Երևան, 1991:

Շարականների ընտրանի, Երևան, 2004:
Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ, աշխ. Կ. Յուզբաշյանի, Երևան, 1963:
Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887:
Պատմութիւն Ս. Ներսէսի հայրապետի («Սոփերք Հայկականք», Զ, Վենետիկ, 1853):
Պատմութիւն Սեբէոսի, աշխ. Գ. Աբգարյանի, Երևան, 1979:
Զամբռ, շարագրեցեալ ի Սիմէոնէ կաթողիկոսէ Երևանցւոյ, Վաղարշապատ, 1873:
Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893:
Սիմէօն վարդապետի Ապարանցւոյ Վիպասանութիւն սակս Պահլաւունեացն զարմի և Մամիկոնեանցն սեռի, Վաղարշապատ, 1870:
Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956:
«Սոփերք Հայկականք», ԺԴ, Վենետիկ, 1853:
Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885:
Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Տփղիս, 1910:
Վահրամ Ռաբունւոյ Ոտանաւոր պատմութեան Ուրհայեցոց, Փարիզ, 1859:
Վարդան Արևելցի, Ճառք, ներբողեանք, աշխ. Հ. Քյոսեյանի, Երևան, 2000թ.:
Վիմական տարեգիր, Ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց Հայոց, կազմեց Կ. Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, 1913:
Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա-Բ, թարգմ. Լ. Մելիքսեթ-Բեկ, Երևան, 1934, 1936:
Տաղասացութիւնք Գրիգորի Մագիստրոսի Պահլաւունւոյ, Վենետիկ, 1868:
Տաշեան Յ., Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, 1895:
Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, կազմեց Մ. Քեշիշեան, Վիեննա, 1964:
Ցուցակ հայերէն ձեռագրերի Թիֆլիզի Ներսիսեան հոգևոր դպրանոցի, կազմեց Ստ. Կանայեանց, Թիֆլիզ, 1893:
Ցուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի և շրջակայից, Երուսաղեմ, 1967:
Из Тарих-ал-Камиль Ибн-ал-Асира, пер. П.Жузе, Баку, 1940.
Рашид-ад-дин, Сборник летописей, т.3, (пер. с персидского), Москва-Ленинград, 1946.
Basmadjian K., Les inscriptions arméniennes d'Ani, de Bagnair et de Marmachen, Paris, 1931.
Garitte G., la Narratio de rebus Armeniae, edition critique et commentaire. Corpus Scriptorum christianorum Orientalium, vol. 132, subsidia t.4, Louvain, 1952.
Garitte G., Documents pour l' etude du livre d' Agathange, Vaticano, 1946.
Michel le Syrien, Chronique, t.II-III, ed. et trad. en francais par J.Chabot, Paris, 1901, 1905.

Miskawayh, The Concluding Portion of the Experiences of the Nations, transl. from the arabic by D.Margoliouth, vol, II (The eclipse of the Abbasid Caliphate, Oxford, 1921).

2. Գրականություն

Աբեղյան Մ., Երկեր, հ. Դ, Երևան, 1970:
Աղոնց Ն., Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948:
Ալիշան Ղ., Այրարատ: Բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890:
Ալիշան Ղ., Շիրակ: Վենետիկ, 1881:
Ալիշան Ղ., Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873:
Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, 1893:
Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. Բ, Գահիրե, 1955:
Ալպոյաճեան Ա., Արաբական միացեալ հանրապետութեան եգիպտոսի նահանգը և հայերը, Գահիրե, 1960:
Ակինեան Ն., Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, Վիեննա, 1920:
Ակինեան Ն., Ներսէս Լամբրոնացի, Վիեննա, 1956:
Ակինեան Ն., Պահլավունի և Լամբրոնի Հեթմեանց ազգաբանութիւնը («Հանդէս Ամսօրեայ», 1954, էջ 3-47 (նույնը արտատպված է «Ազգային մատենադարան շարքի ճՀԹ հատորում» (Վիեննա, 1956):
Աճառյան Հր., Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002:
Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, հ. Ա-Ե, Երևան, 1942-1962:
Անանեան Պ., Ս. Ներսէս Շնորհալի կաթողիկոս Հայոց («Բազմավէպ», 1973-1975):
Ավագյան Ս., Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, 1978:
Ավագյան Ս., Վիմագրական պրպտումներ, Երևան, 1986:
Ավդալբեգյան Մ., «Յայսմաւուրք» ժողովածուները, Երևան, 1982:
Բաբայան Լ., Զաքարյանների ֆեոդալական իշխանության առաջացման հարցի մասին («Պատմաբանաս. հանդես», 1962, N 1):
Բարթիկյան Հր., Իսահակ Անգեղոս կայսեր պատասխան նամակը Հայոց կաթողիկոս Գրիգոր Տղային («Էջմիածին», 1967 N 4):
Բարթիկյան Հր., Գրիգոր Մագիստրոսի քաղաքական կողմնորոշման հարցի շուրջը («Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության» (հոդվածների ժողովածու), Երևան, 1971:
Բարթիկյան Հր., «Դաշանց թուղթը». կազմը, ստեղծման ժամանակը, հեղինակն ու նպատակը («Պատմաբանաս. հանդես», 2004, N 2):
Բժշկեանց Մ., Ճանապարհորդութիւն ի Լեհաստան եւ յայլ կողմանս բնակելս ի հայկազանց սերելոյ ի նախնեանց Անի քաղաքին, Վենետիկ, 1830:
Բոզոյան Ա., Գրիգոր Տուտեորդի վարդապետին վերաբերող վկայություն-ների քննություն («Շողակաթ» ժողովածու), Ստանպուլ, 1995:
Բոզոյան Ա., Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը (1165-1178 թ.թ.), Երևան, 1995:

Բոգոյան Ա., Հռոմի պապ Ինոկենտիոս Բ-ի թուղթը ուղղված Հայոց կաթողիկոս Գրիգոր Գ. Պահլավունուն («Էջմիածին», 1999, N9):
Բռնագյան Ս., Հայաստանը և սելջուկները XI-XII դ.դ., Երևան, 1980:
Գայէնտէրեան Ա., Միութենական հարց եւ Շնորհալի, Մարզուան, 1910:
Գրիգորեան Մ., Շնորհալւոյ հայրենանուէր երկասիրութիւնները («Բազմավէպ», 1973, N3-4):
Գրիգորյան Գ. Մ., Սյունիքը Օրբելյանների օրոք, Երևան, 1981:
Գրիգորյան Գ. Ս., Նվիրատվություններ Անիի եկեղեցիներին ու վանքերին (X-XIV դ.դ.), Երևան, 2002:
Եարտմեան Տ., Քեսունի Կարմիր վանքը («Բազմավէպ», 1975):
Եղիազարյան Հ., Լմբատավանքը և նրա վիմագրությունները («Էջմիածին», 1960, Բ):
Եղիազարյան Հ., Հավուց թառի վանքը («Էջմիածին», 1963, Զ):
Եղիազարյան Հ., Բջնիի վանքը և Բջնի գյուղի մյուս հուշարձանները («Էջմիածին», 1963, Թ-Ժ):
Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963:
Զարբհանալեան Գ., Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեանց, Վենետիկ, 1889:
Զէքիեան Լ., Համամիութենական տրամախօսութիւն մը ԺԲ դարուն. բանակցութիւններ Ս. Ներսէս Շնորհալիի եւ կայսերական նուիրակ Թէորիանոսի միջեւ հայ եւ բիւզանդական եկեղեցիներում միութեան շուրջ, Վենետիկ, 1978 (Հայագիտական մատենաշար «Բազմավէպ», N 13):
Զուլալյան Մ., Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա, Երևան, 1990:
Զուլալյան Մ., Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ (XVI-XVII դարեր), Երևան, 1966:
Թահմիզյան Ն., Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Երևան, 1973:
Թորամանյան Թ., Նյութեր հայ ճարտարապետության պատմության, I, Երևան, 1942, II, Երևան, 1948:
Թուրշյան Հ., XI-XII դարերի եգիպտահայ գաղութի պատմությունից («Արևելագիտական ժողովածու», II, Երևան, 1964):
Թուրշյան Հ., Պահլավունիների վերելքն ու անկումը XI-XIII դարերում («Պատմաբանաս. հանդես», 1974, N1):
Լեո, Երկերի ժողովածու, հ. II, Երևան, 1967:
Խաչերեան Լ., Գրիգոր Պահլաւունի Մագիստրոս (985-1058 թ.թ.), Լոս Անճելըս, 1987:
Խաչիկյան Լ., Էջեր համշինահայ պատմությունից («Բանբեր Երևանի պետհամալսարանի», 1969, N 2):
Կոզեան Ս., Կամսարականները «տեարք Շիրակայ եւ Արշարունեաց», Վիեննա, 1926:
Հակոբյան Գ., Ներսես Շնորհալի, Երևան, 1964:
Հակոբյան Թ., Անիի պատմություն, հ. I, Երևան, 1980:
Հայ գաղթաշխարհի պատմություն, հ.1-2, Երևան, 2003:

Հայ ժողովրդի պատմություն (ակադեմիական ութիատորյակ), հ. հ. II, III, IV, Երևան, 1984, 1976, 1972:
Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացույց»-ի, մաս Ա, Երևան, 2001:
Հովհաննիսյան Ա.Գ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք I, Երևան, 1957:
Ղաֆադարյան Կ., Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957:
Ղաֆադարյան Կ., Հաղբատ. ճարտարապետական կառուցվածքները և վիմական արձանագրությունները, Երևան, 1963:
Մաթևոսյան Կ., Անի: Եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, Ս. Էջմիածին, 1997:
Մաթևոսյան Կ., Սամվել Անեցու ժամանակագրության հնագույն ձեռագրերը («Ակադեմիկոս Նիկողայոս Մառ», ժողովածու, Երևան, 2005, էջ 37-48):
Մաթևոսյան Կ., Հավուց թառի վանքի և Ապիրատյան տոհմի պատմության նորահայտ տվյալները («Բանբեր մատենադարանի», 17, Երևան, 2006):
Մանանդյան Հ., Երկեր, հ. հ. Բ, Գ, Դ, Երևան, 1978, 1977, 1981:
Մատենագիրք հայոց, հ. Ե, Անթիլիաս-Լիբանան, 2005:
Մարգարյան Հ., Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Երևան, 1980:
Մարգարյան Հ., Գառնիի ճակատամարտի պատմության շուրջ (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտութ.», 1982, 3):
Մարգարյան Հ., Վիպական տարրերը X-XII դարերի հայ պատմագրության մեջ («ՊԲՀ», 1987, N 4):
Մոսոլեան Գ., Ականաւոր հայէր Եգիպտոսի մէջ, Գահիրե, 1947:
Միաբանութիւն Հայոց Սուրբ Եկեղեցւոյն ընդ մեծի Սուրբ Եկեղեցւոյն Հռոմայ, աշխ. Կղեմէս վարդ. Կայանոսի, Հռոմ, 1690:
Միքայելյան Վ., Ղրիմահայոց պատմություն, Երևան, 1989:
Միքայելյան Վ., Ղրիմահայ գաղութը Արևելք-Արևմուտք հարաբերությունների ոլորտում (13-18-րդ դարեր), Երևան, 2000 թ.:
Մխիթարյան Ս., Գրիգոր Մագիստրոսի կյանքը և գեղարվեստական ժառանգությունը, Երևան, 2001:
Մկրտչյան Ա., Էջեր Սյունյաց Աթոռի պատմությունից, Էջմիածին, 1995:
Մնացականյան Ա., Թոնդրակյան շարժման մի քանի գլխավոր հարցերի մասին (ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր հաս. գիտութ.», 1954, 3):
Մնացականյան Ս., Երևանը և նրա շրջակայքը, Երևան, 1971:
Մուշեղյան Խ., Դրամական շրջանառությունը Հայաստանում, Երևան, 1983:
Մուրադյան Պ., Դաւանական հանդուրժողականութեան եւ ազգամիջեան համերաշխութեան գաղափարը ԺԲ-ԺԳ դարերի Հայաստանում («Գանձասար», Դ, 1993թ.):
Յովհաննէսեան Մ., Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970:
Յովհաննէսեան Մ., Հայաստանի Պահլաւունիները («Բազմավէպ», 1973, 3-4):

Յովսէփեանց Գ., Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969:
Յովսէփեանց Գ., Թովմա Մեծոփեցու կեանքը, Վաղարշապատ, 1914:
Յովսէփեանց Գ., Հաւուց թառի Ամենափրկիչը եւ նոյնանուն յուշարձաններ հայ արուեստի մէջ, Երուսաղեմ, 1937:
«Ներսես Շնորհալի» (հոդվածների ժողովածու), Երևան, 1977:
Շահնազարյան Ա., Զաքարյան Հայաստանի նվաճումը մոնղոլների կողմից («Պատմաբանաս. հանդես», 2004, 2):
Որսկանյան Հ., Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմի կրոնական հենքը («Էջմիածին», 2004, Զ):
Չամչեանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. Ա-Բ, Վենետիկ, 1784, 1785:
Սարգիսեան Ն., Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864:
Սարգսյան Գ., Հավուց թառի հիմնադրման վկայագրի շուրջ («ՀԽՍՀ, ԳԱ Լրաբեր» (հաս. գիտ.), 1988, N 4):
Սրվանձտեան Գ., Թորոս Աղբար, մասն Ա-Բ, Կ. Պոլիս, 1879, 1888:
Վարդանյան Վ., Գրիգոր Մագիստրոսը Հայ եկեղեցու և Հայոց դավանանքի ջատագով («Էջմիածին, 2004, Զ»):
Վարդանյան Վ., Պահլավունի տոհմի ծագման շուրջ («Հայոց պատմության հարցեր», 6, Երևան, 2005):
Վարդանյան Վ., Գրիգոր Դ. Տղա հայրապետը ժամանակի դավանական և քաղաքական խաչուղիներում («Էջմիածին», 2005, N է):
Վարդանեան Վ., Գրիգոր Մագիստրոսի քաղաքական հաւատամքը («Բազմավէպ», 2005):
Վարդանյան Վ., Պահլավունի տոհմի ԺԳ-ԺԷ դարերի պատմության դրվագներ («Պատմաբանաս. հանդես», 2006, 1):
Վարդանյան Վ., Ծովքի Պահլավունիները դարաշրջանի որոգայթներում, («Հայոց պատմության հարցեր», 8, Երևան, 2007):
Տէր-Ղազարեան Յ., Հայկական Կիլիկիա. տեղագրութիւն, Անթիլիաս, 1966:
Տեր-Ղևոնդյան Ա., Վահրամ Պահլավունին Ֆաթիմյան խալիֆայության վեզիր («Արևելագիտության հարցեր», 1-2, Երևան, 1983):
Տեր-Ղևոնդյան Վ., Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145-1226 թվականներին, Երևան, 1994:
Տեր-Մինասյան Ե., Ամբերդածորի հնությունները և արձանագրությունները («Էջմիածին», 1961, Ե):
Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, Երևան, 2005:
Քասունի Ե., ԺԱ դարու Անտիոքի հայ կառավարիչներ Պեխտ Խաչատուր և Վասակ Պահլաւունի («Հայկազեան հայագիտական հանդէս», 2, Բեյրութ, 1971):
Քուրտեան Յ., Գրիգոր Տղայ և Սալահ էդ-տին («Բազմավէպ», 1975 թ.):
Քուշներեան Ք., Պատմութիւն գաղթականութեան Խրիմու Հայոց, Վենետիկ, 1895:
Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Ա-Գ, Ս. Էջմիածին, 2001:

Агаджанов С., Юзбашян К., К истории тюркских набегов на Армению в XI в. («Палестинский сборник», вып.. 12 (76), 1965).
Адонц Н., Армения в эпоху Юстиниана, С. Петербург, 1908.
Арутюнова-Фиданян В., Армяно-византийская контактная зона (X-XI в.в.), М., 1994.
Бартикян Р., Еретики ареворди («сыны солнца») в Армении и Месопотамии и послание армянского католикоса Нерсеса Благодатного («Эллинистический Ближный Восток, Византия и Иран», Москва, 1967).
Гюзальян Л., Персидская надпись Кей-султана Шеддаи в Ани («Академику Н. Я. Марру» (сборник статей), М.-Л., 1935).
Еремян С., Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке («Լրաբեր հաս. գիտությունների», 1971, N 3):
История Византии, т. II, Москва, 1967.
Каждан А., Армяне в составе господствующего класса Византийской империи в XI-XII в.в., Ереван, 1975.
Марр Н. Я., Ани, Ереван, 1939.
Марр Н. Я., Надпись Епифания, католикоса Грузии (из раскопок в Ани 1910г.). («Известия Императорской Академии наук», С. Петербург, 1910).
Мец А., Мусульманский ренессанс, Москва, 1973.
Микаелян Г., История Киликийского армянского государства, Ереван, 1952.
Орбели И., Избранные труды, Ереван, 1963.
Семенова Л., Из истории Фатимидского Египта, Москва, 1974.
Степаненко В., О статусе армянских владетелей Малой Азии, Сирии и Месопотамии (конец XI-начало XII вв. ("Из истории междунродных связей и отношений", Тюмень, 1976).
Тер-Гевондян А., Армения и Арабский халифат, Ереван, 1977.
Халпахчьян О., Армяно-русские культурные отношения и их отражение в архитектуре, Ереван, 1957.
Якобсон А., Средневековый Херсонес (XII-XIV в.в.), М.-Л., 1950.
Юзбашян К., Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI в.в., Москва, 1988.
Юзбашян К., Анийская рукопись 1298г. («Բանբեր Երևանի համալսարանի», 1971, N 2).
Adontz N., Etudes Armeno-byzantines, Lisbonne, 1965.
Canard M., Notes sur les Arméniens en Egypte a l' epoque Fatimide («Annales de l' Institut d' Etudes Orientales», t. XII, Alger, 1955).

Canard M., Un vizir chretien a l' epoque Fatimide: l' Arménien Bahram («Annales de l' Institut d' Etudes Orientales», XII, Alger, 1954.
Chaumont M., Sur l' origine de saint Grégoire d' Arménie («Le Museon», Paris, 1989).
Dadojan S., The Fatimid Armenians, Leiden, 1997.
Dédéyan G., Les Arméniens entre Grecs, Musulmans et Croises, vol 1-2, Lisbonne, 2003.
Grousset R., Histoire des Croisades et du Royaume Franc de Jerusalem, t 1-2, Paris, 1934-1935.
Capoian-Kouymjan A., Le catholicos Gregoire II le Martyrophile (Vkayaser) et ses Pérégrinations («Բազմավէպ», 1974, N3-4):
Laurent J., Etudes d' Histoire Arménienne, Louvain, 1971.
Minorsky V., Studies in Caucasian History, London, 1953.
Mutafian, La Cilicie au carrefour des Empires, I, Paris, 1988.
Mersessian V., The Tondrakian Movement, Allison park, Pensilvania, 1988.
Runsiman S., A History of the Crusades, Cambridge, 1951.
Toumanoff C., Manuel de généalogie et de chronologie pour l' histoire de la Caucasie chrétienne (Arménie-Georgie-Albanie), Roma, 1976.

ԱՆՎԱՆԱՑԱՆԿԵՐ
1. ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբաս Բագրատունի - Կարսի թագավոր - 24, 35, 94
Աբգարյան Գ. - 16
Աբեղյան Մ. - 63, 66
Աբլհաճ-Սալարյան ամիրա - 21
Աբյուդենոս - 58
Աբրահամ Պահլավունի (XVII դ. 2-րդ կես) - 197, 199-200
Աբուլ Ասվար - Դվինի ամիրա - 44, 81, 115, 126
Աբուլ Ասվար - Անիի ամիրա - 121, 122
Աբու-Շամաթ - արաբ պատմագիր - 163
Աբուսահլ - պատմագիր - 113, 163
Ագաթանգեղոս - 8, 12, 124, 176
Ադամ նախահայր - 145
Ադոնց Ն. - 8, 34, 60, 98
Ազիզ - Հակոբ վարդապետի մայր (XVI դ.) - 196
Աթանագինես վկա - 65
Աթման - Մանուել կայսեր պատվիրակ (1169 թ.) - 155
Ալ - Հաշիմ-Հաֆիզ խալիֆայի որդի - 110
Ալեքս զորապետ (1160-ական թթ.) - 153
Ալեքսիոս III-կայսր (1195-1203) - 172
Ալիշան Ղ. - 6, 8, 17, 19, 22, 27, 41, 53, 56, 67, 74, 76, 95, 117, 153, 180-181, 185, 191
Ալպոյաճյան Ա. - 98, 112-113
Ալուզ իշխան - 27
Ակինյան Ն. - 8, 17, 22, 53, 89-91, 121, 126, 158, 167, 172, 190
Ահարոն Բուլղար - 86-87
Աղաճան - Գրիգոր XII կաթողիկոսի եղբայր (XVI դ. 2-րդ կես) - 196
Աղաջանով Ս. - 25
Աճառյան Հր. - 10, 53, 111, 129, 152
Ամիր Երկաթ (XIII դ. 1-ին կես) - 189, 191
Ամիրգունա խան - 197
Ամիրքյամալ բեկ (XVI դ. 1-ին կես) - 195
Անակ - Գրիգոր Լուսավորչի հայր 12
Անանիա Նարեկացի - 70
Անանիա Շիրակացի - 104
Անանյան Պ. - 11
Անանուն Եդեսացի - 106, 121, 130-131, 134, 137, 157
Անաստաս վարդապետ (VII դ.) - 15
Աննա Պահլավունի (XVII դ. 2-րդ կես) - 197, 199-201
Անտոնիո դե Գուվեա - իսպանացի ուղեգիր (XVII դ.) - 196
Աշխեն թագուհի (IV դ.) - 152
Աշոտ I Բագրատունի - 9, 28
Աշոտ III - 202
Աշոտ IV - 10, 24-25, 40, 42-43, 78, 115
Աշոտ մարզպան (X դ. 2-րդ կես - XI դ. սկիզբ) - 35
Աշոտ Մսակեր Բագրատունի - 16
Ապիրատ - Հասանի որդի, Բարսեղ կաթողիկոսի պապը - 74, 115-116
Ապիրատ իշխան - Ներսես Շնորհալու հայր - 116, 119, 126-129, 203-204

Ապիրատ Ներսես Շնորհալու եղբայր - 127, 137
Ապիրատ - Վահրամ վեզիրի եղբայր - 110-111
Ապիրատ (XIII դ. 1-ին կես) - 191
Ապիրատ - Վասիլի և Մարեմիկի որդի - 137
Ապլղարիպ - Անտիոքի դուքս - 130
Ապլղարիպ Արծրունի - Լամբրոնի, Ադանայի և Մսիսի տեր - 140
Ապլղարիպ - Գրիգոր Համզեի որդի - 10, 21-22, 29, 49-52, 202
Ապլղարիպ - Բիրի իշխան (XII դ. 1-ին կես) - 120-121
Ապլջահապ - Բարսեղ կաթողիկոսի հորեղբայր - 115-116, 126, 179
Ապլջահապ - Գրիգոր Մագիստրոսի թոռ (դստեր գծով) - 178
Ապուղամր մագիստրոս (Ղարիբի ու Գրիգորի հայր) - 204
Ապուղամր (Գրիգոր արքեպիսկոպոսի որդի) -190-191
Ապուղամր Պահլավունի (X դ. 2-րդ կես) - 17, 19, 190, 202
Ապուղամր - Վահրամ զորավարի պապ - 17, 50
Ապուղամր (XIII դ. 1-ին կես) - 185-186, 190, 203
Ապուղամր - Վահրամ զորավարի որդի - 52-54
Առաքել Դավրիժեցի - 196-197
Առյուծ - Թլկուրանի իշխան - 140
Ասիտ - բյուզանդական զորապետ - 47
Ասողիկ - 21, 28, 34-35, 52-53, տե՛ս նաև Ստեփաննոս Տարոնեցի
Աստվածատուր - Գ[illegible]արդավանքի եպիսկոպոս - 197
Ավագ Ջաքարյան - 191
Ավագյան Ս. 33-34, 50-52
Ավդալբեգյան Մ. - 108
Արա Գեղեցիկ - 39
Արիստակես Լաստիվերցի - 4, 25, 38, 40, 42-47, 56, 79, 84-85, 87-89
Արիստոտել - 55-57
Արտակ Կամսարյան - 9, 17
Արտաշես I - 147
Արևորդիներ - 152
Բաբայան Լ. - 183
Բագրատ IV - Վիրա-աբխազական թագավոր - 33, 38
Բադր ալ Ջամալի - Եգիպտոսի վեզիր - 109-110
Բաթու խան - 198
Բալդվին - Եդեսիայի կոմս 106, 120-121, 130
Բակուրան - Պապեռոնի իշխան 138
Բաղդասարյան Է. - 5, 142
Բասմաջյան Կ. - 7, 54, 167, 190
Բարթիկյան Հր. - 44, 79-80, 86, 124, 153, 160, 176
Բարծումա - 109
Բարսեղ արքեպիսկոպոս (XII դ. 2-րդ կես) 158-159, 172, 180-183
Բարսեղ արքեպիսկոպոս (XIII դ. 1-ին կես) - 189
Բարսեղ Գրիգոր Մագիստրոսի աշակերտ - 70
Բարսեղ - Գրիգոր Մագիստրոսի թոռ (դստեր գծով) - 178
Բարսեղ եպիսկոպոս (XI դ. 2-րդ կես) - 99

Բարսեղ կաթողիկոս - 99, 101, 103-104, 106-108, 115-119, 158, 179, 181, 203
Բարսեղ Կեսարացի - 182
Բարսեղ քահանա Անիում (XIII դ. 1-ին կես) - 185-186
Բարսեղյան Հ. - 126
Բեատրիս - 134-136
Բերոսոս - 58
Բժշկյանց Մ. - 199
Բոզոյան Ա. - 123, 154-155, 157, 159
Բոռնազյան Ս. - 25
Գագիկ Արծրունի թագավոր - 94
Գագիկ I Բագրատունի - 28, 35, 52
Գագիկ II Բագրատունի - 42-45, 62, 72, 74, 79, 81-84, 88, 91, 125
Գագիկ Աբասյան - Կարսի թագավոր - 62, 94-96, 99
Գազավոն Կամսարական (IV դ.) - 9
Գալարան (Գալերան) Եդեսիայի կոմս - 120-121
Գարիտ Ժ. - 8
Գեորգի I Բագրատունի - - Վիրա-աբխազական թագավոր (1014-1027) - 24, 67
Գեորգի III Բագրատունի - Վրաց թագավոր (1156-1184) - 180
Գեորգ Լոռեցի (կաթողիկոսարանի դպրապետ XI դ. 2-րդ կեսին) - 96-98
Գեորգ Մուղալենց - 200
Գեորգ - Քեղի ամրոցի տեր (XIII դ.) - 67
Գյուզալյան Լ. - 50
Գող Վասիլ իշխան - 102, 106, 116-117, 120, 126, 128-129
Գրիգոր - Անիի արքեպիսկոպոս (XIII դ. 1-ին կես) - 185-190
Գրիգոր Ապիրատ - Գրիգոր Մագիստրոսի թոռ (դստեր գծով) - 178, 181
Գրիգոր Ապիրատ եպիսկոպոս (XII դ. 2-րդ կես) - 158
Գրիգոր - Բարսեղ կաթողիկոսի եղբայր - 179-181
Գրիգոր Ապիրատ (Հասանի որդի) - 67, 75
Գրիգոր Ապիրատ (XIII դ.) - 67
Գրիգոր - Արտազի եպիսկոպոս (XV դ. 1-ին կես) - 193-194
Գրիգոր (Գրիգորիս) - Եգիպտոսի Հայոց առաջնորդ (XI դ. 2-րդ կես) - 97, 110-112, 203
Գրիգոր Ապիրատ Ներսես Շնորհալու եղբորորդի - 148-149, 158, տե՛ս նաև Գրիգոր VI կաթողիկոս
Գրիգոր Երեց (Մատթեոս Ուռհայեցու երկի շարունակող) 139
Գրիգոր II Վկայասեր - կաթողիկոս - 4, 80, 94-111, 115-116, 119, 129, 203
Գրիգոր III կաթողիկոս - 107, 116-118, 125-129, 131, 134-137, 140-141, 153-154, 156, 182, 204
Գրիգոր IV կաթողիկոս - 5, 137, 156-168, 171, 182
Գրիգոր V կաթողիկոս - 138, 168, 171, 182
Գրիգոր VI կաթողիկոս - 138-139, 171-177, 180, 182
Գրիգոր Համզե - Վահրամ Պահլավունի զորապետի հայր - 17-22, 29, 35, 51-52, 202
Գրիգոր իշխան (Գրիգոր Վկայասերի քեռորդի) - 99
Գրիգոր Լուսավորիչ - 8, 12-14, 65, 74, 95, 108, 124, 147, 176, 186
Գրիգոր Հնձեցի - 62

Գրիգոր Մագիստրոս Բջնեցի 5, 8-13, 17, 21, 27, 29, 37, 39, 42-43, 47-48, 50, 53, 55-90, 92, 94, 101, 108, 115-116, 119, 121, 126-127, 130, 141, 147-148, 178, 184, 192, 202-203
Գրիգոր Մոկքի և Մանազկերտի եպիսկոպոս (XI դ. 1-ին կես) - 62, 67, 72, 88
Գրիգոր Նազիանզացի - 109
Գրիգոր Նարեկացի - 61, 66, 69, 149-151, 166
Գրիգոր Պահլավունի զորավար (1070-1090-ական թթ.) - 204
Գրիգոր - Սիթի Պահլավունու ամուսին - 188
Գրիգոր I - Սյունիքի թագավոր (XI դ. վերջ - XII դ. սկիզբ) - 179
Գրիգոր XII Վաղարշապատեցի կաթողիկոս - 196
Գրիգոր - Վահրամ Պահլավունի զորավարի որդի - 47, 52-54
Գրիգոր Տաթևացի - 193
Գրիգոր Տուտեորդի - 158-159, 167, 172, 183
Գրիգոր քահանա (XI դ. 1-ին կես, Գրիգոր Մագիստրոսի մերձավոր) - 69
Գրիգորյան Գ. Ս. 22, 50
Գրուսե Ռ. - 129
Գուրգեն Բագրատունի Վրաց թագավոր (X դ. վերջ - XI դ. 1-ին կես) - 35
Դադոյան Ս. - 112, 131
Դավատանոս - Եդեսիայի կոմս 129
Դավիթ - Աղթամարի կաթողիկոս 1113-ից - 118-120
Դավիթ Ալավկա որդի - 123
Դավիթ Անհողին - 42
Դավիթ Բագրատունի - Տայքի կյուրապաղատ - 34-36
Դավիթ Շինարար - Վրաց թագավոր - 122
Դավիթ Պահլավունի (XIV դ. 1-ին կես) - 199
Դավիթ Քոբայրեցի - 172, 180
Դարբինյան-Մելիքյան Մ. - 27
Դեդեյան Ժ. - 11, 89, 91, 97, 100, 117, 123, 126, 130-131, 139, 154
Դեմետրե - Վրաց թագավոր - 122
Դիոնիսիոս Թրակացի 60
Ելխազ-թյուրք - սելջուկյան զորագլուխ (XI դ. վերջեր) - 178
Եղիազարյան Հ. - 73-76, 186
Եղիշե - Գրիգոր Մագիստրոսի աշակերտ - 70
Եմրան - հայ պատերազմիկ (990-ական թթ.) - 26
Եպիփան - վրաց եպիսկոպոս - 189
Եվա նախամայր - 145
Եվգենիոս III պապ 124
Եվտիքես - միաբնակության հիմնադիր - 155
Երեմիա եկեղեցական գործիչ (X դ.) 30
Երեմյան Ս. - 94-125
Զանգի Հալեպի ամիրա - 148
Զաքարե (Զաքարիա) զորապետ - 34, 188, 191
Զաքարիա Պահլավունի (XIV դ. սկիզբ) - 192
Զաքարիա Հավուցթառեցի (XV դ. 1-ին կես) - 192-194, 204
Զաքարիա Հավուցթառեցի (վարդապետ, Հավուց թառի վանահայր), XV դ. վերջ XVI դ. սկիզբ - 194-195
Զաքարիա Սարկավագ պատմագիր - 197
Զորավար Ներսես Շնորհալու եղբայր - 111, 127-129, 131-132, 137-138, 151, 171
Զուլալյան Մ. - 196-197

Թագուհի - Զորավարի դուստր - 138
Թահմասպ - պարսից շահ - 195
Թահմիզյան Ն. - 11, 152
Թայիկ - Սարգիս արքեպիսկոպոսի դուստր (XIII դ. 2-րդ կես) - 191
Թեոդորոս - հակաթոռ կաթողիկոս (1070-ական թթ.) - 101, 103
Թեորիանոս - Մանուել կայսեր պատվիրակ - 155
Թոնդրակյաններ - 69-70, 85, 88, 140
Թոռնիկ Մամիկոնյան - 58, 99-100, 184-185, 203
Թովմա Արծրունի - 27
Թովմա Մեծոփեցի - 193-194
Թորամանյան Թ. - 32, 34, 186
Թորոս - Եդեսիայի իշխան (XI դ. 2-րդ կես) - 106
Թորոս - Կիլիկիայի իշխան (XII դ. սկիզբ) - 120, 130
Թորոս իշխան - Լևոն I-ի որդի - 124, 134, 140
Թորոս - Հեթումյան իշխան (1160-ական թթ.) - 141
Թորոսյան Խ. - 167
Թոփճյան Հ. - 128, 135
Թումանով Կ. - 11, 90
Թուրշյան Հ. - 107, 111
Իբն ալ-Ասիր -113, 133
Իբն Շադդադ - արաբ պատմագիր - 162
Իբրահիմ - արաբ գիտնական (XI դ.) - 56-57, 63
Իբրահիմ Յանալ - սելջուկ զորագլուխ - 88
Իննոկենտիոս II - Հռոմի պապ (1130-1143) - 123
Իննոկենտիոս III - Հռոմի պապ (1179-1180) - 173-175
Իսահակ II Անգելոս - Բյուզանդիայի կայսր (1185-1195) - 160-161
Իվանե Զաքարյան - 186-188, 191
Իվանե Օրբելիանի - ամիրսպասալար (1170-ական թթ.) - 180
Իրիոն - տոմարագետ (VI դ.) - 104
Լեո - 11, 84
Լիպարիտ - Վրաց իշխան - 87
Լորան Ժ. - 91, 130, 149
Լևոն I Ռուբինյան - 123-124, 141
Լևոն II - Կիլիկիայի Հայոց թագավոր - 138, 162-163, 165, 168-176, 183
Լևոն I - Հռոմի պապ (440-461) - 159
Լուկիոս III - Հռոմի պապ (1181-1185) - 160-161
Խալփախչյան Հ. -199
Խաչատրյան Պ. - 66
Խաչատուր - Անտիոքի դուքս (XI դ.) - 91
Խաչատուր - Հոռոմոսի վանքի վանահայր (XII դ. 2-րդ կես) - 182
Խաչերյան Լ. - 10, 55, 60, 78
Խաչիկ I կաթողիկոս - 19
Խաչիկ II կաթողիկոս - 94, 103
Խաչիկյան Լ. - 6, 68, 139, 198
Խանլարյան Լ. - 197
Խավռաս - Զաքարե զորավարի մորեղբորորդի - 188
Խլիճ Արսլան ամիրա -132
Խոսրով Արշակունի - Հայոց թագավոր (IV դ.) - 9
Խոսրով I - պարսից թագավոր - 152
Խոսրովիդուխտ - Տրդատ Մեծի քույր - 152
Կալարան - Սրուճ բերդի տեր -130

Կամսար - Սուրենյան Պահլավ տոհմածյուղի ներկայացուցիչ - 7
Կանայանց Ս. - 12, 196
Կանար Մ. 110-113, 131
Կարա Արսլան ամիրա 132
Կեկավմենոս - 86-87
Կիրակոս - հույն դպիր - 62
Կիրակոս Գանձակեցի - 5, 123-124, 134, 137, 141-142, 152, 169-173, 191
Կիրակոս Խորվիրապեցի - 194
Կղեմես Գալանոս - 124, 174
Կղեմես III - Հռոմի պապ (1187-1191) - 161
Կյուլեսերյան Բ. - 125
Կոգյան Ս. - 12
Կոստանդ Բյուզանդիայի կայսր (VII դ.) - 16
Կոստանդին Դուկաս կայսր - 94
Կոստանդին - Կարկառի իշխան - 130
Կոստանդին Մեծ կայսր -124, 176
Կոստանդին IX Մոնոմախ կայսր - 44-45, 75, 83, 86, 88, 91
Կոստանյանց Կ. - 6, 79
Հակոբ վարդապետ (XVI դ. 2-րդ կես) - 195-196
Հակոբյան Գր. - 5, 11, 94, 147-148, 152
Հակոբյան Թ. - 126
Հակոբյան Վ. - 6, 180, 197
Համազասպ Պահլավունի (VI դ.) - 15
Համազասպ Հավուցքառեցի (XVI դ. 1-ին կես) - 195
Համզե - Գրիգոր Համզեի որդի - 22, 29, 49, 51
Հայկ նահապետ - 85-86, 147, 165
Հասան - Բարսեղ կաթողիկոսի եղբայր (XII դ. 1-ին կես) - 115, 179-180
Հասան - հայր Ապիրատի (XI դ.) առաջին կես) - 74
Հասան մագիստրոս - 178
Հասան - Վասիլի որդի - 137
Հարությունյան Ս. - 32
Հարությունյան Վ. - 186
Հաֆիզ խալիֆա - 109-110, 112-113, 131, 203
Հեթում - Լամբրոնի իշխան - 117, 129, 140, 171, 174, 176
Հեթում պատմիչ - 163
Հեթում - Վասիլի որդի - 137
Հենրիխ VI - Գերմանիայի կայսր -172
Հեսու - հին Իսրայելի զորավար - 39
Հիսե բժիշկ - 54
Հոմերոս - 56
Հովհան Ոսկեբերան - 108
Հովհաննես ավետարանիչ 76, 149
Հովհաննես Արջուառիճի վանքի առաջնորդ (XIII դ. 2-րդ կես) - 192
Հովհաննես - Բջնիի եպիսկոպոս (XV դ. 1-ին կես) - 193
Հովհաննես Դրասխանակերտցի - 16
Հովհաննես եպիսկոպոս (Շիրակի թեմական, XIII դ.) - 191
Հովհաննես VI կաթողիկոս - 176,182
Հովհաննես Կոզեռն - 62
Հովհաննես Կոմնենոս կայսր - 123
Հովհաննես Հերմոնեցի (XV դ.) - 193-194
Հովհաննես - Սիսի արքեպիսկոպոս (XII դ. 2-րդ կես) - 169-170
Հովհաննես Սկիլիցես - 44-46, 86, 92

Հովհաննես - Սյունիքի արքեպիսկոպոս - 13, 17, 71
Հովհաննես - Սմբատ թագավոր - 10, 24-25, 40, 42-43, 49, 52, 61, 68, 73, 78, 85, 115
Հովհաննիսյան Ա. - 6, 85, 197
Հովսեփյանց Գ. - 5, 54, 56, 67, 74-76, 108, 127, 129, 135, 137-139, 143, 165, 182, 188, 191-192, 196
Հռիփսիմյանք - 65
Հուստինիանոս I կայսր - 104
Հուստինիանոս II կայսր - 16
Ղազարյան Վ. - 128, 149
Ղազի - Դանիշմանյան ամիրա - 131
Ղազինյան Ա. - 131
Ղարիբ - Ապուղամրի որդի 185-188, 204
Ղաֆադարյան Կ. - 52, 77
Ղևոնդ պատմիչ - 9, 16
Ղևոնդյանք - 152
Մաթևոսյան Ա. - 6
Մաթևոսյան Կ. - 67, 84, 104, 121, 192
Մակաբե - 165
Մաղաքիա Պահլավունի (XIV դ. 1-ին կես) - 199
Մամլան - Ատրպատականի ամիրա - 34-36, 52, 202
Մամքան - Ապուղամրի մայր - 191
Մանանդյան Հ. - 11, 87, 100, 191
Մանուել Բջնեցի - եպիսկոպոս Արարատյան երկրի (XIV դ.) - 67
Մանուել - Բյուզանդիայի կայսր (1143-1180) - 140, 153-155, 157-160, 183
Մանուել - Հավուցքառի եպիսկոպոս (XVI դ. 1-ին կես) - 196
Մանուել - Հավուցքառի առաջնորդ (XVII դ. սկիզբ) - 196-197
Մանուչե - Անիի կառավարիչ (1060-ական թթ.) - 99, 121, 178-179
Մառ Ն. - 50-51, 84, 189
Մասուդ - Իկոնիայի սուլթան (1140-ական թթ.) - 132-133
Մատթեոս Ուռհայեցի - 25-26, 35-36, 40-43, 45, 57, 62, 78-80, 87-88, 90-91, 94-108, 112, 115, 117, 119-122, 125-126, 128-134, 139, 178-179, 184-185
Մարգար Պահլավունի (XIV դ.) - 199
Մարգարյան Հ. - 34-35, 122, 178, 180-182, 188
Մարեմիկ Վասիլի (Ներսես Շնորհալու եղբոր) կին - 117, 137
Մարիամ - Վասպուրականի թագավոր Սենեքերիմի դուստր - 33
Մարիամ - Ներսես Շնորհալու քույր - 127-128
Մարկոս Ջուղայեցի - Հավուցքառի առաջնորդ (XVII դ. 1-ին կես) - 197
Մարտիրոս Ղրիմեցի - 197-200
Մարտիրոսյան Ա. 197, 199-200
Մելիք Պահլավունի (XVI դ.) - 196
Մելիք-Բախշյան Ստ. - 126
Մելիքշահ սուլթան - 99, 103
Մելիքսեթ-Բեկ Լ. - 34, 122, 180
Մեսրոպ Մաշտոց - 65, 95, 147
Մեց Ա. - 109
Մըսրլյան Գ. - 110-114
Մինորսկի Վ. - 34, 81
Միշո Գ. - 164
Միրզե Պահլավունի (XVI դ.) - 196

Միքայել Ասորի 99, 124, 130-133, 156
Միքայել Իասիտես - Իբերիա բանակաթեմի կառավարիչ - 44
Միքայել IV - Բյուզանդիայի կայսր (1034-1041) - 40, 43-44, 49
Միքայել VII - Բյուզանդիայի կայսր (1071-1078) 91
Միքայել - Կարկառի իշխան - 130-131
Միքայել - Կոստանդնուպոլսի պատրիարք (XII դ. 2-րդ կես) - 156, 158
Միքայելյան Գ. - 121, 140, 161-162
Միքայելյան Վ. - 198, 200
Մլեհ - Կիլիկիայի իշխան - 137, 139, 156-157
Մխիթար Այրիվանեցի - 5, 27, 74, 115
Մխիթար Անեցի - 5, 182
Մխիթար Գոշ - 158, 167, 180
Մխիթար Հերացի - 151, 167
Մխիթարյան Ս. - 11, 55, 57, 66
Մնացականյան Ա. - 85
Մնացականյան Ս. - 24
Մովսես Խորենացի - 9, 12, 147
Մովսես մարգարե - 39
Մրվան - կուղպակատեր Անիում (X դ.) - 21-22
Մութաֆյան Կ. - 174
Մուհամմեդ մարգարե - 65
Մուղալենց Մարգար (XVII դ.) - 201
Մուշեղ Մամիկոնյան (XI դ. 1-ին կես) - 184
Մուշեղյան Խ. - 22
Մուստանսիր խալիֆա (1036-1094) - 109
Մուրադյան Պ. - 189
Յակոբսոն Ա. - 199
Յակուտ-պատմագիր - 162
Յաղուբ - Երևանի կառավարիչ (XV դ. 1-ին կես) - 193-194
Յուզբաշյան Կ. - 25, 31, 70, 191
Նաթանայել - Հավուց թառի վանահայր (1340-ական թթ.) - 67, 192
Նալբանդյան Հ. - 162
Ներսես Լամբրոնացի - 5, 138, 142, 157, 166-168, 170-174
Ներսես Կամսարական (VII դ.) - 16
Ներսես Մեծ կաթողիկոս - 12, 148
Ներսես Շնորհալի 5, 11, 14, 27, 56, 77, 92-95, 97, 102, 107, 110, 116, 120, 123, 125-129, 134, 136, 140, 159, 163, 166, 171, 182-183, 204
Ներսեսյան Վ. - 70
Նիկոլայոս - բյուզանդական զորապետ (1040-ական թթ.) 44-45
Նիկողաս - բյուզանդական զորապետ (1030-ական թթ.) - 85-86, 92
Նուրադդին - Հալեպի ամիրա -133, 156
Շահ-Աբբաս I -196
Շահ-Իսմայիլ - 195
Շահան - Գրիգոր III կաթողիկոսի եղբայր -129, տես Զորավար
Շահանդուխտ - Զորավար
Պահլավունու դուստր - 129, 138-140, 171
Շահխաթունյանց Հ. - 6
Շահնազարյան Ա. - 189
Շահնշահ II ամիրսպասալար (XIV դ. 1-ին կես) - 192
Շահնշահ - Սասունի իշխան
Զորտվանելի որդի - 138
Շարափշահ - 191
Շմավոն քահանա (XVI դ.) - 196
Շոմոն Մ. 8

Շուշան - Գրիգոր Համզե Պահլավունու կին - 17, 19-23, 29-30, 51-52
Շուշան - Շահանդուխտի դուստր - 138
Ոնոփրիոս անապատական - 97
Որսկանյան Հ. - 149
Չամչյանց Մ. - 7, 17, 90, 129, 132, 160
Չորտվանել - Սասունի իշխան - 138, 185, 203-204
Պալակ - Արտուխյան ամիրա - 131
Պապ թագավոր -148
Պետրոս առաքյալ - 174
Պետրոս Բագրատունի (XVII դ.) - 200
Պետրոս Գետադարձ - 41-42, 47, 50, 55, 61, 64, 67-68, 70, 73, 79-81, 83, 88, 100, 179
Պետրոս Պահլավունի (XIV դ. 1-ին կես) - 199
Պերոզամատ (Կամսարի հայր) - 7
Պլատոն - 56-57
Պյուքագորաս - 56
Պողարյան Ն. - 5
Պողոս - հակաթոռ կաթողիկոս (XI դ. 2-րդ կես) - 103-104
Պորփյուր - 55
Ջալալ ադ-դին-խորեզմշահ - 187-188
Ջալալյանց Ս. - 6
Ջհանշահ - 193
Ջոսլին I - Եդեսիայի կոմս - 131-133
Ջոսլին II - Եդեսիայի կոմս - 133-134, 136
Ջոսլին III - Եդեսիայի կոմս - 135-136
Ռենալդ - Անտիոքի դուքս (XII դ. 2-րդ կես) - 125, 139
Ռիդուան իբն ալ-Վալախշի - 112-113
Ռիչարդ Առյուծասիրտ - 163
Ռոմանոս III - Բյուզանդիայի կայսր (1028-1034) -85
Ռոջեր II - Սիկիլիայի թագավոր (1130-1154) - 110, 131
Ռուբեն - Լևոն II թագավորի եղբայր -175
Ռուբեն - Լևոն II-ի որդեգիր - 175
Ռուբեն - Կիլիկիայի իշխան (1175-1187) - 137, 157
Ռունսիմեն Ս. - 174
Սագի Պահլավունի (XVI դ.) - 197, 199
Սալահ ադ դին - 111, 161, 165
Սահակ - Կարինի եպիսկոպոս (XII դ. 1-ին կես) - 123
Սահակ Պարթև - 20, 27, 31, 71, 95
Սամուել Անեցի - 53, 67, 83-84, 97, 99, 104, 120, 122-124, 129, 140, 169-171, 194
Սարգիս - անեցի վարդապետ (XI դ. 1-ին կես) - 71-72, 81-82, 86-87
Սարգիս - Անիի արքեպիսկոպոս (XIII դ.) - 190, 204
Սարգիս հակաթոռկաթողիկոս Հոնիում - 100, 101
Սարգիս I կաթողիկոս (992-1016) - 74
Սարգիս - Սուրբ Կարապետի վանահայր (XI դ.) - 72
Սարգիս - Սևանի վանքի վարդապետ (XI դ. 1-ին կես) - 72
Սարգիս քահանա - Վասիլի որդի (XII դ.) - 137
Սարգիս Զաքարյան - 191
Սարգիսյան Բ. - 5, 138
Սարգիսյան Ն. - 6
Սեդա - Գրիգոր Համզեի դուստր - 21-22, 29, 51

Սեդա - Վասակ Հոլումի դուստր - 27-28
Սեդրակ Պահլավունի (XIV դ.) - 199
Սելիմ իբն Միսալ - Եգիպտոսի վեզիր (XII դ. 1-ին կես) - 113
Սեղբեստրոս - Հռոմի պապ - 124, 176
Սեմյոնովա Լ. - 112
Սենեքերիմ - Սյունիքի թագավոր (XII դ. 2-րդ կես) - 178-179
Սենեքերիմ - Վասպուրականի Արծրունի թագավոր - 33
Սիթի Պահլավունի - 188
Սիմեոն Ապարանցի - տաղասաց (XVI դ.) - 15
Սիմեոն Երևանցի կաթողիկոս - 74, 192, 195
Սմբատ II Բագրատունի - 17, 19, 30
Սմբատ մագիստրոս - Վահրամ Պահլավունու որդի - 35, 52-53, 202
Սմբատ - Մանուել կայսեր պաշտոնյա (1160-ական թթ.) - 154
Սմբատ Սպարապետ - 5, 24, 41, 43, 79, 90-92, 94, 96-97, 99-100, 102, 104, 120, 132-135, 138, 156-157, 162, 165, 167-173, 175-176
Սոկրատ - հնադարի հույն իմաստասեր - 57
Սողոմոն իմաստուն - 63, 122, 138
Սոսթենես եպիսկոպոս (XI դ.) - 73
Սոսթենես վարդապետ (X դ.) - 30
Սոփի - Վահրամ Պահլավունու կին - 48
Ստեփաննոս - Աղվանից կաթողիկոս (XII դ. 1-ին կես) - 106
Ստեփաննոս արքեպիսկոպոս (XI դ.) - 69
Ստեփաննոս - XIII դ. ժամանակագիր - 170
Ստեփաննոս III - Սյունյաց եպիսկոպոս (XII դ. 2-րդ կես) - 166
Ստեփաննոս վարդապետ (XII դ.) 116
Ստեփաննոս Տարոնեցի (Ասողիկ) - 35-38, 53
Ստեփաննոս Օրբելյան - 5, 72, 136-137, 166, 179-180
Սրվանձտյանց Գ. - 185
Վահրամ - Անիի կառավարիչ (XIII դ.) - 189, 204
Վահրամ - Վասիլի որդի - 137
Վահրամ Գրիգոր Մագիստրոսի որդի - 55, 67, 90, 92-94, 203, տե ս Գրիգոր Վկայասեր կաթողիկոս
Վահրամ Պահլավունի - Եգիպտոսի վեզիր - 109-114, 131, 203
Վահրամ Պահլավունի զորավար - 17, 21-22, 24, 28-40, 52-54, 71, 78-79, 82-83, 89, 186-187, 202
Վահրամ - Ներսես Շնորհալու քեռորդի - 128
Վահրամ Բաբունի - XII դ. հայ վարդապետ, գիտնական, Կիլիկիայի թագավորության ջանցլեր (կանցլեր), արքունի քարտուղար (ատենադպիր) - 173
Վանեն - Ներսես Շնորհալու մայրը - 127
Վանինե - Վասիլի (Ն. Շնորհալու եղբոր) դուստր) - 138, 185
Վասակ - Ապիրատի որդի (XI դ. 1-ին կես) - 74, 99, 178
Վասակ - Բարսեղ կաթողիկոսի հայր - 101, 115-116, 179

Վասակ Հոլում - 24-27, 29-30, 38, 49, 55, 57, 74-75, 78, 119, 147, 202
Վասակ Պահլավունի - Անտիոքի դուքս - 90-92, 121, 203
Վասակ - Գրիգոր Մագիստրոսի փեսա - 178-189
Վասակ - Վահրամ վեզիրի եղբայր - 110-111
Վասակ - Ներսես Շնորհալու եղբոր Վասիլի որդի - 137
Վասիլ - Գող Վասիլի հոգեորդի 117, 120, 125, 129
Վասիլ II - Բյուզանդիայի կայսր - 34, 67
Վասիլ - Զորավարի որդի - 138, 151, 185
Վասիլ - Ներսես Շնորհալու եղբայր - 111, 127-129, 131, 133, 137, 139, 156, 203
Վասիլ - Զորտվանելի որդի - 138
Վասիլ - Քեսունի իշխան (XII դ. 1-ին կես) - 107, 121
Վարդ Սկլերոս - 34
Վարդան Արևելցի - 5, 10, 25, 31, 68, 74, 78, 90-91, 94, 96-97, 99, 107, 115-117, 120-122, 136, 140, 156, 160-162, 169-171, 178-181, 185
Վարդան Հայկազն - Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի աշակերտ - 107
Վարդան Մամիկոնյան - 147, 152
Վարդանանք - 152
Վելիճան (XVI դ.) - 196
Վեստ Սարգիս - 41-45, 68, 79, 82-83, 88-89
Վիգեն - Սասունի իշխան - 138, 185
Տալիթ - Շահանդուխտի դուստր -138
Տաշյան Հ. - 5, 13, 173
Տեր-Ղազարյան Հ. - 105, 125-126, 139
Տեր-Ղևոնդյան Ա. - 110-114
Տեր-Ղևոնդյան Վ. - 162
Տեր-Միքելյան Ա. - 31, 167
Տեր Մկրտչյան Գ. - 12
Տեր-Պետրոսյան Լ. -106, 134
Տիգրան - Անձևացի իշխան - 48
Տիգրան Մեծ - 147, 165
Տիգրան - Վահրամ Պահլավունու եղբայր - 49
Տոկարսկի Ն. - 32, 34
Տրդատ Մեծ - 8, 65, 124, 147, 152, 176
Տրդատ Պահլավունի (XVII դ.) - 197, 199-201
Տուղրիլ-բեկ - 25, 87-88
Փատլուն Անիի կառավարիչ (XII դ. սկիզբ) 122, 178, 181
Փատլուն - Գանձակի ամիրա (XI դ. վերջեր) - 178-179
Փափազյան Հ. - 195
Փերսի Վրաց իշխանաց իշխան (X դ. վերջ) - 35
Փիլարտոս Վարաժնունի - 91-92, 99-101, 184-185
Փիրուզ հայ ազնվական (XI դ. վերջեր) - 174
Քասունի Ե. - 91
Քյոշկերյան Ա. - 66
Քյուրտյան Հ. - 162
Քուշներյան Ք. - 198-200
Օշին Գանձակեցի (XI դ. 2-րդ կես) - 140
Օշին - Լամբրոնի իշխան (XII դ.) - 129, 138-141, 174, 177
Օշին - Ներսես Լամբրոնացու եղբորորդի - 175
Օրբելի Հ. - 7, 23-24, 30, 48, 78, 188-190
Օրմանյան Մ. - 11, 30, 36, 39. 79, 92, 99, 124, 169, 182, 194
Ֆրիդրիխ Բարբարոսա - 161-163

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Աբբասյան խալիֆայություն - 22
Աբդահար - վայր Սամոսատի գավառում - 133
Աբրահամի բուրգ - հուշարձան Անիում - 181
Ագսու (Ակսու) գետ - 125
Ադանա - 140
Ազատ գետ -75
Ալավերդի - 80
Ալեքսանդրիա 176
Ալելուա դաշտ (Խարբերդի դաշտ) - 99
Ախսարայ - 198
Ախուրյան գետ 30, 34, 41, 73
Ախուրյանի ձոր 34
Աղթամար - 118, 120, 134
Աղթամարի կաթողիկոսություն - 134
Աղստև գետ - 73
Աղվանից եկեղեցի - 106
Աղվանք - 123, 159
Աղվանք Հայկական - 106, տե՛ս Հայկական Աղվանք
Ամաղու գյուղ -166
Ամայք - գավառ հյուսիսային Միջագետքում - 140
Ամանոս (Սև) լեռներ - 99, 102, 116, 128
Ամասիա քաղաք - 94
Այրարատ - 6, 25, 196
Անավարզա - 120
Անբերդ (Ամբերդ) բերդաքաղաք - 31-34, 72, 81-82, 199
Անբերդ գետ - 31
Անբերդի գավառ - 33
Անբերդի եկեղեցի - 31-32
Անգլիա - 161, 163
Անի քաղաք - 3, 6-10, 17-21, 31, 34, 38, 40-41, 43-45, 47-49, 51, 53, 55, 71, 73, 75, 78, 81, 83, 86, 94, 99, 101, 103, 106-107, 116, 121-122, 135, 148, 158-159, 172, 178-181, 183, 185, 187-191, 199, 202, 204
Անիի Առաքելոց եկեղեցի - 34, 181, 187-188, 191
Անիի Մայր տաճար -121-122
Անձիտ գավառ - 125-126
Անձևացիք գավառ - 48
Անտիոք քաղաք - 90-92, 104, 123, 125, 134-135, 139, 171, 174-176, 203
Անտիոքի դքսություն - 91, 123, 125
Անտիոքի պատրիարքություն 175-176
Աշնակ գյուղ - 50
Աշտիշատ - 65
Ապահունիք գավառ - 34, 36
Ապուղամրենց ս. Գրիգոր եկեղեցի Անիում - 20, 51
Ասորիք - 99 տե՛ս նաև Սիրիա
Ասորվոց Հակոբիկ եկեղեցի - 153
Աստրախան - 198
Ավանասար գյուղ (Գառնիի շրջանում) - 195
Ավանիկ գյուղ (Գառնիի շրջանում) - 195
Ավարայրի դաշտ - 147, 152
Ատրպատական - 25, 34, 86, 202
Արաբական խալիֆայություն - 148, տե՛ս նաև Աբբասյան խալիֆայություն
Արագած լեռ - 31
Արագածոտն գավառ - 3, 33
«Արամյան նահանգ» - 71
Արարատյան եկեղեցաթեմ - 68

Արարատյան երկիր - 67-68
Արդիք - գյուղ Շիրակում - 185-186, տե՛ս նաև Արթիկ
Արեգի (Արեգին) - վանք Լեռնային Կիլիկիայում - 105
Արթիկ քաղաք - 181, 185-186
Արծն քաղաք - 87
Արծրունյաց թագավորություն - 34, տե՛ս նաև Վասպուրականի թագավորություն
Արճեշ քաղաք - 37, 86, 126
Արմաշ գյուղ - 135
Արմինիա նահանգ - 16
Արմյանսկ քաղաք - 198
Արշարունիք գավառ - 9, 16, 179
Արջառռիճ գյուղ - 191
Արջառռիճ (Ալաջա) լեռ - 53
Արտազ գավառ - 9, 120, 193-194
Արքակաղին - վանք Կիլիկիայում - 176
Արքաշեն գետակ (Անբերդի վտակը) - 31
Աքմեչիթ - 198, տե՛ս Սիմֆերոպոլ
Բագնայրի վանք - 6-7, 27, 53, 188, 190-191
Բագրատունյաց Հայաստան - 25
Բագրատունյաց Հայոց թագավորություն - 21, 24, 28, 30, 38, 40-43, 75, 78, 83, 85-86, 88, 202
Բալակլավա քաղաք - 198
Բախչիսարայ քաղաք - 198
Բաղաբերդ -166
Բաղք գավառ - 178
Բասեն գավառ - 34, 86, 88
Բեհեսնի բերդաքաղաք - 133
Բեյրութ - 139
Բերդկան (Բերդիկ) - ամրոց Ծովային Կիլիկիայում - 138
Բերդուս - բերդաքաղաք Լեռնային Կիլիկիայում - 125
Բերկրի քաղաք - 86, 126
Բիր (Պիր) - բերդաքաղաք Հայոց Միջագետքում - 120, 130, 133
Բիրի իշխանություն - 130
Բյուզանդիա, Բյուզանդական կայսրություն - 9, 13, 16-17, 33-34, 38, 40, 42-44, 56, 72, 78-79, 85-86, 88-89, 91, 94-95, 100-104, 123, 137, 153, 157, 159, 161, 163, 172-174, 184, 209
Բյուզանդական եկեղեցի - 101, 122, 153, 155, 157-158, 160, 173,
Բյուրական - 31
Բջնի ամրոց - 24-27, 68, 72-74, 81-82, 85, 193, 203
Բջնիի եպիսկոպոսություն (եկեղեցաթեմ) - 68, 73
Բջնիի ճեմարան - 73
Գանձակ - 25, 106, 140, 178
Գառնի - 75, 187, 194
Գառնիի գավառ - 197
Գեղարդաձոր - 197
Գեղարդավանք - 197
Գերմանիա - 161
Գերմանիկե (Մարաշ) - 107
Գյումրի - 34
Գրիգոր Պահլավունու եկեղեցի Անիում - 49
Գուգարք - 69, 80
Գուս - նահանգ Եգիպտոսում - 112
Դարույնք - 90
Դերբենտ - 16
Դվին - 21, 25, 44-45, 47, 54, 89, 116, 126
Դրազարկ - վանք - 168, 175
Եգիպտոս - 80, 96-98, 109-113, 131, 161-162, 203
Եդեսիա -14, 104-105, 130, 132, 148-149, տե՛ս նաև Ուռհա
Եդեսիայի կոմսություն - 106, 109, 125, 130-133
Եղվարդ - 67

Երևան - 115, 193-194, 196
Երուսաղեմ - 97, 104, 123, 158, 161, 164-165, 176, 178
Եփրատ - 91, 98, 101, 129-130, 134, 162-163, 165
Եփրատացվոց երկրամաս - 109, 111
Զաքարյան իշխանություն - 3, 192, 204
Զաքարյան Հայաստան - 189, տես նաև Զաքարյան իշխանություն
Զմմառի վանք 167
Էջմիածին - 193-194, 204
Էջմիածնի Մայր Աթոռ - 193-194
Թաղք - գյուղ Շիրակում - 185-186
Թառնիս - գյուղ Գառնիի շրջանում - 195
Թավրիզ 34
Թեոդոսիա - 197-198
Թիֆլիս 196
Թլկուրան - գյուղաքաղաք Հյուսիսային Միջագետքում - 140
Թլկուրանի իշխանություն 140
Թլպաշար - բերդաքաղաք Հյուսիսային Միջագետքում - 109-110, 120, 130, 132-133, 135
Թլպաշարի գավառ - 132-133
Թոնդրակ ավան - 70
Իբերիա բանակաթեմ - 44
Իկոնիա -131, 162-163
Իկոնիայի սուլթանություն - 132, 137, 162
Իսրայել հին - 39
Լազարյան ճեմարան - 6
Լամբրոն ամրոց 8, 117, 129, 138-141, 158, 171, 175
Լամբրոնի իշխանություն - 141
Լատին (կաթոլիկ) եկեղեցի - 160-161, 173, 183, 200
Լեհաստան - 199
Լմբատավանք - 181, 185-186
Լոռե բերդաքաղաք - 191
Լոռի - 42, 180
Խարբերդ - 99
Խերսոնես - 198-199
Խլաթ - 185
Խծկոնքի եկեղեցի - 41
Խնատի վանք - 69
Խոսոնք գյուղ - 36
Խորասան - 34
Խութ գավառ - 111
Ծաղկաձոր - 74
Ծաղկոտն - 27
Ծաղկոց - Անիի դարպասներից - 41
Ծամնդավ - 94-96, 98
Ծառաքար-բերդավան - 181
Ծար - գետ - 73
Ծովային Կիլիկիա -138
Ծովք - դղյակ (Ծով) - 107, 116, 119, 125-126, 128-135, 139, 141, 148, 203-204
Ծովքի իշխանություն - 128-129, 131
Ծովքի լճեր - 125
Ծոփք - 125
Ծումբ - գյուղ - 28, 34, 36-38, 52, 202
Կազան - 198
Կահիրե - 110, 113, 131
Կաղզվան - 179
Կամահա երկիր -133
Կայան - բերդ - 24, 27
Կայծոն - ամրոց - 24, 27
Կարասուբազար - գյուղ Ղրիմի թերակղզում - 198
Կարին - գավառ - 34, 86
Կարին - քաղաք - 123
Կարկառ - բերդաքաղաք Վերին Միջագետքում - 129-132, 203
Կարմիր վանք (Քեսունում) - 102, 107, 116-117, 119-120, 141
Կարս - 24, 94, 180

Կաֆա (Թեոդոսիա) քաղաք - 197-200, 204
Կեչառիսի (Կեչառույքի) վանք - 6, 10, 73-76, 115, 203
Կեչառույք ավան (այժմ Ծաղկածոր) - 74
Կեչառույքի ճեմարան - 73
Կեչրոր - քաղաքավան - 161
Կեոզլով - բնակավայր Ղրիմում - 198
Կեսարիա - 65, 94, 104, 171
Կիլիկիա - 99, 102, 123, 125, 130, 134, 137, 140-141, 153, 156-157, 163, 165, 177, 193, 204
Կիլիկիայի հայկական իշխանություն - 91, 123-124, 137
Կիլիկիայի Հայոց թագավորություն - 176, 183, 193, տես նաև Կիլիկիայի հայկական պետություն
Կիլիկիայի հայկական պետություն - 137, 141, 161-163, 165, 168, 173
Կիլիկյան Հայաստան - 6, 123, 165-166, տես նաև Կիլիկիա
Կիլիկյան Տավրոս - 91
Կոգովիտ - 27, 90
Կոխդ - գյուղ Գառնիի շրջանում 195
Կոպիտառ ամրոց -169
Կոստանդնուպոլիս - 41, 45, 49, 55, 65, 83-84, 96-97, 154, 156, 158, 171
Կուաշ (Կոշ) - ավան - 19
Կուտիս - գյուղ Գառնիի շրջանում - 195
Կուտուց վանք - գյուղ Գառնիի շրջանում - 195
Հալեպ - 133-134, 148, 156
Հաղբատի վանք - 52, 158, 172
Հայաստան, Հայոց աշխարհ - 3, 6, 9, 13-14, 36, 41, 43-45, 47, 60, 77-78, 82, 86, 88-89, 95, 98, 107, 119, 127, 148, 152, 155, 158-159, 163, 167, 169, 189, 202
Հայոց եկեղեցի - 29, 31, 41, 48, 61, 63, 65, 70, 73, 77-78, 88, 103-104, 106, 108, 120, 122-123, 135, 141, 143, 153-155, 157-161, 166-168, 173, 175-176, 183, 203
Հայոց Աղվանք - 103, 123
Հանձիտ - գավառ - 99, 132
Հավուց թառ - գյուղ - 193
Հավուց թառի Ամենափրկիչ եկեղեցի - 6, 67, 73, 75-76, 192, 194-197, 203-204
Հավուց թառի ճեմարան - 73
Հարք - գավառ - 34
Հերմոնի վանք - 193
Հիսն - Մանսուր - քաղաք - 129
Հոնի - քաղաք - 100-103
Հոռոմոսի վանք - 21, 182
Հռոմ - 65, 67, 124, 160-161, 164, 173-176
Հռոմի եկեղեցի - 173, տես Լատին եկեղեցի
Հռոմկլա - 107, 134-139, 142, 154-157, 159, 161-163, 167, 169-171, 175-176, 182-183
Հրազդան գետ - 24, 73
Ձագավան - 143
Ձորոփոր - 69
Ղարբիյյա - նահանգ
Եգիպտոսում - 110, 112
Ղպտիական եկեղեցի - 112, 131
Ղրիմի թերակղզի - 197-200
Ճերմակ վանք Եգիպտոսում - 112
Մամեստիա - 153, 176
Մանազկերտ - 34, 62, 86, 126
Մանկուս - գյուղ Գառնիի շրջանում - 91, 195
Մաստարա - 31
Մարաշ - 99-100, 103, 107, 132-133
Մարդաղի - գավառ - 34

Մարդին - քաղաք - 133
Մարմաշենի վանք 6-7, 23-24, 30-32, 48-49, 53, 73, 78, 186-190, 202
Մարմետ - գյուղ Արթիկի մերձակայքում - 187
Մարց - գյուղ Ալավերդի քաղաքից 16 կմ հարավ-արևելք - 80
Մելիտենե - 98
Մեծ Հայք - 44, 134, 137, 158-159, 165-166, 169, 198
Մենծկերտ - ամրոց - 107
Միջագետք Հայոց - 129, տե՛ս նաև Միջագետք Վերին
Միջագետք - 68, 71, 77, 85-87, 91-92, 99, 116-117, 126, 129-130, 140, 152
Միջագետք Վերին - 163
Միջերկրական ծով - 163
Միջերկրայք - 142, տե՛ս Փոքր Ասիա
Մոկք - 62, 88, 101
Մոսկվա - 6
Մուտառասուն - ավան - 98-99
Մուֆարդին - քաղաք - 54
Նախճավան (Նախիջևան) - 25, 196, 199
Նեղոս - 110
Նիգ - գավառ - 25, 32-33, 73
Նոր Գետիկ - վանք - 158
Նորավանք Ամաղուի - 166
Նուբիա - երկիր - 112
Շիրակ -16-18, 21, 30, 41, 178-181, 185, 189, 191, 199
Շպղթան - գավառ հյուսիսային Միջագետքում - 140
Շուղր - վանք 99, 141
Շուշան Պահլավունու եկեղեցի Անիում - 52
Ոսկե Հորդա - 199, 204
Պալունիք գավառ - 12
Պահլավ - երկիր - 12
Պահլավ - քաղաք - 17
Պապեռոն - 117, 138
Պարսկաստան - 34, 199
Ջահան - գավառ - 100-101, 103
Ջենովա - 198
Ջուլֆա - 196
Ռապան - ավան Միջագետքում - 133
Ռուբինյան իշխանություն - 124, տե՛ս նաև Կիլիկիայի հայկական իշխանություն
Ռուսաստան - 191
Սամոսատ - 129, 133, 153
Սանահնի վանք - 52, 73, 76, 158-159, 167, 183, 203
Սանահնի վանքի ճեմարան - 74
Սասուն - 99-100, 111, 138, 184-185, 203-204
Սասունի իշխանություն - 184-185, 203
Ս. Առաքելոց եկեղեցի Անիում - 53
Ս. Աստվածածին եկեղեցի Բջնիում - 73
Ս. Աստվածածին եկեղեցի Ծովքում - 139
Ս. Բարձումա վանք Վերին Միջագետքում - 132
Ս. Գրիգոր - եկեղեցի Կեչառիսում - 74
Ս. Սարգիս - գյուղ Գառնիի շրջանում - 195
Ս. Սարգիս - եկեղեցի Անիում - 188
Սերկելի լեռ (Արագածոտն գավառում) - 25, 27
Սիկիլիա - 110, 131
Սիմֆերոպոլ - 198
Սիս քաղաք - 157, 168-169, 175-177, 183, 193
Սիսական աշխարհ - 71, տե՛ս Սյունիք
Սիրիա - 163, տե՛ս նաև Ասորիք

Ս. Լուսավորիչ - եկեղեցի Կեչառիսում - 75
Ս. Կարապետ վանք (Մուշում) - 59, 72-73, 185
Ս. Կարապետ վանքի ծեմարան - 73
Սկևռա - վանք Կիլիկիայում, Լամբրոն բերդից 2 կմ հարավ-արևելք -138
Ս. Հակոբյանց վանք - 5
Ս. Հովհաննես - եկեղեցի Մաստարա գյուղում - 31
Սյունիք - 6, 120, 166, 178
Սյունիքի թագավորություն - 166, 179
Ս. Նիկողայոս - եկեղեցի Կաֆայում - 200
Ս. Նշան - եկեղեցի Օովքում - 134, 139
Ս. Նշան - եկեղեցի Կեչառիսում - 75
Ս. Սոֆիա - տաճար Կոստանդնուպոլսում - 57
Ս. Ստեփաննոս - եկեղեցի Անիում - 19, 51-52
Ս. Ստեփաննոս - եկեղեցի Շիրակում (Արթիկի մոտ) - 186-187
Սրուճ - բերդ Հայոց Միջագետքում, Եդեսիայից հարավ-արևմուտք - 130
Սուդակ - ավան Ղրիմի թերակղզում - 198
Սուրխաթ - ավան Ղրիմի թերակղզում - 198
Սուրմառի (Սուրբ Մարի) - բերդաքաղաք Այրարատի ճակատք գավառում - 43
Ս. Փրկիչ - եկեղեցի Անիում - 49-50
Ս. Փրկիչ - եկեղեցի Լամբրոնում -139
Ս. Քրիստափոր - մատուռ Անիում - 51
Սև լեռներ - 99, 102, 105, 158, տես նաև Ամանոս
Սևանա լիճ - 73
Վահրամաշեն - բերդ - 34
Վաղարշապատ - 193
Վաղարշապատի գավառ - 34
Վայոց ձոր - 166, 191, 193
Վանա լիճ - 34
Վանանդ - 35, 62, 94
Վասպուրական - 34, 48, 71, 75, 86-88, 119, 126, 130, 140
Վասպուրականի թագավորություն - 34, 48
Վարաժնունիք - 73
Վարդահեր գյուղ Քեսունի մերձակայքում - 117
Վերին Միջագետք - 133, 164, տես նաև Միջագետք Հայոց
Վերոնա - քաղաք հյուսիսային Իտալիայում - 160
Վրաստան - 36, 38, 121-122
Տաթևի վանք - 166
Տայք - 34, 36, 44
Տաշիր Ձորագետ - 38
Տավրոսյան լեռնաշղթա - 125, 184-185
Տարոն - 68, 72-73, 75, 82, 86-87, 126, 184-185
Տարսոն - 98, 103, 138, 158, 171, 173, 175
Տեկորի վանք - 41
Տլուք գավառ - 125-126, 131, 133, 139
Ուռհա - 104-106, տես նաև Եդեսիա
Ուտիք - 140
Փոքր Ասիա - 159
Փոքր Հայք - 8, 94
Քաղբերթ - գյուղ Գառնիի շրջանում - 195
Քաղկեդոն - 158-159

Քարագլուխ - գյուղ Վայոց ձորում - 191
Քեղի ամրոց 67
Քեսուն - քաղաք
հյուսիս-արևմտյան Միջագետքում 102-103, 105, 107, 116-117, 119, 121, 129, 133, 135, 151
Քրիստափոր - մատուռ Անիում - 51-52
Օսմանյան կայսրություն - 197
Օրդուբադ -196
Ֆրանսիա -161

ԷԹՆԻԿԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ

Ազիբեկենց տոհմ 67
Սմատունիներ - 9
Ապիրատյան տոհմ - 192
Ապուղամրենք - 17-19, տես նաև Պահլավունիներ
Ասորիներ 69, 108, 163
Արաբներ - 16, 163, 184
Արծրունիներ 107
Արշակունիներ հայ - 8-9, 12-14, 108, 147, 149
Արշակունիներ պարթև - 15-16
Արտաշեսյաններ - 147
Արտուխյաններ - 124, 131-133
Բագրատունիներ հայ - 9, 19, 24, 26, 31, 35, 38, 41-42, 81-83, 102, 128, 202
Բագրատունիներ Վրաց - 189
Գամրեկելիներ 37
Գիրեյների տոհմ - 198
Գրիգոր Լուսավորչի տոհմ - 7-8, 14
Դալասինների տոհմ - 98
Դանիշմանյաններ - 124, 131
Դելմիկներ - 21, 25
Զաքարյաններ - 11, 166, 183, 191-192, 202-204
Թաթար-մոնղոլներ -198-199
Թյուրք-սելջուկներ - 86, 95, 101, 124, 142, 179
Թորգոմյան ազգ - 193, տես նաև Հայեր
Թուրքմեններ -131
Խազարներ - 16
Խաղբակյաններ - 74
Կամսարականներ - 3, 8-9, 16, 31, 129, 202
Կարա-կոյունլուներ - 193
Կարենյան պահլավի ցեղ - 7, 12
Հայեր - 36-38, 111, 122, 124, 142, 149, 155, 161, 164, 174, 178, 198, 203
Հեթումյաններ - 11, 141
Հոռոմներ 40-41, 47, 57, 84, 88, տես նաև հույներ
Հույներ 124, 161, 163, 165, 198
Մագիստրոսենք - 173, տես Պահլավունիներ
Մամիկոնյաններ - 130, 184
Շադդադյաններ - 25, 121, 178
Պահլավ պարթևական ցեղ - 40
Պահլավունիներ - 3, 19, 24, 29, 35, 41, 43, 55, 73, 78-79, 81-82, 89, 94, 101-102, 105, 108-110, 115-116, 119, 127-130, 133, 135, 137, 141, 147, 149, 158, 168-169, 176-178, 181, 184-185, 187-189, 192-193, 195-197, 199-204
Պարթևներ - 7, 12, 15
Պռոշյաններ - 74
Ռավվադյաններ - 25, 34
Ռուբինյաններ 102, 140-141, 168, 173-183
Սելջուկ-թյուրքեր, սելջուկներ - 34, 86-88, 91, 94, 98-99, 102, 140, 148, 203 (տես նաև թյուրք-սելջուկներ)
Սուրենյան Պահլավի ցեղ 7, 12
Վաչուտյաններ - 34
Վրացիներ - 34, 37
Քաղդեացիներ 55
Քրդեր - 34
Օղուզ-թյուրքեր - 25, 78
Օշինյաններ - 140, 158
Օրբելիներ - 180
Ֆաթիմյաններ - 109-111, 131, 203
Ֆրանկներ - 100, 106, 121, 124, 130-131, 163

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան.....3
ԱՌԱՋԻՆ ՄԱՍ - ՊԱՀԼԱՎՈՒՆԻ ՏՈՀՄԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԵԼՔԸ.....12
Գլուխ առաջին-Տոհմի ծագումը.....12
Գլուխ երկրորդ- Պահլավունի տոհմը վերելքի ճանապարհին.....19
Գլուխ երրորդ- Վասակ Հոլում Պահլավունի սպարապետը.....24
Գլուխ չորրորդ- Վահրամ Պահլավունի շինարարը և զորավարը.....29
Գլուխ հինգերորդ- Վահրամ Պահլավունու եղբայրները և որդիները.....49
Գլուխ վեցերորդ-Գրիգոր Մագիստրոս.....55
Գլուխ յոթերորդ- Գրիգոր Մագիստրոսի շառավիղները.....90
ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ-ՊԱՀԼԱՎՈՒՆԻՆԵՐԸ XI Դ. 2-ՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XIII Դ.Դ.....94
Գլուխ առաջին-Գրիգոր Վկայասեր Պահլավունի կաթողիկոսը.....94
Գլուխ երկրորդ- Պահլավունի Վահրամը Եգիպտոսի
լիազոր-վեզիրի պաշտոնում.....109
Գլուխ երրորդ-Բարսեղ Պահլավունի կաթողիկոսը.....115
Գլուխ չորրորդ- Գրիգոր III Պահլավունին Հայոց կաթողիկոս.....119
Գլուխ հինգերորդ- Ծովքի Պահլավունիները.....125
Գլուխ վեցերորդ- Պահլավունիները Հռոմկլայում.....137
Գլուխ յոթերորդ- Պահլավունիները Հյուսիս-արևելյան
Հայաստանում (XI դ. վերջ-XII դ.).....178
Գլուխ ութերորդ- Պահլավունի տոհմից վերընծայուղված
գործիչները XII-XIII դարերում.....184
ԵՐՐՈՐԴ ՄԱՍ-ՊԱՀԼԱՎՈՒՆՅԱՑ ՇԱՌԱՎԻՂՆԵՐԸ XIV-XVII ԴԴ.....192
Ամփոփում.....202
Մատենագիտական ցանկ.....208
1. Սկզբնաղբյուրներ.....208
2. Գրականություն.....211
Անվանացանկեր.....217
1. Անձնանուններ.....217
2. Տեղանուններ.....229
3.Էթնիկական անվանումներ.....234
Բովանդակություն.....235

ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՊԱՀԼԱՎՈՒՆԻՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԱՆԱՂԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՊԱՆՆԵՐ

ВРЕЖ ВАРДАНЯН

ПАХЛАВУНИ - ХРАНИТЕЛИ АРМЯНСКОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ И ДУХОВНОЙ БЕСПОРОЧНОСТИ

Տեխնիկական խմբագիր՝ ԳԱՅԱՆԵ ԲՈԲՈԽՅԱՆ
Տպագրիչ՝ ԼԵՎՈՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ
Համակարգչային շարվածքը՝ ՆԱՐԻՆԵ ԿԱՐԱԳՈՒԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

375019, Երևան 19, Մարշալ Բաղրամյան 24^{գ}

L2000 ղ 2

ՀԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0081535

A II
93724